# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009-2012 ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2010 Թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ
## (2010 Թ. ՏԱՐԵԿԱՆ)

ԵՐԵՎԱՆ - 2011

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........................................................................................................3

1. ՀՌԻՄԾ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ .......................................................5

2. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ...........................................................................11

3. ՀՌԻՄԾ 2010Թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ...........................................................30

3.1 Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտ....30

3.2 Հանրային ֆինանսների կառավարման ոլորտ.......................................33

3.3 Պետական գնումների համակարգ ..............................................42

3.4 Հարկային և մաքսային համակարգեր .........................................46

3.5 Կրթության ոլորտ ..........................................................61

3.6 Առողջապահության ոլորտ.....................................................69

3.7 Դատական համակարգ..........................................................87

3.8 Քրեակատարողական ծառայություն...............................................91

3.9 Իրավաբանական անձանց պետական գրանցում .......................................93

3.10 Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն...............................95

3.11 ՀՀ ոստիկանություն.........................................................98

3.12 Քաղաքական կոռուպցիա.....................................................105

3.13 Ընտրական համակարգ ......................................................111

3.14 Տեղական ինքնակառավարում..................................................118

3.15 Մասնավոր հատված.........................................................124

3.16 Բարեխղճությունը հանրային ծառայությունում.................................129

3.17 Հրապարակային հաշվետվություն..............................................145

3.18 Կոռուպցիայի քրեականացում և իրավապահ գործունեություն .......................146

3.19 Կադրերի պատրաստում և վերապատրաստում, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարում ..................................................158

3.20 Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցություն .............................................................166

3.21 ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման համակարգը ...................................173

3.22 Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմիններ .............177

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ...............................................................179

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը (ՀՌԻՄԾ) ՀՀ կառավարությունը հաստատել է 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշմամբ: Նույն որոշմամբ սահմանվել է ՀՌԻՄԾ մոնիտորինգի իրականացման մոտեցումներն ու պահանջները:

ՀՀ Նախագահի 2004թ. հունիսի 1-ի թիվ 100-Ն հրամագրի 14-րդ կետով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի աշխատանքների համակարգումն իրականացնում է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը (ՀՌԻՄՀ):

ՀՌԻՄԾ 2010թ. արդյունքների մոնիտորինգի հաշվետվությունը մշակվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն վերը հիշատակված որոշման 5-րդ կետի պահանջների և ՀՀ ՀՌԻՄՀ նախագահի ՀՀ հանրապետական գործադիր մարմինների, կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի անդամներին ու օրենքով ստեղծված մարմինների ղեկավարներին ուղղված նամակ- հանձնարարականների հիման վրա:

ՀՌԻՄԾ 2010թ. արդյունքների մոնիտորինգն ու գնահատումն իրականացվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 254-րդ կետի և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 120.1 կետի պահանջներով: ՀՌԻՄԾ 2010թ. արդյունքների մոնիտորինգի հաշվետվության նյութերը մշակվել են ՀՌԻՄԾ իրականացման պատասխանատու ՀՀ հանրապետական գործադիր և այլ մարմինների կողմից:

ՀՌԻՄԾ 2010թ. արդյունքների կատարման սույն հաշվետվությունը կազմվել է ՀՀ հանրապետական գործադիր ու օրենքով ստեղծված այլ մարմիններից ստացված նյութերի հիման վրա՝ «ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի իրականացման մոնիտորինգի արդյունքների հաշվետվության կազմման ուղեցույցի»[1] պահանջներին համապատասխան:

ՀՌԻՄԾ իրականացվել է 2010թ. համար նախատեսված ակնկալվող արդյունքների դիտարկմամբ: Յուրաքանչյուր արդյունքի համար գնահատվել է դրա իրականացվածության աստիճանը, այն հիմնավորող փաստացի կամ իրավական հիմքերը, չիրականացվածության պատճառները:

Հաշվետվությունը բաղկացած է չորս հիմնական բաժիններից:

**Հաշվետվության "1. ՀՌԻՄԾ գնահատման հիմնական ցուցիչները" բաժնում** տրված են Հայաստանում կոռուպցիայի ընկալման մակարդակը և դրա փոփոխության պատճառները նկարագրող, միջազգային կազմակերպությունների կողմից հաշվարկվող, 9 ցուցիչների արժեքները և դրանց փոփոխության միտումները:

Այդ ցուցիչներից Թրանսփերենսի Ինթերնեյշնլ կազմակերպության կողմից հաշվարկվող "**Կոռուպցիայի ընկալման ինդեքսը**" և Համաշխարհային բանկի ինստիտուտի կողմից հաշվարկվող "**Կոռուպցիայի վերահսկման ինդեքսը**" ՀՌԻՄԾ-ով սահմանված են որպես Հայաստանում կոռուպցիայի գնահատման վերջնական ցուցիչներ:

Մյուս 7 ցուցիչները, որոնք ՀՌԻՄԾ-ում սահմանված են կոռուպցիայի գնահատման միջանկյալ ցուցիչներ, գնահատում են պետության կառավարման (Good governance) այն առանձնահատկությունները, որոնք շաղկապված են կոռուպցիայի մակարդակի հետ և, հետևաբար, ունակ են բացատրելու կոռուպցիայի աճի կամ նվազման պատճառները: Այդ ցուցիչներն են՝ Համաշխարհային բանկի ինստիտուտի կողմից հաշվարկվող "**Կարգավորման որակի ինդեքսը**", "**Կառավարման արդյունավետության ինդեքսը**", "**Օրենքի գերակայության ինդեքսը**", "**Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքսը**", "**Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքսը**", ինչպես նաև Ֆրիդոմ Հաուս միջազգային կազմակերպության կողմից հաշվարկվող "**Քաղաքական իրավունքների ինդեքսը**" և "**Քաղաքացիական ազատությունների ինդեքսը**",:

**Հաշվետվության "2. Ամփոփ նկարագրություն" բաժնում** տրված են Հայաստանի հասարակությունում կոռուպցիոն իրավիճակի նկարագրությունը, միտումները և դրանց բացատրությունը:Դրանք հիմնված են ԱՄՆ ՄԶԳ "Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի" աջակցությամբ "Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան" կազմակերպության կողմից 2008-2010թթ. ընթացքում Հայաստանում իրականացված

---

[1] ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի իրականացման մոնիտորինգի արդյունքների հաշվետվության կազմման ուղեցույցը տեղակայված է ՀՀ կառավարության կայքէջում www.gov.am/ ծրագրեր/հակակոռուպցիոն ռազմավարություն բաժնում

“Կոռուպցիան Հայաստանում. տնային տնտեսությունների հետազոտություն” համապետական ներկայացուցչական սոցիոլոգիական զանգվածային հետազոտության,[2] ինչպես նաև «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվության ինստիտուտի «ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները սոցիոլոգիական հետազոտության» տվյալների վրա:

Այդ վերլուծության և կիրառված տվյալների անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ միջազգային կազմակերպությունների կողմից 2010 թվականին հրապարակված ցուցիչները (2011թ. ցուցիչները դեռևս հրապարակված չեն), հիմնված են 2009թ. հետազոտությունների արդյունքների վրա: Հետևաբար, դրանք նկարագրում են Հայաստանում կոռուպցիայի իրավիճակը մինչև 2009 թվականը ներառյալ: ՀՌԿԿ վերջին հետազոտությունն իրականացվել է 2010թ. աշնանը և, հետևաբար, նկարա-գրում է Հայաստանի հասարակությունում կոռուպցիայի մակարդակի ընկալման և դրա հետ շաղկապ-ված հարցերը, որոնք բնութագրական են 2010թ. համար:

Այս բաժնում տրված են նաև ՀՌԻՄԾ 2010թ. նախատեսված 351 արդյունքների իրականացվածության գնահատականներն ըստ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտների և ՀՌԻՄԾ իրականացման պատասխանատու պետական կառավարման մարմինների:

2010թ. սոցիոլոգիական հետազոտությունների, ինչպես նաև ըստ գերատեսչությունների ՀՌԻՄԾ 2010թ. ակնկալվող արդյունքների իրականացվածության համադրումը հնարավորություն է տալիս բացատրել ՀՌԻՄԾ միջոցառումների իրականացման արդյունքում Հայաստանում կոռուպցիոն իրավիճակի փոփոխությունները:

**Հաշվետվության “3. ՀՌԻՄԾ 2010թ. արդյունքները ըստ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտների ու բնագավառների” բաժնում** ներկայացված է ՀՌԻՄԾ 2010թ.ակնկալվող արդյունքների գործոնային մակարդակում մոնիտորինգը` ըստ. ՀՌԻՄԾ 2009-2012թթ ռազմավարության դրույթների ու միջոցառումների: Մոնիտորինգի ու գնահատման են ենթարկվել յուրաքանչյուր միջոցառումից 2010թ. ակնկալվող արդյունքների փաստացի ստացումը և հաշվարկվել են յուրաքանչյուր ռազմավարական դրույթի իրականացվածության չափն արտահայտող գործոնային ցուցիչների փաստացի արժեքները: ՀՌԻՄԾ ըստ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտների ու բնագավառների 2010թ. արդյունքների իրավիճակի ու ընթացքի վերաբերյալ մեկնաբանությունները, դրանց կատարման վերաբերյալ (կատարված է ամբողջությամբ, կատարված է մասնակիորեն և չի կատարված) գնահատականները, ինչպես նաև ցուցիչների փաստացի արժեքների վերաբերյալ տվյալները հավաքագրվել ու սահմանվել են ՀՀ պետական մարմինների մոնիտորինգի ու գնահատման պատասխանատուների կողմից և համաձայնեցված են համապատասխան մարմինների ղեկավարների հետ:

**Հաշվետվության “4.Առաջարկություններ” բաժնում** ներկայացված են ՀՀ պետական մարմինների ՀՌԻՄԾ մոնիտորինգի պատասխանատուների կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքում նկատված ու բացահայտված բացերի վերաբերյալ նկատառումները: Դրանք հիմնականում վերաբերում են ՀՌԻՄԾ այս կամ այն ռազմավարական դրույթի միջոցառումների պատասխանատու կատարող գերատեսչության փոփոխությանը, նախանշված միջոցառումների, արդյունքների ու սահմանված ցուցիչների վերանայմանը: Դրա հետ մեկտեղ առաջարկությունների մի մասը առընչվում է նաև գնահատող ցուցիչների հաշվարկման գործում մեխանիզմների ու գործընթացների սահմանմանը, միջգերատեսչական համագործակցության ապահովմանը:

ՀՌԻՄԾ 2009-2012թթ. ռազմավարության 2010թ արդյունքների մոնիտորինգի հաշվետվության նյութերը ամփոփվել են ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի կողմից ՀՌԻՄՀ-ին ցուցաբերվող աջակցության շրջանակում ներգրավված փորձագետների կողմից:

---

[2] Այդ հետազոտությունների տվյալների շտեմարանները և մեթոդաբանությունները տեղակայված են ՀՌԿԿ-Հայաստան պաշտոնական կայքում. http://www.crrc.am/index.php/lo/159

## 1. ՀՌԻՄԾ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրիի նպատակներն ու ակնկալվող վերջնական արդյունքները (impact) գնահատվում է Թրանսփերենսի Ինթերնեյշնլ (ԹԻ) կազմակերպության "**Կոռուպցիայի ընկալման ինդեքսի**" և Համաշխարհային Բանկի Ինստիտուտի (ՀԲԻ) "**Կոռուպցիայի վերահսկման ինդեքսի**" միջոցով:

ՀՌԻՄԾ իրականացման ընթացքում ստացվող «ելքերը» (outcomes) կամ` ՀՌԻՄԾ տերմինաբանությամբ` **միջանկյալ մակարդակի** արդյունքները գնահատվում են հետևյալ ցուցիչներով:

1. **Գործառնական կոռուպցիայի**[3] նվազեցման ոլորտում առաջընթացը գնահատվում է ՀԲԻ "**Կառավարման արդյունավետության ինդեքսի**" և ՀԲԻ "**Կարգավորման որակի ինդեքսի**" միջոցով:

2. **Վարչական կոռուպցիայի**[4] նվազեցման ոլորտում առաջընթացը գնահատվում է ՀԲԻ "**Օրենքի գերակայության ինդեքսի**" և "**Ձայնի լսելիության ինդեքսի**" միջոցով:

3. **Քաղաքական կոռուպցիայի**[5] ոլորտում առաջընթացը գնահատվում է ՀԲԻ "**Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքսի**", Ֆրիդոմ Հաուս (ՖՀ) կազմակերպության "**Քաղաքական իրավունքների ինդեքսի**" և ՖՀ "**Քաղաքացիական ազատությունների ինդեքսի**" միջոցով:

Աղյուսակ 1-ում տրված են նշված 9 ինդեքսների բազային արժեքները,[6] սույն զեկույցի կազմավորման ընթացքում հրապարակված վերջին տարվա` 2009թ. արժեքները,[7] ՀՌԻՄԾ-ով 2012 թվականի համար սահմանված թիրախ արժեքները և յուրաքանչյուր ինդեքսի չափման սանդղակը: Բոլոր ինդեքսների փոփոխությունները` սկսած դրանց գնահատման առաջին տարվանից ընդհուպ մինչև 2009թ. գնահատականները, տրված են Դիագրամ 1-ից 9-ում: Ստորև տրված են բոլոր ինդեքսների բովանդակության բացատրությունները, դրանց փաստացի արժեքները և փոփոխության միտումները:

**"Կոռուպցիայի ընկալման ինդեքս" (ԹԻ).** Ցուցիչը գնահատում է կոռուպցիայի մակարդակը հասարակական ընկալումներում: Ցուցչի փոփոխության միջակայքն է 0-ից 10-ը: Որքան բարձր է գնահատականը, այնքան հասարակության ընկալումներում քիչ կոռումպացված է համարվում տվյալ երկիրը: 2010թ. Հայաստանը "Կոռուպցիայի ընկալման ինդեքսի" 2.6 արժեքով, 178 երկրների շարքում կիսել է 123-126 տեղերը: Ադրբեջանը նույն ինդեքսի 2.4 արժեքով զբաղվում էր 134-րդ տեղը, իսկ Վրաստանը` ինդեքսի 3.8 արժեքով` 68-րդ տեղում է: 2007-2010թթ. Հայաստանում դիտվել է "Կոռուպցիայի ընկալման ինդեքսի" նվազման միտում 3.0-ից` մինչև 2.6:

**"Կոռուպցիայի վերահսկման ինդեքս" (ՀԲԻ).** Արտահայտում է հասարակական ընկալումները, թե որքանով են իշխանություններն իրենց դիրքն օգտագործում մասնավոր շահերի առաջխաղացման համար, որքանով են նրանք ընդգրկված խոշոր և փոքր չափի կոռուպցիայում, որքանով է "պետությունը գրավված" վերնախավերի և մասնավոր շահեր հետապնդող շրջանակների կողմից: Ցուցիչի փոփոխության միջակայքն է -2.5-ից 2.5: Որքան ավելի բարձր է ցուցիչի արժեքը` այնքան ավելի ցածր է կոռուպցիայի մակարդակը:

Այս ցուցիչի արժեքը Հայաստանում 2009թ. գնահատվել է -0.591: Հայաստանի համար ցուցիչի փոփոխության ընդհանուր միտումը 2000-2009թթ. եղել է աստիճանական բարելավումը` միջին հաշվով տարեկան 0.02 միավորով (այդ տարիների տվյալները մոտարկվում են $y = 0.0209x - 42.445$ հավասարմամբ):

---

[3] **Գործառնական կոռուպցիա`** կոռուպցիոն հարաբերությունների կամ վարքի տեսակ, որը նպատակաուղղված է արագացնելու գործընթացները կամ պաշտոնական ընթացակարգերը:

[4] **Վարչական կոռուպցիան** այն երևույթն է, երբ պաշտոնյան շահադիտական նպատակով խախտում է կամ վերապահորեն է կիրարկում գործող իրավական նորմերը:

[5] **Քաղաքական կոռուպցիա`** երբ կոռուպցիոն գործարքը նպատակաուղղված է օրենսդրական կամ կարգավորիչ նորմերի փոփոխությանը ի շահ մասնավոր անձի կամ խմբի: Քաղաքական կոռուպցիան հանրային քաղաքականությունը ծառայեցնում է մասնավոր շահերին, որը հանգեցնում է խաթարում է մրցակցային միջավայրը և խոչընդոտում է քաղաքացիական հասարակության կայացման:

[6] Այդ ինդեքսների համար որպես բազային արժեքներ են սահմանվել դրանց` ՀՌԻՄԾ իրականացմանը նախորդած 2008 թվականի արժեքները:

[7] Դիտարկվող ինդեքսներից միայն ԹԻ "Կոռուպցիայի ընկալման ինդեքսի" արժեքն է, որը հրապարակված է նաև 2010 թվականի համար:

**“Կարգավորման որակի ինդեքս” (ՀԲԻ).** Արտապատկերում է հասարակական ընկալումները, թե որքանով է կառավարությունն ունակ ձևակերպելու և իրականացնելու մասնավոր սեկտորի զարգացմանը նպաստող որակյալ քաղաքականություններ և կանոնակարգեր: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը՝ այնքան բարձր է երկրում կարգավորման որակը:

ՀՌԻՄԾ-ում ցուցիչի թիրախ արժեքը 2012թ. համար սահմանված է 0.37 միավոր: ՀԲԻ կողմից իրականացված գնահատականների վերահաշվարկից հետո պարզվել է, որ 2008թ. ՀՀ-ն արդեն հասել էր այդ թիրախ արժեքին (0.379): 2009թ. ցուցիչի արժեքը հավասար էր 0.344, սակայն հաշվի առնելով գնահատականի վիճակագրական սխալի միջակայքը և ցուցանիշի գնահատականների ժամանակային շարքը 2005-2009թթ., կարելի է հիմնավորված համարել այն, որ այս ցուցանիշի գծով ՀՌԻՄԾ-ն հասել է իր թիրախ արժեքին:

**“Կառավարման արդյունավետության ինդեքս” (ՀԲԻ).** Արտապատկերում է հասարակական ընկալումները պետության կողմից մատուցվող հանրային և քաղաքացիական ծառայությունների որակի, քաղաքական ճնշումներից այդ ծառայությունների անկախության, իշխանությունների կողմից քաղաքականությունների ձևակերպման և իրականացման որակի նկատմամբ: Ցուցիչն արտապատկերում է նաև այն ընկալումները, թե որքանով են իշխանությունները միտված իրականացնելու իրենց իսկ ձևակերպած քաղաքականությունները: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը՝ այնքան բարձր է երկրում կառավարման արդյունավետությունը:

ՀՌԻՄԾ-ում ցուցիչի թիրախ արժեքը 2012թ. համար սահմանվել է 0.15: “Կառավարման արդյունավետության ինդեքսի” միտումները 2007-2009թթ. ընթացքում բավական բարենպաստ են՝ երկու տարի շարունակ գրանցվել է ցուցիչի արժեքի աճ: Եթե առանց փոփոխության շարունակվի 2000-2009թթ. ընթացքում ցուցիչի տարեկան միջին աճը (որը մոտարկվում է y = 0.0569x - 114.35 մոդելով), ապա կարելի է սպասել, որ 2012թ. ցուցիչի արժեքը կհասնի 0.13-ի, որը միանգամայն բավարար է համարելու համար, որ այս ցուցիչի գծով ՀՌԻՄԾ-ն կհասնի իր նախանշված թիրախին:

**“Օրենքի գերակայության ինդեքս” (ՀԲԻ).** Արտապատկերում է ընկալումները, թե որքանով են պետական, գործարար և քաղաքացիական մարմիններն ու անձինք վստահում օրենքին և, միաժամանակ, հետևում օրենքին: Մասնավորապես, որքանով են նրանք կատարում գործող պայմանագրերի դրույթները, որքանով է պաշտպանված սեփականության իրավունքը, որքանով են ոստիկանությունն ու դատարանները հետևում օրենքի պահանջներին, որքանով են հավանական հանցագործություններն ու բռնությունները: Ինդեքսի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ինդեքսի արժեքը՝ այնքան ավելի բարձր է երկրում օրենքի գերակայությունը:

ՀՌԻՄԾ-ով ցուցիչի համար որպես 2012թ. թիրախ սահմանված է՝ -0.15-ը: 2000-2009թթ. միջակայքում ցուցանիշի արժեքը «տատանվել է» -0.4 արժեքի սահմաններում: Այդ միտումների պահպանման դեպքում Հայաստանի համար ցուցիչի արժեքը 2012թ. կլինի -0.42:

**“Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքս” (ՀԲԻ).** Արտապատկերում է, այն ընկալումները, թե որքանով են երկրի քաղաքացիներն ունակ մասնակցելու իրենց քաղաքական իշխանությունների ընտրությանը (կազմավորմանը), ինչպիսին է խոսքի, միավորումներ կազմելու և լրատվամիջոցների ազատությունը: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը՝ այնքան երկրում ավելի բարձր է հաշվետվողականությունն ու ձայնի լսելիությունը:

ՀՌԻՄԾ-ում ցուցիչի համար որպես 2012թ. թիրախ արժեք է սահմանվել 0.47-ը: 2009թ. ցուցիչի արժեքը եղել է -0.82 (ՀԲԻ վերահաշվարկի արդյունքում նվազել է նաև ցուցանիշի 2008թ. արժեքը՝ -0.66-ից մինչև -0.72): Ցուցիչի արժեքների դինամիկան բացասական է սկսած 2000 թվականից:

**“Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքս” (ՀԲԻ).** Արտապատկերում է քաղաքացիների ընկալումները, թե որքանով է հավանական իշխանության ապակայունացումը, իշխանափոխությունը բռնի կամ ոչ սահմանադրական եղանակով, այդ թվում նաև՝ քաղաքական դրդապատճառներ ունեցող բռնություններն ու տեռորիզմը: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը՝ այնքան երկրում ավելի բարձր է քաղաքական կայունությունը և ցածր են քաղաքական ճնշումները:

ՀՌԻՄԾ-ով որպես ցուցիչի թիրախ արժեք 2012թ. համար սահմանված է 0.23-ը: 2009թ. 2008-ի համեմատ ցուցիչի արժեքն աճել է հասնելով 0.09-ի (ՀԲԻ վերահաշվարկի արդյունքում 2008թ. գնահատականը նվազեցված է 0.01-ից՝ -0.07): Հայաստանում, այդ ցուցիչի փոփոխության միտումները 2000-2008թթ. եղել են դրական: Այդ միտումների պահպանման դեպքում կարելի է սպասել, որ ցուցիչի արժեքը 2010թ. կլինի՝ 0.318, այսինքն կգերազանցի իր 2012թ. թիրախ արժեքը:

**“Քաղաքական իրավունքների ինդեքս” (ՖՀ).** Այն արտապակերում է երկրում ընտրական գործընթացների, քաղաքական բազմակարծության և մասնակցության, ինչպես նաև կառավարության գործունեության իրավիճակը: Ցուցիչի արժեքը փոխվում է 1-7 միջակայքում: Որքան ավելի բարձր է ցուցիչի արժեքը, այնքան ավելի անբարենպաստ է երկրում ընտրական գործընթացների, քաղաքական բազմակարծության, մասնակցության և կառավարության գործունեության իրավիճակը:

ՀՌԻՄԾ-ով ցուցիչի թիրախ արժեքը 2012թ. համար սահմանվել է 2-ը: Ցուցիչի արժեքներն 2000-2003թթ. այն հավասար է եղել 4-ի[8], 2004-2007թթ ընթացքում` 5-ի, իսկ 2008թ. ցուցիչի արժեքը դարձել է 6 և այդպիսին է մնացել 2009-ին: Ցուցիչի 6 արժեք ունեցող երկրների շարքում են ԱՊՀ երկրներից` Ադրբեջանը, Ղազախստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը:

**“Քաղաքացիական ազատությունների ինդեքս” (ՖՀ).** Արտահայտում է երկրում առկա իրավիճակը խոսքի և խղճի, ասոցացիաների կազմավորելու և դրանց գործունեության ազատության, օրենքի գերիշխանության և անձի ազատության ոլորտներում: Ցուցիչի արժեքը փոխվում է 1-7 միջակայքում: Որքան ավելի բարձր է ցուցիչի արժեքը, այնքան ավելի անբարենպաստ է երկրում իրավիճակը խոսքի, խղճի, ասոցացիաների կազմավորելու և դրանց գործունեության ազատության, ինչպես նաև օրենքի գերիշխանության և անձի ազատության ոլորտներում:

ՀՌԻՄԾ-ով որպես ցուցչի թիրախ արժեք 2012թ. համար սահմանվել է 2-ը: Ցուցիչի արժեքը 2000-2009թթ. ընթացքում անփոփոխ կերպով հավասար է եղել 4-ի:[9] Ցուցիչի 4 արժեք ունեն նաև այնպիսի երկրներ, ինչպիսիք են` Սինգապուրը, Կոսովոն, Կոլումբիան:

**Աղյուսակ 1. ՀՌԻՄԾ վերջնական և միջանկյալ արդյունքների գնահատման ցուցիչները[10]**

| Մակարդակ | Արդյունք | Ցուցիչ | Բազային արժեք` 2008թ. | Արժեքը` 2009թ. | Թիրախ արժեք` 2012 | Չափման սանդղակ ցածր÷ բարձր |
|---|---|---|---|---|---|---|
| Վերջնական | Կոռուպցիայի ընդհանուր մակարդակի կրճատում | 1. Կոռուպցիայի ընկալման ինդեքսը (ԹԻ) . | **2.7** (2009թ.) | **2.6** (2010թ.) | **4.1** | **0 ÷ 10** |
| | | 2. Կոռուպցիայի վերահսկման ինդեքսը (ՀԲԻ) | **-0.545** (-0.54) | **-0.591** | **-0.05** | **-2.5 ÷ 2.5** |
| Միջանկյալ | Գործառնական կոռուպցիա | 4. Կարգավորման որակ (ՀԲԻ) | **0.379** (0.32) | **0.344** | **0.37** | **-2.5 ÷ 2.5** |
| | | 3. Կառավարման արդյունավետություն (ՀԲԻ) | **-0.03** (-0.07) | **0.069** | **0.15** | **-2.5 ÷ 2.5** |
| | Վարչական կոռուպցիա | 6. Օրենքի գերակայություն (ՀԲԻ) | **-0.28** (-0.36) | **-0.398** | **-0.15** | **-2.5 ÷ 2.5** |
| | | 5. Ձայնի լսելիություն և հաշվետվողականություն (ՀԲԻ) | **-0.72** (-0.66) | **-0.82** | **0.47** | **-2.5 ÷ 2.5** |
| | Քաղաքական կոռուպցիա | 7. Քաղաքական կայունություն և ճնշումների բացակայություն (ՀԲԻ) | **-0.07** (0.01) | **0.09** | **0.23** | **-2.5 ÷ 2.5** |
| | | 8. Քաղաքական իրավունքներ (ՖՀ) | **6** | **6** | **2** | **7 ÷ 1** |
| | | 9. Քաղաքացիական ազատություններ (ՖՀ) | **4** | **4** | **2** | **7 ÷ 1** |

[8] Ինդեքսը չափվում է 1-7 սանդղակով, որտեղ 7 արժեքն բնորոշում է քաղաքական իրավունքների ամենացածր մակարդակը:

[9] Ինդեքսը չափվում է 1-7 սանդղակով, որտեղ 7 արժեքն բնորոշում է քաղաքացիական ազատությունների ամենացածր մակարդակը:

[10] Համաշխարհային բանկի ինստիտուտը յուրքանչյուր տարի հաշվարկում է նախորդ տարվա տվյալները (2010թ. ընթացքում հաշվարկել է 2009թ. ցուցիչների գնահատականները: 2010թ. Արժեքները հաշվարկվելու են 2011թ. ընթացքում: Դրանք դոնս բացակայում են): Միաժամանակ, ՀԲԻ-ն իրականացնում է նաև նախորդ տարիների գնահատականների վերահաշվարկ: Աղյուսակի «Բազային արժեք» սյունակում փակագծերում տրված են նախորդ տարվա չվերահաշվարկված գնահատականները, որոնք տեղադրված են եղել ՀՌԻՄԾ նախորդ զեկույցում: Առանց փակագծերի տրված են ներկայում գործող վերահաշվարկված գնահատականները:

Դիագրամ 1




Դիագրամ 2




Դիագրամ 3




Դիագրամ 4




Դիագրամ 5




Դիագրամ 6



Դիագրամ 7




Դիագրամ 8




Դիագրամ 9




ՀՌԻՄԾ գնահատման վերջնական և միջանկյալ ցուցիչների վերաբերյալ վերլուծությունից բխում են հետևյալ եզրակացությունները.

- “**Կարգավորման որակ**” ինդեքսի տեսակետից ՀՌԻՄԾ-ն հասել է իր 2012թ. թիրախ արժեքին:
- “**Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության**” ինդեքսի տեսակետից առկա են գերազանց միտումներ՝ չի բացառվում, որ ցուցիչի 2010թ. արժեքը հավասարվի թիրախ արժեքին:
- “**Կառավարման արդյունավետություն**” ինդեքսի տեսակետից առկա են բարենպաստ միտումներ, որոնց պահպանման դեպքում 2012թ. ինդեքսի արժեքը կհավասարվի սահմանված թիրախին:
- “**Կոռուպցիայի ընկալման ինդեքսի**” (ԹԻ) տեսակետից առկա են բացասական միտումներ՝ ցուցիչի արժեքը նվազում է՝ հեռանալով թիրախ արժեքից:
- “**Կոռուպցիայի վերահսկման ինդեքսի**” (ՀԲԻ) տեսակետից 2002-2009թթ. ընթացքում էական փոփոխություններ չեն գրանցվել ոչ դրական, և ոչ էլ բացասական ուղղությամբ:
- **“Օրենքի գերակայություն**” ինդեքսի տեսակետից 2000-2009թթ. ընթացքում էական փոփոխություններ չեն գրանցվել:
- “**Քաղաքացիական ազատություններ**” ինդեքսի տեսակետից սկսած 1993թ. փոփոխություններ չկան:
- ՀՌԻՄԾ իրականացման ընթացքում (2009-2010թթ.) փոփոխություններ չեն գրանցվել նաև “**Քաղաքական իրավունքներ**” ինդեքսի տեսակետից:

- **“Ձայնի լսելիություն և հաշվետվողականություն**”ինդեքսի տեսակետից միտումները բացասական են:

## 2. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կոռուպցիայի մակարդակը և դրա հետ շաղկապված հարցերի ուսումնասիրությունը 2010 թվականին, ինչպես նաև կոռուպցիան նկարագրող մի քանի ցուցանիշների փոփոխության միտումները 2008-2010թթ. ընթացքում նկարագրված են Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան կազմակերպության կողմից 2008-2010թթ. ընթացքում իրականացված համահայաստանյան ներկայացուցչական սոցիոլոգիական զանգվածային հետազոտության տվյալների հիման վրա: [11] ՀՌԿԿ հետազոտությունների տվյալների կիրառումը պայմանավորված է նրանով, որ ՀՌԿԿ-ն միակ սոցիոլոգիական հետազոտություններ իրականացնող կազմակերպությունն է կոռուպցիան Հայաստանում թեմայով, որի հետազոտությունների տվյալների շտեմարանները և հետազոտությունների մեթոդաբանությունները բաց են և հասանելի բոլոր հետազոտողների համար, ինչը թույլ է տալիս ցանկացած անձի կամ կազմակերպության վերահսկել հրապարակված տվյալների ճշտությունը և համապատասխանությունը:

Համաձայն ՀՌԿԿ հետազոտությունների տվյալների (տես Դիագրամ 10-13) 2008-2010թթ. ընթացքում, հասարակության տեսանկյունից, Հայաստանի համար ամենալուրջ խնդիրների ցանկում գործազրկությունը եղել է առաջին տեղում (27%): Միաժամանակ, եթե 2008-2009թթ. ընթացքում հասարակական կարծիքում աղքատությունը որպես Հայաստանի ամենալուրջ խնդիր եղել է երկրորդ տեղում, ապա 2010թ. այն իր տեղը զիջել է սղաճին (բարձր գներին): Արդյունքում՝ նվազել է կոռուպցիան որպես Հայաստանի ամենալուրջ խնդիր համարողների քանակը՝ 2008թ. 6.7%-ից՝ մինչև 2010թ. 5.2%:

**Դիագրամ 10. Հարցվածների քանակը, ովքեր գործազրկությունը համարում են Հայաստանի համար ամենալուրջ խնդիր:**




**Դիագրամ 11. Հարցվածների քանակը, ովքեր սղաճը/բարձր գները համարում են Հայաստանի համար ամենալուրջ խնդիր:**




**Դիագրամ 12. Հարցվածների քանակը, ովքեր աղքատությունը համարում են Հայաստանի համար ամենալուրջ խնդիր:**




**Դիագրամ 13. Հարցվածների քանակը, ովքեր կոռուպցիան համարում են Հայաստանի համար ամենալուրջ խնդիր:**




Դրա հետ մեկտեղ (Տես Դիագրամ 14-ի տվյալները) 2008-2010թթ. ընթացքում Հայաստանի հասարակությունում աճել է այն այն անձանց քանակը, ովքեր համարում են, որ «Հայաստանի բնակչությունը կոռուպցիան համարում է բնական երևույթ» (51%-ից՝ 64%):Աճել է (22.0%-ից՝ 30.5%) նաև այն անձանց քանակը, ովքեր համարում են, որ «Կոռուպցիան առհասարակ չի կարող կրճատվել» (Դիագրամ 15), ինչը նշանակում է, որ աճում է կոռուպցիայի խնդրի նկատմամբ Հայաստանի հասարակության

[11] Կոռուպցիան Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտություն, - ԱՄՆ ՄԶԳ, Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագիր, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան, - Երևան 2011:

անտարբերությունը: Այս փոփոխությունների հետ մեկտեղ և, չի բացառվում նաև, որ դրա հետևանքով, նվազել է այն անձնաց քանակը, ովքեր համարում են, որ «կոռուպցիան Հայաստանում շատ լուրջ խնդիր է» (Դիագրամ 16), ինչը հաղորդակցվում է նաև կոռուպցիան Հայաստանի ամենալուրջ խնդիրը համարող անձանց կրճատման երևույթի հետ (Դիագրամ 13):

**Դիագրամ 14. Հարցվածների քանակը, ովքեր կարծում են, որ. «Բնակչությունը կոռուպցիան համարում է բնական երևույթ»:**




**Դիագրամ 15. Հարցվածների քանակը, ովքեր համարում են, որ. «Կոռուպցիան առհասարակ չի կարող կրճատվել»:**




**Դիագրամ 16. Հարցվածների քանակը, ովքեր համարում են, որ Հայաստանում կոռուպցիան շատ լուրջ խնդիր է:**




ՀՌԻՄԾ իրականացման արդյունքում հանրապետությունում կոռուպցիոն ռիսկերը[12] **օբյեկտիվորեն նվազել են, սակայն, հասարակական սուբյեկտիվ ընկալումներում՝ Հայաստանում կոռուպցիան աճել է:** Դա երևում է Դիագրամ 17-ից:[13] Եթե 2008թ. պետական պաշտոնյայի հետ շփման դեպքում կոռուպցիոն հարաբերության տեղի ունենալու հավանականությունը եղել է 0.153, կամ՝ մոտավորապես յուրաքանչյուր 6-րդ շփումը եղել է կոռուպցիոն,[14] ապա այդ հավանականությունը նվազել է և 2009-ին (0.118) և 2010-ին (0.103), կամ՝ 2010 թվականին կոռուպցիոն է եղել պետական պաշտոնյայի հետ յուրաքանչյուր 10-րդ շփումը: Դրա հետ մեկտեղ, նույն տարիների ընթացքում աճել է այն անձնաց քանակը, ովքեր համարում են, որ Հայաստանում կոռուպցիան աճել է նախորդ տարվա համեմատ:[15]

**Դիագրամ 17. Հայաստանի հասարակությունում `ա) Հայաստանում ընդհանուր վիճակի, բ) Հայաստանի տնտեսական վիճակի, գ) Հայաստանում կոռուպցիայի աճի[16] ընկալումները և դ) կոռուպցիոն [օբյեկտիվ] ռիսկը 2008-2010թթ.**

---

[12] Կոռուպցիոն ռիսկն իրենից ներկայացնում է պետական պաշտոնյայի հետ քաղաքացու շփման դեպքում՝ կաշառք տալու հավանականությունը:

[13] Կոռուպցիան Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտություն, - ԱՄՆ ՄԶԳ, Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագիր, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան, - Երևան 2011:

[14] Ցուցանիշը հաշվարկվել է որպես յուրաքանչյուր տարվա հետազոտության ընթացքում պետական պաշտոնյաներին հավելավճարներ տալու բոլոր հաղորդված դեպքերի հարաբերություն՝ պետական պաշտոնյաների հետ ծառայություն ստանալու նպատակով տեղի ունեցած բոլոր շփումներին (անկախ նրանից, թե ո՞ր պետական մարմնի պաշտոնյայի հետ է եղել այդ շփումը): Այսպես՝ 2008թ. հետազոտության ընթացքում հարցվածները հաղորդել են պետական պաշտոնյաների հետ շփման 4105 դեպքի մասին, որոնցից 630-ի դեպքում նրանք հավելավճար են վճարել ծառայության դիմաց: 2009 թվականին դրանց քանակը եղել է համապատասխանաբար՝ 4708 և 557, իսկ 2010 թվականին՝ համապատասխանաբար՝ 5438 և 562:

[15] Այն անձանց քանակը, ովքեր պատասխանել են, որ նախորդ տարվա համեմատ կոռուպցիան «Շատ ավելի բարձր» է կամ՝ «Որոշ չափով ավելի բարձր է»:

[16] Հասարակության Հարցվածների քանակը, ովքեր համարում են, որ կոռուպցիան աճել է նախորդ տարվա համեմատ («Շատ ավելի բարձր» կամ «Որոշ չափով ավելի բարձր»): Հաշվարկված է ըստ ՀՌԿԿ 2008-2010թթ. Հետազոտությունների տվյալների շտեմարանների:




Այս, առաջին հայացքից պարադոքսալ երևույթը հեշտությամբ բացատրվում է երկու հիմնական գործոնների միջոցով:[17] Առաջինն այն է, որ հասարակական կարծիքը բավական իներցիոն է՝ այն չի կարող արագորեն փոխվել և միշտ ճշգրիտ կերպով համապատասխանել օբյեկտիվ իրականությանը: Հետևաբար, անհրաժեշտ է որոշակի ժամանակ, որպեսզի կոռուպցիոն ռիսկերի տեղի ունեցած օբյեկտիվ նվազումը ընկալելի դառնա հասարակության համար: Երկրորդ, 2008-2010թթ. ընթացքում աճել է այն անձանց քանակը, ովքեր համարում են, որ Հայաստանի տնտեսական վիճակը «վատն է» կամ՝ «շատ վատը», ինչպես նաև աճել է այն անձանց քանակը, ովքեր «բավարարված չեն» կամ «ավելի շուտ բավարարված չեն» Հայաստանի ընդհանուր վիճակով:[18] Այդ իրողությունը հարցվողները «պայմանավորում են» կոռուպցիայի մակարդակի աճով:

2008-2010թթ. ընթացքում կոռուպցիոն ռիսկերը օբյեկտիվորեն նվազել են նաև հետազոտությամբ[19] ընդգրկված ոլորտների մեծ մասում (Աղյուսակ 2): Հատկապես կոռուպցիոն ռիսկերի կրճատման դրական տեղաշարժեր են գրանցվել պետական անվճար ծննդօգնության (13.9%), մաքսային ծառայության(10.2%), ոստիկանության (առանց պետավտոտեսչության) (7.9%) և պետավտոտեսչության ոլորտներում(3.8%):

**Աղյուսակ 2. Կոռուպցիոն ռիսկերը պետական ծառայողի հետ քաղաքացու շփման դեպքում (Այն անձնաց քանակը, ովքեր ստիպված են եղել կաշառք տալ՝ տվյալ հաստատությունների հետ առընչվելու դեպքում):**[20]

| Ոլորտ | 2008 | 2009 | 2010 | 2009-2008 | 2010-2008 |
|---|---|---|---|---|---|
| 1.Պետական անվճար ծննդօգնություն | 33.6% | 26.7% | 19.7% | -6.9% | -13.9% |
| 2.Առողջապահություն | 23.4% | 25.6% | 21.8% | 2.2% | -1.6% |
| 3.Կրթություն (մանկապարտեզներ, դպրոցներ, բուհեր) | 14.0% | 13.7% | 10.1% | -0.3% | -3.9% |
| 4.Պետական ռեգիստր | 14.3% | 9.1% | 12.3% | -5.2% | -2.0% |
| 5.Պաշտպանության համակարգ (բանակ) | 8.8% | 9.6% | 5.5% | 0.8% | -3.3% |

[17] Բացատրող գործոնների քանակն, անշուշտ, ավելի շատ է:

[18] Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների Հայաստանում 2008 թվականին աղքատության մակարդակը եղել է 27.6%, իսկ 2009 թվականին՝ 34.1%, այդ թվում շատ աղքատների քանակը եղել է 2008-ին՝ 12.6%, իսկ 2009-ին՝ 20.1%, ծայրահեղ աղքատների քանակը եղել է 2008-ին՝ 1.6%, իսկ 2009-ին՝ 3.6%: Տես՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2010, ՀՀ ԱՎԾ, Երևան 2010թ., էջ 34:

Բացի այդ, ըստ ՀՀ ԱՎԾ-ի սպառողական գների ինդեքսը Հայաստանում 2010 թվականին՝ 2009 թվականի համեմատ եղել է 108.2, իսկ պարենամթերքի համար՝ 109.4: 2011թ. առաջին եռամսյակում պարենային գների ինդեքսը 2010թ. առաջին եռամսյակի համեմատ կազմել է 111.1: Տես՝ Պարենային ապահովումը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2011, էջ 21 (Աղյուսակ 2.1.): Ակնհայտ է, որ պարենային ապրանքների գների նման աճը դժգոհություններ է առաջացնում բնակչության և հատկապես դրա անբարեկեցիկ շերտերում, որոնք իրենց եկամուտների նշանակալի մասն օգտագործում են պարենամթերք գնելու համար:

[19] Կոռուպցիան Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտություն, - ԱՄՆ ՄԶԳ, Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագիր, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան, - Երևան 2011:

[20] Աղյուսակում մզեցված են կոռուպցիոն ռիսկերի առավել նշանակալի նվազումները: Դիտարկվող ոլորտներում 2008-2010թթ. կոռուպցիոն ռիսկերը հաշվարկված են ՀՌԿԿ «Կոռուպցիան Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտություն» զեկույցի 125-126 էջերի Q26 և Q27 աղյուսակներում տրված՝ պետական մարմինների հետ առընչված անձանց և այդ առընչությունների ընթացքում հավելավճարներ տված անձանց բացարձակ արժեքների կիրառմամբ:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6.Դատախազություն | - | 16.7% | 23.1% | - | - |
| 7.Դատարաններ | - | 20.0% | 21.7% | - | - |
| 8. Դատական ակտերի հարկադիր կատարում | 18.9% | 20.0% | 19.2% | 1.1% | 0.3% |
| 9.Մաքսային ծառայություն | 34.6% | 46.4% | 24.4% | 11.8% | -10.2% |
| 10.Հարկային ծառայություն | 4.9% | 2.3% | 9.7% | -2.6% | 4.8% |
| 11. Լիցենզավորում և հավատարմագրում | - | - | 12.5% | - | - |
| 12.Պետավտոտեսչություն | 36.6% | 31.8% | 32.8% | -4.8% | -3.8% |
| 13.Ոստիկանություն (բացառությամբ պետավտոտեսչ.) | 21.1% | 16.7% | 13.2% | -4.4% | -7.9% |
| 14. Անշարժ գույքի պետական կադաստր | 18.6% | 14.2% | 16.5% | -4.4% | -2.1% |
| 15. Նոտարական ծառայություն | 10.6% | 11.4% | 11.7% | 0.8% | 1.1% |
| 16.Սոցիալական ապահովություն (թոշակներ, նպաստեր) | 13.3% | 9.8% | 9.8% | -3.5% | -3.5% |

Հասարակության ընկալումներում կոռուպցիան առավել տարածված է առողջապահության (68.3%), ընտրական համակարգերի (66.4%), կրթության ոլորտներում (62.3%) (Տես Աղյուսակ 3-ում): Դրանց են հետևում՝ պետավտոտեսչությունը (57.7%) և հարկային ծառայությունը (57.4%): Հասարակական ընկալումներում կոռուպցիայի տարածվածության առավել փոքր չափով աչքի է ընկնում համայնքային ծառայությունները (9.7%) և պետական ռեգիստրը (29.5%):

Մյուս կողմից, առանձին ոլորտներում կոռուպցիայի տարածվածության ընկալման տեսակետից գրանցվել են էական փոփոխություններ: Այսպես, 2010թ. 2008թ. նկատմամբ հասարակության ընկալումներում կոռուպցիայի տարածվածությունն էականորեն նվազել է (9.1%) ոստիկանությունում (առանց պետավտոտեսչության), պետավտոտեսչությունում (4.1%) և համայնքային ծառայություններում (4.0%): Կոռուպցիայի տարածվածության ընկալման նշանակալի աճ է գրանցվել լիցենզավորման և հավատարմագրման համակարգի (10.7%), նոտարական ծառայությունների (9.7%), առողջապահության (7.2%), դատական ակտերի կատարման (6.5%) ոլորտներում, քաղաքական կուսակցություններում (4.7%), անշարժ գույքի պետական կադաստրում (4.6%):

**Աղյուսակ 3. Կոռուպցիայի տարածվածության ընկալումների փոփոխությունների Հայաստանի հասարակությունում 2008-2010թթ[21]. Տրված է այն անձանց քանակը (տոկոսներով բոլոր հարցվածների նկատմամբ), ովքեր համարում են, որ տվյալ ոլորտում կոռուպցիան «շատ տարածված է» կամ «բավական տարածված է»:**

| Ոլորտ | 2008 | 2009 | 2010 | 2009-2008 | 2010-2008 |
|---|---|---|---|---|---|
| Առողջապահություն | 61.1% | 61.2% | 68.3% | 0.1% | 7.2% |
| Ընտրական համակարգ | 65.8% | 62.2% | 66.4% | -3.6% | 0.6% |
| Կրթություն | 57.9% | 56.0% | 62.3% | -1.9% | 4.4% |
| Պետավտոտեսչություն | 61.6% | 55.4% | 57.5% | -6.2% | -4.1% |
| Հարկային ծառայություն | 56.6% | 54.6% | 57.4% | -2.0% | 0.8% |
| Ոստիկանություն (բացառությամբ պետավտոտեսչ.) | 65.4% | 58.3% | 56.3% | -7.1% | -9.1% |
| Մաքսային ծառայություն | 54.0% | 52.5% | 54.2% | -1.5% | 0.2% |
| Դատական ակտերի կատարման մարմին | 37.3% | 51.9% | 43.8% | 14.6% | 6.5% |
| Անշարժ գույքի պետական կադաստր | 38.8% | 42.9% | 43.4% | 4.1% | 4.6% |
| Գործարար ոլորտ (բիզնես) | 32.5% | 38.0% | 42.2% | 5.5% | 9.7% |
| Պաշտպանության համակարգ | 42.6% | 41.8% | 41.1% | -0.8% | -1.5% |
| Քաղաքաշինություն (հողահատկացում, շինարար.) | 36.9% | 38.4% | 40.1% | 1.5% | 3.2% |
| Սոցիալական ծառայություն (թոշակներ, նպաստներ) | 34.5% | 34.1% | 36.4% | -0.4% | 1.9% |
| Քաղաքական կուսակցություններ | 31.4% | 31.3% | 36.1% | -0.1% | 4.7% |
| Նոտարական ծառայություն | 26.4% | 37.6% | 35.8% | 11.2% | 9.4% |
| Լիցենզավորում և հավատարմագրում | 24.5% | 34.3% | 35.2% | 9.8% | 10.7% |
| Պետական ռեգիստր | 26.6% | 29.5% | 29.5% | 2.9% | 2.9% |

[21] Կոռուպցիան Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտություն, - ԱՄՆ ՄԶԳ, Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագիր, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան, - Երևան 2011:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Համայնքային ծառայություններ | 13.7% | 9.0% | 9.7% | -4.7% | -4.0% |

Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումների համանման միտումներ են դիտարկվել նաև «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվության ինստիտուտի 2010թ. եռամսյակային հետազոտություններում (Տես՝ Դիագրամ 18 - Դիագրամ 25): Դիագրամներում տրված է այն անձանց քանակը, ովքեր համարել են, որ տվյալ ոլորտում կոռուպցիան աճել է:

**Դիագրամ 18. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները 2010թ., դպրոցներ**




**Դիագրամ 19. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները 2010թ., բուհեր**




**Դիագրամ 20. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները 2010թ., ճանա-պարհային ոստիկանություն**




**Դիագրամ 21. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները 2010թ., բուժհաս.**




**Դիագրամ 22. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները 2010թ., հարկային մարմիններ**




**Դիագրամ 23. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները 2010թ., ՏԻՄ**




**Դիագրամ 24. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները 2010թ., դատաի-րավական համակարգ.**




**Դիագրամ 25. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները 2010թ., կադաստր**




Ընդհանուր առմամբ, ըստ ՀՌԻՄԾ 2009-2012թթ. ռազմավարության միջոցառումների 2010թ. նախատեսված էր ապահովել 351 արդյունքներ, որոնցից “ամբողջությամբ կատարված” են 148-ը, “մասամբ է կատարված”՝ 141-ը, “Չկատարված արդյունքներ”-62: Եթե ամբողջությամբ իրականացված արդյունքը գնահատենք 1 միավոր, իսկ մասամբ իրականացված արդյունքը 0.5 միավոր, իսկ չիրականացված արդյունքը՝ 0 միավոր, ապա 2010թ. ակնկալվող արդյունքները իրականացված են 62.3

տոկոսով[22] (Տես՝ Աղյուսակ 4-ը): Նույն աղյուսակում տրված են ՀՌԻՄԾ 2010թ. ակնկալվող արդյունքների իրականացվածության բաշխումները ու դրանց կատարման մակարդակը ըստ ոլորտների:

Հարկ է նշել, որ 100%-ով իրականցված են Դատական ակտերի հարկադիր կատարման և Հրապարակային հաշվետվության ոլորտների միջոցառումների ծրագրերը: Իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում միջոցառումների իրականացվածությունը կազմել է 91.7%:Միջոցառումների իրականացման ամենացածր աստիճանը Կադրերի պատրաստման և վերապատրաստման (31.8%), Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմինների (33.8%), Քաղաքական կոռուպցիայի (34.7%) և Կոռուպցիայի քրեականացման (40.0%) ոլորտներում են:

**Աղյուսակ 4. ՀՌԻՄԾ 2010թ. ակնկալվող արդյունքների իրականացվածության բաշխումները ու դրանց կատարման մակարդակը ըստ ոլորտների:**

| Ոլորտ | Ամբող-ջությամբ | Մասնա-կիորեն | Իրակա-նացված չէ | Ընդա-մենը | Կատար-ման չափը,% |
|---|---|---|---|---|---|
| 4.1 Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտ | 1 | 1 | - | 2 | **75.0** |
| 4.10 Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն | 4 | - | - | 4 | **100.0** |
| 4.11 ՀՀ ոստիկանություն | - | 8 | 1 | 9 | **44.4** |
| 4.12 Քաղաքական կոռուպցիա | - | 5 | 2 | 7 | **35.7** |
| 4.13 Ընտրական համակարգ | 1 | 3 | - | 4 | **62.5** |
| 4.14 Տեղական ինքնակառավարում | 11 | 6 | 2 | 19 | **73.7** |
| 4.15 Մասնավոր հատված | 7 | 7 | - | 14 | **75.0** |
| 4.16 Բարեխղճությունը հանրային ծառայությունում | 20 | 14 | 8 | 42 | **64.3** |
| 4.2 Հանրային ֆինանսների կառավարման ոլորտ | 3 | 14 | 3 | 20 | **50.0** |
| 4.3 Պետական գնումների համակարգ | 1 | 9 |  | 10 | **55.0** |
| 4.4 Հարկային և մաքսային համակարգեր | 33 | 12 | 4 | 49 | **79.6** |
| 4.5 Կրթության ոլորտ | 7 | 8 | 2 | 17 | **64.7** |
| 4.6 Առողջապահության ոլորտ | 19 | 14 | 7 | 40 | **65.0** |
| 4.7 Դատական համակարգ | 5 | 2 | 1 | 8 | **75.0** |
| 4.8 Քրեակատարողական ծառայություն | 4 | 2 |  | 6 | **83.3** |
| 4.9 Իրավաբանական անձանց պետական գրանցում | 5 | 1 |  | 6 | **91.7** |
| 4.17 Հրապարակային հաշվետվություն | 2 |  |  | 2 | **100.0** |
| 4.18 Կոռուպցիայի քրեականացում և իրավապահ գործունեություն | 6 | 12 | 12 | 30 | **40.0** |
| 4.19 Կադրերի պատրաստում և վերապատրաստում, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարում | 2 | 10 | 10 | 22 | **31.8** |
| 4.20 Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցություն | 7 | 6 | 4 | 17 | **58.8** |
| 4.21 ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման համակարգը | 9 | 3 | 2 | 14 | **75.0** |
| 4.22 Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմիններ | 1 | 4 | 4 | 9 | **33.3** |
| **Ընդամենը** | **148** | **141** | **62** | **351** | **62.3** |

[22] Գնահատումը իրականացված է որպես վարիացիոն շարքի համակշռված միջին, այսինքն ( 148x 1 +141x0.5 + 62x0)/351= 0.623 կամ մոտավորապես 62.3 տոկոս:

ՀՌԻՄԾ 2010թ. արդյունքների իրականացվածության մակարդակը ըստ պատասխանատու կատարող պետական կառավարման մարմինների ներկայացված է Աղյուսակ 5-ում: Հարկ է նշել, որ ՀՌԻՄԾ 2010թ. ակնկալվող արդյունքների իրականացվածության միջինից ցածր կատարման մակարդակ են ունեցել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը(16.7%.), ՀՀ Դատախազությունը (36.1%.), ՀՀ ԿԱ Ոստիկանությունը (42.3%), ՀՀ ֆինանսների նախարարությունը (55.9%.), ՀՀ կրթության ու գիտության նախարարությունը (59.6%.), ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը(60.7%) և ՀՀ կառավարության աշխատակազմը (55.1%):

Աղյուսակ **5.** ՀՌԻՄԾ **2010թ.** արդյունքների իրականացվածությունը ըստ պետական կառավարման մարմինների

| Պետական կառավարման մարմին | Ամբող-ջությամբ | Մասնա-կիորեն | Իրակա-նացված չէ | Ընդա-մենը | Իրակա-նացվա-ծությունը |
|---|---|---|---|---|---|
| Դատական դեպարտամենտ | 1 | 2 | | 3 | **66.7%** |
| ՀՀ պետական կառավարման բոլոր մարմիններ[23] | 1 | | | 1 | **100.0%** |
| ՀՀ Կենտրոնական բանկ | 1 | 1 | | 2 | **75.0%** |
| ՀՀ Ֆինանսների նախարարություն | 6 | 26 | 2 | 34 | **55.9%** |
| ՀՀ Վերահսկիչ պալատ | | | 1 | 1 | **0.0%** |
| ՀՀ Պետական եկամուտների կոմիտե (ՊԵԿ) | 33 | 13 | 4 | 50 | **79.0%** |
| ՀՀ Կրթության և գիտության նախարարություն | 8 | 15 | 3 | 26 | **59.6%** |
| ՀՀ Առողջապահության նախարարություն | 19 | 14 | 7 | 40 | **65.0%** |
| ՀՀ Արդարադատության նախարարություն | 22 | 19 | 6 | 47 | **67.0%** |
| ՀՀ Ոստիկանություն | | 11 | 2 | 13 | **42.3%** |
| ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն | 10 | 6 | 2 | 18 | **72.2%** |
| ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն | 6 | 6 | | 12 | **75.0%** |
| ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդ | 13 | 8 | 7 | 28 | **60.7%** |
| ՀՀ Կառավարության աշխատակազմ | 20 | 14 | 15 | 49 | **55.1%** |
| ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 3 | 2 | 1 | 6 | **66.7%** |
| ՀՀ Դատախազություն | 5 | 3 | 10 | 18 | **36.1%** |
| ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն | | 1 | 2 | 3 | **16.7%** |
| Ընդամենը | **148** | **141** | **62** | **351** | **62.3%** |

Ստորև ամփոփ ներկայացված են ՀՌԻՄԾ 2010թ. միջոցառումների մոնիտորինգի հիմնական արդյունքները, որոնք ամբողջությամբ կատարված են 2010թ. ընթացքում: Դրանց կատարման վիճակի ու ընթացքի վերաբերյալ մանրամասն նկարագրությունն ու գնահատականները տրված են սույն հաշվետվության 4-րդ բաժնում:

**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ոլորտում** ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցման նպատակով ապահովվել է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրների հասանելիությունը ՀՀ ՖԴԿ և ֆինանսական հաստատությունների համար: Բարձրացել է ՓԼ/ԱՖ դեպքերի բացահայտման արդյունավետությունը: Միայն 2010թ. ՓԼ/ԱՖ հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է 12 գործ, (2008թ. 1, իսկ 2009 թվականին 10 քրեական գործեր), այդ թվում 4 գործ հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դատարանների կողմից մեղադրական դատավճիռներ են կայացվել 5 գործով 5 մարդու նկատմամբ, բոլորի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում: Նախաքննության փուլում է գտնվել 13 գործ (2009 թվականին 10 քրեական գործ): Ընդհանուր առմամբ, 2010թ. ընթացքում ՖԴԿ հաղորդման հիման վրա հարուցվել է 5 քրեական գործեր, իրավապահ մարմինների նախաձեռնությամբ՝ 8: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ ներկայացված գնահատականների

[23] Այս ակնկալվող արդյունքը իրականացվել է ՀՀ Կառավարության աշխատակազմի կողմից:

համաձայն` հանձնարարականների կատարման առումով Հայաստանը գտնվում է 10-րդ տեղում, որը բավականին մեծ առաջընթաց է թվով 29 պետությունների ցուցակում:

**Հանրային ֆինանսների կառավարման և պետական գնումների ոլորտում** իրականացված աշխատանքները համահունչ են ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներին: 2011 թվականի պետական բյուջենի նախագծի բաղկացուցիչ մաս հանդիսացող ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի կազմում ներառվել են պետական կառավարման մարմինների` գերատեսչական մակարդակով իրականացվող ծրագրերի կատարողական չափորոշիչները (ոչ ֆինանսական արդյունքները): Ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով բյուջետային փաստաթղթերի մշակման ընթացակարգերը համապատասխանում են օրենսդրության պահանջներին: Ծրագրային բյուջետավորման գործընթացում ընդգրկված են պետական մարմինների 94%-ը (57 գերատեսչություն): Ներքին աուդիտի մասին, Գնումների մասին ՀՀ օրենքները ընդունվել են ՀՀ ԱԺ-ի կողմից: Գնումների մասին ՀՀ օրենքով գնումների համակարգը լիովին ապակենտրոնացվել է, բոլոր պետական մարմինները 2011թ.-ից ինքնուրույն են կազմակերպելու իրենց գնումները: 2009թ. գնումների կատարման հաշվետվությունը հրապարակվել է 2010թ.: Նախապատրաստվել են նաև այդ օրենքների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական փաստաթղթերը: Այս քայլով օրենսդրական պայմաններ են ստեղծված հանրային ֆինանսների կարգապահության ամբողջականացման, հաշվետվողականության ու թափանցիկության բարելավման ուղղությամբ:Դրանց գործնական կիրառման արդյունքները ակնկալվում են 2011-2012թթ-ին:

Վերահսկիչ պալատն իր իրավասության շրջանակներում համաչափորեն կիրառում է վերահսկողության` ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության տեսակները, բացառությամբ: 2010թ. Վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում կազմված թվով 40 ընթացիկ հաշվետվություններից յուրաքանչյուրի վերաբերյալ ստացվել է պաշտոնական արձագանք: Բոլոր հաշվետվությունները, բացառությամբ «հույժ գաղտնի» տեղեկատվություն պարունակող թվով 5 ընթացիկ հաշվետվության, տեղադրված ենն Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքում (www.coc.am), իսկ «հույժ գաղտնի» տեղեկատվություն պարունակող հաշվետվություններին կարելի է ծանոթանալ ՀՀ Ազգային ժողովում` օրենքով սահմանված կարգով:

**Հարկային ոլորտում** հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները նվազեցնելու ուղղությամբ միջազգային լավագույն փորձի հիման վրա ներդրվել է հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վեր հանելու և տնտեսական հանցագործությունների և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդներ և ընթացակարգեր: Այդ թեմայով կազմակերպված վերապատրաստման դասընթացների արդյունքում փորձագետի կողմից վերապատրաստվել են 112 հարկային ծառայողներ` այդ թվում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ստուգումներ իրականացնող ստորաբաժանումների աշխատակիցներ, քննիչներ, հետաքննիչներ և օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցներ: Վերապատրաստված հրահանգիչների կողմից վերապատրաստվել են 300 վերոնշյալ ոլորտների հարկային այլ ծառայողներ:

Ընդլայնվել է էլեկտրոնային հարկային ծառայությունների շրջանակը: Ենթաօրենսդրական ակտով ամրագրվել է հարկային հաշվետվությունները բացառապես փոստով կամ էլեկտրոնային եղանակով ընդունելու պահանջը: Ներդրված է հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների առաքման ավտոմատացված համակարգը: Հարկային մարմիններին ներկայացվող հաշվետվությունների 33.9 % ը իրականացվում է ոչ առձեռն եղանակով: 2010թ. հունվարի 1-ից հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացման ծրագրային համակարգում ներդրվել են 27 հաշվետվություններ: Հարկ վճարողների հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու կարգավորման վերաբերյալ իրազեկումը կատարվել է ՀՀ պաշտոնական տեղեկագրերում, www.taxservice.am և www.arlis.am ինտերնետային կայքերի միջոցով, բուկլետների տպագրման միջոցով, հեռուստատեսային հաղորդումներում առանձին անդրադարձներով:

Բարելավվել է հարկային մարմնի գործունեության հրապարակայնությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը:Ներդրված ու ամբողջությամբ գործում է Հարկային ծառայության գործունեության և պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման ընթացակարգերը և Հասարակությանն ու հարկ վճարողներին վստահություն ներշնչող «թեժ գիծը»: ՊԵԿ “թեժ գիծ” ծառայությանը կարելի է դիմել ինչպես հեռախոսային կապով, այնպես էլ` էլեկտրոնային փոստով (info@petekamutner.am) և ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայքի ինտերֆեյսից` “Հետադարձ կապ” բաժնում: 2010թ. ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ “թեժ գծով” ստացվել է 19950 դիմում, որից 1398` բողոքներ և առաջարկություններ, իսկ մնացածը` հարցադիմումներ: Բոլոր հարցադիմումները և բողոքները սահմանված կարգով ստացել են ընթացք:

Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծման ծրագրի շրջանակներում 2010թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչությունում և Վանաձորի տարածքային հարկային տեսչությունում գործարկվել են հարկ վճարողների սպասարկման կենտրոնները: Գործարկվել է էլեկտրոնային հաշվետվությունների սպասարկման կենտրոնը:

Սահմանվել է հարկային ծառայության ներհամակարգային միասնական ընթացակարգեր և դրանց կիրարկման ուղեցույցներն ու ձեռնարկները: Հաստատվել են Տրանսպորտի ոլորտում հարկային ստուգման","Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և դրանց շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգումների իրականացման", "Անշարժ գույքի գործարքների ստուգումների իրականացման","Զբոսաշրջության ոլորտում հարկային ստուգումների" ուղեցույցները: Հարկային վարչարարության մասով 2010թ.-ի ընթացքում մշակվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամաններով հաստատվել են 14 ընթացակարգեր: Այդ թեմաներով կազմակերպված դասընթացների շրջանակներում ուսուցանվել են 184 հարկային ծառայողներ:

Հստակեցվել են հարկային ծառայողների պաշտոնեական առաջխաղացման ընթացակարգերը: Հարկային ծառայողների պաշտոնի նկարագրերը սահմանված են, ներդրված է աշխատանքի կատարողական ցուցանիշների վրա հիմնված պարգևատրման համակարգը: 2010թ. ընթացքում իրականացվել է հարկային ծառայողների 95 պաշտոնեական առաջխաղացում և 471 ատեստացիա: Հարկային մարմինների աշխատողների միջին աշխատավարձը 2 անգամ գերազանցում է մասնավոր հատվածի ղեկավար անձնակազմի աշխատողների միջին աշխատավարձին:
Կատարելագործվել է հարկային ծառայողների վերապատրաստման համակարգը: Հաստատված են հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման ուսումնական ծրագրերը, իսկ հարկային ծառայողների 93 տոկոսը վերապատրաստված է այդ ծրագրերով:

Ուժեղացվել է հարկային ծառայողների գործունեության օրինականության նկատմամբ ներքին հսկողությունը:Վերանայվել են հարկային ծառայության գործունեության օրինականության հսկողության ընթացակարգերը: 2010թ. ընթացքում իրականացվել է թվով 66 ծառայողական քննություն, որի ընթացքում 8 հարկային ծառայողներ ազատվել են պաշտոնից:

**Մաքսային ոլորտում** բարձրացել է մաքսային ծառայության կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը: Ներդրվել է մաքսային ծառայության կատարողականի գնահատման համակարգ և դրա վրա հիմնված մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման ընթացակարգեր և մաքսային ծառայողի պարտադիր պարբերական ռոտացիայի կարգ: 2010թ.մաքսային ծառայողների 26 տոկոսը ենթարկվել է ռոտացիայի: Բոլոր մաքսային ծառայողները ընդգրկված են աշխատանքի կատարողականի գնահատման համակարգում: Ներդրվել է մաքսային ծառայողի էթիկայի կանոններ և սահմանվել է դրանց նկատմամբ վերահսկողություն: Մաքսային ծառայողների էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ բողոքներ չեն եղել:Մաքսային գործունեության հաշվետվությունը հրապարակված է ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքէջում:

Ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության համակարգի ներդրման ուղղությամբ վերանայվել են մաքսային հսկողության ռիսկի չափորոշիչները: Ընդլայնվել է մաքսային հայտարարագիր ներկայացնողների շրջանակը, ինչպես նաև մեծացել է մաքսային միջնորդի ինստիտուտի մատչելիությունը: Բոլոր մաքսատներում ամբողջությամբ ներդրված է ինքնահայտարարագրման համակարգը և բոլոր տնտեսավարողները մաքսային հայտարարագրերը ներկայացվում են առանց մաքսային տեսուչի միջամտության, անմիջականորեն ԱՏԳ մասնակցի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի կողմից: Բոլոր մաքսային մարմինները, ինչպես նաև դրանց գործունեության վայրում գտնվող մաքսային պահեստները սպասարկվում են մաքսային միջնորդական ծառայություն իրականացնող անձանց կողմից: Մաքսային միջնորդների համար իրականացվել է պարտադիր ուսուցման երկու որակավորման դասընթաց:

ՀՀ մաքսային սահմանով ավտոտրանսպորտային միջոցներով մեկնող և ժամանող քաղաքացիների մաքսային հսկողության երկուղային (կարմիր և կանաչ ուղիներ) համակարգը ներդրված է 6 մաքսակետերից 5-ում: Կանաչ ուղով ընտրված հայտարարագրերի թվաքանակը հայտարարագրերի ընդհանուր թվաքանակում կազմում է 68,4 տոկոս:Կրճատվել է մաքսային հսկողության նպատակով ներկայացվող փաստաթղթերի թիվը՝ 6-ից դարձել է 3: Ոչ սակագնային կարգավորում չպահանջող ապրանքների դեպքում, ներմուծման մաքսային ձևակերպումների ողջ ժամանակահատվածը տատանվում է 2,5 – 6,5 ժամ:

Տնտեսվարող սուբյեկտների միջև մաքսային բեռի արդարացի բաշխումը և մաքսային ծառայության թափանցիկությունն ու օրինականության ապահովման ուղղությամբ ապրանքների մաքսային արժեքի գնահատման ընթացակարգերը համապատասխանում են ԱՀԿ պահանջներին և տեղադրված են մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում: Գործարքի գնի

մեթոդով որոշված գործարքները կազմում են  գործարքների ընդհանուր թվաքանակի 67,8 տոկոսը: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքի և թեժ հեռախոսագծի միջոցով մաքսային մարմնի ղեկավարի, քաղաքացիների և տնտեսվարողների միջև արդյունավետ հաղորդակցություն:Մաքսային վարչարարության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ փոփոխություններն ու նորարարությունները օպերատիվ կերպով լուսաբանվվել է  պաշտոնական էլեկտրոնային կայք էջի միջոցով, հրապարակվում է <Մաքսատուն> պարբերականը: ՊԵԿ համակարգում գործում է զանգատարկման հանձնաժողով, Հասարակությանն ու տնտեսվարող սուբյեկտներին վստահություն ներշնչող թեժ գիծը, իսկ մաքսային ծառայության պաշտոնական կայքում` հետադարձ կապը:

Մաքսային իրավախախտումների համար կիրառված պատասխանատվության միջոցների թիվը 2010թ.  կազմել է 2092: Դրանք,ինչպես նաև մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու վերաբերյալ ուղեցույցերը տեղադրված են ՊԵԿ-ի էլեկտրոնային կայքէջում:

**Կրթության ոլորտում`** ի կատարումն ոլորտի կառավարման թափանցիկության, հաշվետվո-ղականության ու օրինականության բարձրացման ռազմավարական դրույթի` ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում և <<Կրթություն>> շաբաթաթերթում հրապարակվել են հանրակրթական ուսումնական հաս-տատությունների 2009թ. տեսչավորման և ուսումնասիրությունների ու ստուգումների հաշվե-տվությունները: Հաստատվել են <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը>>, <<Պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը>> և <<ՈՒսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգը>>: Մշակվել է նաև <<Հանրակրթական դպրոցի մանկավարժական աշխատողների անվանացանկը և դրանց նկարագիրը>>: Դրանք ներդրվելու են 2011թվից:

Ոլորտում հանրակրթական դպրոցների կառավարման թափանցիկության, հրապարակայ-նության, հաշվետվողականության ու օրինականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում` մշակվել և հաստատվել է հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությունը, որտեղ վերանայվել են խորհրդի ձևավորմանը վերաբերող դրույթները, մասնավորապես` կրթության կառավարման լիազորված մարմինը ստացել է մշտական ձայնի իրավունք խորհուրդների կազմում, որով ուղղակի պատասխանատվություն է ստանձնել խորհուրդների գործունեության համար, լրացվել է տնօրենի լիազորությունները, խստացվել են տնօրենի ընտրության պահանջները, սահմանվել են դպրոցի արտաբյուջետային միջոցների տնօրինման ուղղությունները, որոնք պարտադիր են լինելու ցանկացած դպրոցի խորհրդի համար, սահմանվել են ձեռնարկատիրական գործունեության ուղղությունները, ամրագրվել են դպրոցի կառավարման և վերահսկողության գործառույթներում ծնողական, մանկավարժական և մեթոդական խորհուրդների մասնակցությունն ապահովող դրույթները: Նախատեսվում է նշված ընթացակարգերը ներդնել 2011 թվականից:

Միասնական և ավարտական քննությունների թափանցիկության ապահովման դրույթի շրջանակներում ծնողները ներգրավված են  քննությունների ընթացքի նկատմամբ վերահսկողության գործընթացում: Մասնավորապես, ներկա են գտնվում թեստերի ծրարների բացմանը, մոնիտորների միջոցով հետևում են քննության գործընթացին, զլմ-ները լուսաբանում են քննական գործընթացը: Քաղաքացիական հասարակության միավորումները պատշաճ տեղեկատվություն են ստանում քննական գործընթացի  վերաբերյալ:

**Առողջապահության ոլորտում`**առողջապահության համակարգում զնագոյացման համակարգի բարելավման և ոչ պաշտոնական վճարումների համար նպաստավոր պայմանների վերացման դրույթի շրջանակում` բուժհաստատությունների ընդհանուր ծախսերում աշխատանքի վարձատրմանն ուղղվող ծախսերը կազմել են 40-70 տոկոս` պայմանավորված բուժհաստատության տեսակով (հիվանդանոցային, արտահիվանդանոցային):

Անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկի հստակեցման և ցանկում երկակիության և տարընթերցման հնարավորությունների բացառման դրույթի շրջանակում վերանայվել և հստակեցվել են անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող վիճակները և հիվանդությունները /մանկական և մեծահասակ բնակչության համար/: Չափորոշիչն ամբողջությամբ տեղադրված է ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական էլեկտրո-նային կայքում www. Moh.am:

Բուժհաստատությունների գործունեության  թափանցիկության ու  հաշվետվողականության բարձրացման դրույթի ուղղությամբ` ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1529-Ա հրամանով սահմանվել են առողջապահական կազմակերպությունների

կայքերի կառուցվածքը և կայքերի բովանդակությանը ներկայացվող պահանջները, որոնք պարունակում են բուժհաստատությունների պաշտոնական կայքերում հաստատված ցանկով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկն ու չափորոշիչները:

Հիվանդների իրավունքների լիարժեք իրականացման ապահովման դրույթի ուղղությամբ ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 14-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 1991-Ա հրամանի 8-րդ հավելվածով նախատեսված է, որ ծննդատան մուտքի մոտ, ընդունարանում և յուրաքանչյուր հարկում, տեսանելի և աչքով ընթեռնելի տեղում պետք է փակցվի տեղեկատվություն՝ մատուցվող ծառայությունների մասին, որում պետք է պարտադիր նշվի այն մասին, որ ծննդատանը բոլոր բուժծառայությունները անվճար են:

Դեղերի ստվերային շրջանառության կրճատման և դեղաշրջանառության ոլորտի մասնագիտական հսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝ ՀՀ առողջապահության նախարարի 02.05.2011թ. N 1069-Ա հրամանով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կազմում ստեղծվել է «Պատշաճ արտադրական գործունեության և պատշաճ բաշխման գործունեության (այսուհետ՝ ՊԱԳ/ՊԲԳ)» փորձագիտական բաժին:

Դեղերի ոչնչացման գործընթացի օրինականության ապահովման ուղղությամբ՝ ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի անվտանգ ոչնչացման գործընթացները և վերահսկողությունն իրականացվում են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 04.03.2008թ. թիվ 03-Ն հրամանի, որը մշակվել է ԱՀԿ երաշխավորություններին համապատասխան:

Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության բարձրացման դրույթի ուղղությամբ ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 40-Ա հրամանով հաստատվել են «Առողջության առաջնային պահպանման օղակի բուժքրոջ կլինիկական ուղեցույցները և վարման ընթացակարգերը», իսկ 2010 թվականի փետրվարի 16-ի թիվ 191-Ա հրամանով հաստատվել են «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի համար առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման կլինիկական ուղեցույցները»:

**Դատական համակարգում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման առաջընթացը գնահատվում է բավարար: Մասնավորապես, ընդհանուր իրավասության դատարանների դատավորների աշխատավարձի դրույքաչափի բարձրացման ուղղությամբ ուսումնասիրվել է լավագույն միջազգային փորձը:

Արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեության ցանկացած ձևով միջամտելու համար քրեական պատասխանատվության խստացման ուղղությամբ մշակվել են «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» (2010 թ. դեկտեմբերի 22-ին ՀՕ-9, ՀՕ-10) ՀՀ օրենքները, որոնցով սահմանվել են դատավորի կողմից կաշառք ստանալու, շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու, արդարադատության իրականացմանը ցանկացած ձևով միջամտելու համար պատասխանատվության միջոցներ

Դատավորների թեկնածուների նախնական ուսուցման և դատավորների վերապատրաստման գործընթացի բարելավման միջազգային փորձի հիման վրա օրենսդրական նախագծերով դատավորի թեկնածու դատախազների, փաստաբանների և քննիչների թեկնածությունների ուսուցման ժամկետը 6 ամսվա փոխարեն սահմանվելու է 1 տարի: Ընդ որում, նշված նախագծով առանձնահատկություն սահմանված չէ, նրանք բոլորը ընդհանուր հիմունքներով պետք է ուսուցում անցնեն Արդարադատության ակադեմիայում:

ՀՀ դատական դպրոցի կառավարման խորհուրդը հաստատել է Դատավորների, դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց 2010թ. վերապատրաստման ծրագիրը: Ծրագրում ներառվել են կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոններին վերաբերող ուղղություններ, որոնք ներառում են նաև միջազգային փորձը: 2010թ. ընթացքում բոլոր դատավորները

վերապատրաստվել են դատավորի վարքագծի կանոնները թեմայով, իսկ կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմայով վերապատրաստվել է 200 դատավոր:

**Քրեակատարողական ծառայության ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման իրավիճակը գնահատվում է բավարար: Հասարակական վերահսկողության դիտորդների խմբի հաշվետվությունները և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի մեկնաբանությունները հրապարակվել են ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում:Կատարելագործվել են քրեակատարողական ծառայողների վերապատրաստման ծրագրերը: Քրեակատարողական ծառայության շահերի բախման, էթիկայի կանոններով և հակակոռուպցիոն այլ թեմաներով կատարելագործվել են 9 վերապատրաստման ծրագրեր:Քրեակատարողական ծառայողի և պատիժ կրող անձանց սերտաճման հնարավորությունների բացառման ուղղությամբ օրենսդրորեն սահմանվել են քրեակատարողական ծառայողին այլ պաշտոնի փոխադրելու իմպերատիվ դեպքերը՝ քրեակատարողական հիմնարկի պետերի պարտադիր ռոտացիայի սկզբունքը:

**Իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման իրավիճակը գնահատվում է բավարար: Իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի պարզեցման ուղղությամբ ներդրվել է իրավաբանական անձանց պետական գրացման ժամանակ նրանց քրեական անցյալի վերաբերյալ տեղեկությունների ստուգման մեխանիզմ, ըստ որի պետական գրանցման մերժման հիմք է հանդիսանում նաև նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպության հիմնադրի, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու դատապարտված լինելը՝ պատժի կատարման ժամկետում: 2011. հունվար ամսվա դրությամբ վերը նշված հիմքով իրավաբանական անձանց գրանցման մերժումներ չեն եղել:

Սահմանվել են ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքի միջոցով առևտրային իրավաբանական անձանց պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի նմուշային ձևերը: Պետական ռեգիստրի գործակալության կողմից մատուցվող ծառայություններից էլեկտրոնային եղանակներով օգտվողների թիվը 2010թ. կազմել է 387:

իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում մեկ պատուհանի սկզբունքի կիրառման գործում այլ պետական մարմիններից պահանջվող փաստաթղթերը իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության միջոցով ստանալու ուղղությամբ մշակված է փորձնական ծրագիր, որը արդեն պատրաստ է փորձարկման համար, իսկ ծրագիրը ամբողջությամբ կկիրառվի 2011թ. մարտից: Օրենսդրորեն պետական գրանցող մարմնի հարցմանը հարկային մարմինները նախկին 30 օրվա փոխարեն պարտավոր են արդեն պատասխանել 20 օրվա ընթացքում:

**Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման իրավիճակը գնահատվում է բավարար:

Հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու կարողությունների բարձրացման ուղղությամբ ներդրվել է պարտապանի գույքի հայտնաբերմանն ուղղված հարցումների էլեկտրոնային համակարգ: 2010 թվականի դրությամբ համակարգին միացված են 16 առևտրային բանկեր, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը: Դրա արդյունքում պարտապանի գույքը հայտնաբերելու համար պահանջվող միջին ժամկետը նախորդ տարվա համեմատությամբ 15 օրից կրճատվել է 2 օրվա: Հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը չհայտնաբերելու դեպքերի հարաբերությունը ԴԱՀԿ վարույթի շրջանակներում գույքի հայտնաբերման դեպքերին կազմել է 4.1 տոկոս:

Բարելավվել ԴՀԱԿ-ի նկատմամբ ՀՀ արդարադատության նախարարության շրջանակներում իրականացվող վերահսկողության մեխանիզմները: Վերանայվել են դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդներն և ընթացակարգերը:Սահմանվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության արդյունքների ամփոփման ընթացակարգ, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծառայողների նկատմամբ կարգապահական վարույթի նյութեր նախապատրաստելու և վարույթ հարուցելու միասնական կարգ: Դրա արդյունքում 2010թ. ծառայողների նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցների թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին

կազմել է 5.6%, այն դեպքում երբ կիրառված խրախուսման դեպքերի թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին կազմել է 70.22 տոկոս:

**Ոստիկանության ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման իրավիճակը և առաջընթացը գնահատվում է բավարար:

Ճանապարհային երթևեկության կանոններն ու դրանց խախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմերի կատարելագործման վերաբերյալ ռազմավարական դրույթի 2010թ. «Ակնկալվող արդյունքները» ուժը կորցված են ճանաչվել ՀՀ կառավարության 02.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 748-Ն որոշմամբ:

Բարելավվել է բնակչության պետական ռեգիստրի համակարգը: ՀՀ կառավարությունը << ՀՀ –ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին>> թիվ 1231-Ն որոշման մեջ լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին>> որոշման մեջ կատարված փոփոխություններով հստակեցրել է պետական ռեգիստրում քաղաքացիների հաշվառման մասին տեղեկանքների ձեռքբերման ընթացակարգերը: Պետական ռեգիստրի համակարգում տվյալների անճշտությունների հետ կապված դիմումների հարաբերությունը նույն ժամանակահատվածում տվյալների բանկի վերանայումների ու թարմացումների ընդհանուր թվաքանակին կազմել է 25,5 տոկոս:

Ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման բարդությունները կրճատելու նպատակով շահագործման է հանձնվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հեռախոսային, ձայնային պորտալը, որին միանալով քաղաքացիները հնարավորություն ունեն երեք լեզվով ստանալ տեղեկատվություն այն բոլոր գործառույթների վերաբերյալ, որոնք իրականացվում են ԱՎՎ և ենթակա անձնագրային ծառայությունների կողմից: ՀՀ ոստիկանության ԱՎՎ տարածքային 10 անձնագրային ծառայություններում տեղադրվել են ծառայությունների մատուցման համար նախատեսված պետական տուրքերը, վարչական տուգանքները և այլ վճարներն ընդունող էլեկտրոնային տերմինալներ, <<ԴԱՏԱԼԵՔՍ>> էլեկտրոնային իրավական տեղեկատու կրպակը, ինչի շնորհիվ քաղաքացիները հնարավորություն ունեն անվճար ծանոթանալու ՀՀ օրենսդրությանը, գործող նորմատիվ իրավական ակտերին, օգտվել ՀՀ պետական, դատական և կառավարման այլ մարմինների ինտերնետային կայքերից: Ստեղծվել է արագ արձագանքման <<ԹԵԺ ԳԻԾ>> ծառայությունը: Ոստիկանության կայք էջից օգտվողների թիվը օրական կազմում է մոտ 100-120 մուտք: ՀՀ ոստիկանության ԱՎՎ Նոր- Նորքի բաժանմունքում ներդրվել է քաղաքացիներին քաղաքակիրթ, արդյունավետ և թափանցիկ սպասարկելու ժամանակակից չափանիշներին համապատասխանող ծառայություն՝ <<Մեկ դահլիճի>> սկզբունքով:

***Քաղաքական կոռուպցիայի ոլորտում*** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման իրավիճակը և առաջընթացը գնահատվում է անբավարար, քանի որ ՀՀ արդարադատության նախարարությունը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից: Այդուհանդերձ, հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի ընդունմամբ մասնակիորեն կանոնակարգվել են նաև ՀՀ ԱԺ պատգամավորների, որպես բարձրաստիճան պաշտոնատար անձինք, էթիկայի ու շահերի բախման հարաբերությունները, գույքի ու եկամուտների ու այլ շահերի հայտարարագրման մեխանիզմները:

**Ընտրական համակարգում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար: Բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովի անդամների, ՀՀ ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում գրանցված թեկնածուների անձեռնամխելիության վերացման գործում "ՀՀ ընտրական օրենսգրքում" փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին" ՀՀ օրենքով բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովի անդամների և ՀՀ ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում գրանցված թեկնածուների անձեռնամխելիությունը վերացված է:

**Տեղական ինքնակառավարման ոլորտում** համայնքի ֆինանսական անկախության և համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կառավարման արդյունավետության ուղղությամբ մշակվել է համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման պլանների մշակման վերաբերյալ ուղեցույց և տրամադրվել է բոլոր համայնքներին:

ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացման ուղղությամբ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ մշակվել և ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն

հրամանով կիրառության մեջ են դրվել գույքի պետական գրանցման գործընթացը պարզեցնող իրավական ակտեր և ընթացակարգեր:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայություններում տեղադրված են էլեկտրոնային կառավարման համակարգեր, գործառույթներն իրականացվում են տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալների էլեկտրոնային բանկերի կիրառմամբ:

ՏԻՄ-երի կարողությունների զարգացման և համայնքային ծառայության համակարգի ամբողջականացման ուղությամբ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» թեման ընդգրկված է համայնքային ծառայողների վերապատրստման ծրագրում, իսկ 2010 թվականին վերապատրաստվել է 856 համայնքային ծառայող:

**Մասնավոր հատվածում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար:Կոռուպցիայի առաջարկի կանխարգելման գործում, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (IFRS) ու Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը (IFRS for SME) թարգմանվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան և հրապարակվել:Ստանդարտները կիրառության մեջ են դրվել 2011 թվականի հունվարի 1-ից:

Մրցակցության հավասար պայմանների ապահովման ուղղությամբ ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովը 2010 թվականի հոկտեմբերի 22-ին ընդունել է «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2010-2012 թվականների ռազմավարության ծրագիրը: 2010թ. ընթացքում հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվել է 124 (հարյուր քսանչորս) վարչական վարույթ, որոնց արդյունքում կիրառվել է 104 (հարյուր չորս) պատասխանատվության միջոց:

Մասնավոր հատվածի կազմակերպություններում բարեխղճության նորմերի ներդրման ուղղությամբ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի (ԱԱՊ) կողմից գործարար համայնքի համար մշակել և հրատարակել է "Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը", որը ներկայացվել է ինչպես գործարար համայնքին, այնպես էլ պետական հատվածին: "Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը", ներառում է Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերն և էթիկայի կանոնները:

Առևտրային կազմակերպությունների և պետության միջև համագործակցության խրախուսման գործում ՀՀ ԱԱՊ կողմից վարվում է «Վստահելի գործընկերներ» գրանցամատյանը, իրականացվում «Մերկուրի մրցանակաբաշխությունը»: Արդեն իսկ գործում է e-gov.am-1 էլեկտրոնային կառավարման պորտալը, որում մատուցվում են լիցենզիաների հայտերի էլեկտրոնային ընդունման, կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման, հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման, էլեկտրոնային վիզայի, Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման, էլեկտրոնային ստորագրությունների ստացման և այլ ծառայություններ: Հրապարակային և թափանցիկ կառավարման ապահովման նպատակով e-gov.am-1 էլեկտրոնային կառավարման պորտալում ներդրվել է նաև պետական գերատեսչությունների կողմից մեկ անձից կատարվող գնումները ներկայացնող` "Մեկ անձից կատարվող գնումներ" բաժինը: ՀՀ կառավարությունըհաստատել է ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, որով սահմանվել են ընկերությունների կորպորատիվ կառավարման սկզբունքների միջազգային լավագույն պրակտիկայից բխող չափանիշները` հաշվի առնելով Հայաստանում առկա պրակտիկան և միջավայրը:

**Բարեխղճությունը հանրային ծառայության ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար: Մշակված ու ՀՀ ԱԺ կողմից ընդունված "Հանրային ծառայության մասին" ՀՀ օրենքը կանոնակարգում է հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման միասնական սկզբունքները: Առանձին բաժնով կանոնակարգված են ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկան, շահերի հայտարարագրման մեխանիզմներն ու շահերի բախման դեպքերի վարույթի իրականացման կարգերը:

Հանրային ծառայության արդյունավետության բարձրացման ուղղությամբ Քաղաքացիական ծառայության մասին օրենքի փոփոխությամբ ՀՀ ՔԾԽ կողմից սահմանվել է կրտսեր պաշտոնների համալրման նոր ընթացակարգ: ՀՀ ՔԾԽ կողմից առնվազն երեք ամիսը մեկ անգամ անց է կացվելու

թեստավորում, որի արդյունքում հավաստագիր ստացած քաղաքացիները կրտսեր թափուր պաշտոնի զբաղեցման համար դիմում են ներկայացնում համապատասխան աշխատակազմերի ղեկավարներին: ՔԾ օրենքը սահմանել է նաև հարցազրույցների գնահատման բալային համակարգ, ինչպես նաև մրցույթում հաղթող թեկնածուների ընտրության կոլեգիալ կարգ: Համաձայն մրցույթների անցկացման նոր կարգի, փոփոխվել է հարցազրույցի փուլի հարցերի կազմման, գնահատման և հաղթողների որոշման մեխանիզմները: Հարցազրույցի փուլում առնվազն 75 տոկոս արդյունք ստանալու դեպքում մասնակիցները կհամարվեն հարցազրույցի փուլը հաղթահարած, իսկ թեստավորման և հարցազրույցի փուլերի արդյունքում ստացած տոկոսների երեք առավելագույն հանրագումար ունեցող մասնակիցները ճանաչվում են մրցույթի հաղթողներ:

Հանրային ծառայողների հաշվետվողականության մակարդակի բարձրացման ուղղությամբ բոլոր պետական մարմիններում ներդրվել է պետական ծառայողների տարեկան աշխատանքային ծրագրերի համակարգ:Սահմանվել ու քաղաքացիական ծառայողների համար ամբողջությամբ կիրառվում է կատարողականների գնահատման հաշվետվությունների կազմման կարգն ու ուղեցույցը: Հանրային ծառայության որակի չափորոշիչների, քաղաքացիներին մատուցվող ծառայություններում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղուսթյամբ ուսումնասիրվել է 6 նախարարությունների (ՀՀ մշակույթի, առողջապահության, կրթության և գիտության, գյուղատնտեսության, տրասպորտի և կապի) և կառավարության աշխատակազմի կողմից մատուցվող ծառայությունների գործող ընթացակարգերը, դրանց համապատասխանությունը սահմանված օրենսդրությանը, միջազգային չափանիշներին:Մասնավորպես, մշակութային արժեքների ներմուծման ու ատահանման, հուշարձանների պահպանության և վերականգնման, գյուղտեխնիկայի տեխնիկական զննության, վարորդական իրավունքների տրամադրման, հանրակրթության բարձրագույն մասնագիտական ու հետբուհական կրթության ծառայությունների, միջպետական ու ներպետական ուղևորափոխադրումների մասով պարզեցվել են ծառայությունների մատուցման ընթացակարգերը, հստակեցվել են ծառայությունների մատուցման ժամկետները և պատասխանատուները:Դրա հետ մեկտեղ վարչական մարմինների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ըն-թացակարգերի պարզեցման արդյունքում՝ վերանայվել է լիցենզավորման մասին ՀՀ օրենքի դրույթները, սահմանվել է էլեկտրոնային համակարգի միջոցով լիցենզիայի հայտերի ներկայացման հնարավորություն:Արդյունքում 40-ով կրճատվել է լիցենզավորվող գործունեության տեսակների քանակը:ՀՀ կառավարությունը սահմանել է պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերից և խոտհարքերից օգտվելու, պայմանագրերի օրինակելի ձևերի և վճարների սահմանման նոր կարգեր, որի արդյունքում վերացվել է արոտավայրերի օգտագործման իրավունքի գրանցման անհրաժեշտությունը:Սահմանվել է ՀՀ համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի оգտագործման оրինակելի նախագծերի (այսուհետ՝ բազմակի оգտագործման նախագծեր) ներդրման, ինչպես նաև այդ նախագծերի գովազդային տեղեկագրերից կազմված հավաք կատալոգի (այսուհետ՝ կատալոգ) կիրառման կարգը, որի արդյունքում վերացել է շինության նախագիծ կազմելու անհրաժեշտությունը և պարզեցվել է շինարարության թույլտվություն ստանալու ընթացակարգը:

**Հրապարակային հաշվետվության ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար:Հայաստանի Հանրապետության կառավարության, նախարարությունների և առընթեր մարմինների կայքերում 2010թ. տեղադրվել են նախարարության ամենամյա գործունեության հաշվետվությունները, որոնք արտացոլում են Հայաստանի Հանրապետության նախարարությունների միջոցով ֆինանսավորվող ծրագրերի իրականացման աստիճանը բնորոշող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները, դրանց դինամիկան և վերլուծությունը:

**Կոռուպցիայի քրեականացման ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար: Կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի ամբողջականացման և որոշակիացման գործում ՀՀ դատախազության կողմից սահմանված կոռուպցիոն հանցատեսակների թիվը համապատասխանեցված է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» դրույթներով սահմանված կոռուպցիոն հանցատեսակների ընդհանուր թվաքանակին: Նվազեցվել է դատախազի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցում վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցությունը: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման ոլորտում ուսումնասիրվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կիրառման միջազգային փորձը: Վեր են հանվել իրավաբանական անձանց նկատմամբ

կիրառվող սանկցիաները, որոնք համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձանց համար նախատեսված տույժերին: Ֆիզիկական անձի կողմից սեփական ազդեցությունը ի նպաստ իրավաբանական անձի շահադիտական նպատակով օգտագործելը քրեականացված է ՀՀ քրեական օրենսգրքի 311.2-րդ հոդվածով:

2010թ. կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ հարուցվել է 385 քրեական գործ, ավարտվել է 375 քրեական գործ, կարճվել է 158 և մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 114 քրեական գործ 136 անձի նկատմամբ: Դատարանի կողմից արձակվել է դատավճիռ 144 քրեական գործով՝ 182 անձի նկատմամբ:

2009թ. կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ հարուցված 370 քրեական գործերից 2009թ. դատարաններում քննվել է ընդամենը 183 քրեական գործ՝ 240 անձի նկատմամբ, (2008թ. 155 քրեական գործ՝ 182 անձի նկատմամբ) կամ 28 քրեական գործով և 58 անձով ավելի, որոնցից դատապարտվել է 161 քրեական գործով 208 անձ (2008թ. 153 քրեական գործով 178 անձ):

2008-2010թթ. ընթացքում կրկնակի ավելացել է կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ հարուցված քրեական գործերի թիվը: Մինչդեռ դատարան ուղարկված քրեական գործերի քանակը նվազման միտում ունի, համապատասխանաբար նվազել է նաև դատարանների կողմից քրեական գործերով արձակված դատավճիռների թիվը:

**Կադրերի պատրաստում և վերապատրաստում, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարման ոլորտներում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար:Կոռուպցիայի դեմ պայքարի կրթա-լուսավորչական քաղաքականության առանձին ծրագերի շրջանակներում հիմնական դպրոցի <<Հասարակագիտություն>> առարկայի համար <<Ապազան քոնն է>> ՀԿ-ի կողմից ստեղծվել է <<Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի>> մեթոդական ուղեցույց-ձեռնարկը հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար: Հակակոռուպցիոն թեմաների ուսուցում իրականացվել է 1393 հանրակրթական դպրոցներում: Մշակվել է <<Կոռուպցիան և նրա կանխարգելումը>> ծրագիր-ուղեցույցը նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կրթական ծրագրի մասնագիտությունների՝ <<Տնտեսագիտության հիմունքներ>>, <<Իրավագիտության հիմունքներ>> և <<Քաղաքագիտության հիմունքներ>> առարկաների ծրագրերում (որոնցից մեկի ուսուցումը պարտադիր է ուսանողի համար), ներառվել են կոռուպցիային և դրա կանխարգելմանը վերաբերող թեմաներ:Հակակոռուպցիոն թեմաների շուրջ ուսուցողական դասընթացներ են անցել հանրապետության 8 բարձրագույն ուսումնական հաստատությունների շուրջ 300 ուսանողներ, որոնցից ընտրված 35 ուսանողները 2010 թվականի մայիս-նոյեմբեր ժամանակահատվածում ընդգրկվել են <<Երիտասարդությունն ընդդեմ կոռուպցիայի>> խորագրով կրթական ճամբարում:

Ըստ ոլորտների մշակվել ու հաստատվել են ուսումնական ձեռնարկներ, ներդրվել են վերապատրաստման ծրագրեր ու մոդուլներ: Մասնավորապես, ՀՀ Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների 2010թ. ծառայողական պարապմունքների ուսուցման թեմատիկ պլանը ներառում է “Կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի” պարտադիր թեմաներ: ՀՀ Ոստիկանության ուսումնական կենտրոնի վերապատրաստման թեմաների մասնաբաժնում հակակոռուպցիոն թեմաները կազմում են 13 տոկոս, իսկ ՀՀ Ոստիկանության Ակադեմիայի վերապատրաստման թեմաների մեջ՝ 18 տոկոս: Ընդհանուր վերապատրաստում է անցել 193 ծառայող, որից 48-ը՝ կոռուպցիայի դեմ պայքարի մասնագետներ: ՀՀ դատախազությունում՝ գործում է կոռուպցիայի վերաբերյալ դատախազների պարբերաբար վերապատրաստման կրթական ծրագիրը: 2010թ. ընթացքում 313 դատախազներ և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 31 անձ մասնակցել են կոռուպցիայի դեմ պայքարի աշխատանքների կազմակերպմանը վերաբերող “Դատախազության դպրոց” ՊՈԱԿ-ի կողմից իրականացրած դասընթացներին: “Դատախազության դպրոց” ՊՈԱԿ-ը հրատարակել է նաև 2 ուսումնական ձեռնարկ. “Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը” և “Պայքար փողերի լվացման դեմ” անվանումներով:

ՀՀ քաղծառայության խորհուրդը՝ ԵՄ Խորհրդատվական խմբի՝ AEPLAC-ի հետ մշակել է <<Հակակոռուպցիոն ներածություն>> թեմայով վերապատրաստման մոդուլներ, իրականացրել վերապատրաստողների վերապատրաստում (12 հոգի): “Հայպետծառայողների միություն” ՀԿ–ի կողմից OSCE-ի աջակցությամբ իրականացրել է նաև բարեխիղճ կառավարում վերապատրաստման ծրագիրը: Վերապատրաստվել են 15 քաղծառայողներ քաղաքացիական ծառայողների բարոյա-էթիկական նորմերը, հանրային կառավարման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի, հաղորդակցությունը քաղաքացիներին ծառայություն մատուցելիս թեմաներով:

ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) օժանդակությամբ մշակվել և ներդրվել է կոռուպցիոն իրավախախտումների բացահայտման և հաղորդման ուղեցույց հարկային ծառայողների համար։ ՊԵԿ-ի վեց աշխատողներ վերապատրաստվել են որպես վերա-պատրաստողներ։ Ընդհանուր առմամբ, վերապատրաստվել է 418 հարկային ծառայող։

ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունում՝ MONEYVAL և Միջազգային արժույթի հիմնադրամի ֆինանսավորմամբ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև այլ կոռուպցիոն հանցագործությունների հետաքննության ու նախաքննության հարցերով մասնագիտացված աշխատակիցների համար իրականացվել են վերապատրաստման, փորձի փոխանակման միջազգային դասընթացներ։

Կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության ուղղությամբ իրականացվել է կոռուպցիայի մակարդակը, գերիշխող տեսակները, բնագավառներն ու ոլորտները գնահատող ուսումնասիրություններ և հետազոտություններ։ Մասնավորապես, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան կազմակերպության կողմից 2010թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությունը։ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի օժանդակությամբ «Աքիլես» - ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպությանկողմից՝ ճանապարհային ոստիկանությունում կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերման ծրագիրը։ Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից ՀՀ Նոտարական գրասենյակների բազմակողմանի մոնիթորինգը, որի շրջանակներում ներկայացվել է 19 առաջարկությունների փաթեթ։ ՀՀ կառավարության աշխատակազմի պատվերով, ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման վերաբերյալ հետազոտությունները իրականացվել է IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից։ Հետազոտության արդյունքները տես www.gov.am կայքում։

**Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցություն** ոլորտում՝ քաղաքականության որոշումների կայացման գործում քաղաքացիական մասնակցության պարտադիր մեխանիզմների ամրագրման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի 20 նոյեմբերի 2008թ. N47 արձանագրությամբ քաղաքականության հարցերով կոլեգիաներ են ստեղծվել բոլոր նախարարություններում և այդ կոմիտեներում ընդգրկվել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ։

Հակակոռուպցիոն մարմինների գործունեության հրապարակայնության ու դրանց հասանելիությունը քաղաքացիական հասարակությանը ապահովման ուղղությամբ՝ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) կողմից ստեղծվել են Հակակոռուպցիոն հանրային ընդունարանները ( ՇՊԱԿ), որոնք գործում են ՀՀ բոլոր մարզերում և Երևանում։

Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացման ուղղությամբ՝ ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 29-ի 1226-Ա որոշմամբ պետական բյուջեի հաշվին ՀՀ կառավարության գործունեության արդյունքների գնահատման նպատակով խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար ՀՀ կառավարության աշխատակազմին տրամադրվել է 14 մլն 450 հազար դրամ։ ՀՀ կառավարության աշխատակազմը 17.11.2009 թ. ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա, այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածով IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ կնքվել է պայմանագիր ՀՀ կառավարության գործունեության արդյունքների գնահատման համար։ ՀՀ պետական բյուջեի մասին 24.12. 2009թ. ՀՕ-225-Ն օրենքի հավելված 1-ի աղյուսակ 16-ով՝ դրամաշնորհների տրամադրման ծրագրերով 2010թ. համար ՀՀ կառավարության աշխատակազմին ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների իրականացման համար հատկացվել է 87.285.3 հազ.դրամ։ Այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է կնքվել, IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ։ Հետազոտության արդյունքները տես www.gov.am կայքում։

«Ֆիզիկական և իրավաբանական անձ» - «վարչական մարմին» հարաբերությունների վարչարարության բարելավման ուղղությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ –ում և բոլոր նախարարություններում գործում են քաղաքացիների ընդունարաններ, որտեղ կազմավորվում են քաղաքացիների դիմում – բողոքներին արձագանքման ու հիմնական հարցերի շտեմարանները։ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» հրատարակել է ուղեցույցներ և հետազոտություններ։ Մասնավորապես, «Ինչպես կիրառել տեղեկատվության մասին ՀՀ օրենքը՝ ուղեցույց լրագրողների համար», «Տեղեկատվության

ազատության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում. Մեկնաբանություններ», «Տեղեկատվական ազատության ոլորտի դատական գործերի ժողովածու 2007-2010», «Ինչպես կիրառել տեղեկատվության մասին ՀՀ օրենքը ուղեցույց քաղաքացիական ծառայողների համար»:

ՀԳՄԾ-ն կազմակերպել է յոթ հակակոռուպցիոն համաժողովներ և դրամաշնորհներ է տրամադրել`ԶԼՄ-ներով հակակոռուպցիոն քարոզարշավների ու իրազեկվածության համար: Մասնավորապես, Հայաստանի հանրային հեռուստատեսության "Հատուկ ռեպորտաժ" "Ականատես. Իրական պատմություններ" ռիելիթի շոուն, հեռուստաշարի, ՙԼոռի ՄԻԳ՚, "Լոռի" և "Ալա" հեռուստարընկերություններով հակակոռուպցիոն թոք շոուների, քարոզարշավների իրականացման համար: "Հայաստանի հանրային կապերի ասոցիացիային"` բարձրացնելու հասարակության, մամուլի և գործարարների իրազեկությունը` քաղաքացիների իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ: Դրա հետ մեկտեղ ՀԳՄԾ-ն անցկացրել է Կոռուպցիոն Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտություն:

**ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման, հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմինների մասով** ձևավորվել է ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման ինստիտուցիոնալ համակարգը: ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի շրջանակներում ՀՌԻՄԾ մոնիտորինգի իրականացման փորձագիտական խմբի կողմից գնահատվել է ՀՀ պետական կառավարման մարմինների ՀՌԻՄԾ ինստիտուցիոնալ կարողությունները: ՀՀ պետական կառավարման 22 մարմինների 44 քաղաքացիական ծառայողներ նշանակվել են ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման պատասխանատուներ: ՀՌԻՄԾ մոնիտորինգի իրականացման ուղեցույցը և հաշվետվության ձևաթղթերը հավանության են արժանացել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի նախագահի կողմից: ՀՀ պետական կառավարման 24 մարմինների ՀՌԻՄԾ 50-ից ավելի պատասխանատուներ 2010թ. մայիս և հունիս ամիսներին անցել են 2 վերապատրաստման դասընթացներ: Նրանց կողմից պատրաստվել և փորձագիտական խմբի կողմից ամփոփվել են ՀՌԻՄԾ 2009թ. և 2010թ. տարեկան մոնիտորինգային հաշվետվությունները: ՀՌԻՄԾ 2009թ.տարեկան և 2010թ. առաջին եռամսյակի ամփոփ հաշվետվություններն ընդունվել են ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից՝ 2010թ. հոկտեմբերի 12-ի նիստում ( արձանագրություն N 13.7/[54783]-10):

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործում Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կարողությունների զարգացման ուղղությամբ մշակվել է «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը: Այն քննարկվել է հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողովի 2010թ. հուլիսի 21-ի ու հավանություն է արժանացել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2010թ. հոկտեմբերի 12-ի նիստում (արձանագրություն N 13.7/[54783]-10):

GRECO-ի երաշխավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցը ներկայացվել է GRECO-ի քարտուղարություն: http://www.coe.int/t/dghl/monitoring/GRECO: OECD երաշխավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցը ներկայացվել է OECD- ի քարտուղարություն: www.oecd.org/corruption/acn:

Ապահովվել է քաղաքացիական հասարակության կողմից ՀՌԻՄԾ ազդեցության ընկալման գնահատման իրականացումը: ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի շրջանակներում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների միջոցով 2010թ. իրականացվել է "Կոռուպցիան Հայստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտությունը": Այն վերջին երեք տարիներին իրականացված համանման 3-րդ հետազոտությունն է:ՀՀ կառավարության պատվերով «ԱյՓիԷսՍի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից իրականացվել է ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները սոցիոլոգիական հետազոտությունը, որի 7-րդ բաժինը նվիրված է պետական կառույցներում օրենքների խախտմանը և կոռուպցիոն դրսևորումներին:

### 3. ՀՈՒՄԾ 2010Թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

#### 3.1 Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շարունակականորեն կատարելագործել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրությունը | 1.1 ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին՝ միջազգային և ներպետական լավագույն փորձը հաշվի առնելով, մասնավորապես ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառվող պահանջների, քրեական հետապնդում իրականացնող մարմինների և վերահսկող մարմինների հետ փոխհարաբերությունների զարգացման միջոցով | 1.ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գնահատման 3-րդ փուլի հաշվետվությամբ սահմանված հանձնառությունների կատարում | 1.ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի փուլի 3-րդ գնահատման հաշվետվություն | Այո | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի փուլի 3-րդ գնահատման հաշվետվությունը հաստատվել է Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 2009թ. սեպտեմբերի 22-ի նիստում (տե՛ս http://www.coe.int/t/dghl/monitoring/moneyval/Countries/Armenia_en.asp ):<br>Ի կատարումն հաշվետվությամբ սահմանված հանձնառությունների՝ մշակվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու 18 օրենսդրական ակտերի փաթեթ, որը դրվել է պաշտոնական շրջանառության մեջ: Փաթեթի վերաբերյալ ստացվել են նաև ԱՄՀ առաջարկությունները, որոնք ուղղված էին առաջարկվող փոփոխությունների ու լրացումների համապատասխանության ապահովմանը ոլորտում առկա միջազգային ստանդարտներին: ՖԴԿ կողմից կազմվել են դիտողությունների ու առաջարկությունների ամփոփաթերթ, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորող տեղեկանք: Օրենսդրական փաթեթն ու դրան հարակից փաստաթղթերն այդուհետ ուղարկվել են ՀՀ կառավարություն:<br>Կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներառվել է նաև Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբին 2010թ.-ի սեպտեմբերին ներկայացված առաջընթացի վերաբերյալ հաշվետվության մեջ, որը ՄԱՆԻՎԱԼ լիագումար նիստի կողմից հաստատվել է 28.09.2010թ.-ին: | ՀՀ Կենտրոնական Բանկ, (ՖԴԿ),<br>ՀՀ արտաքին գործերի նախա-րարություն,<br>ՀՀ գլխավոր դա-տախազություն,<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն,<br>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե,<br>ՀՀ արդարադատությ ան նախարարություն,<br>ՀՀ ֆինանսների նախարարություն,<br>ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե |
| | 1.2 Ապահովել քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրների հասանելիությունը | 1. Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրները հասանելի են ՖԴԿ և ֆինասական հաստատությունների համար | 1. Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրների հասանելի հստվածը | Այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>ՖԴԿ-ին քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրները հասանելի են 2007թ.-ից՝ Էգմոնտ խմբին անդամակցության հիման վրա: Միաժամանակ, ՖԴԿ կողմից 2009թ. մայիս-նոյեմբեր ամիսներին բանակցություններ են վարվել Accuity, World-Check և Dow Jones Factiva կազմակերպությունների հետ, որոնք վճարովի հիմունքներով վարում են քաղաքական ազդեցություն ունեցող անձանց տվյալների միջազգային ռեեստրներ: Համաձայնություն է ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ ամբողջ բանկային համակարգի կողմից այդ ռեեստրների ձեռք բերման դեպքում դրանք կտրամադրվեն էապես մատչելի պայմաններով: 2009թ. դեկտեմբերից սկսած ՀՀ տարածքում գտնվող բոլոր բանկերը ձեռք են բերել ու օգտագործում են քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրներ: | ՀՀ Կենտրոնական Բանկ, (ՖԴԿ), |
| 2. Հզորացնել ՖԴԿ ինստիտուցիոնալ կարողությունները | 2.3 Շարունակականորեն բարձրացնել ՖԴԿ աշխատակազմի (վերլուծաբանների, մեթոդաբանների և ծրագրավորողների) մասնագիտական | | 1.ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների վերլուծության տեղեկատվական-ծրագրային նոր համակարգերի առկայություն | - | 2010թ. այս ռազմավարական դրույթի տեսակետից արդյունքների ստացում նախատեսված չէ:<br>Ցուցիչ 1-4-ը իրենց արժեքները ստանալու են 2011թ. ակնկալվող արդյունքների շրջանակներում: | ՀՀ Կենտրոնական Բանկ, (ՖԴԿ), |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | որակավորումը՝ ուսուցումների և վերապատրաստումների կազմակերպման միջոցով: | | 2. Արտաքին տեղեկատվական շտեմարանները ամբողջությամբ հասանելի են | - | | |
| | | | 3. ՖԴԿ աշխատակիցների կողմից ներպետական և միջազգային վերապատրաստման դասընթացներին մասնակցություն | - | | |
| | | | 4. ՖԴԿ աշխատակազմից վերապատրաստված ներկայացուցիչների քանակական հարաբերակցությունը աշխատակիցների ընդհանուր թվին | - | | |
| 3. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում հզորացնել վերահսկող մարմինների կարողությունները | 3.1 Զարգացնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ ԿԲ-ի որպես լիազոր մարմնի, վերահսկողական գործառույթներն իրականացնելու կարողությունները՝ ուսուցումների և վերապատրաստումների կազմակերպման միջոցով: | | 1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլոտում գործող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների հիման վրա կազմված արձանագրություններ, ինչպես նաև համարժեք պատասխանատվության միջոցների կիրառում | - | 2010թ. այս ռազմավարական դրույթի տեսակետից արդյունքների ստացում նախատեսված չէ:<br>Ցուցիչ 1-2-ը իրենց արժեքները ստանալու են 2011թ. ակնկալվող արդյունքների շրջանակներում: | ՀՀ Կենտրոնական Բանկ, |
| | 3.2 Զարգացնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկող այլ մարմինների վերահսկողական գործառույթներն իրականացնելու կարողությունները | | 2. ՀՀ ԿԲ կողմից համապատասխանության աուդիտի անցկացման քանակական դինամիկան | - | 2010թ. այս ռազմավարական դրույթի տեսակետից արդյունքների ստացում նախատեսված չէ: | ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 4. Բարձրացնել ՓԼ/ԱՖ դեպքերի բացահայտման արդյունավետությունը | 4.1 Զարգացնել ՓԼ/ԱՖ հանցագործությունների քննության հետ կապված քրեական հետապնդում իրականացնող և դատական մարմինների մասնագիտական կարողությունները | | 1.ՓԼ/ԱՖ հանցագործությունների հատկանիշներով. հարուցված քրեական գործերի քանակ, | 13 | 2010թ. արդյունքների ստացում նախատեսված չէ<br>2010թ. ընթացքում ՖԴԿ հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործեր՝ 5, իրավապահ մարմինների նախաձեռնությամբ հարուցված քրեական գործեր՝ 8, կայացված դատավճիռներ՝ 3:<br>Ցուցիչ 1. 2010թ. ընթացքում հարուցվել է 12 քրեական գործ, 1 փոխանցվել է 2009թ.: 1 ՀՀ գլխավոր դատախազության, 9-ը՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության և 1-ը ՀՀ Ոստիկանության, և 1-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից:<br>Ցուցիչ 2. 2010թ. ընթացքում նախաքննությամբ ավարտվել է 4 գործ, 3-ի վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ որպես մեղադրյալ ներգրավելու ենթակա անձը հայտնի չլինելու պատճառաբանությամբ:<br>Ցուցիչ 3. 2010թ. ընթացքում 4 գործ 9-ը մարդու նկատմամբ հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար:<br>Ցուցիչ 4. Դատարանների կողմից մեղադրական դատավճիռներ են կայացվել 3 գործով 3 մարդու նկատմամբ, բոլորի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում: 2009թ. մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված 2 գործերով 2 անձի վերաբերյալ 2010թ.մեղադրական դատավճիռներ են կայացվել:<br>Ցուցիչ 5. 14.04.2008թ. ընդունվել է «Փոխըմբռնման համաձայնագիր ՀՀ կենտրոնական բանկի, ֆինանսական դիկտարկումների կենտրոնի եվ ՀՀ դատախազության միջև, որը սահմանում է այդ ընթացակարգերը: Ընթացակարգերի փոփոխություններ չեն իրականացվել: | ՀՀ դատախազություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ դատական դեպարտամենտ |
| | | | 2.նախաքննության փուլում գտնվող քրեական գործերի քանակ, | 13 | | |
| | | | 3.մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերի քանակ | 4 | | |
| | | | 4.մեղադրական դատավճիռների քանակ | 3 | | |
| | | | 5.Սահմանվել են ՀՀ ԿԲ, ՖԴԿ և քրեական հետապնդում իրականացնող մարմինների միջև, համագործակցությունն ապահովող ընթացակարգեր (այո/ոչ) | այո | | |

**3.2** Հանրային ֆինանսների կառավարման ոլորտ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 5.Բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման կարգապահությունն ու թափանցիկությունը | 5.1. Ընդլայնել ծրագրային բյուջետավորման ներդրումը | 1.Ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով մշակված ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծի առկայություն<br><br>2.Բյուջետային փաստաթղթերի մշակման ընթացակարգերը համապատասխանեցված են ծրագրային բյուջետավորման պահանջները ամրագրող օրենսդրական փոփոխություններին | 1.Բյուջետային գործընթացի շրջանակներում ծրագրային բյուջետավորման բարեփոխումների գործընթացում ընդգրկված պետական մարմինների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 94% | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br><br>2011 թվականի պետական բյուջեի նախագիծը, ավանդական ձևաչափին զուգահեռ, մշակվել է նաև ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով և ներառվել բյուջետային փաստաթղթերթում: Մասնավորապես, 2011 թվականի պետական բյուջենի նախագծի բաղկացուցիչ մաս հանդիսացող ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի կազմում ներառվել են նաև պետական կառավարման մարմինների` գերատեսչական մակարդակով իրականացվող ծրագրերի կատարողական չափորոշիչները (ոչ ֆինանսական արդյունքները), որը նաև հաստատվել է ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշմամբ:<br><br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ:<br><br>Ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով բյուջետային փաստաթղթերի մշակման ընթացակարգերը համապատասխանում են ներկայումս գործող օրենսդրության պահանջներին:<br><br>Ցուցիչ 1. Ծրագրային բյուջետավորման գործընթացում ընդգրկված պետական մարմինների թիվն է` 57: Այդ գործընթացում ընդգրկված չեն ՀՀ կառավարությունը և գերատեսչական դասակարգման <Այլ մարմիններ> խմբում ներառված թվով 3 պետական մարմիններ, որոնց համար նախատեսվող բյուջետային միջոցները ծրագրային բնույթ չեն կրում:<br><br>Ցուցիչ 2. Ակնկալվող արդյունքների չափման շոշափելի, հասանելի և չափելի ցուցիչները ներկայացված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի բյուջետային ուղերձում (տես` ուղերձի 1-ին և 2-րդ մասերը, N 12 հավելված) և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N 1748-Ն որոշման մեջ (տես ՀՀ Պաշտոնական Տեղեկագիր , 2011 թ. N 3-ի 1-ին և 2-րդ մասերը, N 11 հավելված)<br><br>Ցուցիչ 3. Հանրային ֆինանսների պլանավորման համար անհրաժեշտ ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերը (baseline) և թիրախները սահմանելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և թվով 3 գերատեսչություններին է տրամադրվել ծրագրային բյուջետավորման ներդրման մեթոդաբանությունից բխող բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) կազմման ուղեցույց` յուրաքանչյուրում 1-ական բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) նախագծի կազմման համար: Փորձնական ծրագրում ընդգրկված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և ՀՀ ԿԱ ոստիկանությունը կազմել և ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացրել նշված բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) նախագծերը, որոնք հնարավորություն են տալիս տվյալ բյուջետային ծրագրի համար սահմանել ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերը և թիրախները:<br><br>Ցուցիչ 4. Պետական կառավարման մարմինների կողմից 2011թ. բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման մեթոդական ցուցումները ՀՀ ֆինանսների նախարարությունը այդ մարմիններին տրամադրել է 2009թ. դեկտեմբերի 26-ին և նրանում ներառված չէ մոնիտորինգի պլանի և ռիսկերի ներառման պահանջը: | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | 2.Պետական ֆինանսների կառավարման | Այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | լիազոր մարմնի կողմից սահմանված ռազմավարական պլանավորման չափորոշիչներով նախատեսված է ակնկալվող արդյունքների չափման շոշափելի, հասանելի և չափելի ցուցիչներ (այո/ոչ) | | | |
| | | | 3.Պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանվել են հանրային ֆինանսների պլանավորման համար անհրաժեշտ ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերը (baseline) և թիրախները (այո/ոչ), | Ոչ | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 4.ֆինանսների կառավարման պետական լիազոր մարմնի կողմից տրվող մեթոդական ցուցումներում շեշտվում են բյուջետային հայտերում մոնիտորինգի պլանի առկայության և ռիսկերի ներառման պահանջը (այո/ոչ) | Ոչ | | |
| | 5.2. Բարձրացնել բյուջետային հատկացումների հաշվետվողականությունը | 1.ՊՈԱԿ-ների կողմից ծառայությունների մատուցման ոչ-ֆինանսական, բովանդակային-կատարողական ցուցանիշներով հաշվետվության պահանջները սահմանված են<br><br>2. ՀՀ Ֆինանսների նախարարության և Լիազորված մարմինների կողմից ՊՈԱԿ-ների հաշվետվությունների կոնսոլիդացման և մոնիտորինգի ուղեցույցներ<br><br>3.ՊՈԱԿ-ների մոնիտորինգի թեմայով ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի | 1.Բովանդակային ցուցանիշեր պարունակող հաշվետվություններ տրամադրած ՊՈԱԿ-ների թվի հարաբերությունը գործող բոլոր ՊՈԱԿ-ների քանակին (որքան մոտ է մեկին այնքան ցածր է կոռուպցիոն ռիսկը) | 0 | Արդյունք 1- 4. Կատարվել են մասնակիորեն<br><br>Աշխատանքները նախատեսվում են իրականացնել Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ առևտրային կազմակերպությունների ֆիդուցիար վերահսկողության փորձնական դրամաշնորհային ծրագրի միջոցների հաշվին: Այդ նպատակով ՀԲ-ի սահմանած ընթացակարգերին համապատասխան կազմակերպվել է խորհրդատվական ծառայությունների գնման համար խորհրդատուի ընտրության մրցույթ, որի արդյունքում 04.08.2010թ. կնքվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր: Նշված պայմանագրի շրջանակներում խորհրդատուի կողմից 2010 թվականին ներկայացվել է «ՊՈԱԿ-ների նույնականացման և խմբավորման չափորոշիչների մասին» և «ՊՈԱԿ-ների ֆիդուցիար հսկողության /մոնիտորինգի/ մոդելի թերությունների /բացերի/ և մոդելի ներդրման հետ կապված ռիսկերի վերլուծության վերաբերյալ» հաշվետվությունները, որոնք շահագրգիռ մարմինների հետ քննարկումից հետո 2011թ. ընդունվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:<br><br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ խորհրդատուի հետ պայմանագիրը կնքվել է 2010թ. և հաշվի առնելով որ պայմանագրով նախատեսվում է, որ աշխատանքները կիրականացվեն 1 տարվա ընթացքում, ՊՈԱԿ-ների կողմից ծառայությունների մատուցման ոչ ֆինանսական, բովանդակային-կատարողական ցուցանիշներով հաստատված հաշվետվությամբ սահմանված պահանջներից բխող արդյունքները ակնկալվում է 2012 թվականին: | ՀՀ ֆինանսների նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | քաղաքացիական ծառայողները վերապատրաստված են | 2.Պետական բյուջեի միջոցների հաշվին հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար օրենսդրորեն սահմանվել է ֆինանսական միջոցների և դրանց ծախսումների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման պարտադիր պահանջ (այո/ոչ) | ոչ | | |
| | | 4.ՊՌԱԿ-ների ֆիդուցիար (վստահության վրա հիմնված) վերահսկողության փորձնական ծրագիրն իրականացված է | 3.ՊՌԱԿ-ների ֆիդուցիար վերահսկողության նախագծված մեթոդաբանությունը հաստատված է (այո/ոչ) | ոչ | | |
| | | | 4.ՊՌԱԿ-ների համար գնման համաձայնագրերի ձևաչափերի նմուշները հաստատված են (այո/ոչ) | ոչ | | |
| 6.Բարելավել պետական բյուջեի ծախսումների կառավարման գործառույթներն ու ընթացակարգերը | 6.1Կատարելագործել պետական բյուջեի ծախսումների կառավարման մոնիտորինգի, վերահսկողության և հաշվետվության ընթացակարգերը և ներդնել, տվյալների կառավարման | 1.Ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի ծրագրային և ապարատային ապահովումն ձեռք է բերված | 1.Ծախսերի կառավարման համակարգը կազմակերպվում է էլեկտրոնային հիմքի վրա (այո/ոչ), | ոչ | Արդյունք 1-2. Կատարված են մասնակիորեն:<br>2009թ-ին մշակվել է ԿՖԿՏՀ-ի տեխնիկական առաջադրանքը, որի հիման վրա նախատեսվում է ԿՖԿՏՀ-ի ծրագրային և ապարատային ապահովման ձեռք բերում: Սակայն ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված նշված ապահովումների ձեռք բերման ուղղությամբ դեռևս միջոցներ չեն ձեռնարկվել: ՀՀ կառավարությունը բանակցություններ է վարում դոնոր միջազգային կազմակերպությունների հետ:<br>Միաժամանակ չնայած ԿՖԿՏՀ-ի ամբողջական ներդրման ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել, սակայն ՀՀ կառավարության միջոցների հաշվին ձեռնարկվել են միջոցներ էլեկտրոնային եղանակով գնման գործարքների հաշվառման համակարգի ներդրման և ՀՀ | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | 2.Ֆինանսական կառավարման | 2.Գանձապետար | ոչ | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | ամբողջական և հուսալի համակարգ | տեղեկատվական համակարգն առանձին մարմիններում փորձարկված է | անի թղթատար գործառույթները ամբողջությամբ թվայնացված են (այո/ոչ) | | ֆինանսների նախարարությունում օգտագործվող ծրագրային ապահովման մեջ փոփոխություններ կատարելու համար` ԾԻԳ-երի կողմից իրենց անվամբ բացված գանձապետական արտարժութային հաշիվները էլեկտրոնային ձևով առցանց կառավարելու հնարավորություն ստեղծելու նպատակով: Այս համակարգերը հանդիսանում են ԿՖԿՏՀ բաղկացուցիչ մասերը<br>Ցուցիչ 1. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<ոչ>>, քանի որ այն վերաբերվում է 2010-2012թթ-ին ակնկալվող արդյունքներին:<br>Ցուցիչ 2. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<ոչ>>, քանի որ այն վերաբերվում է 2010-2012թթ-ին ակնկալվող արդյունքներին:<br>Ցուցիչ 3. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<ոչ>>, քանի որ այն վերաբերվում է 2010-2012թթ-ին ակնկալվող արդյունքներին: | |
| | | | 3.Պետական բյուջեի ծախսումների կառավարման անձնակազմի պարտականությունները հստակ սահմանված են (այո/ոչ) | Ոչ | | |
| 7. Բարելավել հաշվապահական հաշվառումը հանրային հատվածում | 7.1.Ամբողջականանցել հանրային հատվածում հաշվապահական հաշվառման ներդրումը | 1.Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման դրույթները ամրագրված են օրենսդրորեն | 1.Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են միջազգային լավագույն փորձին (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Մշակվել է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագիծը շահագրգիռ մարմինների հետ քննարկումների արդյունքում լրամշակվել է` դրանում կատարվել են նշանակալի փոփոխություններ: Նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:<br>Արդյունք 2-3 Իրականացված է մասնակիորեն:<br>2009թ-ին մշակվել են հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ուղեցույցը, հանրային հատվածի կազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման մոդելային քաղաքականությունը, բարեփոխումների իրականացման ռազմավարությունը, որոնք նախատեսվում է հաստատման ներկայացնել <<Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի ընդունումից հետո:<br>Ցուցիչ 1. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտները արդեն մշակված են և համապատասխանում են միջազգային ստանդարտներին: Սակայն, Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<ոչ>>, քանի որ դրանք կներդրվեն <<Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի ընդունումից հետո:<br>Ցուցիչ 2. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>, քանի որ այն վերաբերվում է 2011թ-ի ակնկալվող արդյունքին:<br>Ցուցիչ 3. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>, քանի որ այն վերաբերվում է 2011թ-ի ակնկալվող արդյունքին:<br>Ցուցիչ 4. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>, քանի որ այն վերաբերվում է 2012թ-ի ակնկալվող արդյունքին: | ՀՀ ֆինանսների նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2.Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման ընթացակարգերը սահմանված են<br><br>3.Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման մեթոդական ուղեցույցը մշակված է | 2.Վերապատրաստված հանրային հատվածի հաշվապահների թվի հարաբերությունը հանրային հատվածի հաշվապահների ընդհանուր թվին | 0 | | |
| | | | 3.Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման ընթացակարգերը կիրառող պետական կառավարման մարմինների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 0 | | |
| | | | 4.Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման ընթացակարգերը կիրառող տեղական ինքնակառավարման մարմինների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 0 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 8. Ամբողջականացնել ներքին աուդիտի համակարգը | 8.1 Բարձրացնել ներքին աուդիտի պլանների և հաշվետվությունների որակը | 1.Ներքին աուդիտի պրակտիկայում ներդրված են ֆինանսական, գործառնական համապատասխանության և արդյունավետության աուդիտի և ռիսկերի գնահատման մեթոդներն ու ընթացակարգերը<br><br>2.Հանրային հատվածի ներքին աուդիտի չափորոշիչները հաստատված են<br><br>3.Պետական ներքին ֆինանսական հսկողության ռազմավարությունը հաստատված է<br><br>4.Ներքին աուդիտորի էթիկայի կանոնները սահմանված են | 1.Հանրային հատվածում ներքին աուդիտի չափարոշիչների և լիարժեք/մասնակի համապատասխանող աուդիտի պլանների և հաշվետվությունների թվի հարաբերությունը աուդիտի պլանների և հաշվետվությունների ընդհանուր թվին | 0 | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br><br><<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքն ընդունվել է 2010թ. դեկտեմբերի 22-ին: Օրենքով սահմանված են դրույթներ, որոնք հիմք կհանդիսանան ֆինանսական, գործառնական համապատասխանության և արդյունավետության աուդիտի և ռիսկերի գնահատման մեթոդների ու ընթացակարգերի ներդրման համար:<br><br>Արդյունք 2. Իրականացված է մասնակիորեն:<br><br>Հանրային հատվածի ներքին աուդիտի ստանդարտները մշակված են, որոնք ՀՀ ֆինանսների նախարարության 06.07.11թ. թիվ 1/13.3/81163 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը:<br><br>Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ:<br><br>ՀՀ պետական ներքին ֆինանսական հսկողության ռազմավարության նախագիծը հաստատված է ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 11-ի N 44 արձանագրային որոշմամբ:<br><br>Արդյունք 4. Իրականացված է մասնակիորեն:<br><br>Ներքին աուդիտորի վարքագծի կանոնները մշակված են, որոնք ՀՀ ֆինանսների նախարարության 06.07.11թ. թիվ 1/13.3/81163 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը:<br><br>Ցուցիչ 1. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>, քանի որ այն վերաբերվում է 2011-2012թթ-ի ակնկալվող արդյունքին:<br>Ցուցիչ 2. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>, քանի որ այն վերաբերվում է 2011-2013թթ-ի ակնկալվող արդյունքներին: | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | 2.Ներքին աուդիտորների մասնագիտական որակավորման չափորոշիչները համապատասխանում են միջազգային լավագույն փորձին | 0 | | |
| | 8.2 Բարձրացնել աուդիտորների մասնագիտական կարողությունները ու անկախության աստիճանը | 1.Իրականացվում է հանրային հատվածի ներքին աուդիտորների վերապատրաստման դասընթացի ծրագիր,<br><br>2.Ներքին աուդիտորների մասնագիտական որակավորման չափորոշիչները սահմանված են,<br><br>3.Հանրային հատվածում գործող ներքին աուդիտորները վերապատրաստված են | 1.Հանրային ոլորտում ներքին աուդիտի վերապատրաստման դասընթացներին մասնակցած և որակավորում ստացած անձանց թվի հարաբերությունը դասընթացներին մասնակցած անձանց ընդհանուր թվին | 0 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br><br>Մինչև <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի ընդունումը մշակվել են հանրային հատվածում ներքին աուդիտի և ներքին աուդիտորների վերապատրաստման ձեռնարկներ, որոնք նշված օրենքի պահանջներին համապատասխանեցնելուց հետո կներկայացվեն հաստատման: Հանրային հատվածում գործող ներքին աուդիտորների վերապատրաստման միջոցառումը նախատեսված է իրականացնել մինչև 30.12.2013թ.:<br><br>Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն:<br><br>Ներքին աուդիտորների մասնագիտական որակավորման չափորոշիչները մշակված են: Դրանց կիրառումը նախատեսվում է իրականացնել մինչև 30.12.2013թ.՝ համաձայն ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 11-ի նիստի N 44 արձանագրային որոշման հավելված 1-ով սահմանված ժամանակացույցի:<br><br>Արդյունք 3. Իրականացված չէ:<br><br>Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 11-ի նիստի N 44 արձանագրային որոշման հավելված 1-ով սահմանված ժամանակացույցի՝ հանրային հատվածում գործող ներքին աուդիտորների վերապատրաստման միջոցառումը նախատեսված է իրականացնել մինչև 30.12.2013թ.:<br><br>Ցուցիչ 1. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>: Արժեքի փոփոխությունը հնարավոր է վերապատրաստումը սկսելուց հետո: | ՀՀ ֆինանսների նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 9.Զարգացնել հանրային հատվածում արտաքին աուդիտի համակարգը | 9.1 Հզորացնել ՀՀ Վերահսկիչ պալատի ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունները | 1.ՀՀ Վերահսկիչ պալատի աշխատակազմի մասնագիտական որակավորման չափորոշիչները վերանայված են | 1.ՀՀ Վերահսկիչ պալատն իր իրավասությունների շրջանակներում համաչափորեն կիրառում է ֆինանսական, համապատասխանության, արդյունավետության և բնապահպանական աուդիտի տարրերը (այո/ոչ) | Այո | **Արդյունք 1.** Իրականացված չէ:<br>Միջոցառման չիրականացումը պայմանավորված է այն բանով, որ Վերահսկիչ պալատը իրավական տեսանկյունից դեռևս չունի անհրաժեշտ անկախություն և ինքնուրույնություն իր աշխատակիցների ընտրության, ուսուցման, վերապատրաստման և ատեստավորման հարցերում, քանի որ Վերահսկիչ պալատում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը: Միջազգային կազմակերպությունները, մասնավորապես` Եվրոմիությունը բազմիցս անդրադարձել է այս հարցին, փաստելով որ Վերահսկիչ պալատի անկախությունն ու ինքնուրույնությունն իրականում վտանգված է այնքան ժամանակ, քանի դեռ Վերահսկիչ պալատի աշխատակազմում աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:<br>**Ցուցիչ 1.** Վերահսկիչ պալատն իր իրավասության շրջանակներում համաչափորեն կիրառում է վերահսկողության` ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության տեսակները, բացառությամբ` բնապահպանական վերահսկողության տեսակի, քանի որ այն չափազանց առանձնահատուկ է և անհրաժեշտություն չկա յուրաքանչյուր վերահսկվող օբյեկտում կիրառելու:<br>**Ցուցիչ 2.** «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, վերահսկվող օբյեկտների ղեկավարները Վերահսկիչ պալատին տրամադրել են տեղեկատվություն ընթացիկ հաշվետվություններում ամրագրված` հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ:<br>2010թ. Վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում կազմված թվով 40 ընթացիկ հաշվետվություններից յուրաքանչյուրի վերաբերյալ Օրենքի շրջանակներում ստացվել է պաշտոնական արձագանք:<br>**Ցուցիչ 3.** 2010թ. Վերահսկիչ պալատն իր գործունեությունն իրականացրել է «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2010 թվականի գործունեության տարեկան ծրագրի» համաձայն, որի արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի 40 ընթացիկ հաշվետվություններում: Բոլոր հաշվետվությունները, բացառությամբ «հույժ գաղտնի» տեղեկատվություն պարունակող թվով 5ընթացիկ հաշվետվության, Օրենքի պահանջների համաձայն տեղադրվել են Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքում (www.coc.am), իսկ վերոնշյալ` «հույժ գաղտնի» տեղեկատվություն պարունակող հաշվետվություններին կարելի է ծանոթանալ ՀՀ Ազգային ժողովում` Օրենքով սահմանված կարգով: | ՀՀ Վերահսկիչ պալատ |
| | | | 2.ՀՀ Վերահսկիչ պալատի իրականացրած աուդիտի արդյունքների հաշվետվության վերաբերյալ պաշտոնական արձագանքների թվի հարաբերությունը իրար հաջորդող տարեկան զեկույցների ժամանակահատվածներում | 100 | | |
| | | | 3.Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում ռիսկերի գնահատման հաշվետվությունների թիվը | 40 | | |
| 10. Բարելավել օրենսդիր իշխանությանը ՀՀ կառավարության հաշվետվողականությունը | 10.1 Հզորացնել ՀՀ ԱԺ հանձնաժողովների մասնագիտական կարողությունները | 1.ՀՀ ԱԺ հանձնաժողովների կողմից հանրային ֆինանսների վերահսկողության ընթացակարգերը սահմանված են | 1.Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կողմից ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը մեծացնելու նպատակով | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>Սույն միջոցառումը առաջարկվում է վերապահել ՀՀ ԱԺ աշխատակազմին, նկատի ունենալով, որ ԱԺ-ի բնականոն գործունեությունը ապահովում է ՀՀ ԱԺ աշխատակազմը: | ՀՀ ֆինանսների նախարարություն, Քաղաքացիական հասարակության միավորումներ (Համաձայնությամբ) |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Ազգային Ժողովի կանոնակարգ ՀՀ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ (այո/ոչ) | | | |
| | | | 2.ՀՀ Ազգային ժողովում ՀՀ պետական բյուջեի նախագծի և պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության հաշվետվության քննարկմանը մասնակցած քաղաքացիական միավորումների թիվը | Տվյալները բացակայում են | | |

### 3.3 Պետական գնումների համակարգ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 11. Ապահովել պետական գնումների հրապարակայնությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը | 11.1Բարելավել գնումների գործող համակարգը և հզորացնել պետական գնումների ոլորտում լիազոր մարմինների ինստիտուցիոնալ կարողությունները | 1.ՊԳԳ կարգավիճակը վերանայված է | 1.ՊԳԳ կարգավիճակի վերանայման արդյունքում, վերջինս ուղակիորեն ներգարվված չէ նպատակային մրցույթների կազմակերպման և գնման պայմանագրերի կնքման գործում: (այո/ոչ) | ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված և 2011 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած <Գնումների մասին> ՀՀ օրենքով գնումների համակարգը լիովին ապակենտրոնացվել է, այսինքն բոլոր պետական մարմինները ինքնուրույն են կատարում իրենց գնումները:<br><br>Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն<br>Միջոցառումը իրականացվելու է <Գնումների մասին> ՀՀ նոր օրենքը ընդունվելուց և ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն 2011 թվականին<br><br>Ցուցիչ 1-ից 6-րդ Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են “ոչ”, քանի որ դրանց կատարումը իրականացվելու է <Գնումների մասին> ՀՀ նոր օրենքի նախագծի ընդունմամբ:<br><br>Իրավիճակի ընդհանուր գնահատական – բավարար<br>Ռազ. Դրույթի իրականացման գնահատականը – բավարար | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | 2.ՊԳԳ-ն ապահովված է որակյալ մասնագետներով, արդի տեղեկատվական տեխնոլոգիաներով և պատշաճ հզորության կապուղիներով (այո/ոչ) | ոչ | | |
| | | 2.Գնումների մասնագետների (Պետական մարմինների գնումների համակարգման պատասխանատուների և ՊԳԳ աշխատակիցների) որակավորման չափորոշիչները սահմանված են | 3.ՊԳԳ-ն վերափոխվել է Էլեկտրոնային գնումների սպասարկման կենտրոնի (այո/ոչ) | ոչ | | |
| | | | 4.Հանրային ֆինանսների պետական կառավարման լիազոր մարմինը (ԼՄ) սահմանել է ՊԳԾ աշխատակիցների որակավորման չափորոշիչներ (այո/ոչ) | ոչ | | |
| | | | 5.ԼՄ-ն սահմանել է գնումների մասնակցետների վարքագծի և շահերի բախման ծառայողական կանոնակարգեր (այո/ոչ) | ոչ | | |
| | | | 6.Որակավորված գնումների մասնագետների թվի հարաբերությունը աշխատակիցների ընդհանուր թվաքանակին | ոչ | | |
| | 11.2 Ներդնել էլեկտրոնային գնումների համակարգը | 1.էլեկտրոնային մրցույթների ծրագրային ապահովումը մշակված և փորձարկված է | 1.Էլեկտրոնային մրցույթների համակարգի միջոցով ներկայացված մրցութային հայտերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կայացած ոչ էլեկտրոնային մրցույթների ժամանակ ներկայացված հայտերի ընդհանուր թվաքանակին | 0 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br><br>Էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրման նպատակով 2010թ. Կազմակերպված միջազգային մրցույթի արդյունքում ընտրվել է խորհրդատու, որի հետ հունիս ամսին կնքվել է պայմանագիր: Համակարգի շահագործումը նախատեսվում է սկսել 2011թ-ից:<br><br>Ցուցիչ 1. Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են “0” քանի որ դրա կատարումը հնարավոր կլինի իրականացնել էլեկտրոնային | ՀՀ ֆինանսների նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2.Էլեկտրոնային ձեռքբերումների համակարգի ներդրման գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը հաստատված են (այո/ոչ) | ոչ | մրցույթների համակարգի ներդրումից հետո:<br><br>Ցուցիչ 2. Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են “ոչ” քանի որ դրա կատարումը հնարավոր կլինի իրականացնել էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրմանը զուգահեռ: էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրումից հետո:<br><br>Իրավիճակի ընդհանուր գնահատական – բավարար<br>Ռազ. Դրույթի իրականացման գնահատականը - բավարար | |
| | | | 3.Էլեկտրոնային մրցույթների համակարգի միջոցով կատարված գնումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ոչ էլեկտրոնային եղանակով կազմակերպված մրցույթների ընդհանուր թվաքանակին | 0 | | |
| | 11.3. Բարելավել պետական գնումների ընթացակարգերի պահպանման նկատմամբ վերահսկողությունը | 1.Գնումների գործընթացի ժամկետների և ընթացակարգերի պահպանման համար մարմինների ղեկավարների անհատական պատասխանատվությունը սահմանված է,<br><br>2.Ըստ պետական մարմինների կազմված գնումների պլանները հրապարակվում են ԼՄ-ի` գնումների միասնական կայք-էջում | 1.Գնումների գործընթացի ժամկետների և ընթացակարգերի խախտման համար սահմանվել են անհատական պատասխանատվության ենթարկելու համարժեք սանկցիաներ (այո/ոչ) | ոչ | Արդյունք 1. կատարված է մասնակիորեն<br><br>Միջոցառումների կատարումը հնարավոր է իրականացնել <Գնումների մասին> ՀՀ նոր օրենքը ընդունվելու և ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն 2011 թվականին<br><br>Արդյունք 2. կատարված է մասնակիորեն<br><br>ՀՀ կառավարության 15/12/09թ. թիվ 1521-Ն որոշմամ սահմանվել է, որ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հանդիսանում է <Գնումների մասին> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հաստատված գնումների անվանացանկը, որը օրենքով նախատեսված պահանջներից բացի, յուրաքանչյուր գնման համար սահմանում է նաև գնման տվյալ գործընթացի կազմակերպման ժամկետները և գնման ձևը: Նշված նորմի համաձայն գնումների պլանը հաստատում է ՀՀ կառավարությունը:<br>2010թ. գնումների պլանը ներկայացված է ՀՀ կառավարության քննարկմանը:<br><br>Ցուցիչ 1-ին և 2-րդ Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են “ոչ”, քանի որ դրանց կատարումը իրականացվելու է <Գնումների մասին> ՀՀ նոր օրենքի ընդունմամբ:<br><br>Ցուցիչ 3. Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են “ոչ”, քանի որ դրանց կատարումը հնարավոր կլինի իրականացնել գնումների պլանը ՀՀ կառավարության որոշմամվ հաստատվելուց հետո:<br>Ցուցիչ 4. Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են “ոչ”, քանի որ դրանց կատարումը հնարավոր կլինի իրականացնել <Գնումների մասին> ՀՀ նոր օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվելիք կարգերով | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | 2.Ներդրված է մրցութային հանձնաժողովի անդամների շահերի բախման հայտարարագրման ընթացակարգ (այո/ոչ) | ոչ | | |
| | | | 3.ԼՄ-ի գնումների միասնական կայք-էջում հրապարակվում են ըստ պետական մարմինների կազմված գնումների պլանները | ոչ | | |
| | | | 4.Մրցութային հանձնաժողովների նիստերը տեսաձայնագրվում են (այո/ոչ) | ոչ | | |
| | 11.4 Բարձրացնել պետական գնումների գործընթացի հանդեպ վստահությունը | 1.Հանրային գնումների 2009թ. հաշվետվության հրապարակում | 1.Հրապարակվում են պետական գնումների տարեկան հաշվետվություններ (այո/ոչ) | այո | Արդյունք 1. կատարված է ամբողջությամբ<br>2009թ. գնումների կատարման հաշվետվությունը հրապարակվել է 2010թ.<br><br>Արդյունք 2. կատարված է մասնակիորեն<br><br>Միջոցառումը նախատեսվում է իրականացնել <Գնումների մասին> ՀՀ օրենքի ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն 2011 թվականին: | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | 2.Գնումների բողոքարկման խորհուրդը ստեղծված է, որն անկախ է ԼՄ-ից, | 2.Գնումների գործընթացի վերաբերյալ դատական կարգով քննարկված բողոքների թվի հարաբերությունը ներկայացված | 0 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ՊԳԳ-ից, ինչպես նաև գործադիր իշխանության այլ մարմիններից<br><br>3.Մրցույթային հայտերի գնահատման, ոչ-գնային չափորոշիչները և մասնակիցների նախաորակավորման իրականացման ընթացակարգերը սահմանված են<br><br>4.Պետական մարմինների, հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև այլ շահագրգիռ հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծված է գնումների խորհրդատվական մարմին | բողոքների ընդհանուր թվաքանակին | | Արդյունք 3. Կատարված է մասնակիորեն<br><br>Միջոցառումը նախատեսվում է իրականացնել <Գնումների մասին> ՀՀ օրենքի ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն 2011 թվականին:<br><br>Արդյունք 4.Կատարված է մասնակիորեն<br><br>Միջոցառումը նախատեսվում է իրականացնել <Գնումների մասին> ՀՀ օրենքի ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն 2011 թվականին:<br><br>Ցուցիչ 1-ից 6-րդ. Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են “0” և “ոչ”, քանի որ դրանց կատարումը հնարավոր կլինի իրականացնել <Գնումների մասին> ՀՀ նոր օրենքի նախագծի ընդունումից հետո: | |
| | | | 3.Ստեղծված է գնումների բողոքարկումն անկախ համակարգ (այո/ոչ) | Ոչ | | |
| | | | 4.Սահմանված են մրցույթային հայտերի գնահատման ոչ-գնային չափորոշիչներ (այո/ոչ) | Ոչ | | |
| | | | 5.Գնումների խորհրդատվական մարմինը ստեղծված է (այո/ոչ) | ոչ | | |
| | | | 6.Գնումների գործընթացի վերաբերյալ գնումների բողոքարկման խորհրդի կողմից քննարկված բողոքների թվի հարաբերությունը ներկայացված բողոքների ընդհանուր թվաքանակին | 0 | | |
| | 11.5 Ապահովել մրցակցային միջավայրը հանրային գնումների գործընթացում | 1.Պետական գնումների վերաբերյալ առավել տարածված միջազգային լեզուներով և կապուղիներով ամբողջական տեղեկատվությունը էլեկտրոնային միջոցներով տրամադրելու ընթացակարգերը ներդրված են | 1.Պետական գնումների վերաբերյալ հրապարակային աճուրդների քանակը, տոկոս | 0 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br><br>Միջոցառումների կատարումը հնարավոր է իրականացնել <Գնումների մասին> ՀՀ նոր օրենքը ընդունվելու և ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն 2011 թվականին<br><br>Ցուցիչ 3- 5 տվյալների աղբյուրը` ՀՀ ֆինանսների նախարարություն | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | 2.Համեմատաբար խոշոր արժեք ունեցող (ավելի քան 90 մլն.դրամ) մրցույթների հայտարարությունները հրապարակվում են նաև միջազգային լեզուներով և էլեկտրոնային կապուղիներով | ոչ | | |
| | | | 3.Հանրային գնումների մրցութային գործընթացների ավարտի և դրանց արդյունքների հրապարակման միջև ընկած ժամանակահատվածի միջին տևողությունը | 10 | | |
| | | | 4.Հանրային գնումների մրցութային գործընթացների արդյունքների հրապարակման և հաղթող կազմակերպությունների հետ պայմանագրերի ստորագրման միջև ընկած ժամանակահատվածի միջին տևողությունը | 40 աշխ. օր | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 5.Արտասահմանյան կազմակերպությունների մասնակցությամբ կայացած հանրային գնումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում իրականացված գնումների ընդհանուր թվաքանակին | 0 | | |

### 3.4 Հարկային և մաքսային համակարգեր

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 12. Բարձրացնել հարկային ծառայությունում մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը | 12.1Ներդնել հարկային ծառայության պաշտոնի նշանակման թափանցիկությունն ու օբյեկտիվությունն ապահովող ընթացակարգերը և հստակեցնել հարկային ծառայողների պաշտոնեական առաջխաղացման ընթացակարգերը | 1.Հարկային ծառայողների պաշտոնի նկարագրերը սահմանված են<br><br>2.Հարկային ծառայողների աշխատանքի կատարողական ցուցանիշների վրա հիմնված պարգևատրման համակարգը ներդրված է | 1.Հարկային մարմնում պաշտոնեական առաջխաղացումների թվի հարաբերությունը իրականացված ատեստացիաների ընդհանուր թվաքանակին, | 0.2 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 03.03.10թ. N 416-Ա, 27.08.2010թ. N 1754-Ա և 29.04.2011թ. N746-Ա հրամաններով համապատասխանաբար հաստատվել են հարկային (տարածքային) տեսչությունների հարկային ծառայողների, խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության հարկային ծառայողների և վերադաս հարկային մարմնի հարկային ծառայողների պաշտոնների նկարագրերը:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ կառավարության 24.12.2009թ. նիստի N53 արձանագրային որոշման համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրվել է հարկային ծառայողների աշխատանքների կատարողականի գնահատման համակարգը:<br>Հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 15.09.2010թ. «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարկային, մաքսային և քաղաքացիական ծառայողների աշխատանքային ծրագրի կատարողականի գնահատման համակարգի հիման վրա տարեկան խրախուսման կարգը» հաստատելու մասին N 2060-Ա հրամանը, որտեղ սահմանվել են հարկային, մաքսային և քաղաքացիական ծառայողների խրախուսանքի տեսակները, կիրառման չափանիշները և տարեկան կատարողականի միավորների ցանկի կազմման կարգն ու ժամկետները:<br>Ցուցիչ1. 2010թ. ընթացքում իրականացվել է 95 պաշտոնեական առաջխաղացում և 471 հարկային ծառայողների ատեստացիա:<br>Ցուցիչ 2. Հարկային ծառայողների միջին աշխատավարձը 262.000 դրամ, մասնավոր հատվածի աշխատողների միջին աշխատավարձը 130.418 դրամ:<br>Ցուցիչ 3. 2010թ. իրականացվել է հարկային ծառայողների 257 խրախուսումներ: Հարկային մարմնի ընդհանուր ծառայողների թվաքանակը 2084: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Հարկային մարմինների աշխատողների միջին աշխատավարձի հարաբերությունը մասնավոր հատվածի ղեկավար անձնակազմի աշխատողների միջին աշխատավարձի նկատմամբ: | 2 | | |
| | | | 3.Հարկային ծառայողների խրախուսումների թվի հարաբերությունը հարկային մարմնի ընդհանուր ծառայողների թվաքանակին | 0.12 | | |
| | 12.2 Կատարելագործել հարկային ծառայողների վերապատրաստման համակարգը | 1.Հարկային ծառայության ուսումնական կենտրոնը գործարկված է, պարտադիր վերապատրաստման ընթացակարգը սահմանված է | 1.Հարկային մարմնում վերապատրաստված ծառայողների թվի հարաբերությունը պաշտոնեական առաջխաղացումների ընդհանուր թվաքանակին, | 20.54 | Արդյունք 1 Իրականացված է մասամբ<br>ՀՀ կառավարության 04.12.2008թ. N 1497-Ն որոշմամբ ստեղծվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ: Հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.05.2011թ «ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 787-Ա հրամանը և նշանակվել է ՊՈԱԿ-ի տնօրեն: Այն դեռևս չունի վարչական կամ դասախոսական անձնակազմ: Աշխատանքներ են տարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ ժամանակակից ուսումնական կենտրոնի ձևավորման ուղղությամբ:<br>Մասնավորապես` ներկայումս իրականացվում են Կենտրոնի նյութատեխնիկական կայացման աշխատանքները: Այսպես` Կենտրոնի աշխատանքները պատշաճ կազմակերպման և հարկային | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | 2.Հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման ուսումնական ծրագրերը հաստատված են | 2.Հարկային մարմնում վերապատրաստված ծառայողների թվի հարաբերությունը հարկային ծառայողների ընդհանուր թվաքանակին, | 0.93 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | 3.Քաղաքացիների գույքի և եկամուտների հայտարարագրերի նկատմամբ հսկողության, դրա արդյունքների հիման վրա կոռուպցիոն դեպքերի բացահայտման, կոռուպցիայի դեմ պայքարի այլ միջոցների, վերաբերյալ թեմաները ներառված են հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման ուսումնական ծրագրերում | 3.Հարկային ծառայողների վերապատրաստման ծրագրերում ընդգրկվել են կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների վերաբերյալ թեմաներ (այո/ոչ), | ոչ | ծառայողների պարտադիր ուսուցման համակարգի ներդրման համար ուսումնական բազա ստեղծելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ Կենտրոնին է հատկացվել՝Երևան, Աhարոնյան-12/3 hասցեում գտնվող շենքը:<br>Ներկայումս շինվերանորոգման աշխատանքներ են ընթանում կենտրոնին հատկացված երկու մասնաշենքերում (ք.Երևան, Աhարոնյան-12/3 hասցեում գտնվող ուսումնական շենքի և ք.Դիլիջանի նախկին Կինեմատոգրաֆիստների տուն): ՊԵԿ-ը բանակցություններ է վարում ՀԲ հետ՝ վերջինիս աջակցության ծրագրի շրջանակներում ուսումնական կենտրոնի շենքերի վերանորոգումը և կահավորումը ֆինանսավորելու վերաբերյալ:<br>ՊՈԱԿ-ի կողմից մշակվել և քննարկումների փուլում է գտնվում «ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի գործունեության կազմակերպման ծրագրի» նախագիծը:<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում լրացուցիչ մասնագիտական ուսուցումը կանոնակարգելու և ուսումնական միջոցառումների ծրագրավորված և պատշաճ կազմակերպումը ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 10.12.2010թ N2979-Ա հրամանով հաստատվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ուսումնական միջոցառումների կազմակերպման և անցկացման ընթացակարգը»:<br><br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հարկային ծառայության ուսուցման ծրագիրը մշակվում է ամենամյա կտրվածքով և ներառում են հարկային ծառայողների նախապատրաստական, վերապատրաստման և փորձի փոխանակման դասընթացներ (2010թ. տարեկան ուսումնական ծրագիրը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ 03.03.2010թ. N414-Ա հրամանով, երկրորդ կիսամյակում ԱՄՀ առաջարկությունների ներքո ծրագիրը վերամշակվել և հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 03.08.2010թ. N1726-Ա հրամանով): Ծրագիրը մշակվել է էմպիրիկ եղանակով՝ հարցումների միջոցով՝ կարիքների գնահատման հիման վրա: Դասընթացները կազմակերպվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կողմից սեփական ուժերով կամ հրավիրված դասախոսների միջոցով:<br>Բացի այդ, սեփական և դոնոր կազմակերպությունների օգնությամբ ապահովվում է ՊԵԿ հարկային ծառայողների ուսուցանում միջազգային ուսումնական հաստատություններում, մասնավորապես՝ ՏՀԶԿ(OECD) Անկարայի, Բուդապեշտի և Վիեննայի հարկային կենտրոններում, կազմակերպվում են փորձի փոխանակման այցելություններ ԱՊՀ պետությունների հարկային մարմիններ՝ ԱՊՀ պետությունների հարկային մարմինների ղեկավարների համակարգման խորհրդի (КСРНС СНГ) գործունեության շրջանակներում:<br>Արդյունք 3. Իրականացված չէ<br>Գույքի և եկամուտների հայտարարագրերի նկատմամբ հսկողության, դրա արդյունքների հիման վրա կոռուպցիոն դեպքերի բացահայտման, կոռուպցիայի դեմ պայքարի այլ միջոցների վերաբերյալ թեմաներ կներառվեն հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման ուսումնական ծրագրերում համապատասխան օրենսդրական փաթեթի ընդունումից հետո:<br>Ցուցիչ1.2010թ. ընթացքում իրականացվել է 95 պաշտոնեական առաջխաղացում և 1952 հարկային ծառայողների վերապատրաստում:<br>Ցուցիչ 2.2010թ. ընթացքում իրականացվել է 1952 հարկային | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ծառայողների վերապատրաստում: Հարկային ծառայողների թվաքանակը կազմել է 2084 մարդ:<br>Ցուցիչ 3.Հաշվի առնելով, որ ուսումնական ծրագրին համապատասխան 2009թ.-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում անց են կացվել` "Կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերում և հայտնում իրավասու իրավապահ մարմիններին" թեմայով համապարփակ դասընթացներ` հարկային ստուգումներում ընդգրկվող ՀՀ ԿԱ ՊԵԿ բոլոր հարկային ծառայողների մասնակցությամբ, ապա 2010թ. ուսուցման ծրագրում նման դասընթաց չի ընդգրկվել: | |
| | 12.3 Սահմանել հարկային ծառա-յողների ռոտացիայի ընթացակարգեր | 1.Հարկային ծառայողների ռոտացիայի միջազգային լավագույն փորձն ուսումնասիրված է, մշակված առաջարկների հիման վրա հարկային ծառայողների ռոտացիայի գործող կարգը կատարալեագործված է<br><br>2.Հարկային ծառայողների ռոտացիայի ընթացակարգերը սահմանված են | 1.Հարկային մարմնում ռոտացիաների թվի հարաբերությունը հարկային ծառայողների ընդհանուր թվաքանակին | 0.08 | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Ուսումնասիրվել է հարկային ծառայողների ռոտացիայի միջազգային լավագույն փորձը:<br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ:<br>Ռոտացիայի գործող կարգի կատարելագործման նպատակով քննարկման փուլում է գտնվում գործող կարգի լրամշակման նպատակահարմարության հարցը:<br>Ցուցիչ 1. 2010թ. իրականացվել է հարկային ծառայողների թվով 168 ռոտացիա: Հարկային ծառայողների թվաքանակը կազմել է 2084 մարդ: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 12.4 Սահմանել հարկային ծառայող-ների գործունեության օրինականության նկատմամբ ներքին հետևողական և խիստ հսկողություն | 1.Հարկային ծառայության գործունեության օրինականության հսկողության ընթացակարգերը սահմանված են | 1.Հարկային մարմնում ծառայողական քննությունների թվի հարաբերությունը պաշտոնից ազատման դեպքերի ընդհանուր թվաքանակին, | 8.25 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 30.12.2005թ- «Ծառայողական քննություն անցկացնելու մասին» թիվ 1-06/667-Ա հրամանով հաստատվել է կարգը, իսկ փոփոխությունները կատարվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.12.2010թ-ի թիվ 3006-Ա հրամանով:<br>Ցուցիչ 1.ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի համապատասխան հրամանների համաձայն 2010թ. ընթացքում իրականացվել է թվով 66 ծառայողական քննություն, որի ընթացքում 8 հարկային ծառայողներ ազատվել են պաշտոնից: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 12.5 Ամբողջականաց-նել հարկային ծառայողի վարքագծի կանոնները և վերահսկողություն սահմանել դրանց պահպանման նկատմամբ | 1.Հարկային ծառայողի վարքագծի գործող կանոնները լրամշակված են և դրա նկատմամբ ներքին վերահսկողության ընթացակարգերը ներդրված են | 1.Հարկային մարմնում էթիկայի կանոնների խախտումների թվի հարաբերությունը կարգապահական տույժերի ընդհանուր թվաքանակին, | 0.25 | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Հարկային ծառայողի վարքագծի կանոնները հաստավել են ՀՀ կառավարության 23.10.2002թ-ի թիվ 1624-Ն որոշմամբ:<br>Ցուցիչ 1.ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել է թվով 66 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 261 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:<br>Ցուցիչ 2. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել է թվով 66 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր: Ծառայողական քննությունները իրականացվել են թվով 381 հարկային ծառայողների նկատմամբ: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Հարկային մարմնում էթիկայի կանոնների խախտումների թվի հարաբերությունը կարգապահական վարույթների ընդհանուր թվաքանակին, | 0.17 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 12.6 Ներդնել հարկա-յին ծառայողի շահերի բախումը կարգավորելու և շահերի բախման հայտարարագրման ինստիտուտը | 1.Պետական ծառայողների շահերի բախման համակարգի ներդրման ռազմավարությունը և ծրագիրը ներառում են հարկային և մաքսային ծառայողների շահերի բախման կարգավորումը, սահմանված կարգի խախտման համար պատասխանատվության միջոցները<br><br>2.Հարկային և մաքսային ծառայողների շահերի բախման վերաբերյալ երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների համադրման հիման վրա շահերի բախման դեպքերի հայտնաբերման միջազգային լավագույն փորձը ուսումնասիրված է, առաջարկները մշակված են<br><br>3.Հարկային և մաքսային ծառայողների շահերի բախման հայտարարագրման ընթացակարգերը սահմանված են | 1.Հարկային մարմնում գործում է շահերի բախման դեպքերի բացահայտման հստակ ընթացակարգ, | Ոչ | Արդյունք 1.Իրականացված է մասնակիորեն<br>ՀՀ վարչապետի մոտ 2010թ. դեկտեմբերի 28-ին կայացած Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի (ԵՎԲԱԽ) նիստի N 23.13/[57727]-11 արձանագ-րությամբ տրված հանձնարարականի՝ առաջարկվել է միջոցառումը ներառել հարկային վարչարարության ռազմավարության 2012-2014թթ. ծրագրում՝ պատասխանատու մարմին սահմանելով ՀՀ ֆինանսների նախարարությանը:<br>Արդյունք 2. Իրականացված չէ<br><br>Արդյունք 3. Իրականացված չէ<br>Ցուցիչ1-2. Շահերի բախման դեպքերը չեն արձանագրվում և տեղեկատվություն չի հավաքագրվում | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Հարկային մարմնում շահերի բախման դեպքերի քանակի հարաբերությունը հարկային ծառայողների ընդհանուր թվաքանակին, | Տվյալները բացակայում են | | |
| 13. Շարունակաբար նվազեցնել հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները | 13.1 Ընդլայնել էլեկտրոնային հարկային ծառայությունները | 1.Հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների առաքման ավտոմատացված համակարգը ներդրված է<br><br>2.Հարկ վճարողների հաշվետվությունների 50 տոկոսից ավելին մշակվում են ավտոմատացված համակարգի միջով<br><br>3.Հարկ վճարողների հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրո-նային տարբերակով ներկայացնելու կարգավորման վերաբերյալ հանրային իրազեկման ծրագիր | 1.Հարկային մարմիններին ոչ առձեռն ներկայացված հաշվետվությունների թիվը, հաշվետվությունների ընդհանուր թվի նկատմամբ, տոկոս | 33.9 % | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ իրականացվող համակարգը ներդրված է և ներառում է՝ «Ներկայացված հաշվետվությունների ստացման», «Չմարված պարտավորությունների հիշեցում-ծանուցման», «Չներկայացրած հաշվետվությունների հիշեցում-ծանուցման», «Հարկային հաշիվների համադրման» և այլ հիշեցում-ծանուցումներ: Ներկայումս համակարգը գտնվում է թեստավորման փուլում:<br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ<br>Ավտոմատացված համակարգի միջոցով մշակվում են բոլոր ստացվող հաշվետվությունները, հայտարարագրերը և այլ տեղեկությունները Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ 01.07.2009թ. թիվ 1579-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի 2010թ. հունվարի 1-ից հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացման ծրագրային համակարգում ներդրվել են 27 հաշվետվություններ: Ներդված է հարկային մարմիններ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգը և առ 30.12.2010թ. էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների քանակը կազմում է 70 հազար հատ: Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացողների թիվը առ 30.12.2010թ. կազմում է 4085 հարկ վճարող:: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Ենթաօրենսդրական ակտի մակարդակով ամրագրվել է հարկային հաշվետվությունները բացառապես փոստով կամ էլեկտրոնային փոստով ընդունելու պահանջը (այո/ոչ), | այո | | |
| | | | 3.Հարկ վճարողների հետ շփումների թվի հարաբերությունը նույն ժամանա-կահատվածում հավաքագրված հար-կային մուտքերի աճին, | 0 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ<br>Հարկ վճարողների հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու կարգավորման վերաբերյալ իրազեկումը կատարվել է ՀՀ պաշտոնական տեղեկագրերում, www.taxservice.am և www.arlis.am ինտերնետային կայքերի միջոցով, բուկլետների տպագրման միջոցով, հեռուստատեսային հաղորդումներում առանձին անդրադարձներով:<br>Ցուցիչ 1.Ոչ առձեռն (փոստով և էլեկտրոնային եղանակով) ներկայացված հաշվետվությունների թիվը 2010թ. - 339021: Հաշվետվությունների ընդհանուր թիվը - 1000149 :<br>Ցուցիչ 2. Հարկային հաշվետվությունների փոստով կամ էլեկտրոնային փոստով ընդունումը կարգավորվում է “Հարկերի մասին” ՀՀ օրենքով և օրենքի համապատասխան հավելվածներով:<br>Ցուցիչ 3. Հարկ վճարողների հետ շփումների թիվը հարկային մարմնում չի հաշվառվում, հետևաբար պահանջվող ցուցիչի մեծությունը հնարավոր չէ ներկայացնել: | |
| | 13.2 Հիմնել հարկ վճարողների սպասարկման տեղեկատվության ընդունման կենտրոններ | 1.Սպասարկման կենտրոնների մատուցած ծառայություններից օգտվողների թիվն աճել է 15 տոկոսային կետով | 1.Հիմնվել են հարկ վճարողների սպասարկման վերաբերյալ տեղեկատվության ընդունման կենտրոններ (այո/ոչ), | այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>ՀՀ կառավարության 25.02.2010թ. N 167-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 24.07.2008թ. «ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն և 07.08.2008թ. «ՀՀ պետական եկամուտների (հարկային և մաքսային) վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 941-Ն որոշումների մեջ, որով հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծման ժամկետը երկարաձգվել է 31.12.2010թ. և նշված արդյունքը տեղափոխվել է 31.12.2011թ.:<br>Արդեն իսկ գործարկված սպասարկման կենտրոնների աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 26.01.2010թ. թիվ 14-Ա հրամանով հաստատվել են հարկ վճարողների սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտները, սպասարկման կենտրոնների հիմնական գործառույթներից բխող գործընթացների նկարագիրը, սպասարկման կենտրոնների կողմից ծառայությունների մատուցման կարգը, աշխատանքի արդյունքը, գանգատարկման կարգը և տեղադրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքի (www.taxservice.am) առանձնացված «Սպասարկման կենտրոն» բաժնում:<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ 1419-Ն հրամանով հաստատվել է «Գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային հարցադիմումներին հարկային մարմնի կողմից պարզաբանումների տրամադրման կարգը», որով կանոնակարգվում են հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին՝ իրենց իրավունքների և պարտականությունների, գործող հարկերի և պարտադիր վճարների, դրանց հաշվարկման և վճարման կարգերի, հարկային հաշվետվությունների ձևերի լրացման և ներկայացման կարգերի, հարկային և պարտադիր այլ վճարների մասին օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի, ինչպես նաև հարկային մարմնի և դրա պաշտոնատար անձանց իրավասությունների և լիազորությունների վերաբերյալ անհատական պարզաբանումների տրամադրման գործընթացը:<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 04.08.10թ. N 1733-Ա հրամանով հաստատվել է հարկ վճարողների սպասարկման կենտրոնի կողմից հարկ վճարողների համար սեմինարների կազմակերպման | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ընթացակարգը: Ընթացակարգը նպատակ ունի կանոնակարգելու հարկ վճարողների սպասարկման կենտրոնի կողմից հարկ վճարողների համար սեմինարների կազմակերպմանը, սեմինարների ծրագրերի մշակմանն առնչվող հարցերը:<br>Ընթացակարգը հնարավորություն է ընձեռում հարկ վճարողներին հեռախոսազանգերի, էլեկտրոնային հաղորդագրությունների, այցելությունների, սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ լրացված հարցաթերթերի միջոցով առաջարկել սեմինարների թեմաներ, որոնցից ամենահաճախակի հանդիպողները ներառվում են սեմինարների տարեկան ծրագրում:<br>Ձեռնարկված քայլերի արդյունքում 2010թ ընթացքում Արաբկիրի հարկային տեսչության հարկ վճարողների սպասարկման կենտրոն ներկայացվել են ավելի քան 5617 հարցադիմումներ:<br>Ցուցիչ 1. ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հաստատված հարկ վճարողների սպասարկման ռազմավարության ներքո ընդունված ՀՀ հարկային համակարգում հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծման ծրագրի շրջանակներում 2010թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչությունում և Վանաձորի տարածքային հարկային տեսչությունում գործարկվել են հարկ վճարողների սպասարկման կենտրոնները:Գործարկվել է էլեկտրոնային հաշվետվությունների սպասարկման կենտրոնը: | |
| | 13.3 Զարգացնել հարկային մարմնի կողմից ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության և ստուգումների պլանավորման ինքնագնահատման համակարգը | 1.Ստուգման ենթակա հարկ վճարողների 60 տոկոսից ավելին ընտրվում է ռիսկային չափանիշների հիման վրա՝ ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի (ՌՉՍՀ) միջոցով | 1.Հարկային մարմնի կողմից կամերալ ստուգումների թվի հարաբերությունը իրականացված ստուգումների ընդհանուր թվաքանակին, | 0.75 | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>ՀՀ կառավարության 25.02.2010թ. N 167-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 24.07.2008 թ. «ՀՀ կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն և 07.08.2008թ. «ՀՀ պետական եկամուտ-ների (հարկային և մաքսային) վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 941-Ն որոշումերի մեջ, որով ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ամբողջական գործարկումը նախատեսվել է 2010թ.-ին: Միաժամանակ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից մշակվել և ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել «Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի վերաբերյալ» հայեցա-կարգ, ինչը հնարավորություն կընձեռի հարկային ռեսուրսները ուղղել ռիսկային ոլորտներ՝ միաժամանակ ապահովելով բարեխիղճ հարկ վճարողների նկատմամբ թեթևացված հարկային վարչարարության մեխանիզմի կիրառում:<br>Հայեցակարգի հիման վրա մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հարկային մարմնի կողմից ռիսկային չափանիշների հիման վրա պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի կիրառման» համապատասխան կարգը:<br>ՀՀ կառավարության 03.06.2010թ. «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին գումար հատկացնելու մասին» թիվ 682-Ա որոշման համաձայն նախատեսվել է ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության ավտոմատացված համակարգի ներդրման նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացնել գումար:<br>Ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության համակարգի նկարագրի, համակարգի կիրառման ալգորիթմների և համակարգի ֆունկցիոնալ նկարագրի (տեխնիկական | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Հարկային մարմնի գործունեության հանդեպ բողոքների թվի հարա-բերությունը ի օգուտ տնտեսվարող սուբյեկտների կայացված դատավճիռների նդհանուր թվաքանակին, | 0.97 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | առաջադրանքի) փաստաթղթերի նախագծերը մշակվել և հավանության են արժանացել ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի բարեփոխման խորհրդի 20.05.2010թ. նիստում: Հավանության արժանացած փաստաթղթերի հիման վրա էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման շրջանակներում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.05.2010թ. թիվ 1238-Ա հրամանով հաստատվել է «Ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության համակարգի» տեխնիկական առաջադրանքը, որի հիման վրա սահմանվել են համակարգի կիրառման համար անհրաժեշտ համակարգչային և այլ սարքավորումների ձեռք բերման տեխնիկական ցուցանիշները և սահմանված կարգով 16.06.2010թ. հայտարարվել է մրցույթ: Մրցույթի արդյունքում ճանաչվել է հաղթող կազմակերպությունը և աշխատանքներ են տարվում համակարգչային ծրագրի մշակման ուղղությամբ:<br>Մասնավորապես ներկայումս ընթացքում են համակարգչային ծրագրի թեստավորման աշխատանքները:<br>Ցուցիչ 1.Հարկային մարմնի կողմից 2010թ. իրականացվել է թվով 21656 ստուգումներ (նշյալ թվի մեջ ներառվել են բյուջեի, լուծարման, ՀԴՄ, ելակետային, 28-րդ հոդվածի, ապօրինի, սոց, չգրանցված աշխատողի, ակցիզային դրոշմանիշների կիրառման, մասնակի, վերստուգման, դրամարկղային, արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների գրանցման ճշտության ստուգումները):<br>Ցուցիչ 2. Ցուցիչը որոշելիս հիմք է ընդունվել վարչական կարգով հարկային մարմնի գործունեության հանդեպ բողոքների թվի` 226, հարաբերությունը ի օգուտ տնտեսվարող սուբյեկտների կայացված վճիռների թվի` 297:<br>Ներկայացված է վարչական կարգով հարկային մարմնի գործունեության հանդեպ բողոքների թվի հարաբերությունը ի օգուտ տնտեսվարող սուբյեկտների կայացված վճիռների ընդհանուր թվաքանակին, քանի որ հարկային մարմնի գործողությունների բողոքարկման արդյունքում դատավճիռներ` որպես դատական ակտեր չեն կայացվում: | |
| | 13.4 Ներդնել հարկային հանցագործություններ ի քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վեր հանելու և տնտեսական հանցագործություններ ի և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդներ և ընթացակարգեր | 1.Հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վեր հանելու և տնտեսական հանցագործությունների և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու միջազգային լավագույն փորձն ուսումնասիրված է, և ներքին և/կամ քննություն իրականացնող այլ մարմինների հետ համատեղ ընթացակարգերը սահմանված են | 1.Հարկային մարմնի քննչական ստորաբաժանման կողմից հարուցված գործերի թվի հարաբերությունը հարկային ծառայողների ընդհանուր թվաքանակին,<br>2.Հարկային մարմնի գործունեության հանդեպ բողոքների թվի հարաբերությունը ի օգուտ հարկային մարմնի կայացված դատավճիռների ընդհանուր թվաքանակին, | 0.06<br>0.12 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO) 23-րդ առաջարկության համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից, Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի համագործակցության շրջանակներում հրավիրված միջազգային փորձագետի աջակցությամբ, մշակվել և ընդունվել է <Կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման և դրանց մասին իրավասու իրավապահ մարմիններին հայտնելու վերաբերյալ ուղեցույցը>` որպես մոդել օգտագործելով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության <Կաշառակերության վերաբերյալ իրազեկության ձեռնարկը>հարկային ստուգողների համար (OECD Bribery Awareness Handbook for Tax Examiners): 2009 թվականի հուլիսի 10-ին ուղեցույցը տեղայնացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեսչություններին` կիրառման նպատակով:<br>Կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման և դրանց մասին իրավասու իրավապահ մարմիններին հայտնելու թեմայով կազմակերպված վերապատրաստման դասընթացների արդյունքում փորձագետի կողմից վերապատրաստվել են 6 հրահանգիչներ, որոնք ստացել են համապատասխան որակավորման վկայականներ և 112 | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե,<br>ՀՀ գլխավոր դատախազություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հարկային ծառայողներ՝ այդ թվում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ստուգումներ իրականացնող ստորաբաժանումների աշխատակիցներ, քննիչներ, հետաքննիչներ և օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցներ: Վերապատրաստված հրահանգիչների կողմից ևս 300 վերոնշյալ ոլորտների հարկային ծառայողների համար իրականացվել է կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման և դրանց մասին իրավասու իրավապահ մարմիններին հայտնելու վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ:<br>Ցուցիչ 1.<br>Ցուցիչը որոշելիս հիմք է ընդունվել հարկային մարմնի քննչական ստորաբաժանման կողմից հարուցված գործերի թվի՝ 144 հարաբերությունը հարկային ծառայողների ընդհանուր թվաքանակին՝2084:<br>Ցուցիչ 2.<br>Ցուցիչը որոշելիս հիմք է ընդունվել վարչական կարգով հարկային մարմնի գործունեության հանդեպ բողոքների թվի՝ 226, հարաբերությունը ի օգուտ հարկային մարմնի կայացված վճիռների թվի՝ 1775:<br>Ներկայացված է վարչական կարգով հարկային մարմնի գործունեության հանդեպ բողոքների թվի հարաբերությունը ի օգուտ հարկային մարմնի կայացված վճիռների ընդհանուր թվաքանակին, քանի որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գանձման ուղղությամբ ներկայացված հայցերի արդյունքում դատավճիռներ՝ որպես դատական ակտեր չեն կայացվում: | |
| 14. Բարձրացնել հարկային մարմնի գործունեության հրապարակայնությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը | 14.1 Սահմանել հարկային ծառայության միասնական ընթացակարգեր և ապահովել դրանց կիրարկումը | 1.Հարկային վարչարարության ներքին ընթացակարգերի միատեսակ կիրառման ուղեցույցներն ու ձեռնարկները հաստատված են<br><br>2.Հարկային ծառայողների մատուցած ծառայություններից հարկ վճարողների գոհունակության աստիճանը բարձրացել է 10 տոկոսային կետով | 1.Սահմանվել է հարկային ծառայության ներհամակարգային միասնական ընթացակարգեր<br><br>2.Գործում է հարկ վճարողների նկատմամբ հարկային ծառայության ներհամակարգային միասնական ընթացակարգերի միատեսակ կիրառման նկատմամբ վերահսկողություն | այո<br><br>այո | Արդյունք 1-2. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում՝ հարկային ստուգումների ձեռնարկները մշակվում են ծրագրավորված կարգով՝ ամենամյա ցանկերի և ժամանակացույցի հիման վրա (2010թ. ընթացքում հարկային ստուգումների ուղեցույցների ցանկը և մշակման ժամանակացույցը սահմանված են ՀՀ ԿԱ ՊԵԿ 03.03.2010թ. N415-Ա հրամանով):<br>ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) հետ համատեղ մշակվել են հարկային ստուգումների ներքոհիշյալ ուղեցույցները, որոնք 22.11.2010թ.-ին ի ղեկավարումն տրամադրվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի վերադաս մարմնի և հարկային տեսչությունների անձնակազմին.<br>1. “Տրանսպորտի ոլորտում հարկային ստուգման ուղեցույց”,<br>2. “Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և դրանց շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգումների իրականացման ուղեցույց”,<br>3. “Անշարժ գույքի գործարքների ստուգումների իրականացման ուղեցույց”,<br>4. “Զբոսաշրջության ոլորտում հարկային ստուգումների ուղեցույց”:<br>Ուղեցույցների պատշաճ կիրառումն ապահովելու նպատակով, ՀՀ ԿԱ ՊԵԿ 02.11.2010թ. №2415-Ա հրամանի համաձայն կազմակերպվել է արտագնա ուսումնական դասերի շարք՝ ստուգումներում ընդգրկվող հարկային տեսուչների համար: Որպես հրահանգիչներ դասընթացին մասնակցել է նաև ԱՄՆ ՄԶԳ կապալառու կազմակերպության հրավիրված միջազգային փորձագետը: Դասընթացի շրջանակներում ուսուցանվել են 184 հարկային ծառայողներ:<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը ձեռնամուխ է եղել ԱՄՆ ՄԶԳ հետ | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | համագործակցության շրջանակներում տպագրել 2008-2010թթ.-ի ընթացքում ՊԵԿ-ի կողմից մշակված հարկային ստուգումների բոլոր ուղեցույցները երկհատոր ժողովածուի տեսքով::<br>Ցուցիչ 1. Ընթացակարգերը սահմանվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ հրամանով և միասնական կարգով: ՀՀ ԿԱ ՊԵԿ 12.02.2010թ. N 204-Ա հրամանով հաստատվել են ՊԵԿ վերադաս մարմնի ստորաբաժանումների կառուցվածքը և գործառույթները: Նույն հրամանի հիման վրա 2010թ. փետրվար-մարտ ամիսներին կատարվել է գործառույթներից բխող ընթացակարգերի գույքագրում: Գույքագրման արդյունքներով մշակվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ 03.03.2010թ. N897-Ա հրամանով հաստատվել է բացակայող (կամ լրամշակման կարիք ունեցող) ընթացակարգերի ցանկը և դրանց մշակման ժամանակացույցը:<br>Ժամանակացույցին համապատասխան ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում 2010թ.-ի ընթացքում մշակվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամաններով հաստատվել են 14 ընթացակարգեր` հարկային վարչարարության մասով,<br>Ցուցիչ 2. Հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 01.12.2010թ «Հարկ վճարողների սպասարկման արդյունավետության բարձրացման որոշ միջոցառումների մասին» N2452-Ա հրամանը, որով կանոնակարգվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչությունների կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների, դրանց նկատմամբ հսկողության իրականցման հարցերը և հրապարակումը հարկային ծառայության պաշտոնական կայքում: | |
| | 14.2 Հրապարակել ուղեցույցեր հարկ վճարողների համար, այդ թվում` դրանք տեղադրել հարկային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում և պարբերաբար թարմացնել | 1.Հարկային աշխատողների և հարկ վճարողների համար պրակտիկայում առավել հաճախ թույլ տրվող սխալների տեղեկատուն ստեղծված է և թարմացվում է յուրաքանչյուր ամիս | 1.Հարկային մարմնում կոռուպցիոն դեպքերի բացահայտման և մեղավոր անձանց պատասխանատվության ներկայացման գործընթացների արդյունքները պարբերաբար հրապարակվում են (այո/ոչ), | այո | Արդյունք 1. Իրականավել է ամբողջությամբ<br>Հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 29.12.10թ. «ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի կողմից հսկողական գործառույթներ իրականցնելիս հաճախ հանդիպող սխալների տեղեկատուի ստեղծման և վարման աշխատանքների կանոնակարգման մասին» թիվ 3020-Ա հրամանը: Համաձայն հաստատված հրամանի, նախատեսվում է մինչև 2011թ. ապրիլի 30-ը մշակել և հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրել հաճախ հանդիպող սխալների տեղեկատուն: Հրամանով տեղեկատուի թարմացումը կատարվում է յուրաքանչյուր եռամսյակ` մինչև եռամսյակին հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը<br>Ցուցիչ 1. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 10.12.08թ. «Հարկային և մաքսային մարմնի գործունեության համառոտագրի (դայջեստ) պատրաստման և հրապարակման մասին» թիվ 1-06/506-Ա և 21.10.08թ. “Հարկային վարչարարական (վիճակագրական) որոշ ցուցանիշների պարբերական հրապարակումների մասին” թիվ 1-06/445-Ա հրամանների համաձայն: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 14.3 Ամբողջականցնել հարկային մարմնում ներքին աուդիտի համակարգի ներդրումը | 1.Հարկային մարմնի ներքին աուդիտի և ռիսկերի բացահայտման ընթացակարգերը սահմանված են<br><br>2.Ներքին աուդիտի արդյունքների վերաբերյալ հանրությանը պարբերաբար իրազեկման ընթացակարգը սահմանված է<br>Հարկային մարմնում իրականացվում է | 1.Հարկային մարմնում ամբող-ջականացվել է ներքին աուդիտի գործառույթը (այո/ոչ) | ոչ | Արդյունք 1-2.Իրականացված է մասնակիորեն<br>ՀՀ վարչապետի մոտ 2010թ. դեկտեմբերի 28-ին կայացած Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի (ԵՎԲԱԽ) նիստի N 23.13/[57727]-11 արձանագ-րությամբ տրված հանձնարարականի` առաջարկվել է միջոցառումը ներառել հարկային վարչարարության ռազմավարության 2012-2014թթ. ծրագրում:<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 03.05.2010թ. №897-Ա հրամանի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից մշակվել են ”ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեսչություններում համալիր և տեսչական ստուգումների իրականացման”, "ՀՀ իրավասու պետական մարմինների և ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հարկային տեսչություններում և ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի` | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ամբողջական ներքին աուդիտ | | | հարկային մասով կառուցվածքային ստորաբաժանումներում կատարված ստուգումների, ուսումնասիրությունների արդյունքների քննարկման, ինչպես նաև արձանագրված /հայտնաբերված/ խախտումների և թերությունների վերացման աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացման", "ՀՀ վարչապետի, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հանձնարարականների իրացման", "Հարկային մարմինների աշխատակիցների կողմից հովանավորչության և կոռուպցիոն ռիսկերի դեպքերի վերաբերյալ տեղեկատվության օգտագործման" ընթացակարգերը, որոնք կանոնակարգում են ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ներքին աուդիտի գործընթացը: | |
| | 14.4 Սահմանել հարկային ծառայության պաշտոնատար անձանց կողմից վարչական վարույթի իրականացման օրինականության նկատմամբ վերահսկողություն | 1.Հարկային ծառայության գործունեության և պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման ընթացակարգերը հստակեցված են<br><br>2.Հասարակությանն ու հարկ վճարողներին վստահություն ներշնչող «թեժ գիծը» և հարկային ծառայության պաշտոնական կայքում հետադարձ կապը ներդրված են | 1.Հարկ վճարողների կողմից ներկայացված բողոքների քննարկման արդյունքում ձեռնարկված միջոցառումների թվի հարաբերությունը ներկայացված բողոքների ընդհանուր թվին | 0.85 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ ԿԱ Հարկային պետական ծառայության պետի 06.06.2008թ. N07-Ն հրամանով հաստատվել և ՀՀ արդարադատության նախարարությունում 16.06.2008թ թիվ 12408190 գրանցվել է Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձևը և դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը: Թեժ գիծը գործարկվել է 2008 թվականի հոկտեմբերից:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության “թեժ գիծ” ծառայությունը գործում է դեռևս 2008թ.-ից: ՊԵԿ “թեժ գիծ” ծառայությանը կարելի է դիմել ինչպես հեռախոսային կապով (594-618), այնպես էլ` էլեկտրոնային փոստով (info@petekamutner.am) և ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայքի ինտերֆեյսից` “Հետադարձ կապ” բաժնում: Ծառայության գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ 28.11.2008թ. N1-06/494-Ա հրամանով: 29.05.2009թ.-ին «թեժ գծով» ստացվող հարցադիմումների և բողոքների մշակման ընթացակարգը լրամշակվել է` ապահովելով դրա աշխատանքի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Մասնավորապես` ստեղծվել է խնդիրների կարգավորման ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի աշխատանքային խումբ, ներդրվել է ստացված հարցադիմումների և բողոքների ամփոփման 15-օրյա պարբերականություն և ամենամսյա հաշվետվություն` ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին և ՀՀ կառավարության աշխատակազմին:<br>Ցուցիչ 1.Ցուցիչը որոշելիս հիմք է ընդունվել հարկ վճարողների կողմից ներկայացված բողոքների քննարկման արդյունքում ձեռնարկված միջոցառումների թվի` 194, հարաբերությունը ներկայացված բողոքների ընդհանուր թվին` 226:<br>Ցուցիչ 2.Ցուցիչը որոշելիս հիմք է ընդունվել 2009 թվականի` գանգատարկման հանձնաժողովի կողմից հարկ վճարողների օգտին ընդունված որոշումների թվի` 36, հարաբերությունը 2010 թվականի` գանգատարկման հանձնաժողովի կողմից հարկ վճարողների օգտին ընդունված որոշումների թվին` 37:<br>Ցուցիչ 3.2010թ. ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ “թեժ գծով” ստացվել է 19950 դիմում, որից 1398` բողոքներ և առաջարկություններ, իսկ մնացածը` հարցադիմումներ: Բոլոր հարցադիմումները և բողոքները սահմանված կարգով ստացել են ընթացք:<br>Նույն ժամանակաշրջանում ՀՀ կառավարության “թեժ գիծ” ծառայությունից վերադաս հարկային մարմին է վերահասցեագրվել 29 դիմում-բողոքներ, որոնց գծով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ և տեղեկացվել է ՀՀ կառավարության “թեժ գիծ” | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Գանգատարկման հանձնաժողովի կողմից հարկ վճարողների օգտին ընդունված որոշումների աճ | 0.97 | | |
| | | | 3.Գործում է հասարակությանն ու հարկ վճարողներին վստահություն ներշնչող «թեժ գծերը և հարկային ծառայության պաշտոնական կայքում արդյունավետ հետադարձ կապը | այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ծառայությունը: | |
| | 14.5 Ներդնել հարկային մարմնի և քաղաքացիական հասարակության կառույցների միջև համագործակցության արդյունավետ ընթացակարգեր | 1.Հարկային միջնորդների ինստիտուտի ներդրման հայեցակարգը հաստատված է | 1.Հարկային ծառայությունում բողոքարկման համակարգի վերաբերյալ բողոքարկող հարկ վճարողների թիվը | 0 | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Մշակվել է հարկային միջնորդների ձևավորման հայեցակարգի նախագիծը: Նախագիծը քննարկվել է Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի (ԵՎԲԱԽ) նիստում:<br>Միաժամանակ ՀՀ կառավարության 09.07.2009թ. "ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի N941-Ն և 2009 թվականի հունվարի 15-ի N40-Ն որոշումներում փոփոխություն կատարելու մասին" N 1134-Ն որոշմամբ հարկային միջնորդների ինստիտուտի ներդրման կատարման ժամկետը հետաձգվել է 31.12.2010թ.:<br>Հայեցակարգի գործնական կիրառման նպատակահարմարության տեսանկյունից շարունակվում են միջազգային փորձի ուսումնասիրության աշխատանքները:<br>Միաժամանակ ՀՀ վարչապետի մոտ 2010թ. դեկտեմբերի 28-ին կայացած Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի (ԵՎԲԱԽ) նիստի N 23.13/[57727]-11 արձանագ-րությամբ տրված հանձնարարականի` առաջարկվել է միջոցառումը ներառել հարկային վարչարարության ռազմավարության 2012-2014թթ. ծրագրում: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| 15. Բարձրացնել մաքսային ծառայության կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը | 15.1 Ներդնել մաքսային ծառայության համակարգում կատարողականի գնահատման համակարգ և դրա վրա հիմնված մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման ընթացակարգեր և մաքսային ծառայողի պարտադիր պարբերական ռոտացիայի կարգ | 1.Մաքսային ծառայողների աշխատանքնի կատարողականի գնահատման համակարգը ներդրված է<br>2.Մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման և ռոտացիայի ընթացակարգերը սահմանված են | 1.Մաքսային ծառայողի աշխատանքի կատարողականի գնահատման համակարգում ներառված ծառայողների թվաքանակի հարաբերությունը մաքսային ծառայողների ընդհանուր թվաքանակին | 1 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Բոլոր մաքսային ծառայողները ընդգրկված են աշխատանքի կատարողականի գնահատման համակարգում:<br>Հիմքը` 2009 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՀ կառավարության թիվ 53 արձանագրային որոշում:<br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 641-Ն որոշմամբ սահմանվել է մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման և ռոտացիայի ընթացակարգերը:<br>Ցուցիչ1. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է Անձնակազմի կառավարման վարչության կողմից տրամադրված տվյալների հիման վրա:<br>Ցուցիչ 2.Մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման և ռոտացիայի ընթացակարգերը սահմանվել են 2010 թվականի մայիսի 27-ին: 2010թ. իրականացվել է մաքսային ծառայողների թվով 237 ռոտացիա: Մաքսային ծառայողների թվաքանակը կազմել է 885 մարդ:<br>Ցուցիչը հաշվարկվել է անձնակազմի կառավարման վարչության կողմից տրամադրված տվյալների հիման վրա: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Ռոտացիայի սկզբունքով փոխատեղված ծառայողների թվաքանակի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին | 0.26 | | |
| | 15.2. Ներդնել մաքսային ծառայողի էթիկայի կանոններ և սահմանել դրանց նկատմամբ վերահսկողություն | 1.Մաքսային ծառայության էթիկայի գործող կանոնները լրամշակված են | 1.Մաքսային ծառայողների էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ բողոքների թիվը | 0 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ մաքսային ծառայողի էթիկայի կանոնները հաստատվել են դեռևս ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 160-Ա հրամանով:<br>Ցուցիչ1. Մաքսային ծառայողների էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ բողոքներ 2010 թվականի ընթացքում չեն ստացվել:<br>Ցուցիչի արժեքը հաշվարկվել է ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության կողմից տրամադրված տվյալների հիման վրա: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 15.3 Հրապարակել մաքսային ծառայության գործունեության | 1.Մաքսային ծառայության գործունեության 2009թ. տարեկան հաշվետվությունը | 1.Մաքսային ծառայության գործունեության 2009թ. տարեկան հաշվետվությունը հրապարակված է (այո/ոչ) | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Ներկայացվել է մաքսային ծառայության գործունեության 2009 թվականի տարեկան հաշվետվություն: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | վերաբերյալ տարեկան հաշվետվությունները | հրապարակված է | | | | |
| | 15.4.Ներդնել ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության համակարգ | 1.Ռիսկերի կառավարման համակարգում տեղեկատվական բազայի , մոնիտորինգի վերահսկման , ռիսկերի չեզոքացման կամ նվազեցման համակարգի, ռիսկի պրոֆիլների ինչպես նաև ռիսկի կառավարման համար պատասխանատու մասնագետների ուսուցում և վերապատրաստում<br><br>2.Ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության ռիսկի չափորոշիչները վերանայված են | 1.Հետբացթողումային հսկողության համար ընտրված հայտարարագրերի թվաքանակի հարաբերությունը հայտարարագրերի ընդհանուր թվաքանակին | 18.4 տոկոս | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>2010 թվականի մարտի 1-4-ը Հայաստանում Եվրամիության Խորհրդատվական խմբի, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և Քաղաքական ու իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC) կողմից համատեղ անց է կացվել թվով երկրորդ` ռիսկերի կառավարման թեմայով ուսումնական դասընթաց:<br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br>2009 թվականի դեկտեմբերի 23-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի թիվ 4047-Ա հրամանով հաստատվել է մաքսային հսկողության ռիսկերի պրոֆիլների մշակման, մաքսային հսկողության ժամանակ ռիսկերի պրոֆիլների կիրառման, դրանց ակտիվացման և դադարեցման մասին հրահանգը:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է Հետբացթողումային հսկողության վարչություն և Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն կողմից տրամադրված տվյալների հիման վրա:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն կողմից տրամադրված տվյալների հիման վրա: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Մաքսային համակարգչային ծրագիր մուտք գործելու համար գաղտնաբառ ստացած տնտեսվարող սուբյեկտների թվաքանակի հարաբերությունը արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների ընդհանուր թվին | 8.18% | | |
| | 15.5.Ընդլայնել ինքնահայտարարագրման համակարգի միջոցով մաքսային հայտարարագիր ներկայացնողների շրջանակը, ինչպես նաև և մեծացնել մաքսային միջնորդի ինստիտուտի մատչելիությունը | 1.Ինքնահայտարարագրման համակարգի միջոցով մաքսային հայտարարագիր ներկայացնողների թվաքանակն ավելացել է 15 տոկոսային կետով<br><br>2.Բոլոր տարածաշրջանային մաքսատներում, մաքսային կետերում և մաքսային պահեստներում գործում են մաքսային բրոքերային գրասենյակներ | 1.Ինքնահայտարարագրման համակարգի միջոցով մաքսային հայտարարագրերի թվաքանակի հարաբերությունը ներկայացված մաքսային հայտարարագրերի ընդհանուր թվին | 1 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Բոլոր մաքսատներում ամբողջությամբ ներդրված է ինքնահայտարարագրման համակարգը և բոլոր տնտեսավարողները մաքսային հայտարարագրերը ներկայացվում են TWM ավտոմատ հայտարարագրման համակարգի միջոցով առանց մաքսային տեսուչի միջամտության, անմիջականորեն ԱՏԳ մասնակցի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի կողմից:<br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br>Բոլոր մաքսային մարմինները, ինչպես նաև դրանց գործունեության վայրում գտնվող մաքսային պահեստները սպասարկվում են մաքսային միջնորդական ծառայություն իրականացնող անձանց կողմից:<br>ՀՀ օրենքով` (ՀՕ-227-Ն 08.12.2010թ.) 2011 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել մաքսային միջնորդական գործունեության լիցենզավորման պահանջը:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն կողմից տրամադրված տվյալների հիման վրա:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքի համար հիմք է հանդիսացել Մաքսային հսկողության վարչության կողմից տրամադրված տվյալները: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Մաքսային միջնորդի լիցենզիա ստացած անձանց թվաքանակը | 12 | | |
| | 15.6.Ներդնել ՀՀ մաքսային սահմանով ավտոտրանսպորտային և միջոցներով մեկնող և ժամանող քաղաքացիների մաքսային հսկողության երկուղային համակարգ (կարմիր և կանաչ ուղիներ) | 1.Մաքսային հսկողության երկուղային համակարգը ներդրված է սահմանային մաքսային կետերի ավելի քան երկու երրորդում | 1.Սահմանային մաքսակետերի թիվը, որոնցում գործում է մաքսային հսկողության երկուղային համակարգը | 5 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>6 մաքսակետերից 5-ում ներդրված է մաքսային հսկողության երկուղային համակարգ:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքի համար հիմք է հանդիսացել Մաքսային հսկողության վարչության և Նախաբացթողումային հսկողության վարչություն կողմից տրամադրված տվյալները:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության կողմից տրամադրված տվյալների հիման վրա: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Կանաչ ուղով ընտրված հայտարարագրերի թվաքանակի հարաբերությունը հայտարարագրերի ընդհանուր թվաքանակին | 68,42% | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 15.7.Սահմանել մոնիտորինգ մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի նկատմամբ | 1.Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի նկատմամբ մոնիտորինգի համակարգը ստեղծված է | 1.Մաքսային ձևակերպումների համար պահանջվող ժամանակահատվածը | 2,5-6,5 ժամ | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Միջոցառման իրականացմանն աջակցելու նպատակով՝ սույն թվականի մայիսի 17-21-ը Հայաստանում է գտնվել Միջազգային ֆինանսական կորպորացիայի փորձագետը, որի այցի արդյունքում պատրաստվել է համապատասխան փաստաթուղթ: Միջոցառումը ամբողջովին ավարտելու նպատակով մշակվել է TWM ծրագրում համապատասխան փոփոխության տեխնիկական առաջադրանք, որի արդյունքում համակարգում կֆիքսվի բացթողնման պահը, ինչը հնարավորություն կտա սպառիչ պատկերացում ունենալ մաքսային ձևակերպումների, ինչպես նաև դրա առանձին բաղադրիչների տևողության մասին:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի հաշվարկման համար ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն քարտեզագրել է ՀՀ ներմուծման մաքսային ընթացակարգերի հաջորդականությունը՝ յուրաքանչյուր գործողության համար սահմանելով միջին ժամանակահատված: Կատարված հաշվարկների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ոչ սակագնային կարգավորում չպահանջող ապրանքների դեպքում ներմուծման մաքսային ձևակերպումների ողջ ժամանակահատվածը տատանվում է 2,5 – 6,5 ժամ: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 15.8 Ներդնել պատկան մարմինների կողմից իրականացվող հսկողությունները նույն վայրում և նույն պահին իրականացնելու հնարավորություն ընձեռող Մեկ կանգառ սկզբունքը | 1.Սահմանային մաքսակետերում իրականացվող առանձին հսկողությունների համատեղման կարգը «Մեկ կանգառ» սկզբունքով սահմանված է | 1.«Մեկ կանգառ» սկզբունքի ներդրումից հետո մաքսային ձևակերպումների համար պահանջվող ժամանակահատվածի և սահմանային հսկողություն իրականացնող պատկան մարմիններին ներկայացվող փաստաթղթերի քանակի համեմատությունը մինչև «մեկ կանգառ» սկզբունքի ներդրումը նույն ցուցանիշների նկատմամբ | - | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Սահմանային մաքսակետերում, որտեղ սահմանային գերատեսչությունները տեղակայված են միևնույն շենքում, արդեն իսկ գործում է <մեկ կանգառի> սկզբունքը, սակայն սահմանային կետերի գերակշիռ մասում շենքերը հատուկ նախատեսված չեն սահմանային հատուկ հսկողություն իրականացնելու համար, և սահմանային գերատեսչությունները տեղակայված են տարածքային առումով իրարից կտրված, առանձին շենքերում: Այդ մաքսակետերում <մեկ կանգառի> սկզբունքի կիրառումը հնարավոր կլինի սահմանային բոլոր գերատեսչությունների աշխատանքը հատուկ նախատեսված միևնույն շենքի տարածքում կազմակերպելուց հետո:<br>Ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք աշխատանքային հանդիպումներ են իրականացնում Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայությունների աշխատակիցների հետ:<br>Ցուցիչ 1. Ներկա դրությամբ ցուցիչը հնարավոր չէ հաշվարկել: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 15.9Համապատասխան եցնել մաքսային հսկողության նպատակով ներկայացվող փաստաթղթերի ցանկը միջազգային լավագույն փորձին | 1.Մաքսային հսկողության նպատակով ներկայացվող փաստաթղթերի թվի կրճատում՝ միջազգային լավագույն փորձը հաշվի առնելով | 1.Կրճատված փաստաթղթերի թվաքանակ | 3 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի թիվ 636-Ն որոշմամբ կրճատվել է մաքսային հսկողության նպատակով ներկայացվող փաստաթղթերի թիվը, համաձայն որի մաքսային հսկողության նպատակով պահանջվող փաստաթղթերի թվաքանակը 6-ից դարձել է 3:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքի համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի թիվ 636-Ն որոշումը: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 15.10 Սահմանել պարզեցված մաքսային ընթացակարգեր՝ Միջազգային ճանապարհային փոխադրումների կոնվենցիայի՝ (TIR) շրջանակներում | 1.Միջազգային ճանապարհային փոխադրումների կոնվենցիայի շրջանակներում իրականացվող բեռնափոխադրումների ընթացքում մեկ մաքսային | 1.ՄՃՓ կոնվենցիայի շրջանակներում մաքսային հսկողության փաստաթղթերի և մաքսային ձևակերպումների ժամանակահատված | ------ | Արդյունք 1. Կատարվել է մասնակիորեն:<br>Աշխատանքները ընթացքի մեջ են, միջոցառման իրականացմանն աջակցելու նպատակով՝ սույն թվականի մայիսի 17-21-ը Հայաստանում է գտնվել Միջազգային ֆինանսական կորպորացիայի փորձագետը, որի այցի արդյունքում պատրաստվել է համապատասխան փաստաթուղթ:<br>Ցուցիչ 1.Ցուցիչը առաջարկվում է փոփոխել և խմբագրել այսպես՝ <ՄՃՓ կոնվենցիայի շրջանակներում մաքսային ձևակերպումների | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| | ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների համար | մարմնից մյուս մաքսային մարմին բեռների տեղափոխման համակարգը պարզեցված է և համապատասխան ընթացակարգերը հրատարակված են | | | ժամանակահատված>: | |
| | 15.11 Սահմանել պարզեցված ընթացակարգեր՝ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար | | 1.Բարեխիղճ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների թվաքանակի հարաբերությունը արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների ընդհանուր թվաքանակին | 0 | Ցուցիչ 1. Բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար պարզեցված ընթացակարգերի սահմանումը նախատեսված չէր 2010 թ. ընթացքում:<br>ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 14-ի թիվ 527-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012 թվականների ծրագրի 31 կետով նախատեսվում է այս միջոցառումը իրականացնել մինչև 2012 թվականի 2-րդ եռամսյակը: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| 16. Ապահովել տնտեսվարող սուբյեկտների միջև մաքսային բեռի արդարացի բաշխումը և մաքսային ծառայության թափանցիկությունն ու օրինականությունը | 16.1 Ծստակեցնել և պարզեցնել մաքսային վարչարարության օրենսդրական կարգավորումը, ներդնել թափանցիկ և պարզեցված ընթացակարգեր | 1.Մաքսային վարչարարության օրենսդրական կարգավորման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն, որը ներառում է փոփոխությունների առաջարկներ<br><br>2.Ներկայացված առաջարկների հիման վրա մաքսային վարչարարության կարգավորման օրենսդրությունը վերանայված է և համապատասխանում է միջազգային չափանիշներին և լավագույն փորձին | 1.Միջազգային ստանդարտներին համապատասխան օրենսդրության առկայություն | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Պարբերաբար ուսումնասիրվում է միջազգային լավագույն փորձը: Գործողությունը գտնվում է ընթացքի մեջ:<br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br>Հիմք. «ՀՀ Մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-25-Ն օրենք:<br>Ցուցիչ 1.Հիմնականում համապատասխանում է միջազգային չափանիշներին: Միջազգային մաքսային օրենսդրությունը գտնվում է դինամիկ զարգացման մեջ, ուստի դրան համապատասխանեցնելու գործընթացը կրում է շարունակական բնույթ: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 16.2 Սահմանել մաքսային արժեքների որոշման հստակ չափորոշիչներ և ապահովել դրանց մատչելիությունը, այդ թվում՝ էլեկտրոնային կապուղիների միջոցով | 1.Ապրանքների մաքսային արժեքի գնահատման ընթացակարգերը ամբողջությամբ համապատասխանեցված են Առևտրի համաշխարհային կազմակերպության պահանջներին և դրանք հրատարակված են | 1.Գործարքի գնի մեթոդով որոշված գործարքների թվաքանակի հարաբերությունը գործարքների ընդհանուր թվաքանակին | 67,8% | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Մաքսային արժեքի գնահատման ընթացակարգերը համապատասխանում են ԱՀԿ պահանջներին և տեղադրված են մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն կողմից տրամադրված տվյալների հիման վրա: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 16.3 Սահմանել վերահսկողություն տնտեսվարողների նկատմամբ հավասար պայմաններում հավասար մոտեցումների կիրառման նկատմամբ | 1.Հավասար տնտեսական մրցակցային պայմանների ապահովմանն ուղղված ներքին վերահսկողության համակարգը ներդրված է | | | Արդյունք 1. Կատարվել է ամբողջությամբ:<br>Ներքին վերահսկողության և մաքսային վարչարարության ուժեղացման արդյունքում՝ որպես գերակա նպատակ դրվել է սուբյեկտիվիզմի և իրավական ակտերի երկակի մեկնաբանման հնարավորության հնարավորինս բացառումը: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 16.4 Իրազեկել հանրությանը մաքսային վարչարարության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ | 1.Մաքսային վարչարարության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ հանրությանը պարբերաբար իրազեկման ընթացակարգը ներդրված է | 1.Մաքսային մարմնում մաքսային վարչարարության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ արդյունքների հրապարակման պարբերականություն | Ամսական մեկ անգամ | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>2008 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի թիվ 1-06/506-Ա հրամանով հաստատվել է Հարկային և մաքսային մարմնի գործունեության համառոտագրի (DIGEST) պատրաստման և հրապարակման կարգը: Ցանկացած փոփոխություն և նորարարություն օպերատիվ կերպով լուսաբանվում է պաշտոնական էլեկտրոնային կայք էջի միջոցով: Հասարակության իրազեկվածության խնդիրը լուծելու համար ՊԵԿ-ը ակտիվորեն համագործակցում է ԶԼՄ-երի հետ, ինչպես նաև հրապարակվում է <Մաքսատուն> պարբերականը:<br>Ցուցիչ 1.Ցուցիչի արժեքի համար հիմք է հանդիսացել վերոնշյալ հրամանը: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 16.6 Ապահովել ուղիղ հաղորդակցություն մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքի և թեժ հեռախոսագծի միջոցով մաքսային մարմնի ղեկավարի, քաղաքացիների և տնտեսվարողների միջև | 1.Մաքսային ծառայության գործունեության և պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման ընթացակարգերը հստակեցված են և հրապարակված են<br><br>2.Հասարակության և արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների շրջանում վստահություն ներշնչող «թեժ գիծը» և մաքսային ծառայության պաշտոնական կայքում հետադարձ կապը ներդրված են ամբողջությամբ | 1.Մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում տեղակայված մաքսային իրավախախտումների համար կիրառված պատասխանատվության միջոցների թիվը | 2092 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՊԵԿ համակարգում գործում է զանգատարկման հանձնաժողով, որի աշխատակարգը և անհատական կազմը հաստատված են 2010 թվականի ապրիլի 22-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի թիվ 831-Ա հրամանով:<br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br>ՊԵԿ համակարգում դեռևս 2008 թվականից գործում է թեժ գիծը և պաշտոնական կայքի միջոցով հետադարձ կապի հնարավորությունը:<br>Ցուցիչ 1.Ցուցիչի արժեքի համար հիմք է հանդիսացել մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում տեղադրված մաքսային իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների թիվը:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի համար հիմք է հանդիսացել մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքի միջոցով արդյունավետ հետադարձ կապի համակարգի առկայությունը, ինչպես նաև Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին թեժ գծով ստացվող զանգերը: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Գործում է հասարակությանն ու տնտեսվարող սուբյեկտներին վստահություն ներշնչող թեժ գիծը և մաքսային ծառայության պաշտոնական կայքում արդյունավետ հետադարձ կապը | այո | | |
| | 16.7 Ներդնել տնտեսվարողներին մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ տեխնիկական աջակցություն տրամադրելու միասնական համակարգ | 1.Տնտեսվարող սուբյեկտների համար մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու վերաբերյալ ուղեցույցերը հրապարակված են և տեղադրված են մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում<br><br>2.Մաքսային միջնորդների ուսուցման իրականացված առնվազն երկու որակավորման դասընթաց | 1.Մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու վերաբերյալ ուղեցույցերը հրապարակված են և տեղադրված են մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում ( այո/ոչ) | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում տեղադրված է մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու վերաբերյալ ուղեցույցները:<br><br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br>Կազմակերպվել է մաքսային միջնորդների ուսուցման 2 որակավորման դասընթաց: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | 2.Մաքսային միջնորդների ուսուցման իրականացված առնվազն երկու որակավորման դասընթաց ( այո/ոչ) | այո | | |

**3.5 Կրթության ոլորտ**

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 17. Ապահովել կրթության ոլորտի զարգացման քա-ղաքականության շրջա-նակներում կոռուպցիոն ռիսկերի շարունակական գնահատումն ու դրանց կանխարգելումը: | 17.1 ՀՀ կրթության քաղաքակա-նության մշակման գործընթա-ցում իրականացվող վերլուծու-թյունների շարքում ներառել կրթության յուրաքանչյուր մա-կարդակում առկա կոռուպցիայի ընկալման, ռիսկերի գնահատ-ման, համակարգերի կառավար-ման թափանցիկության, մասնա-կցության, և այլ հետազոտու-թյուններ | 1.ՀՀ նախնական և մի-ջին մասնագիտական կրթության ռազմավա-րության վերանայման գործընթացի շրջանակ-ներում գնահատված են նախնական և միջին մասնագիտական կրթության համակար-գում առկա կոռուպցիոն ռիսկերը և սահմանված են դրանց կրճատման դրույթները<br>2. ՀՀ բարձրագույն կրթության ռազմա-վարության վերա-նայման գործընթացի շրջանակներում գնա-հատված են բարձրա-գույն կրթության հա-մակարգում առկա կո-ռուպցիոն ռիսկերը և սահմանված են դրանց կրճատման դրույթները | 1.ՀՀ կրթության համակարգում ոլորտային մասնագիտացվա-ծություն ունեցող հասարակա-կան կազմակերպությունների կողմից իրականացվում է կրթու-թյան յուրաքանչյուր մա-կարդակում առկա կոռուպցիայի ընկալման, ռիսկերի բացահայտ-ման, համակարգերի կառավար-ման թափանցիկության մասնա-կցային մոնիտորինգներ: (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում ռազմավարության վերանայման գործընթաց նախատեսված է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրով>>:<br>Սակայն մոնիթորինգային ժամանակահատվածում վերանայվել է ՀՀ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ընդունելության կարգը: Կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու և կրթության մատչելիությունը ապահովելու նպատակով նախատեսվում է ընդունելության կարգում կատարել փոփոխություններ՝ վերացնելով միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության քննությունները՝ բացառությամբ արվեստի ոլորտի մասնագիտական առարկաներից: Առաջարկվում է իրավիճակի գնահատումը նախատեսել 2011 թվականին:<br>Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մի շարք ՀԿ-երի և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնել է հետազոտությունների անցկացում՝ գնահատելու կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը:<br>ԵԱՀԿ-ի Երևանի գրասենյակի աջակցությամբ հանրապետության 8 բուհերում անցկացվել է <<Ուսանողների ընկալումը բուհական համակարգում կոռուպցիայի մասին>> հետազոտությունը: <<Ապագան քոնն է>> ՀԿ-ի նախաձեռնությամբ հանրապետության 8 բուհերից ընտրված շուրջ 100 ուսանողներ կոռուպցիոն ռիսկերի բացահայտման նպատակով համապատասխան փորձագետների հետ համատեղ իրականացրել են <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքի փորձաքննություն:<br>ԵՊՀ ուսանողական խորհուրդը իրականացրել է ՀՀ կառավարության կողմից հաստատված հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի և ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրի>> համեմատական վերլուծություն: Միաժամանակ ուսանողական խորհրդի կողմից իրականացվել է ներքին հետազոտություն՝ իրենց բուհի շրջանակներում, կոռուպցիոն երևույթները բացահայտելու նպատակով:<br>Նշված հետազոտության, փորձաքննության և վերլուծության հետ կապված արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարություն:<br><<Քաղաքական և սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտ>> ՀԿ-ն նախաձեռնել է <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտի ներկա իրավիճակի և Բոլոնիայի | ՀՀ կրթության և գիտության նախարարությու ն |
| | | | 2. Ոչ ֆորմալ վճարումները կրթության համակարգում, տոկոս՝ կրթության վրա կատար-վող ծախսերի նկատմամբ (ԱՀՌԾ Սոցիալական և քաղա-քացիական մեկուսացվածու-թյուն և անհավասարություն. մոնիտորինգի ցուցանիշներ e2.6 ցուցանիշ) | Տվյալները բացակայում են | | |
| | | | 3.Ռիսկերի գնահատման և ներ-դրված միջոցառումների ազ-դեցության ուսումնասիրման հիման վրա կրթության ոլոր-տում ՀՀ օրենսդրության մեջ և ընթացակարգերում կատարված փոփոխությունները (այո/ոչ) | Այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | գործընթացի համատեքստում բարեփոխումների իրականացման ընթացքի վերաբերյալ>> թեմայով հետազոտությունը, որը կավարտվի 2011 թվականին: Հետազոտության հիմքում կոռուպցիոն երևույթների բացահայտումն է բարձրագույն կրթության ոլորտում: Հետազոտությունն անցկացվելու է հանրապետության 3 քաղաքների 23 բուհերում:<br><br>Մոնիթորինգային ժամանակահատվածում վերանայվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կանոնները: Դիմորդների գիտելիքների գնահատման մեխանիզմները և չափանիշները, ինչպես նաև ուսուցման պայմանները կանոնակարգելու ու հստակեցնելու, կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով մշակվում է <<ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի>> նախագիծը: Մշակվել է նաև <<Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների վերականգնման և հեռացման կարգի>> նախագիծը, որը համատեղ քննարկվելու է ՀՀ բուհերի հետ:<br><br>Առաջարկվում է իրավիճակի գնահատումը նախատեսել 2011 թվականին, քանի որ այդ միջոցառումը նախատեսված է նաև <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրով>> :<br><br>Ցուցիչ 1. ՀՀ կրթության համակարգում ոլորտային մասնագիտացվածություն ունեցող հասարակական կազմակերպությունները մասնակցում են ՀՀ Կրթության պետական տեսչության կողմից իրականացվող հանրակրթական և նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատությունների տեսչավորման և առանձին ուսումնասիրությունների գործընթացին:<br><br>Ցուցիչ 2. Ցուցիչը չի հավաքագրվում ԱՎԾ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների համակարգի կողմից:<br><br>Առաջարկվում է որպեսզի ցուցիչը հաշվարկվի ԱՎԾ-ի կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների շրջանակում:<br><br>Ցուցիչ 3. Օրենսդրական փոփոխությունները ընթացքի մեջ են, որոնք կհաստատվեն 2011 թվականին: | |
| 18.Բարձրացնել կրթության ոլորտի կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը | 18.1 Բարձրացնել բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգում հրապարակայնությունն ու վերահսկողության արդյունավետությունը | 1. ՀՀ բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատությունների կառավարման խորհուրդներում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչների կողմից առանձին հաստատությունում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման և բացահայտման հար- | 1. Բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատությունների կառավարման մարմնի օրակարգում պարտադիր կերպով ընդգրկվել են կառավարության ներկայացուցիչների կողմից առանձին հաստատությունում կառուպցիոն ռիսկերի կանխարգելման և բացահայտման հարցերը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br><br>ՀՀ բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման մարմնի օրակարգում որևէ հարցի պարտադիր կերպով ընդգրկման պահանջը չի կարող իրականացվել իրավական տեսակետից:<br><br>Առաջարկվում է արդյունք 1-ում և մոնիտորինգային ցուցիչում հանել <<պարտադիր կերպով>> բառերը:<br><br>Միաժամանակ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագիրը>>, համաձայն որի նախատեսվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից հակակոռուպցիոն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ցերը կառավարման մարմնի օրակարգում պարտադիր կերպով ընդգրկման պահանջը և համապատասխան ընթացակարգերը սահմանված են<br><br>2. ՀՀ բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական կրթական հաստա-տությունների կառավարման խոր-հուրդները կանոնավո-րապես քննության են առնում առանձին հաս-տատությունում կո-ռուպցիոն ռիսկերի կամխարգելման, կո-ռուպցիոն դրսևորում-ների բացահայտման հարցերը<br><br>3. Բուհերում ուսումնա-կան գործընթացի կազ-մակերպման ուսումնա-սիրության գործում ՀՀ կառավարության լիա-զոր մարմնի իրավա-սությունները հստա-կեցված են օրենս-դրորեն<br><br>4. Բուհերում ուսումնա-կան գործընթացի կազ-մակերպման ուսում-նասիրության ընթացա-կարգերը ներդրված են | | | ռազմավարական ծրագրի մշակում: Բուհերի կառավարման խորհուրդների կողմից այդ ծրագրերը քննարկվելու և հաստատվելու են, իսկ ծրագրերի վերաբերյալ կիսամյակային հաշվետվությունները հրապարակվելու են:<br><br>Արդյունք 2: Կատարված է մասնակիորեն:<br><br>ՀՀ բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնա-գիտական ուսումնական հաստատությունների կառավարման խոր-հուրդներում ընդգրկված ՀՀ կառավարության լիազոր ներ-կայացուցիչները, համաձայն ուսումնական հաստատության կանոնադրության, կարող են առաջարկել` այս կամ այն հարցը ընդգրկելու օրակարգում:<br>ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված` <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրի>> համաձայն մասնագիտական ուսումնական հաստատությունները սկսել են հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի մշակումը: ՀՀ բուհերում կառավարման խորհուրդները պարբերաբար քննարկելու են իրենց հաստատության հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի իրականացման ընթացքը և կոռուպցիոն խնդիրներին վերաբերող հարցերը:<br><br>Արդյունք 3. Կատարված է մասնակիորեն:<br><br>ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացի կազմակերպման ուսումնասիրությունն ու որակի գնահատումը իրականացնում է ՀՀ կառավարության աշխատակազմում գործող <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամը: Օրենսդրորն հստակեցվել են այս կառույցի գործառույթները: Միաժամանակ մշակվել է <<ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի>>, ինչպես նաև <<ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծերը: Նշված իրավական ակտերի կիրարկումն ապահովելու նպատակով փոփոխություններ են կատարվելու համապատասխան օրենքներում:<br><br>Արդյունք 4. ՉԻ իրականացված<br><br>Ուսումնական գործընթացի կազմակերպման ուսումնասիրության ըն-թացակարգերը բուհերում նախատեսվում է ներդնել մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հավատարմագրման կարգի ընդունումից հետո: | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 18.2 Բարձրացնել հանրակրթու-թյան համակարգում վերահսկո-ղության արդյունավետությունը | 1. Կրթության պետա-կան տեսչության կող-մից ՀՀ հանրակրթա-կան հաստատություն-ների կրթական գործու-նեության ամբողջական և արդյունավետ վերա-հսկողությունն ապա-հովող օրենսդրական դրույթները հստակեց-ված են<br>2. Հանրակրթական ուսումնական հաստա-տությունների 2009թ. տեսչավորման հաշվե-տվությունները հրա-պարակված են | 1. Տարանջատվել են կրթության ոլորտում վերահսկողական գործառույթներ իրականացնող և ուսումնական հաստա-տություններում ստուգումներ և ուսումնասիրություններ իրականացնող մարմինների լիազորությունները (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Կրթության պետական տեսչության գործունեությունը կանոնակարգվում է <<Կրթության պետական տեսչության մասին>> և <<Ստուգումների մասին>> ՀՀ օրենքներով:<br>ՀՀ հանրակրթական հաստատությունների կրթական գործունեության ամբողջական և արդյունավետ վերահսկողություն ապահովելու նպատակով փոփոխություններ են նախատեսվում մի շարք օրենքներում: Միաժամանակ նախատեսվում է ՀՀ մարզերի ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ օպերատիվությունն ապահովելու նպատակով ստեղծել Կրթության պետական տեսչության տարածքային 4 մարմիններ: Այդ օրենսդրական փաթեթը ներկայումս մշակման փուլում է:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2009թ. տեսչավորման և ուսումնասիրությունների ու ստուգումների հաշվետվությունները հրապարակված են ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում և <<Կրթություն>> շաբաթաթերթում: | ՀՀ կրթության և գիտության նախարարությու ն |
| | 18.3 Հզորացնել կրթության ոլորտի կառավարման մարմին-ների կարողությունները կո-ռուպցիայի կանխարգելման գործում | 1.Կրթության ոլորտի կառավարման մարմին-ների աշխատակիցների համար հակակոռուպ-ցիոն թեմաներով վերա-պատրաստման ծրա-գրեր | 1. Կրթության ոլորտի կառա-վարման համակարգում իրականացվում են կոռուպ-ցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստման ծրագրեր (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ԱՄՆ ՄԶԳ-ի և UNESCO-ի հետ համատեղ մշակում է ՀՀ ԿԳՆ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կարողությունների, ինչպես նաև վերապատրաստման կարիքների գնահատման փաթեթը, որի բաղադրիչներից է կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատ-րաստումը: Այս համագործակցության շրջանակներում մշակվել է <<ՀՀ կրթության և գիտության նախարարության հաղորդակցության 2011-2015թթ. ռազմավարության>> նախագիծը, որը նպատակաուղղված է նաև նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն կարողությունների զարգացմանը:<br>Կրթության ոլորտի կառավարման մարմինների համար կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատ-րաստման ծրագրերի մշակումը և իրականացումը նախատեսվում է 2011 թվականին: | ՀՀ կրթության և գիտության նախարարությու ն,<br>Կրթության ազգային ինստիտուտ, |
| | 18.4 Բարձրացնել կրթական հաստատություններում կադ-րերի ընտրության, նշանակման, պաշտոնեական առաջխաղաց-ման և աշխատանքային հարա-բերությունների կարգավորման թափանցիկությունը, հրապա-րակայնությունն ու օրինակա-նությունը | 1. Մանկավարժական աշխատողների ընտ-րության, նշանակման և պաշտոնեական առաջ-խաղացման հստակ ըն-թացակարգերը ներդր-ված են | 1. ՀՀ միջնակարգ և բարձրագույն կրթության համակարգում սահմանվել են մանկա-վարժական կադրերի ընտ-րության մրցութային ընթացակարգ (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Մշակվել և հաստատվել են հանրակրթության ոլորտում կադրերի նշանակման գործընթացը կանոնակարգող մի շարք իրավական ակտեր: Մասնավորապես հաստատվել են <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը>>, <<Պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը>> և <<ՈՒսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգը>>: Մշակվել է նաև <<Հանրակրթական դպրոցի մանկավարժական աշխատողների անվանացանկը և դրանց նկարագիրը>>:<br>Բարձրագույն կրթության ոլորտում կադրերի ընտրության և | ՀՀ կրթության և գիտության նախարարությու ն |
| | | | 2. ՀՀ միջնակարգ և բարձրագույն կրթության համակարգում սահմանվել են կադրերի ընտրության, նշանակման և պաշտոնեական առաջխա-ղացման ընթացակարգեր (այո/ոչ) | Այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 3. Սահմանվել են կրթական հաստատությունների աշխատակիցների համար պաշտոնի նկարագրության և վարքագծի միասնական կանոններ (այո/ոչ) | Այո | նշանակման գործընթացը կանոնակարգվում է <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքով, որում ամրագրված են համապատասխան դրույթները:<br><br>Նախատեսվում է հանրակրթության ոլորտի մանկավարժական աշ-խատողների ընտրության, նշանակման և պաշտոնեական առաջ-խաղացման ընթացակարգերը ներդնել 2011 թվականից:<br><br>Ցուցիչ 1. Հաստատված է <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը>>:<br><br>Ցուցիչ 2.Հաստատված են <<Պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը>> և <<ՈՒսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգը>>:<br><br>Ցուցիչ 3.Մշակված է <<Հանրակրթական դպրոցի մանկավարժական աշխատողների անվանացանկը և դրանց նկարագիրը>>: Առաջարկվում է հստակեցնել <<վարքագծի միասնական կանոններ>> արտահայտությունը:<br><br>Բարձրագույն կրթության ոլորտում կրթական գործընթացում ներգրավված մասնակիցներին ներկայացվող պահանջները ամրագրված են բարձրագույն մասնագիտական պետական կրթական չափորոշիչներում` ըստ կրթական ծրագրերի:<br><br>Ցուցիչ 4.Առաջարկվում է այս ցուցիչը հանել, քանի որ հանրային ծառայության ոլորտում շահերի բախման ու հայտարարագրերի կիրառման գործընթացը պահանջում է միասնական մոտեցում:<br><br>Ցուցիչ 5.Առաջարկվում է այս ցուցիչը հանել, քանի որ ցուցիչներ 1,2,3-ն արդեն բավարար չափով ապահովում են անձնական գործի` որպես հրապարակային փաստաթղթի հրապարակայնությունը:<br><br>Առաջարկներ` ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքի միջոցով ապահովել կադրերի նշանակման գործընթացի թափանցիկությունն ու թափուր տեղերի համալրման հրապարակայնությունը: | |
| | | | 4. Սահմանվել են կրթական հաստատությունների հանրային ծառայության ոլորտում շահերի բախման ու հայտարարագրերի կիրառման կարգը (այո/ոչ) | Ոչ | | |
| | | | 5. Սահմանվել են ուսուցչի և դասախոսի անձնական գործի որպես հրապարակային փաստաթղթերի հրա-պարակման կարգը (այո/ոչ) | Ոչ | | |
| 19. Բարձրացնել հանրակրթական դպրոցների կառավարման թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականություն ն ու օրինականությունը | 19.1 Ընդլայնել դպրոցի կառա-վարման գործում դպրոցի խոր-հրդի և խորհրդատվական մար-մինների դերը | 1. Դպրոցների օրինա-կելի կանոնադրությու-նը համադրել գործող պրակտիկային և բա-ցահայտել առկա կոռուպցիոն ռիսկերը<br><br>2. Դպրոցի կառավար-ման և վերահսկողու-թյան գործառույթնե-րում ծնողական, մանկավարժական և մեթոդական խորհուրդների գործուն մասնակցությունն ապահովող ըն- | 1. Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում ընդգրկված դպրոցների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 67,4% | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br><br>Հանրակրթական դպրոցի օրինակելի կանոնադրությունը համադրվել է գործող պրակտիկայի հետ, գնահատվել են կոռուպցիոն ռիսկերն ու դրսևորումները: Արդյունքում` դպրոցի օրինակելի կանոնադրության մեջ վերանայվել են խորհրդի ձևավորմանը վերաբերող դրույթները: Մասնավորապես կրթության կառավարման լիազորված մարմինը ստացել է մշտական ձայնի իրավունք խորհուրդների կազմում, որով ուղղակի պատասխանատվություն է ստանձնել խորհուրդների գործունեության համար: Լրացվել է տնօրենի լիազորությունները, խստացվել են տնօրենի ընտրության պահանջները: Սահմանվել են դպրոցի արտաբյուջետային միջոցների տնօրինման ուղղությունները, որոնք պարտադիր են լինելու ցանկացած դպրոցի խորհրդի համար: Սահմանվել են ձեռնարկատիրական գործունեության ուղղությունները:<br><br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ | ՀՀ կրթության և գիտության նախարարությու ն |
| | | | 2. Կրթության կառավարման տեղեկատվական համակար-գում ընդգրկված դպրոցների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 100% | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | թացակարգերը սահ-մանված են | 3. «Ծնողների համար» էլեկտրո-նային կայքով ապահովված դպրոցների թվի հարաբերու-թյունը դրանց ընդհանուր թվին | 0 | Մշակվել և հաստատվել է հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությունը, որում ամրագրված են դպրոցի կառավարման և վերահսկողության գործառույթներում ծնողական, մանկավարժական և մեթոդական խորհուրդների մասնակցությունն ապահովող դրույթները<br>Նախատեսվում է նշված ընթացակարգերը ներդնել 2011 թվականից:<br>Ցուցիչներ<br>Ցուցիչ 1-ի արժեքը հաշվարկվել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի www.ktak.am էլեկտրոնային կայքում տեղադրված տվյալներով:<br>Ցուցիչ 2. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ներառված են հանրակրթական բոլոր դպրոցները և այդ համակարգը վարում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը(ԿՏԱԿ):<br>Ցուցիչ 3. Այդպիսի կայք դեռևս ձևավորված չէ: | |
| | 19.2 Խստացնել դպրոցում սահ-մանված գործառնական ընթա-ցակարգերի պահպանման նկատմամբ հսկողությունը | 1. Դպրոցներում ոչ պաշտոնական վճարումների նկատմամբ սահման-ված է վարչական հսկողություն<br>2. Դպրոցում անհարգելի բացակայությունների թիվը նվազել է 10 տոկոսային կետով<br>3. Դպրոցի ծառայու-թյունների դիմաց վճա-րումները և դպրոցին ֆինանսական աջակցությունը բացառապես անկանխիկ եղանակով իրականացման պահանջը սահմանված է և ընթացակարգերը ներդրված են | 1. Դպրոցի ծառայությունների դիմաց վճարումների և դպրոցին ֆինանսական աջակցություն տրամադրելու գործարքի գումարի բնույթն ու հատկացման նպատակը գրավոր արձանագրելու պարտադիր կարգը սահմանված է (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Գործող ընթացակարգի համաձայն ՀՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչությունը խախտումներ արձանագրելու դեպքում առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարզպետին՝ խախտումը թույլ տվող տնօրենի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու համար: Ուսուցչի դեպքում՝ այդ առաջարկը ներկայացվում է տնօրենին:<br>Արդյունք 2. Կատարված ՉԷ:<br>Կրթության ոլորտում չկա մեխանիզմ այդ ցուցանիշի հաշվարկման համար:<br>Առաջարկվում է կատարել ուսումնասիրություններ՝ հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեխանիզմը մշակելու և տեղեկատվությունը հավաքագրելու ու պարբերաբար թարմացնելու համար:<br>Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ:<br>Պետական ուսումնական հաստատության և ծնողի միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևի միջոցով հստակեցվել են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, սահմանվել են պատասխանատվության ձևերն ու շրջանակները, ամրագրվել են ծնողի կողմից աջակցության ձևերն ու չափը, ծառայության մատուցման ձևերը:<br>Ցուցիչ 1.Հաստատվել է <<Պետական ուսումնական հաստատության և ծնողի միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը>>:<br>Ցուցիչ 2-3. Կրթության ոլորտում չկա մեխանիզմ այդ ցուցիչների արժեքի հաշվարկման համար:<br>Առաջարկվում է կատարել ուսումնասիրություններ՝ հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեխանիզմը մշակելու և հավաքագրվող տեղեկատվությունը պարբերաբար լրամշակելու համար:<br>Ցուցիչ 4. Առաջարկվում է հանել, քանի որ կոռուպցիոն ռիսկերի | ՀՀ կրթության և գիտության նախարարությու ն,<br>ՀՀ ֆինանսների նախարարությու ն |
| | | | 2. Դպրոցում անհարգելի բացակայությունների թիվը | Տվյալները բացակայում են | | |
| | | | 3. Բացակայությունների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | | |
| | | | 4. Բացակայությունների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ոչ ֆորմալ վճարումների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | | |
| | | | 5. Կրթության տեսչության կողմից քննված գործերի թվի հարաբերությունը բողոքների ընդհանուր թվաքանակին | 1 | | |
| | | | 6. Միջնակարգ կրթության համակարգերում կիրառված սանկցիաների թվի հարաբերությունը բողոքների ընդհանուր թվաքանակին | 0,18 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | տեսակետից ցուցիչի ինդիկատիվ մեխանիզմը հստակ չէ:<br>Ցուցիչ 5-ի արժեքը հաշվարկվել է ՀՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչության տրամադրած տվյալների հիման վրա:<br>Ցուցիչ 6-ի արժեքը հաշվարկվել է ՀՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչության տրամադրած տվյալների հիման վրա: | |
| 20. Ապահովել գիտելիք-ների, կարողությունների և հմտությունների գնա-հատման համակարգերի թափանցիկությունն ու անկախությունը | 20.1 Ներդնել գիտելիքների գնահատման միասնական, ան-կախ համակարգ` ապահովելով նրա համադրելիությունը միջ-ազգայնորեն ընդունված գնա-հատման չափանիշներին | 1. Գիտելիքի գնահատման համակարգի կիրառ-ման նկատմամբ ար-տաքին վերահսկողու-թյունը սահմանված է | 1. Սահմանվել է գիտելիքի գնահատման միասնական և անկախ համակարգ (այո/ոչ) | այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ ԿԳ նախարարի` 27.08.2008 թիվ 683-Ա/Ք հրամանով հաստատվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանությունը, անցում է կատարվել գնահատման տասը միավորային սանդղակի: Գնահատման նոր համակարգի միավորային գնահատման ձևը և նրա տեսակները հանրակրթության ոլորտում ներդրվել է 2009-2010 ուսումնական տարում: Գնահատման առանձին բաղադրիչների քայլ առ քայլ ներդրման նպատակով ամեն տարի տրվում եմ մեթոդական ցուցումներ` հանրակրթական դպրոցներում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ: Պարզաբանումները տրվում են ըստ ուսումնական առարկաների և հանրակրթական դպրոցի տարբեր աստիճանների: Գիտելիքի գնահատման կիրառման համակարգի նկատմամբ ներքին վերահսկողությունը իրականացվում է հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի կողմից` համաձայն հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության, իսկ արտաքին վերահսկողությունը` ՀՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչության կողմից, որի գործունեությունը կանոնակարգվում է <<Կրթության պետական տեսչության մասին>> ,<<Ստուգումների մասին>> ՀՀ օրենքներով և Կրթության պետական տեսչության կանոնադրությամբ:<br>Գնահատման նոր համակարգի ներդրմանը վերաբերող նյութերը հրատարակվում են ՀՀ ԿԳՆ տեղեկագրերում, ինչպես նաև տեղադրվում են ՀՀ ԿԳՆ պաշտոնական` www.edu.am և ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի` www.aniedu.am կայքերում:<br>ՀՀ կառավարության 14 ապրիլի 2004 թ. 586-Ն որոշմամբ ստեղծվել է գնահատման և թեստավորման կենտրոն ՊՈԱԿ-ը, իսկ 2011թ. ապրիլի 28-ի 686-Ն որոշմամբ վերանայվել է պետական և ոչ-պետական հաստատությունների ընդունելիության կարգը: Նշված կարգով, ինչպես նաև կենտրոնի տնօրենի հրամաններով կանոնակարգված է գիտելիքի գնահատման համակարգի կիրառման նկատմամբ արտաքին և ներքին վերահսկողության ընթացակարգերը: | ՀՀ կրթության և գիտության նախարարությու ն |
| | | | 2. Սահմանվել է գիտելիքի գնահատման համակարգի կիրառման նկատմամբ արտաքին և ներքին վերահսկողության ընթացակարգերը (այո/ոչ) | այո | | |
| | 20.2 Ապահովել միասնական և ավարտական քննությունների թափանցիկությունը | 2. Քննությունների ընթացքի նկատմամբ վերահսկողությանը հասարակական կազմակերպությունների ներգրավումը կանոնակարգված է և ընթացակարգերը ներդրված են | 1. Ապահովված են միասնական և ավարտական քննությունների ընթացակարգերի թա-փանցիկությունը (այո/ոչ) | այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Ցուցիչ 1.-2. Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև ծնողները ներգրավված են քննությունների ընթացքի նկատմամբ վերահսկողության գործընթացում: Մասնավորապես, ներկա են գտնվում թեստերի ծրարների բացմանը, մոնիտորների միջոցով հետևում են քննության գործընթացին, զլմ-ները լուսաբանում են քննական գործընթացը: Քաղաքացիական հասարակության միավորումները պատշաճ տեղեկատվություն են ստանում քննական գործընթացի վերաբերյալ: | ՀՀ կրթության և գիտության նախարարությու ն |
| | | | 2. Կանոնակարգվել են քննու-թյունների ընթացքի նկատմամբ հասարակական կազ-մակերպությունների կողմից մասնակցային մոնիտորինգի ընթացակարգերը (այո/ոչ) | այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխա-նատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 3. Սահմանվել են քննություն-ների կանոնները խախտող սովորողների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների չափանիշներն ու ցանկը (այո/ոչ) | այո | Ցուցիչ 3. Պետական և ոչ-պետական հաստատություններ ընդունելիության կարգի 67 կետի 12 –րդ ենթակետով սահմանված են քննությունների կանոնները խախտող սովորողների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների չափանիշներն ու ցանկը:<br>Ցուցիչ 4. Պետական և ոչ-պետական հաստատություններ ընդունելիության կարգի 66 կետի 5 –րդ ենթակետով, ինչպես նաև կենտրոնի տնօրենի հրամանով հաստատված աշխատակարգով սահմանված են թեստային քննությունների ընթացքում կազմակերպիչների և վերահսկողների լիազորությունները: | |
| | | | 4. Հստակեցվել են թեստային քննությունների ընթացքում կազմակերպիչների և վերահսկողների լիազորությունները (այո/ոչ) | այո | | |

### 3.6 Առողջապահության ոլորտ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 21. Բարձրացնել առողջապահության ոլորտում հանրային ֆինանսների կառավարման թափանցիկությունը և հաշվետվողականությունը | 21.1 Շարունակաբար հստակեցնել և առավել հասցեական դարձնել պետության կողմից ֆինանսավորվող առողջապահական ծառայությունների շրջանակը | 1. ՀԾՓ-ն վերանայված և փոփոխված է<br>2. Հիվանդանոցներում և ԱԱՊ բժշկական հաստատություններում մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման չափը պետական բյուջեից առողջապահության հատկացումների աճին համամասնորեն մոտեցված է իրական ինքնարժեքին: | 1. Լիազոր պետական մարմնի կողմից հստակեցվել են ՀԾՓ-ում ներառված առողջապահական ծառայությունների շրջանակը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ.<br>ՀԾՓ-ն վերանայված և փոփոխված է, որը արտացոլված է «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում և «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» պայմանագրերում:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Արդյունք 2. Իրականացված չէ<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2010 թվականին պետական բյուջեից հատկացումները առողջապահության բնագավառին նախորդ տարվա համեմատ կրճատվել են, պետության կողմից երաշխավորված անվճար բժաշկական օգնության և սպասարկման կազմակերպման նպատակով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերում մատուցվող ծառայությունների գների բարձրացում տեղի չի ունեցել. ԱԱՊ բժշկական հաստատություններում մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման չափի մոտեցումը իրական ինքնարժեքին նախատեսվում է կատարել 2011-2013թթ. ՄԺԾ ծրագրերում:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 1. ՀԾՓ-ն վերանայված և փոփոխված է, որը արտացոլված է «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում և «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» պայմանագրերում:<br>Ցուցիչ 2. Հստակեցվել է պետության կողմից ֆինանսավորվող առողջապահական ծառայությունների ցանկը, որը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 14.12.2009թ. N 1989-Ա և 22.03.2010թ. և N444-Ա հրամաններով:<br>Ցուցիչ 3. ՀՀ պետական բյուջեում առողջապահության նպատակային ծրագրերի հատկացումների տեսակարար կշիռը կազմել է 5,9 տոկոս, որը հաստատվել է «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով: Մանավարապես, ՀՀ 2010 թվականի պետական բյուջեն ծախսային մասով կազմում է 935,524,584.0 ՀՀ դրամ, իսկ առողջապահական նպատակային ծրագրերի համար հատկացումները` 55,249, 490.7 ՀՀ դրամ:<br>Տվյալները վերցված են «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքից:<br>Ցուցիչ 4. Բժշկական կենտրոնների (բուրգեր) ձևավորումից հետո առաջացած, անհրաժեշտությամբ պայմանավորված, վերանայվել են բժշկական կենտրոններում (բուրգեր) պետական պատվերի տեղադրման և ֆինանսավորման սկզբունքները: Բժշկական կենտրոնների (բուրգերի) հետ կնքվում է մեկ ընդհանուր պայմանագիր` հիվանդանոցային, արտահիվանդանոցային և շտապ օգնության ծառայությունների մատուցման վերաբերյալ: Այդ պայմանագրերով որպես կատարող հանդես է գալիս բժշկական կենտրոնի (բուրգի) ղեկավարը, կատարված փաստացի բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են նրա կոցմից, ֆինանսավորումը կատարվում է մեկ բանկային հաշվով և ծախսերը կատարվում են մեկ աղբյուրից:<br>Ցուցիչ 5. Հավաստագրերի տրամադրման միջոցով պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման իրականացումը ներդրված է միայն ծննդօգնության բնագավառում, որը գնահատվել է որպես դրական փորձ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներդրման արդյունավետությունը զգալի չափով կապված է բյուջետային էական ներդրումների հետ, 2010 թվականին հավաստագրի նոր մեխանիզմ չի ներդրվել, սակայն 2010 թվականի երրորդ եռամսյակից սկսվել են նախապատրաստական | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | | | 2. Լիազոր մարմնի կողմից հաստատված է պետության կողմից ֆինանսավորվող, առողջապահական ծառայությունների ցանկը (այո/ոչ). | Այո | | |
| | | | 3. ՀՀ պետական բյուջեում առողջապահության նպատակային ծրագրերի հատկացումների տեսակարար կշիռը (տոկոս). | 5.9% | | |
| | | | 4. Փորձաշրջանով ներդրված է բժշկական կենտրոնների /բուրգերի/ ընդհանուր ֆինանսավորում / (այո/ոչ) | Այո | | |
| | | | 5. Փորձաշրջանով ներդրված է բուժօգնության համար ընդհանուր հավաստագրի տրամադրում (այո/ոչ) | Այո | | |

<table>
<thead>
<tr><th>Ռազմավարության դրույթներ</th><th>Միջոցառում</th><th>Ակնկալվող արդյունք 2010թ</th><th>Մոնիտորինգի ցուցիչներ</th><th>Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը</th><th>Մեկնաբանություններ</th><th>Պատասխանատու մարմին</th></tr>
</thead>
<tbody>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td>աշխատանքները երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ոլորտում հավաստագրերի տրամադրման ուղղությամբ: Նախապատրաստական աշխատանքներն ամբողջ ծավալով իրականացված են, և երեխաների բժշկական օգնության ծրագրում 2011 թվականի հունվարի 1-ից սկսվել է հավաստարգերի տրամադրումը:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան</td><td></td></tr>
<tr><td rowspan="5">22. Բարելավել առողջապահության համակարգում գնագոյացման համակարգը և վերացնել ոչ պաշտոնական վճարումների համար նպաստավոր պայմանները</td><td rowspan="5">22.1 Ներդնել առողջապահության համակարգում իրատեսական գնագոյացման համակարգ</td><td rowspan="5">1. Բժշկագիտական և տնտեսագիտական չափորոշիչների առաջին փաթեթը սահմանված է<br>2. Ըստ կլինիկոծախսային խմբերի տարանջատված են բժշկական ծառայությունների գները,<br>3. Բժշկական ծառայությունների համար հաշվարկված են նորմատիվային ինքնարժեքներ.<br>4. Առողջապահական ծառայությունների գները սահմանված են ըստ իրատեսական ծախսատարության`էլ նելով պետական բյուջեի առողջապահության հատկացումների աճի տեմպերից<br>5. Բնակչության և բուժաշխատողների շրջանում իրականացվում են համավճարային սկզբունքի վերաբերյալ համակողմանի և ընդգրկուն քարոզչական և կրթալուսավորչական ծրագրեր</td><td>1. Բժշկատնտեսագիտական հիմնավորում ունեցող առողջապահական ծառայությունների տեսակարար կշիռը սահմանված ընդհանուր բուժօգնության ծառայությունների տեսակների մեջ:/տոկոս/</td><td>40 %</td><td rowspan="5">Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն<br>2010 թվականի ընթացքում մշակվել և ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատվել են են հետևյալ չափորոշիչները`<br>ՀՀ առողջապահության նախարարի 17.06.2010թ. «Որովայնային վիրաբուժության ոլորտի բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչները հաստատելու մասին» N 994-Ա հրաման:<br>ՀՀ առողջապահության նախարարի 14.10.2010թ. «Նյարդաբանության ոլորտի բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչները հաստատելու մասին» N 1662-Ա հրաման:<br>ՀՀ առողջապահության նախարարի 14.10.2010թ. «Աղեստամոքսային համակարգի ոլորտի բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչները հաստատելու մասին» N 1661-Ա հրաման:<br>ՀՀ առողջապահության նախարարի 11.10.2010թ. «Սրտաբանության ոլորտում բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչները հաստատելու մասին» N 1633-Ա հրաման:<br>Միաժամանակ, ի կատարումն ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 22-ի թիվ 44 արձանագրային որոշման «Ռազմավարական ուղղություն» 2-րդ բաժնի 3-րդ ռազմավարության 3-րդ կետի` ընդունվել է ՀՀ առողջապահության նախարարի 14.12.2010թ. «Կլինիկական ռեֆերենս կենտրոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 2036-Ա հրամանը:<br>Կարևորվում է նաև այն, որ ՀՀ Կառավարության 2009 թվականի օգոստոսի 27-ի թիվ 35 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ-ում առողջապահության ֆինանսավորման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը, որի 13-րդ կետով նախատեսված է բուժծառայությունների որակի գնահատման հայեցակարգի մշակումը: Նշված դրույթի պահանջներից ելնելով` սահմանված ժամկետում մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել բուժծառայությունների որակի գնահատման հայեցակարգը և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 40 արձանագրային որոշմամբ:<br><br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ<br>Հիվանդանոցային ընդհանուր դեպքերի շուրջ 40 տոկոսի ինքնարժեքի հաշվարկը իրականացված է ըստ կլինիկոծախսային խմբերի և սահմանված են բժշկատնտեսագիտական հիմնավորում ունեցող գներ: Սակայն այդ գներով փոխհատուցում իրականացվում է ոչ բոլոր հաշվարկված ծառայություններում, ֆինանսական հնարավորությունների սղության հետևանքով: Ծառայությունների հերթական փաթեթի խնքնարժեքի հաշվարկը նախատեսված է իրականացնել 2011 թվականին: 2011 թվականին կկիրառվեն նաև նոր մեթոդաբանությամբ հաշվարկված իրատեսական ինքնարժեքները` բյուջեի աճին համապատասխան:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից, որոնք հաշվարկվել են <<Ավագ Սոլյուշնս>> մասնագիտացված կազմակերպության կողմից:<br>Արդյունք 3. Իրականացված է մասամբ<br>Հաշվարկված են հիվանդանոցային բուժօգնության շուրջ 250-300 հիվանդությունների և</td><td rowspan="5">ՀՀ առողջապահության նախարարություն</td></tr>
<tr><td>2. Պետական լիազոր մարմնի կողմից հաստատված վճարովի բժշկական օգնության և ծառայությունների ժամանակավոր գնացուցակներով աշխատող բուժհաստատությունների թվաքանակը ընդհանուր բուժհաստատությունների թվի մեջ /տոկոս/</td><td>0</td></tr>
<tr><td>3. ՀԾՓ-ում ընդգրկված առողջապահական ծառայությունների համար կատարված պետական հատկացումների տեսակարար կշիռը փաստացի և իրական ծախսերի նկատմամբ/տոկոս/</td><td>35-60%<br>60-75%</td></tr>
<tr><td>4. Ոչ ֆորմալ վճարումները առողջապահական համակարգում առողջապահության վրա կատարվող ծախսերի նկատմամբ /տոկոս/</td><td>19.3%</td></tr>
<tr><td>5. Համավճարի ծավալի հարաբերությունը բժշկական օգնության համար անհրաժեշտ իրական ծախսերին /տոկոս/</td><td>25-40% (ոչ վիրահատականի դեպքում)<br>40-65% (վիրահատականի դեպքում)</td></tr>
</tbody>
</table>

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | վիճակների նորմատիվային ինքնարժեքներ, ինչը կազմում է հիվանդությունների և վիճակների շուրջ 40 տոկոսը:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Արդյունք 4. Իրականացված է մասամբ<br>Մեկնաբանությունները բերված են Արդյունք 2-ի և 3-ի շրջանակներում:<br><br>Արդյունք 5. Իրականացված է ամբողջությամբ<br>Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման համավճարային նոր եղանակի փորձարարական կիրառումը սկսվել է 2010 թվականի հուլիսի 1-ից` ՀՀ կառավարության 10.06.2010թ. Թիվ 727-Ն որոշման հիման վրա նա ««Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ-ում, ապա 01,12,2010թ.-ից «Նաիրի» բժշկական կենտրոնում և «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ-ում: Բնակչության և բուժաշխատողների շրջանում համավճարային սկզբունքի վերաբերյալ համակողմանի և ընդգրկուն քարոզչական և կրթալուսավորչական ծրագրերն սկսվել են իրականացվել 2010 թվականի 2-րդ եռամսյակից: Իրականացվել են հանդիպումներ փորձարարական ծրագրում ընդգրկված կոլեկտիվների հետ, Ծաղկաձորում կազմակերպվել է երկօրյա սեմինար-պարապմունք լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ` լրատվամիջոցներում հետագա լայնածավալ լուսաբանմամբ:<br><br>Ցուցիչ 1. Բժշկատնտեսագիտական հիմնավորում ունեցող հիվանդությունների և վիճակների դեպքերի թիվը ընդհանուր դեպքերի մեջ կազմում է շուրջ 250, որն էլ կազմում է ընդհանուր դեպքերի շուրջ 40 տոկոսը:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից,<br><br>Ցուցիչ 2. ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի համաձայն բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները …: Նման պայմաններում որևէ մեխանիզմ չկա պարտավորեցնել մասնավոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին աշխատել պետական լիազոր մարմնի կողմից հաստատված վճարովի բժշկական օգնության և ծառայությունների ժամանակավոր գնացուցակներով: Վճարովի բժշկական ծառայությունների բոլոր գնացուցակները և դրանցում կատարվող փոփոխությունները հաստատվում են բուժհաստատությունների իրավասու մարմինները /ընդհանուր ժողով, տնօրենների խորհուր և այլն/ կողմից, և այդ գնացուցակները կարող են լինել ինչպես ժամանակավոր այնպես էլ մշտական:<br>Ցուցիչ 2-ի հետ կապված իրավական հակասությունը կարող է լուծվել, այն բանից հետո, երբ կհստակեցվի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների գործունեությանը պետության թույլատրելի միջամտության աստիճանը:<br>Ցուցիչ 3. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տնտեսագիտական հիմնավորված գների և գործող գների տարբերությունը կազմում է միջին հաշվով 35-60% վիրահատական ծառայություններում, 60-75% ոչ վիրահատական ծառայությունների համար: Ցուցիչի արժեքը հաշվարկվել է բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների իրական անհրաժեշտ ծախսերի և պետական բյուջեով հատկացված միջոցների տարբերության հիման վրա:<br>Անհրաժեշտ է ցուցիչը բաժանել 2 մասի` փաստացի և իրական ծախսերի մասով | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | սահմանելով առանձին ցուցիչներ: Միաժամանակ անհրաժեշտ է ճշգրտել, թե ինչ է նշանակում փաստացի ծախս:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 4. Ոչ ֆորմալ վճարումները իրենց չափով և ծավալներով տարաբնույթ են` ինչպես տարածքային առումով` Երևան քաղաք և մարզեր, այնպես էլ բուժօգնության կազմակերպման տարբեր ձևերի դեպքում` հիվանդանոցային, արտահիվանդանոցային, վիրաբուժական, կոնսերվատիվ և այլն: Ըստ փորձագիտական գնահատականների, ոչ ֆորմալ վճարումները առողջապահական ընդհանուր ծախսերի մեջ կազմում են շուրջ 10 տոկոս, իսկ տնային տնտեսությունների կողմից բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերի կառուցվածքում` 19.3 տոկոս:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 5. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատոցման համավճարային նոր եղանակի փորձարարական կիրառումը ներդրվել է 2010 թվականի հուլիսի 1-ից: Համավճարի չափի հարաբերությունը բժշկական օգնության համար անհրաժեշտ իրական ծախսերին տատանվում է կապված դեպքի ծախսատարությունից, քանի որ պետության կողմից իրականացվող փոխհատուցման գինը պահպանվում է նույն մակարդակում և ծախսերի տարբերությունը վճարվում է համավճարի տեսքով բնակչության կողմից: Ոչ վիրահատական դեպքերում հիմնականում համավճարի գումարը ընդհանուր ծախսի մեջ կազմում է շուրջ 25-40%, իսկ վիրահատական դեպքերում`40-65%: | |
| | 22.2 Ներդնել պետական բժշկական հաստատություններում իրականացվող վճարովի բժշկական օգնության և ծառայությունների գնագոյացման համակարգ | 1. Վճարովի բժշկական օգնության և ծառայությունների սակագների (գնագոյացման) պետական կարգավորման ընթացակարգերը սահմանված են | 1.Վճարովի բժշկական օգնության և ծառայությունների սակագների պետական կարգավորման մեխանիզմներն ամրագրված են օրենսդրորեն (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Վճարովի բժշկական օգնության և ծառայությունների սակագների (գնագոյացման) պետական կարգավորման ընթացակարգերը մշակման փուլում են:<br>Ցուցիչ 1. Ցուցիչը կստանա իր արժեքը արդյունք 1-ի իրականացումից հետո: | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | 22.3 Խստացնել պետական բուժհաստատությունների վերահսկողությունը ծախսային առաջնահերթությունների պահպանման նկատմամբ | 1. Պետական բժշկական հաստատությունները ներկայացրել են ծախսերի կատարման տարեկան հաշվետվությունները<br>2. Գրանցվել է բժշկական հաստատությունների և բուժաշխատողների պաշտոնական եկամուտների աճ /ինքնարժեքի ընդհանուր ծախսերի մեջ աշխատավարձի ծախսերը կազմում են 40 տոկոս/<br>3. Գրանցվել է բժշկական հաստատություններում պաշտոնական ֆինանսական մուտ- | 1. Ծախսային առաջնահերթությունները չպահպանած բուժհաստատությունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ /տոկոս/ | Մոտավորապես 6% | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Ըստ հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների մասին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, բուժհաստատությունները տարեկան հաշվետվությունները ներկայացնում են տարեկան ծախսերի կտրվածքով, իսկ ՀՀ ԱՆ տեղեկատվության կարգով 0007 ձևին համապատասխան:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>2010թ. բուժաշխատողների վարձատրման հարցերը եղել են ՀՀ առողջապահության նախարարության ուշադրության կենտրոնում: Նշված ժամանակահատվածում 2009 թվականի համեմատությամբ պետության կողմից հատկացվող միջոցների չափը էական փոփոխություն չի կրել` պայմանավորված ֆինանսական ճգնաժամով: Բուժհաստատությունների ընդհանուր եկամուտները 2009 թվականի համեմատությամբ աճել են 2 տոկոսով, իսկ բուժհաստատությունների ընդհանուր ծախսերում աշխատանքի վարձատրմանն ուղղվող ծախսերը կազմել են 40-70 տոկոս` պայմանավորված բուժհաստատության տեսակով (հիվանդանոցային, արտահիվանդանոցային):<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Առաջարկվում է Արդյունք 2-ի մեջ «բժշկական հաստատությունների» բառերից առաջ նշել «պետական մասնակցությամբ» բառերը, քանի որ պետական մարմինները իրավասու չեն միջամտելու մասնավոր բժշկական հաստությունների կողմից իրենց ֆինանսական միջոցների տնօրինման հետ կապված հարաբերությունների` նրանց վրա դնելով լրացուցիչ պարտավորություններ: Դա հակասում է ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի | ՀՀ առողջապահության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | քերի աճ. | | | պահանջներին:<br>Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ<br>Բուժհաստատությունների եկամուտները հիմնականում ձևավորվում են պետական պատվերի և վճարովի բուժօգնության գումարներից: 2010թ. ՀՀ պետական բյուջեով «Առողջապահություն» բաժնի ֆինանսավորումը էական ավելացում չի ունեցել: 2010 թվականին 2009 թվականի համեմատ բուժհաստատությունների պաշտոնական եկամուտներ աճել են 2 տոկոսով: ««Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ-ում համավճարային մեխանիզմների փորձառական եղանակով ներդրման արդյունքում վեց ամսվա ընթացքում գրանցվել է պաշտոնական եկամուտների աճ շուրջ 77.0 մլն. դրամի չափով:<br>Առաջարկվում է Արդյունք 2-ի մեջ «բժշկական հաստատությունների» բառերից առաջ նշել «պետական մասնակցությամբ» բառերը, քանի որ պետական մարմինները իրավասու չեն միջամտելու մասնավոր բժշկական հաստությունների կողմից իրենց ֆինանսական միջոցների տնօրինման հետ կապված հարաբերությունների` նրանց վրա դնելով լրացուիչ պարտավորություններ: Դա հակասում է ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի պահանջներին:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է մոտավոր, քանի որ այն վերաբերում է բոլոր բուժհաստատություններին` ինչպես պետական այնպես էլ մասնավոր: Տվյալներ կարող են ներկայացվել միայն պետական մասնակցությամբ բուժհաստատությունների վերաբերյալ, որոնցում հիմնականում պահպանվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթությունները: Առաջնահերթ վճարվում են աշխատավարձերը, կատարվում են հարկային պարտավորությունները, դեղորայքային և այլ ծախսերը: Դեռևս կան վնասով աշխատող առանձին բուժհաստատություններ, որոնց մոտ խախտվում են վերը նշված առաջնահերթությունները: Նախարարությունը ձեռնարկում է միջոցներ (ամենամսյա մոնիտորինգ) վնասով աշխատող հիմնարկների կրճատման ուղղությամբ: Ըստ ՀՀ ԱՆ հասանելի տեղեկատվության, ծախսային առաջնահերթությունները չպահպանած բուժհաստատությունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ կազմում է շուրջ 6 տոկոս:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչում «բուժհաստատությունների» բառից առաջ անհրաժեշտ է ավելացնել պատական «մասնակցությամբ» բառերը, քանի մասնավոր բժշկական հաստատությունների համար ծախսերի առաջնահերթություններ սահմանելը կարող է իրականացվել բացառապես օրենքով` համաձայն ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 23.Կրճատել ստվերային դրամաշրջանառության ծավալները, բարձրացնել առողջապահական ծառայությունների պետական պատվերի թափանցիկությունը, հասցեականությունը և հաշվետվողականությունը, բարձրացնել բուժհաստատությունների գոր- | 23.1 Ապահովել առողջապահական ծառայությունների պետական պատվերի պայմանագրային ծավալների հիմնավորվածությունը, խստացնել պետական պատվերի պայմանագրերի կնքման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը և կանխել պետական պատվերի հնարավոր հավելագրումներն ու բուժհաստատությունների վնասաբեր | 1. Պետական պատվերի պայմանագրերի կնքումը կատարված է 2009թ. կատարողականների և դրանց ծավալների հնարավոր մեծացման միտումների վերլուծականների հիման վրա<br>2. 2009թ. Բժշկական հաստատություններում պետական պատվերի հիմքերի անհամապատասխան | 1.Բուժհաստատություններում ներդրվել է բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հաշվառման էլեկտրոնային միասնական համակարգ (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Պետական պատվերի պայմանագրային գումարները հաշվարկված են ՀՀ կառավարության 04.03.2004թ. 318-Ն որոշման համաձայն: Պայմանագրային գումարները հաշվարկվում են` հիմք ընդունելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որի ժամանակ պայմանագրային գումարներից ավել կատարված և չֆինանսավորված ծավալները, հիմնականում, որպես բազային ծավալ, չեն հաշվարկվում:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>2010 թվականին բժշկական հաստատություններում պետական պատվերի հիմքերի անհամապատասխանությունը կատարողականի մեջ չի գերազանցում 3 տոկոսի չափը: Փաստացի ցուցանիշների համաձայն այն կազմում է մինչև 0,5 տոկոս:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Արդյունք 3. Իրականացված չէ | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | | | 2.Փաստացի կատարողականի շեղման աստիճանը պայմանագրային ծավալներից (տոկոս) | 0,8% | | |
| | | | 3. Բուժհաստատությունների շահութաբերության մակարդակը իրացման | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| ծունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը | գործունեությունը | ությունը կատարողականի մեջ չի գերազանցում 3 տոկոսի չափը.<br>3. Բժշկական հաստատություններում ապահովված է նվազագույնը 9 տոկոս շահութաբերության մակարդակ | ծավալների նկատմամբ(տոկոս) | | Բժշկական հաստատություններում նվազագույնը 9 տոկոս շահութաբերութան ապահովումը հանրապետության բոլոր բուժհաստատություններում հնարավոր կլինի բժշկատնտեսագիտական ստանդարտների հիման վրա բժշկական ծառայությունների իրատեսական գների հաշվարկման և կիրառման պարագայում, ինչը մշակման մասով սկսված է, սակայն կիրառումը չի իրականացվել ֆինանսական դժվարությունների հետևանքով: Մյուս կողմից շահութաբերության հետ կապված տեղեկատվությունը ձևավորվում է տարեկան հաշվապահական հաշվեկշիռների ամփոփումից հետո, որոնք ներկայացվում են հիմնադիրներին և/կամ համապատասխան գերատեսչություններին և հասու չեն ՀՀ առողջապահության նախարարությանը:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 1. 2010 թվականի առաջին կիսամյակում գործել է ՄԻԴԱՍ 2, իսկ հուլիսից ներդրվել է ՄԻԴԱՍ 3 էլեկտրոնային լրամշակված տեղեկատվական համակարգը, որը ավելի ամբողջական տվյալներ է պարունակում: Միաժամանակ ներդրված համակարգի միջոցով ապահովվել է բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հաշվառման համակարգի միասնականությունը:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 2. Փաստացի կատարողականի շեղումը 2010 թվականի պայմանագրային ծավալներից կազմել է 0.8 տոկոս:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 3. Ցուցիչի արժեքը հնարավոր չէ հաշվել: Մանսավորապես, ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել միայն պետական մասնակցությամբ և պետական պատվեր իրականացնող բուժհաստատությունների շահութաբերության մակարդակը, իսկ մասնավոր բժշկական հաստատությունների շահութաբերության մակարդակը հնարավոր չէ հաշվել, քանի որ դրա համար անհրաժեշտ ելակետային տվյալները ՀՀ առողջապահության նախարարություն չեն ներկայացվում: Միաժամանակ նշված տեղեկությունները «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի իմաստով կարող են համարվել հարկային գաղտնիք:<br>Առաջարկվում է ցուցիչը վերասահմանել այնպես, որ այն վերաբերի միայն պետական մասնակցությամբ բուժհաստատություններին: Միաժամանակ ցուցիչի ձևակերպումից անհրաժեշտ է հանել «իրացման ծավալների նկատմամբ» բառերը:<br>Իրավիճակը՝ բավարար<br>Առաջընթացը՝ բավարար<br>Առաջարկություններ՝ չկան | |
| | 23.2 Հստակեցնել անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը բացառելով ցանկի երկակիությունը և տարընթերցման հնարավորությունները. | 1. Անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը վերանայված և հստակեցված է | 1. Անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը հստակեցված է (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ առողջապահության նախարարի 14.12.2009թ. թիվ 1989-Ա հրամանով հաստատվել է 2010 թվականի պետության կողմից երաշխավորված հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների չափորոշիչը, որի 2-րդ բաժնով վերանայվել և հստակեցվել են անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող վիճակները և հիվանդությունները /մանկական և մեծահասակ բնակչության համար/: Չափորոշիչն ամբողջությամբ տեղադրված է ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական էլեկտրոնային կայքում www. Moh.am:<br>Ցուցիչ 1. Մեկնաբանությունները բերված են ակնկալվող արդյունքի շրջանակներում: | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | 23.3 ՀՀ առողջապահության համակարգում ստեղծել տվյալների միասնական համակարգ | 1. Մշակված է բուժհաստատությունների բժշկական, վիճակագրական և ֆինանսական | 1. Ստեղծվել է ՀՀ առողջապահության համակարգում տվյալների միասնական բազա (այո/ոչ)<br>2. Պարտադիր տեղեկա- | Այո<br>Տվյալները | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>2010 թվականի առաջին կիսամյակում գործել է ՄԻԴԱՍ 2, իսկ հուլիսից ներդրվել է ՄԻԴԱՍ 3 էլեկտրոնային լրամշակված տեղեկատվական համակարգը, որը ավելի ամբողջական տվյալներ է պարունակում: Սակայն բուժհաստատություններից բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հավաքագրումը որոշակիորեն | ՀՀ առողջապահության նախարարություն, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | տվյալների հաշվառման էլեկտրոնային միասնական համակարգ<br>2.Բուժհաստատությունների պաշտոնական կայքերում հաստատված ցանկով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկն ու չափորոշիչները սահմանված են | տվություն պարունակող բուժհաստատությունների պաշտոնական կայքերի թվի հարաբերությունը գործող բուժհաստատությունների ընդհանուր թվաքանակին(տոկոս) | բացակայում են | տարանջատված է, աշխատանքներ են կատարվում միասնականության ապահովման ուղղությամբ:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվակիանի սեպտեմբերի 24-ի թիվ 1529-Ա հրամանով սահմանվել են առողջապահական կազմակերպությունների կայքերի կառուցվածքը և կայքերի բովանդակությանը ներկայացվող պահանջները, որոնք պարունակում են բուժհաստատությունների պաշտոնական կայքերում հաստատված ցանկով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկն ու չափորոշիչները:<br>Ցուցիչ 1. Առողջապահության համակարգում ներդրվել է ՄԻԴԱՍ 3 էլեկտրոնային լրամշակված տեղեկատվական համակարչգը, որը ապահովում բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հավաքագրման միասնականությունը. ԱԱՊ մասով` ամբողջությմաբ, իսկ հիվանդանոցային բուժօգնության մասով` պետական պատվերի շրջանակներում:<br>Ցուցիչ 2. ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվակիանի սեպտեմբերի 24-ի «Առողջապահական կազմակերպությունների կայքերի կառուցվածքը և կայքերի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» թիվ 1529-Ա հրամանի ընդունումից հետո սահմանված պահանջներին առողջապահական կազմակերպությունների կայքերի համապատասխանեցման և նոր կայքերի պատրաստման գործընթացը սկսվել է և արդյունքները նախատեսվում է ամփոփել 2011 թվականի ընթացքում:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 24. Ապահովել հիվանդների իրավունքների լիարժեք իրականացումը | 24.1 Լիարժեք կերպով կարգավորել հիվանդների և բուժաշխատողների իրավունքներն ու պարտականությունները | 1. Հիվանդների և բուժաշխատողների իրավունքների իրականացման և դրանց խախտման դեպքում բողոքարկումների ընթացակարգերը ներդրված են<br>2. Պացիենտների հասցեական իրազեկման ընթացակարգերը ներդրված են, այդ թվում` անվճար բուժօգնության պետական հավաստագրերի մեխանիզմով | 1. Հիվանդների և բուժաշխատողների իրավունքներն ու պարտականություններն ամրագրվել են օրնսդրորեն (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Հիվանդների և բուժաշխատողների իրավունքների իրականացման և դրանց խախտման դեպքում բողոքարկումների ընթացակարգերը նախատեսված են «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծով, որը քննարկվել է պետական շահագրգիռ մարմինների հետ և առաքվել է ՀՀ կառավարություն: Միաժամանակ, հիվանդների և բուժաշխատողների իրավունքների պաշտպանության գործուն երաշխիքներ և մեխանիզմներ են պարունակվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում, ՀՀ վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում և այլն:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 14-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 1991-Ա հրամանով հաստատված չափորոշչի «բ» բաժնի 2-րդ կետով նախատեսված է, որ պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող հաստատությունը հիվանդի ստացիոնար ընդունվելու ժամանակ հիվանդին/հարազատներին ապահովում է տեղեկատվությամբ անվճար բուժօգնության հիվանդի իրավունքների մասին: Իսկ իրազեկման փաստը վավերացվում է բժշկական փաստաթղթերում հիվանդի կամ ծնողի/հարազատի ստորագրությամբ:<br>Միաժամանակ, ՀՀ առողջապահության նախարարի նույն հրամանի 8-րդ հավելվածով նախատեսված է, որ ծննդատան մուտքի մոտ, ընդունարանում և յուրաքանչյուր հարկում, տեսանելի և աչքով ընթեռնելի տեղում պետք է փակցվի տեղեկատվություն` մատուցվող ծառայությունների մասին, որում պետք է պարտադիր նշվի այն մասին, որ ծննդատանը բոլոր բուժծառայությունները անվճար են: Տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգեր են նախատեսված նաև ծննդօգնության և երեխանի բժշկական օգնության և սպասարկման պետական հավաստագրերի վերաբերյալ իրավական ակտերով:<br>Ցուցիչ 1. 1996 թվականի մարտի 4-ին ընդունված «Բնակչության բժշկական օգնության և | ՀՀ առողջապահության |
| | | | 2. Ներդրվել են ընդհանուր բուժօգնության պետական հավաստագրեր (այո/ոչ) | Ոչ | | |
| | | | 3. Պետական պատվերով հիվանդանոցային բուժում ստացող հիվանդների իրավունքների և բուժօգնության ծավալների մասին տեղեկատվությունը մատչելի և հասնելի է ընդունարանից (այո/ոչ) | Այո | | |
| | | | 4. Սահմանվել են բժշկական օգնության և ծառայությունների որակի գնահատման և վերահսկման չափորոշիչներ (այո/ոչ) | Այո | | |
| | | | 5. Բուժաշխատողների իրավունքների խախտման հետ կապված բողոքների թվի հարաբերությունը նույն | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ժամանակահատվածում պետական լիազոր մարմնի կողմից ստացված ու քննարկված բողոքների ընդհանուր թվաքանակին(տոկոս) | | սպասարկման մասին» ՀՀ օրենքով արդեն իսկ ամրագրված են հիվանդների և բուժաշխատողների իրավունքներն ու պարտականությունները, սակայն «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծով, որը քննարկվել է պետական շահագրգիռ մարմինների հետ և առաքվել է ՀՀ կառավարություն, ավելի հանգամանալից են կարգավորված նշված հարցերը:<br>Ցուցիչ 2. Հավաստագրերի տրամադրման միջոցով պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման իրականացումը ներդրված է միայն ծննդօգնության բնագավառում, որը գնահատվել է որպես դրական փորձ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներդրման արդյունավետությունը զգալի չափով կապված է բյուջետային էական ներդրումների հետ, 2010 թվականին հավաստագրի նոր մեխանիզմ չի ներդրվել, սակայն 2010 թվականի երրորդ եռամսյակից սկսվել են նախապատրաստական աշխատանքները երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ոլորտում հավաստագրերի տրամադրման ուղղությամբ: Նախապատրաստական աշխատանքներն ամբողջ ծավալով իրականացված են, և երեխաների բժշկական օգնության ծրագրում 2011 թվականի հունվարի 1-ից սկսվել է հավաստագրերի տրամադրումը:<br>Ցուցիչ 3. ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 14-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 1991-Ա հրամանով հաստատված չափորոշչի «բ» բաժնի 2-րդ կետով նախատեսված է, որ պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող հաստատությունը հիվանդի ստացիոնար ընդունվելու ժամանակ հիվանդին/հարազատներին ապահովում է տեղեկատվությամբ անվճար բուժօգնության հիվանդի իրավունքների մասին: Իսկ իրազեկման փաստը վավերացվում է բժշկական փաստաթղթերում հիվանդի կամ ծնողի/հարազատի ստորագրությամբ:<br>Ցուցիչ 4. 2010 թվականի ընթացքում մշակվել և ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատվել են են հետևյալ չափորոշիչները`<br>ՀՀ առողջապահության նախարարի 17.06.2010թ. «Որովայնային վիրաբուժության ոլորտի բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչները հաստատելու մասին» N 994-Ա հրաման:<br>ՀՀ առողջապահության նախարարի 14.10.2010թ. «Նյարդաբանության ոլորտի բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչները հաստատելու մասին» N 1662-Ա հրաման:<br>ՀՀ առողջապահության նախարարի 14.10.2010թ. «Աղեստամոքսային համակարգի ոլորտի բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչները հաստատելու մասին» N 1661-Ա հրաման:<br>ՀՀ առողջապահության նախարարի 11.10.2010թ. «Սրտաբանության ոլորտում բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչները հաստատելու մասին» N 1633-Ա հրաման:<br>Միաժամանակ, ի կատարումն ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 22-ի թիվ 44 արձանագրային որոշման «Ռազմավարական ուղղություն» 2-րդ բաժնի 3-րդ ռազմավարության 3-րդ կետի` ընդունվել է ՀՀ առողջապահության նախարարի 14.12.2010թ. «Կլինիկական ռեֆերենս կենտրոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 2036-Ա հրամանը:<br>Միաժամանակ, համապատասխան չափորոշիչներ մշակվել և ներդրվել են առողջության առաջնային պահպանման համակարգում: հաշվի առնելով, որ նշված բափորոշիչները ընդունվել և ներդրվել են 2010 թվականի վերջերին բժշկական արդյունավետության գործակիցը չի կարող արտացոլել առկա վիճակը:<br>Ցուցիչ 5. Ցուցիչի արժեքի հաշվարկման համար տվյալները հավաքագրման փուլում են: Նախապատրաստվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագիծ, որով ՀՀ ԱՆ աշխատակազմի ստորաբաժանումներին հանձնարարվում է որոշակի ժամանակահատվածը մեկ ամփոփել և ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավական ապահովման | |
| | | | 6. Հիվանդների իրավունքների խախտման հետ կապված բողոքների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պետական լիազոր մարմնի կողմից ստացված ու քննարկված բողոքների ընդհանուր թվաքանակին(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| | | | 7. Անհրաժեշտ ծավալով և տեխնոլոգիաների պահպանմամբ իրականացված բուժօգնության դեպքերի թիվը ընդհանուր դեպքերի նկատմամբ/տոկոս/ | Տվյալները բացակայում են | | |
| | | | 8. Բժշկական արդյունավետության գործակից/բուժման ստանդարտ արդյունքների հասցված հիվանդության դեպքերի հարաբերությունն է ընդհանուր հիվանդության դեպքերին(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| | | | 9. Սոցիալական արդյունավետության գործակից/ըստ հարցումների բուժման արդյունքներից բավարարված պացիենտների թվի հարաբերությունն է ընդհանուր հիվանդության դեպքերի թվաքանակին(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| | | | 10. Որակի գործակից/Մասնագիտական պահանջների և տեխնոլոգիաների պահպանմամբ բուժում ստացած հիվանդության դեպքերի թվի հարաբերությունն է հիվանդության ընդհանուր | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | դեպքերի թվաքանակին(տոկոս) | | բաժին ներկայացնել բուժաշխատողների իրավունքների խախտման հետ կապված բողոքների վերաբերյալ տեղեկատվություն:<br>Ցուցիչ 6. Ցուցիչի արժեքի հաշվարկման համար տվյալները հավաքագրման փուլում են: Նախապատրաստվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագիծ, որով ՀՀ ԱՆ աշխատակազմի ստորաբաժանումներին հանձնարարվում է որոշակի ժամանակահատվածը մեկ ամփոփել և ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավական ապահովման բաժին ներկայացնել հիվանդների իրավունքների խախտման հետ կապված բողոքների վերաբերյալ տեղեկատվություն:<br>Ցուցիչներ 7-ի, 8-ի և 10-ի արժեքները հնարավոր է հաշվարկել միայն ԱԱՊ բնագավառում, որտեղ ներդրված են համապատասխան ստանդարտները: ՄԻԴԱՍ 3 էլեկտրոնային տեղեկատվական համակարգի տվյալների համաձայն՝ այդ գործակիցը ԱԱՊ բնակավառում կազմում է 61 տոկոս: Այլ բժշկական ստանդարտների և չափորոշիչների, որոնք հնարավորություն կտան հաշվարկել պահանջվող գործակիցները, ներդրման մասով մեկնաբանությունները բերված են ցուցիչ 4-ի մեկնաբանություններում:<br>Ցուցիչ 9. Բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից օգտվողների գոհունակության մակարդակը մատուցված ծառայություններից գնահատվել է 2009 թվականին իրականացված հետազոտությամբ, որն արտացոլվել է «Հայաստանի առողջապահության համակարգի գործունեության գնահատում 2009» զեկույցում: Մասնավորապես գնահատումն իրականացվել է «հարգանք», «հաղորդակցություն», «գաղտնիություն» և «ավտոմատություն» կատեգորիաներով: Մասնավորապես,<br>«Հարգանք» կատեգորիայի շրջանակներում հետազոտությունը ցույցն է տվել, որ Հայաստանում բուժծառայություններից օգտվողների 93%-ը գտնում են, որ բուժաշխատողները հարգալից են եղել իրենց հանդեպ, ֆիզիկական զննումները կատարել են առանձնացված պայմաններում: Նշված ցուցանիշը 2007 թվականին կազմել է 87%:<br>«Հաղորդակցություն» կատեգորիայի շրջանաններում հետազոտությունը ցույցն է տվել, որ Հայաստանում բուժծառայություններից օգտվողների 80%-ը գտնում են, որ բժիշկները բացատրել են իրավիճակը, ախտորոշումն ու բուժման ընթացքը, հնարավորություն ընձեռել իրենց հարցեր տալ և քննարկել հիվին վերաբերող խնդիրներ: Նշված ցուցանիշը 2007 թվականին կազմել է 61%:<br>«Գաղտնիություն» կատեգորիայի շրջանաններում հետազոտությունը ցույցն է տվել, որ Հայաստանում բուժծառայություններից օգտվողների 78%-ը գտնում են, որ իրենք համոզված են եղել, որ հիվանդության պատմությունը պահվել է գաղտնի, հնարավորություն են ունեցել զրուցել բժշկի հետ գաղտնի՝ առանց այլ անձանց մասնակցության: Նշված ցուցանիշը 2007 թվականին կազմել է 48%:<br>«Ավտոմատություն» կատեգորիայի շրջանաններում հետազոտությունը ցույցն է տվել, որ Հայաստանում բուժծառայություններից օգտվողների 98%-ը գտնում են, որ բժիշկը հասկանալի կերպով բացատրել է բուժման հնարավոր տեսակները, հաշվի է առել հիվանդի կարծիքը բուժօգնության տեսակների ընտրության հարցում: Նշված ցուցանիշը 2007 թվականին կազմել է 96%:<br>Ցուցիչ 10. Առաջարկվում է ցուցիչ 10-ը հանել, քանի որ այն նույնությամբ կրկնում է ցուցիչ 7-ին:<br>Իրավիճակը՝ բավարար<br>Առաջընթացը՝ բավարար<br>Առաջարկություններ՝ չկան | |
| 25. Ապահովել առողջապահության ոլորտում կադրերի մրցույթային ընտրությունը և բուժաշխատողներ | 25.1 Մշակել և ներդնել պետական ու համայնքային բժշկական հաստատություններում բուժանձնակազմի թափուր հաստիքների ընտրության մրցութային | 1. Բուժանձնակազմի օպտիմալ թվաքանակի չափորոշիչները սահմանված են<br>2. Պետական մասնակցությամբ | 1. Սահմանվել է բժշկական հաստատություններում բուժանձնակազմի թափուր հաստիքների ընտրության մրցութային կարգ (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Առկա պայմաններում առողջության առաջնային պահպանման օղակում բուժանձակազմի թվաքանակը պայմանավորված է սպասարկվող բնակչության թվաքանքանակով՝ համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1533-Ն որոշման և ՀՀ առողջապահության նախարարի հրամանների: Պետական մասնակցությամբ այլ բժշկական հաստատությունների բուժանձնակազմի օպտիմալ թվաքանակի չափորոշիչները դեռևս քննարկման փուլում են: | ՀՀ առողջապահության |
| | | | 2. Սահմանվել է բժշկական հաստատություններում | Ոչ | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| ի զբաղեցրած պաշտոններին նրանց համապատասխանությունը | համակարգ | բժշկական հաստատություններում բուժանձնակազմի թափուր հաստիքների ընտրության մրցութային կարգը ներդրված է | բուժանձնակազմի օպտիմալ թվաքանակի չափորոշիչները (այո/ոչ) | | Միաժամանակ, մասնավոր բժշկական հաստատությունների բուժանձնակազմի օպտիմալ թվաքանակի չափորոշիչների սահմանումը պետք է կատարվի հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի պահանջները:<br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ<br>Մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Հարյուր տոկոս` պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների բժշկական անձնակազմի ընտրության (նշանակման) մրցութային հանձնաժողովի ձևավորման, մրցույթի անցկացման օրինակելի կարգին և այդ ընտրության (նշանակման) հիման վրա բուժաշխատողի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Մշակված նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 22 արձանագրային որոշմամբ:<br>Ցուցիչ 1. Մեկնաբանությունները բերված են Արդյունք 2-ի շրջանակներում:<br>Առաջարկվում է ցուցիչում «բժշկական հաստատություններում» բառերից առաջ ավելացնել «պետական մասնակցությամբ» բառերը, քանի որ ընդունվելիք կարգը վերաբերելու է Հարյուր տոկոս` պետությանը սեփականության իրավունքով պատկանող փակ բաժնետիրական ընկերությունների բժիշկ-մասնագետների ընտրությանը /նշանակմանը/, իսկ մասնավոր բուժհաստատությունների բուժհանձնակազմի թափուր հաստիքների ընտրության մրցութային կարգը սահմանելիս անհրաժեշտ է ելնել ՀՀ Սահմանադրության 83,5 հոդվածի պահանջներից:<br>Ցուցիչ 2. Մեկնաբանությունները բերված են Արդյունք 1-ի շրջանակներում:<br>Առաջարկվում է ցուցիչում «բժշկական հաստատություններում» բառերից առաջ ավելացնել «պետական մասնակցությամբ» բառերը, քանի որ բժշկական հաստատություններում բուժանձնակազմի օպտիմալ թվաքանակի չափորոշիչները կարող են վերաբերել միայն պետական մասնակցությամբ բուժհաստատություններին, իսկ, իսկ մասնավոր բուժհաստատությունների բուժհանձնակազմի օպտիմալ թվաքանակի սահմանման նպատակահարմարության հարցը լրացուցիչ քննարկման կարիք ունի`հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 83,5 հոդվածի պահանջները:<br>Ցուցիչ 3. Պետական բուժաշխատողների նվազագույն աշխատավարձի միասնական դրույքաչափեր սահմանված են ԱԱՊ համակարգի բուժաշխատողների համար` պայմանավորված սպասարկվող բնակչության թվաքանակով: Միաժամակ, միասնական դրույքաչափեր են սահմանված ծննդօգնության պետական հավաստագրերի հիման վրա պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բուժաշխատողների համար:<br>Ցուցիչ 4. Ցուցիչի արժեքը հնարավոր չէ հաշվել, քանի որ դեռևս ներդրված չէ բուժաշխատողների ընտրության մրցութային կարգը:<br>Ցուցիչ 5. Ըստ «Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք 2010»-ի աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2009 թվականին կազմել է 96.019 ՀՀ դրամ /էջ 89/: Տեղեկագրքի «Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների 2009» բաժնի առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման բնագավառում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմում է 71.672 ՀՀ դրամ /էջ 92/:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| | | | 3. Սահմանվել են պետական բուժաշխատողների նվազագույն աշխատավարձի միասնական դրույքաչափեր (այո/ոչ) | Ոչ | | |
| | | | 4. Մրցույթային կարգով ընդունված բուժաշխատողների թվաքանակը ընդամենը ընդունվածների նկատմամբ/տոկոս/ | Տվյալները բացակայում են | | |
| | | | 5. Պետական բուժաշխատողների միջին աշխատավարձի հարաբերակցությունը հանրապետական միջինի նկատմամբ (տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| 26. Կրճատել դեղերի ստվերային շրջանառությունը և բարձրացնել դեղաշրջանառությ ան ոլորտի մասնագիտական | 26.1 Օրենսդրորեն կարգավորված է դեղաշրջանառության ոլորտի պետական հսկողությունը | 1.Դեղաշրջանառությա ն վերահսկման, այդ թվում` մոնիտորինգի և վերլուծության, մասնագիտացված կառույցը ստեղծված է, | 1.Ստեղծվել է դեղաշրջանառության վերահսկման, այդ թվում մոնիտորինգի և տվյալների հավաքագրման ու վերլուծության, մասնագիտացված կառույց | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1278-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 15-ի թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահության նախարարության աշխատակզմի կառուցվածքում, որի արդյունքում ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղագործական գործունեության կազմակերպման, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովման բաժինը վերանվանվել է դեղորայքային քաղաքականության բաժին, որի գործառույթների մեջ է | ՀՀ առողջապահության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| հսկողության արդյունավետությունը | | դրա գործունեության համար անհրաժեշտ ընթացակարգերը ներդրված են | (այո/ոչ)<br>2.Դեղերի որակի ստանդարտներին չհամապատասխանող և կեղծված դեղերի արտադրությունը և տարածումը քրեականացվել է (այո/ոչ)<br>3. Դեղերի որակին և հիվանդի առողջությանը սպառնացող մասնագիտական խախտումների համար կիրառված վարչական տույժեր (Յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի համար`բացարձակ թիվ)<br>4.Դեղերի ստվերային շրջանառության մակարդակը/տոկոս/ | <br>Այո<br>11<br>25% | մտնում նաև դեղաշրջանառության նկատմամբ վերահսկողության իրականացումը,այդ վերահսկողության քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը: Միաժամանակ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 734-Ն որոշման համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 02.05.2011թ. N 1069-Ա հրամանով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կազմում ստեղծվել է «Պատշաճ արտադրական գործունեության և պատշաճ բաշխման գործունեության (այսուհետ` ՊԱԳ/ՊԲԳ)» փորձագիտական բաժին:<br>Ցուցիչ 1. Ցուցիչը ստացել է իր արժեքը արդյունք 1-ի իրականացմամբ:<br>Ցուցիչ 2. ՀՀ քրեական օրենսգրքի 280-րդ հոդվածով արդեն իսկ պատասխանատվություն է նախատեսված առանց գրանցման կամ հատուկ թույլտվության (լիցենզիա) մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև կեղծ դեղեր պատրաստելու կամ իրացնելու համար:<br>Ցուցիչ 3. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ առողջապահության նախարարության կողմից դեղատնային կրպակներում իրականացված ստուգումների ընթացքում հայտնաբերված խախտումների արդյունքում նշանակված վարչական տույժերի հիման վրա: Մասնավորապես, ստուգվող դեղատնային կրպակներում բացի չգրանցված դեղերից որոնց համար ևս կիրառվել են պատասխանատվության միջոցներ, հայտնաբերվել են նաև պիտանիության ժամկետն անցած դեղեր: Դեղատների կամ դեղատնային կրպակների կողմից առևտրի համար նախատեսված սրահներում պիտանիության ժամկետն անցած դեղեր պահելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղեր ներմուծելու կամ արտադրելու կամ պահպանելու կամ բաշխելու կամ իրացնելու կամ կիրառելու համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.3 հոդվածի 3-րդ 5-րդ մասերով: Նշված իրավախախտման համար պատասխանատության միջոցներ կիրառելու իրավասությամբ օժտված են ՀՀ առողջապահության նախարարության մարմինները:<br>Բացի այդ, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի թիվ 594-Ա որոշման 1-ին կետով սահմանվել է, որ 2009 թվականի հունիսի 1-ից «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական մարմինները, բացառությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի, 2008 թվականի արդյունքներով մինչև 70 մլն դրամ շրջանառություն /ներառյալ ԱԱՀ-ն/ ունեցած ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ ստուգումներ չեն կարող իրականացվել, խախտումներ հայտնաբերելու նպատակով ՀՀ ԱՆ կողմից դեղատներում և դեղատնային կրպակներում համապատասխան ստուգումներ իրականացվել են բացառապես ՀՀ վարչապետի հանձնարարությամբ:<br>Ցուցիչ 4. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է հիմք ընդունելով 2010 թվականի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության հետ համատեղ իրականացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 27. Ապահովել դեղորայքի պետական գնումների և | 27.1 Հստակեցնել դեղերի գնումների գործընթացի կարգավորումը | 1. Դեղերի պետական գնման համար նախատեսվող | 1.Առողջապահության ոլորտի պետական բյուջեի հատկացումներում դեղերի պետական գնման համար | 6.5% | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Դեղերի պետական գնման համար նախատեսվող ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը առողջապահության ոլորտին պետական բյուջեի հատկացումներում 2009 թվականին կազմել է` | ՀՀ առողջապահության նախարարությ |

<table>
<tr><th>Ռազմավարության դրույթներ</th><th>Միջոցառում</th><th>Ակնկալվող արդյունք 2010թ</th><th>Մոնիտորինգի ցուցիչներ</th><th>Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը</th><th>Մեկնաբանություններ</th><th>Պատասխանատու մարմին</th></tr>
<tr><td rowspan="3">բաշխման կենտրոնացված գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը</td><td rowspan="3"></td><td rowspan="3">ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը առողջապահության ոլորտին պետական բյուջեի հատկացումներում ավելացվել է 20 տոկոսով<br>2. Դեղերի կենտրոնացված պետական գնումների գործնթացի թափանցիկությունը և հաշվետվողականությունը ապահովող ընթացակարգերը ներդրված են</td><td>նախատեսվող ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը (տոկոս)</td><td></td><td rowspan="3">66,087,610.21 ՀՀ դրամ՝ առողջապահության ոլորտին պետական բյուջեի հատկացումները, 3,095,715.1 ՀՀ դրամ՝ դեղագործական ապրանքների համար նախատեսված միջոցները:<br>2010 թվականին կազմել է՝<br>55,249,490.71 ՀՀ դրամ՝ առողջապահության ոլորտին պետական բյուջեի հատկացումները, 3,687,525.1 ՀՀ դրամ դեղագործական ապրանքների համար նախատեսված միջոցները:<br>Տվյալները հաշվարկվել են «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» և «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքների և ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1522-Ն որոշման հիման վրա:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ<br>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք բերվող դեղերի բաշխումը իրականացվում է ՀՀ բժշկական հաստատություններին եռամսյակային, անհրաժեշտության դեպքում ամսեկան կտրվածքով: Դեղերի բաշխումը իրականացվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության մարզերի և բուժհաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը ներկայացրած պետության կողմից կենտրոնացված կարգով հատկացված դեղերի եռամսյակային հաշվետվությունները՝ առկա մնացորդների, ծախսի, հաշվառված և դեղ ստացող հիվանդների թվի վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում առկա դեղերի մնացորդները և դրանց պիտանիության ժամկետները:<br>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք բերվող դեղերի բաշխումից հետո Հայաստանի Հանրապետության մարզպետարանի և Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության կողմից (ք.Երևանի քաղաքապետի և ՀՀ մարզպետի համաձայնությամբ), մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացվում կենտրոնացված կարգով հատկացված դեղերի ներմարզային և ներքաղաքային բաշխացուցակները, եռամսյակային և կիսամյակային հաշվետվությունները, որտեղ նշվում են բուժհաստատություններում դեղերի առկա մնացորդները, ծախսը, հաշվառված և դեղ ստացող հիվանդների թիվը, հիվանդների անձնական տվյալները, հասցեն, հատկացված դեղի քանակը: Ստացված տվյալները, ըստ եռամսյակների, ՀՀ ԱՆ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կողմից ամփոփվում են տեղեկատվական բազայում:<br>Դեղերի կենտրոնացված պետական գնումների գործնթացի թափանցիկությունը և հաշվետվողականությունը ապահովող ընթացակարգերի բարելավման ուղղությամբ գործընթացները դեռևս շարունակվում են: Վերահսկողության ընթացակարգերը կարգավորելու նպատակով մշակվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագիծ:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հիման վրա:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը հաշվարկելիս հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 23.11.2006թ. թիվ 1717-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի և ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մասնագետների եզրակացություններ, ինչպես նաև արդկյունք 2-ի մենաբանությունների մեջ նշված տեղեկատվական բազայում ներառված տվյալները:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Ցուցիչ 3. Ներկայացվել են համապատասխան կատարողական ակտեր՝ համաձայն</td><td rowspan="3">ուն, ՀՀ ֆինանսների նախարարություն, Պետական գնումների գործակալություն</td></tr>
<tr><td>2.Դիսպանսեր հսկողության վերցված հիվանդների համար կենտրոնացված կարգով <հատուկ նշանակության> դեղորայքի ծավալների և իրական անհրաժեշտ ծավալների հարաբերակցությունը/տոկոս/</td><td>65%</td></tr>
<tr><td>3.Դեղերի կենտրոնացված պետական գնումների մրցույթում հաղթած կազմակերպությունների կողմից ներկայացվել են կատարողական ակտեր(այո/ոչ)</td><td>Այո</td></tr>
</table>

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | պետական գնումների գործակալության և հաղթող կազմակերպության միջև կնքված պայմանագրի:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 28.Ապահովել ամբուլատոր պոլիկլինիկական հաստատություններում անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը | 28.1 Հստակեցնել Հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերի համար պետության կողմից փոխհատուցման համակարգի կարգավորումը և ներդնել համապատասխան ընթացակարգեր | 1. Հիմնական դեղերի ցանկի պարտադիր վերանայման չափորոշիչները և պարբերականությունը սահմանված է:<br>2. Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ձեռք բերման համար ֆինանսական սահմանաքանակները հաշվարկված են հաշվի առնելով իրական կարիքները: | 1.Սահմանվել են հիմնական դեղերի ցանկի պարտադիր վերանայման պարբերականությունը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեից ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններին` հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերի ձեռք բերման համար նախատեսված գումարների ավելացում տեղի չի ունեցել, իսկ հիմնական դեղերի ցանկի վերանայումը կարող էր առաջացնել լրացուցիչ ծախսեր պետական բյուջեի համար, չափորոշիչների մշակման գործընթացը դեռևս ընթացքի մեջ է:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ<br>Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ձեռք բերման համար ֆինանսական սահմանաքանակները հաշվարկելիս հաշվի է առնվում իրական կարիքները, սակայն պետական բյուջեից տրամադրվող միջոցների սակավության պատճառով դրանք միմյանց չեն համապատասխանում:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչ 1-ը կստանա իր արժեքը արդյունք 1-ի իրականացումից հետո:<br>Ցուցիչ 2. Մերժման հիմք են հանդիսացել այլ բուժհաստատությունների մասնագետների կողմից դեղերի նշանակումները, որոնք ընդգրկված չեն «Հիմնական դեղերի ցանկում», ինչպես նաև նորագույն, վերջին սերնդի թանկարժեք դեղերի նշանակումները:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Ցուցիչ 3. Դեղորայքի բաշխման հետ կապված բոլոր դիմում բողոքներում նշված փաստական հանգամանքները պարզելու և խախտումները վերացնելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ, տրվել անհրաժեշտ հանձնարարականներ և միջոցներ ձեռնարկվել անձանց խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | ՀՀ առողջապահության նախարարություն, |
| | | | 2.Ամբուլատոր պոլիկլինիկաներում անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց մերժման դեպքերի թիվը ընդհանուր դեպքերի նկատմամբ/տոկոս/ | 20% | | |
| | | | 3.Դեղորայքի բաշխման հետ կապված դիմում բողոքներին արձագանքման մակարդակը (տոկոս) | 100% | | |
| 29.Ապահովել մարդասիրական օգնության շրջանակներում դեղերի ստացման, պահպանման և բաշխման թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը | 29.1 Հստակեցնել մարդասիրական խողովակներով ներկրվող դեղերի ստացման, պահպանման և բաշխման ընթացակարգերը և ապահովել դրանց թափանցիկությունը | 1. Մարդասիրական օգնության շրջանակներում դեղերի ստացման, պահպանման և բաշխման նկատմամբ պատշաճ վերահսկողության ընթացակարգերը սահմանված են | 1.Մարդասիրական օգնության շրջանակներում ստացված դեղատեսակների համապատասխանության աստիճանը պետության կողմից հաստատված հիմնական դեղերի ցանկին (տոկոս) | 20% | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Մարդասիրական օգնության շրջանակներում դեղերի ստացման, պահպանման և բաշխման նկատմամբ վերահսկողության ընթացակարգերը կարգավորված են ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 14-ի <<Մարդասիրական օգնության կարգով Հայաստանի Հնարապետության առողջապահության նախարարության անունով ստացվող դեղերի և բժշկական նշանակության ապրանքների պատվերի ձևավորման, ստացման, հաշվառման և բաշխման գործընթացը կանոնակարգելու մասին>> թիվ 1432-Ն որոշմամբ: Անհրաժեշտ ընթացակարգերը ներդնելու առումով աննպատակահարմար է համարվել ՀՀ կառավարության 14.10.2004թ. թիվ 1432-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, մշակվել և շրջանառության մեջ է դրվել համապատասխան գործընթացները կարգավորող կարգը հաստատելու վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագիծ:<br>Ցուցիչ 1. 2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում մարդասիրական օգնության շրջանակներում ստացված դեղերի ընդհանուր քանակը համաեատելով ՀՀ | ՀՀ առողջապահության նախարարություն,<br>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |
| | | | 2.Կիրառություն չգտած և դուրս գրման ենթակա դեղորայքի տոկոսը ընդամենը մարդասիրական խողովակով ստացված դեղորայքի ծավալում | 0 % | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | (տոկոս) | | առողջապահության նախարարի 16.05.2007թ. թիվ 854-Ն հրամանով հաստատված ՀՀ հիմնական դեղերի ցանկի հետ:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է 2010 թվականի առաջին եռամսյակում ընդամենը մարդասիրական խողովակով ստացված դեղերի ծավալը համեմատելով կիրառություն չգտած և դուրս գրման ենթակա դեղերի ծավալի հետ:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ Աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 30. Ապահովել ներհիվանդանոցային դեղաշրջանառության թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը | 30.1 Վերանայել բուժհաստատություններում ներհիվանդանոցային դեղաշրջանառությունը կարգավորող ընթացակարգերը: | 1.Հիվանդանոցային դեղաթերապևտիկ կոմիտեների գործունեության ընթացակարգերը հստակեցված են և դրանց գործունեության հանդեպ սահմանված է արտաքին վերահսկողություն<br>2.Դեղաբուժության օպտիմալ սխեմաները ներդրված են և դրանց կիրառման նկատմամբ մասնագիտական վերահսկողությունը սահմանված է | 1.Վճարովի սկզբունքով իրականացվող բուժօգնության գնի մեջ պարտադիր կերպով ներառված են դեղորայքային ծախսերը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Հիվանդանոցային դեղաթերապևտիկ կոմիտեների գործունեության ընթացակարգերը, կազմը, կառուցվածքը, գործառույթները և գործունեության մեխանիզմները սահմանված չեն, առաջարկվում է մշակել համապատասխան կանոնակարգեր:<br>Արդյունք 2.Իրականացված է ամբողջությամբ<br>Դեղաբուժության օպտիմալ սխեմաները նախատեսվել են 2010 թվականին ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված չափորոշիչներում:<br>Ցուցիչ 1.Բժշկական օգնություն և սպասարկում իրակացնող կազմակերպություններին առաջարկվել է վճարովի սկզբունքով իրականացվող բուժօգնության գնի մեջ պարտադիր կերպով ներառել դեղորայքային ծախսերը, այժմ իրականացվում են դիտարկումներ` պարզելու համար արդյոք տրված հանձնարարականը կատարվել է: Միաժամանակ կարևորվում է այն հանգամանքը, որ նշված առաջարկի կատարումը պարտադիր բնույթ կրել չի կարող, քանի որ ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի համաձայն` բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները:<br>Ցուցիչ 2. Տվյալները բացակայում են<br>Հիվանդներին նշանակված և վերջիններիս կողմից ձեռք բերված դեղորայքի ծավալների հարաբերակցությունը պարզելու համար իրականացվում են դիտարկումներ:<br>Ցուցիչ 3. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններից ոչ մեկում դեխաթերապևտիկ կաբինետներ չեն գործում:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | | | 2.Հիվանդներին նշանակված և վերջիններիս կողմից ձեռք բերված դեղորայքի ծավալների հարաբերակցությունը(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| | | | 3. Բժշկական հաստատությունների (որտեղ գործում են դեղաթերապևտիկ կաբինետներ) տեսակարար կշիռը բուժհաստատությունների ընդհանուր թվաքանակում (տոկոս) | 0 % | | |
| 31.Ապահովել դեղերի ոչնչացման գործընթացի օրինականությունը | 31.1 Սահմանել ԱՀԿ-ի երաշխավորություններին համապատասխան ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի անվտանգ ոչնչացման կարգ | 1.Ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի անվտանգ ոչնչացման կարգը սահմանված է<br>2. Ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի անվտանգ ոչնչացման կարգի կիրարկման հանդեպ վերահսկողության և պատասխանատվու-թյան ընթացակարգերը սահմանված են | 1. Ընդունվել է «Դեղերի մասին>> ՀՀ օրենքից բխող ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի պարտադիր ոչնչացման կարգը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի անվտանգ ոչնչացման գործընթացները և վերահսկողությունն իրականացվում են համաձայն ՀՀ առողջա-պահության նախարարի 04.03.2008թ. թիվ 03-Ն հրամանի, որը մշակվել է ԱՀԿ երաշխավորություններին համապատասխան:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>Ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի անվտանգ ոչնչացման կարգի կիրարկման հանդեպ վերահսկողության և պատասխանատվության միջոցների կիրառման ընթացակարգերը սահմանված են <<Հայաստանի Հանրապետությունունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքներով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով:<br>Ցուցիչ 1. ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ մշակվել է <<Օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման կարգ>>, որի վերաբերյալ ՀՀ | ՀՀ Բնապահպանության նախարարություն<br>ՀՀ Առողջապահության նախարարություն |
| | | | 2.Բուժհաստատություններում կուտակված ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղորայքի արժեքային հարաբերությունը առկա դեղորայքի պաշարների արժեքին (տոկոս) | 0.01% | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | արդարադատության նախարարությունը տվել է է բացասական կարծիք:<br>Իրավիճակի քննարկման համար ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի 25.08.2008թ, թիվ 05-2577 հանձնարարականի հիման վրա կազմակերպվել է քննարկում ՀՀ արդարադատության, բնապահպանության և առողջապահության նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկումների արդյունքում որոշվել է, որ ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 14-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված <<Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ>> թիվ 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը կարգավորում են նաև օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման ընթացակարգերը:<br>Առաջարկվում է քննարկել ցուցիչը վերասահմանելու կամ հանելու հարցը:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից տրամադրված տվյալների հիման վրա:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ Աշխատակազմի դեղագործական գործունեության կազմակերպման, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովման բաժնի կողմից:<br>Իրավիճակը՝ բավարար<br>Առաջընթացը՝ բավարար<br>Առաջարկություններ՝ չկան | |
| 32.Ապահովել շտապ բժշկական օգնության ծրագրի պատշաճ ֆինանսավորումը | 32.1 Առողջապահության բյուջեյով նախատեսել պատշաճ ֆինանսավորում պետական պատվերով շտապ բժշկական օգնության կանչերի համար: | 1. Շտապ բժշկական օգնության կանչերի համար սահմանված են իրատեսական գներ: | 1.Պետական պատվերով իրականացվող շտապ բժշկական օգնության կանչերի համար սահմանված գները բարձրացվել են հիսուն տոկոսով(այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Քանի որ շտապօգնության ծառայության բարեփոխումների ծրագիրը դեռևս մշակման փուլում է և հարցը նախատեսվում է լուծել 2011 թվականից:<br>Ցուցիչ 1. Շտապօգնության ծառայության գների բարձրացում նախատեսվում է 2011 թվականից, որի համար նախատեսված են լրացուցիչ միջոցներ: Գների աճը կկազմի շուրջ 100 տոկոս: Ներկա դրությամբ պետական պատվերով իրականացվող շտապ բժշկական օգնության կանչերի համար սահմանված գները տատանվում են մինիում 4000-ից 4800 ՀՀ դրամի սահմաներում և 2011 թվականի համար նախատեսված է այն բարձրացնել շուր երկու անգամ:<br>Իրավիճակը՝ բավարար<br>Առաջընթացը՝ բավարար<br>Առաջարկություններ՝ չկան | ՀՀ առողջա-պահության նախարարու-թյուն,<br><br>Երևանի քաղաքապետ արան, ՀՀ մարզպետարա ններ |
| 33. Բարձրացնել շտապ բժշկական օգնության համակարգի արդյունավետությո ւնը, թափանցիկություն ն ու հաշվետվողականտ ությունը | 33.1 Սահմանել շտապ բժշկական օգնության պետական պատվերի կատարողականի նկատմամբ խիստ վերահսկողություն | 1. Շտապօգնության ծառայությունից բնակչության բավարարվածության աստիճանը գնահատված է (համապատասխան հարցումներն իրականացված են)<br>2. Իրենց կառուցվածքում շտապօգնության ծառայություն ունեցող բժշկական հաստատություններու մ տեղադրված է պետական պատվեր | 1. Շտապ բժշկական օգնության ծրագրով նախատեսված բյուջետային ֆինանսավորման ծավալները ՀՀ պետական բյուջեի առողջապահական ծրագրերի ընդհանուր կազմում (տոկոս)<br>2. Շտապօգնության չարդարացված կանչերի թիվը ընդամենը կանչերի նկատմամբ (տոկոս)<br>3. Շտապօգնության ծառայություն ունեցող բժշկական հաստատությունները մասնակցում են | 2,65%<br>1.5 %<br>Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Շտապօգնության ծառայությունից բնակչության բավարարվածության աստիճանը գնահատված է, թեև չեն իրականացված լրացուցիչ հարցումներ: Բնակչության կողմից արտահայտված դժգոհությունները հաշվի կառնվեն ծառայության բարեփոխումների ժամանակ:<br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ<br>Շտապօգնության ծառայություն ունեցող բժշկական հաստատությունների մի մասում տեղադրված է պետական պատվեր նպատակային ձևով, մեկ աղբյուրից գնման ընթացակարգով: Մասնավորապես, պետական պատվեր տեղադրված է շտապօգնության ծառայություն ունեցող բոլոր պետական բուժհաստատություններում, իսկ մասնավոր բուժհաստատություններում այդ ծառայության գծով պետական պատվեր տեղադրված չէ, քանի որ վերջիններս հայտ չեն ներկայացրել և չեն մասնակցել այդ ծառայության գծով պետական պատվերի տեղադրման մրցույթին:<br>Ցուցիչ 1. Շտապ բժշկական օգնության ծրագրով նախատեսված բյուջետային ֆինանսավորման ծավալները ՀՀ պետական բյուջեի առողջապահական ծրագրերի ընդհանուր կազմում կազմում է 1, 442,000.0 ՀՀ դրամ դրամ , ինչը կազմում է ՀՀ պետական բյուջեի առողջապահական ծրագրերի ընդհանուր ծախսերի՝ 55, 249,490.71 ՀՀ դրամի 2.65 տոկոսը:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական | ՀՀ առողջապահության նախարարություն,<br>Երևանի քաղաքապետ արան, ՀՀ մարզպետարա ններ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | շտապօգնության պետական պատվերի մրցույթներին (այո/ոչ) | | գործակալության կողմից:<br>Ցուցիչ 2. Էլեկտրոնային տեղեկատվական ՄԻԴԱՍ համակարգում շտապօգնության չարդարացված կանչերի ցուցանիշ առայժմ չկա առկա է միայն կեղծ կանչեր ցուցանիշը, որը համաձայն հաստատված կարգի չպետք է գերազանցի ընդհանուր կանչերի 2 տոկոսը և 2010 թվականի ընդհանուր կանչերի մեջ այն կազմել է 1,5 տոկոս:<br>Միաժամանակ առաջարկվում է հստակեցնել ցուցիչում օգտագործված «չարդարացված կանչ» հասկացությունը և անհրաժեշտության դեպքում այն փոխարինել «կեղծ կանչ» հասկացությամբ:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 3. Շտապօգնության ծառայություն ունեցող պետական բուժհաստատությունները մասնակցում են շտապօգնության պետական պատվերի մրցույթներին և պատվերը տեղադրվում է նպատակային ձևով, մեկ աղբյուրից գնման ընթացակարգով: Շտապօգնության ծառայություն ունեցող մասնավոր բժշկական հաստատությունները շտապօգնության պետական պատվերի մրցույթներին մասնակցելու հայտ չեն ներկայացրել և մրցույթներին չեն մասնակցել:<br>Առաջարկվում է ցուցիչը վերասահմանել «բժշկական հաստատությունները» բառերից առաջ նշելով «պետական մասնակցությամբ» բառերը, քանի որ որևէ կերպ հնարավոր չէ շտապօգնության ծառայություն ունեցող մասնավոր բուժհաստատություններին պարտավորեցնել մասնակցել այդ ծառայության գծով պետական պատվերի տեղադրման մրցույթներին, ինչի արդյունքում ցուցիչի արժեքը մշտապես կլինի բացասական:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 34. Բարձրացնել ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը | 34.1 Ապահովել ամբուլատոր – պոլիկլինիկական բուժհաստատության գործունեության արդյունավետությունը | 1. Հիվանդներին պոլիկլինիկաներից ստացիոնար բուժհաստատություններ անհարկի ուղեգրումների նկատմամբ վերահսկողական մեխանիզմները ներդրված են<br>2. ԱԱՊ համակարգում ապացուցողական բժշկության վրա հիմնված կլինիկական ուղեցույցերն ու չափորոշիչները ներդրված են<br>3. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ծառայությունների համար իրատեսական գները սահմանված են<br>4. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական | 1. ԱԱՊ համակարգում ներդրվել են ապացուցողական բժշկության վրա հիմնված կլինիկական ուղեցույցեր և չափորոշիչներ (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Հիվանդներին պոլիկլինիկաներից ստացիոնար բուժհաստատություններ անհարկի ուղեգրումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով հանձնարարվել է Երևան քաղաքի և ՀՀ մարզպետարանների առողջապահության վարչություններին խստացնել անհիմն ուղեգրումների նկատմամբ հսկողությունը պոլիկլինիկաների և ամբուլատորիաների նկատմամբ: Հիվանդի հոսպիտալիզացիայի անհրաժեշտության վերջնական որոշումը վերապահված է հիվանդանոցային ծառայություններին: Վերահսկողական մեխանիզմներ են համարվում նաև բուժհաստատությունների սահմանափակված բյուջեները, որից ավել բուժհաստատությունները չեն ֆինանսավորվում, ինչը աստիճանաբար առավել զսպողական դեր է խաղում:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>ԱԱՊ համակարգում ապացուցողական բժշկության վրա հիմնված անհրաժեշտ կլինիկական ուղեցույցերն ու չափորոշիչները ներդրված են: Մասնավորապես ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 40-Ա հրամանով հաստատվել են «Առողջության առաջանային պահպանման օղակի բուժքրոջ կլինիկական ուղեցույցները և վարման ընթացակարգերը», իսկ 2010 թվականի փետրվարի 16-ի թիվ 191-Ա հրամանով հաստատվել են «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի համար առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման կլինիկական ուղեցույցները»:<br>Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ<br>Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ծառայությունների առանձին տեսակների համար (լաբորատոր-գործիքային հետազոտություններ, ԱԱՊ 1 բնակչի հաշվով ֆինանսավորման նորմատիվներ, նեղ մասնագիտացված կաբինետների ֆինանսավորում և այլն) մշակված են իրատեսական գներ: Նշված գները դեռևս չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, սակայն դրանք համահունչ են ՀՀ տարածքում վարձատրման և գնագոյացման սկզբունքներին: Նշված գները կիրառվում են | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | | | 2. ԱԱՊ համակարգում ընտանեկան բժշկի և նեղ մասնագետների աշխատավարձն ու խրախուսման ֆինանսավորումը իրականացվում է մատուցած ծառայությունների որակի և բուժման արդյունքի գնահատման հիման վրա (այո/ոչ) | Այո | | |
| | | | 3. Պոլիկլինիկաներից, ստացիոնար բժշկական օգնություն ստանալու համար, հիվանդների ուղեգրվման դեպքերի հարաբերակցությունը ընդհանուր դեպքերի նկատմամբ (տոկոս) | 80% | | |
| | | | 4. ԱԱՊ համակարգում | 61% | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ծառայությունների կատարողականի հիման վրա ֆինանսավորման ցուցանիշները սահմանված են. | նիրաժեշտ ծավալով և համապատասխան տեխնոլոգիաների պահպանմամբ իրականացված բուժօգնության դեպքերի հարաբերությունը ամբուլատոր պոլիկլինիկական ծառայությունների ընդհանուր դեպքերի թվին (տոկոս) | | գործնականորեն և արտացոլված են պետական պատվերի պայմանագրերում: 2010 թվականին նորմատիվների և գների աճ տեղի չի ունեցել բյուջեի ծավալների աճի բացակայության պատճառներով:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Արդյունք 4. Իրականացված է ամբողջությամբ<br>Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ծառայությունների կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ցուցանիշները սահմանված են ՀՀ առողջապահության նախարարի 03,05,2010թ. Թիվ 695-Ա հրամանով:<br>Ցուցիչ 1. ԱԱՊ համակարգում ապացուցողական բժշկության վրա հիմնված անհրաժեշտ կլինիկական ուղեցույցերն ու չափորոշիչները ներդրված են: Մասնավորապես ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 40-Ա հրամանով հաստատվել են «Առողջության առաջնային պահպանման օղակի բուժքրոջ կլինիկական ուղեցույցները և վարման ընթացակարգերը», իսկ 2010 թվականի փետրվարի 16-ի թիվ 191-Ա հրամանով հաստատվել են «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի համար առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման կլինիկական ուղեցույցները»:<br>Ցուցիչ 2. 2010 թվականի հունվարից ներդրվել է ընտանեկան բժշկի, տեղամասային թերապևտի, մանկաբույժի աշխատանքի ֆինանսավորման և վարձատրման խրախուսական մեթոդը՝ ըստ մատուցված ծառայությունների ներկայացվում են հաշվետվություններ: Աշխատանքների փաստացի գնահատումը կկատարվի տարվա արդյունքները ամփոփելուց հետո: Նշված հարցը կանոնակարգված է ՀՀ առողջապահության նախարարի 30.11.2009թ. թիվ 1845-Ա հրամանով: Մատուցած ծառայությունների որակի և բուժման արդյունքի գնահատումն իրականացվելու է յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար վարվող հաշվետվությունների հիման վրա՝ ելնելով սահմանված կլինիկական ուղեցույցերի և չափորոշիչների պահանջներից:<br>Ցուցիչ 3. Հայաստանի բնակչության զգալի հատված շտապ բուժօգնություն չպահանջող դեպքերում ինքնուրույն է գնում հիվանդանոց: Պոլիկլինիկական հաստատություններից ստացիոնար բժշկական օգնություն ստանալու համար հիվանդների ուղեգրման դեպքերի թվի հարաբերակցությունը ստացիոներ ընդհանուր դեպքերի թվի նկատմամբ կազմում է 12 տոկոս:<br>Ցուցիչ 4. Տվյալները վերցվել են ՄԻԴԱՍ 3 էլեկտրոնային տեղեկատվական համակարգից:<br>Տվյալները տրամադրվել է ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Իրավիճակը՝ բավարար<br>Առաջընթացը՝ բավարար<br>Առաջարկություններ՝ չկան | |
| 35. Բարձրացնել հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը | 35.1 Բարձրացնել հիգիենիկ և հակահամաճարակային ոլորտում վերահսկողության արդյունավետությունը | 1. “ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին” ՀՀ օրենքի նախագիծը վերանայված ու փոփոխված է<br>2. ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքը ընդունվել է | 1. Հանրային առողջության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքը ընդունվել է(այո/ոչ):<br>2. Հանրային առողջության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքի պահանջների կիրարկումն ապահովող ընթացակարգերը սահմանված են (այո/ոչ):<br>3. Մշակված և ներդրված են համակարգում կիրառվող | Ոչ<br>Ոչ<br>Ոչ | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Հաշվի առնելով շահագրգիռ մարմինների կարծիքները՝ «ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը վերանայվել, փոփոխվել և ներկայացվել է ՀՀ կառավարություն:<br>Արդյունք 2. Իրականացված չէ<br>«ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն:<br>Ցուցիչ 1. Ցուցիչը կստանա իր արժեքը միայն Արդյունք 2-ի իրականացումից հետո:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել «ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո:<br>Ցուցիչ 3. Համակարգում կիրառվող հաշվետվության նոր ձևերի և հաշվառման ձևաթղթերի հիմնական մասի մշակումը և ներդրումը կարող է իրականացվել միայն «Հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: | ՀՀ առողջապահության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հաշվետվության նոր ձևերը և հաշվառման ձևաթղթերը: | | Ցուցիչ 4. Նորմատիվ իրավական ակտերի մշակման գործընթացը շարունակական բնույթ է կրում է, յուրաքանչյուր տարի սանիտարական օրենսդրության դաշտը համալրվում է համապատասխան նորմատիվ փաստաթղթերով, և հնարավոր չէ սպառիչ կերպով սահմանել մշակման ենթակա բոլոր նորմատիվ իրավական ակտերի ցանկը: Չնայած նշված հանգամանքին` հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և հաստատվել է 22 նորմատիվ իրավական ակտ:<br>Առաջարկվում է ցուցիչը վերասահմանել այնպես, որ հնարավոր լինի այն գնահատել:<br>Ցուցիչ 5. Ցուցիչի արժեքը հնարավոր չէ հստակ հաշվել, քանի որ պարզ չէ, թե որ ստանդարտներին համապատասխանության տեսանկյունից պետք է խմբավորել իրականացված հետազոտությունները: Միաժամանակ, հարկ է նշել, որ իրականացված լաբորատոր հետազոտությունների ընդհանուր թվաքանակում ժամանակակից տեխնոլոգիաների և միջազգային հեղինակավոր կառույցների երաշխավորությունների կիրառմամբ իրականացված լաբորատոր հետազոտությունները կազմում են մատ 35 տոկոս:<br>Ցուցիչ 6. Ցուցիչի արժեքը ներկայումս հնարավոր չէ գնահատել, քանի որ ի կատարումն ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի 594-Ն որոշման` ներկայումս 2008 թվականի արդյունքներով մինչև 70 մլն դրամ շրջանառություն (ներառյալ ավելացված արժեքի հարկը) ունեցած ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ տեսչությունը ստուգումներ չի իրականացնում: Այդ պատճառով ՀՀ կառավարության սահմանված կարգով պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների ենթակա անձանց վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարությունը ամփոփ և ճշտված տեղեկատվություն չունի: Վերոգրյալ հարցի լուծում կարող էր դիտարկվել այդ տեղեկատվության ստացումը տնտեսավարող սուբյեկտներից` գրավոր հարցման միջոցով: Սակայն «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն` տնտեսվարողից սուբյեկտների աշխատողների թիվը համարվում է հարկային գաղտնիք, որպիսի տեղեկություններ տնտեսավարող սուբյեկտներից պահանջելն անընդունելի է` համաձայն ՀՀ վարչապետի 2010 թվականի ապրիլի 22-ի թիվ 02/23.4/4524-10 հանձնարարականի:<br>Անհրաժեշտ է մշակել պարբերական բժշկական զննություն անցած աշխատողների և ենթակա քանակակազմի վերաբերյալ տվյալների հավաքագրման մեխանիզմ<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| | | | 4. Սահմանված կարգով հաստատված նորմատիվ իրավական փաստաթղթերի տեսակարար կշիռը մշակման ենթակա նորմատիվ իրավական փաստաթղթերի ընդհանուր թվաքանակում /տոկոս/: | տվյալները բացակայում են | | |
| | | | 5. Ստանդարտացված լաբորատոր հետազոտությունների տեսակարար կշիռը լաբորատոր հետազոտությունների ընդհանուր թվաքանակում /տոկոս/: | տվյալները բացակայում են | | |
| | | | 6. Պարբերական բժշկական զննություն անցած աշխատողների մասնաբաժինը ենթակա քանակակազմի մեջ /տոկոս/ | տվյալները բացակայում են | | |

### 3.7 Դատական համակարգ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 36. Ընդլայնել վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառումը | 36.1 Հստակեցնել ընտանեկան, աշխատանքային վեճերով արբիտրաժի կիրառման օրենսդրական շրջանակները | 1.ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, ՀՀ աշխատանքային օրենսգրքում  եւ ընտանեկան օրենսգրքում փոփոխությունների նախագծեր | 1.Արբիտրաժային ընթացակարգով լուծված գործերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում դատական գործերի ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան: | Արդյունք 1. Կատարված չէ:<br>Գտնում ենք, որ ընտանեկան, աշխատանքային վեճերով արբիտրաժի ինստիտուտի ներդրման հետ կապված օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը չկա, քանի որ ելնելով ընտանեկան և աշխատանքային վեճերի առանձնահատկություններից (ալիմենտային պարտավորություններ. ամուսնական պայմանագրից բխող վեճեր, երեխաների դաստիրակության հետ կապված վեճեր, ծնողական պարտականություններից բխող վեճեր, կոլեկտիվ պայմանագրի հետ կապված վեճեր և այլն) դրանք կարող են քննության  առնվել և լուծվել միայն դատական կարգով:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեխանիզմներ չկան: Այդպիսի մեխանիզմի ստեղծումն իրատեսական չէ, քանի որ արբիտրաժային վեճերի քանակի հաշվառում իրականացնել հնարավոր չէ:<br><br>Ցուցիչ 2. Ցուցիչի հաշվարկը հնարավոր չէ, քանի որ այն հիմնված է Ցուցիչ 1-ի վրա:<br><br>Առաջարկվում է միջոցառումների ցանկից հանել 36-րդ կետը: | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ դատական դեպարտամենտ |
| | | | 2.Արբիտրաժային կարգով վեճերի լուծման   աճ | Տվյալներ չկան: | | |
| 37.Բարելավել դատավորի գործունեության նյութական երաշխիքները՝ միաժամանակ խստացնելով դատական իշխանություն իրականացնելիս թույլ տված խախտումների համար պատասխանատվությունը | 37.1 Միջոցներ ձեռնարկել ընդհանուր իրավասության դատարանների դատավորների աշխատավարձի դրույքաչափի բարձրացման ուղղությամբ | 1.Դատավորների գործունեության նյութական երաշխիքների միջազգային փորձի ուսումնասիրություններ | 1.Դատական համակարգում աշխատողների միջին աշխատավարձ, տոկոս՝ մասնավոր իրավաբանական ընկերություններում աշխատողների միջին աշխատավարձի նկատմամբ (ԱՀՌԾ Սոցիալական և քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն. մոնիտորինգի ցուցանիշներ e1.2 ցուցանիշ) | Տվյալներ չկան: | Արդյունք 1. Կատարվել է ամբողջությամբ:<br>ՀՀ Արդարադատության  նախարարությունում կատարվել է ÙÇç³ ½³ ÛÇÝ÷ áñÓh ուõëáõÙն³ ëÇñություն ¨ Ï³ ½Ù »É¿ ï »Õ»Ï³ Ýù áõëáõÙÝ³ ëÇñáõÃÛ Ý³ ñ¹ ÛáõÝùÝ»ñÇ և համապատասխան առաջարկությունների վերաբերյալ:<br><br>Ցուցիչ 1. Մասնավոր իրավաբանական ընկերություններում աշխատողների միջին աշխատավարձի վերաբերյալ տվյալները չեն հավաքագրվում պետական մարմինների կողմից: | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ դատական դեպարտամենտ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 37.3 Խստացնել արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեության ցանկացած ձևով միջամտելու համար քրեական պատասխանատվությունը | 1.ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխությունների նախագիծ՝ դատավորի կողմից կաշառք ստանալու, շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու, արդարադատության իրականացմանը ցանկացած ձևով միջամտելու համար: | 1.Մշակվել է ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխությունների նախագիծ՝ դատավորի կողմից կաշառք ստանալու, շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու, արդարադատության իրականացմանը ցանկացած ձևով միջամտելու համար (այո/ոչ) | Այո | Արդյունք 1: Կատարվել է ամբողջությամբ:<br>ՌõëáõÙÝ³ ëÇñí »É¿ ÙÇç³ ½ ³ ÛÇÝ÷ áñÓÁ, որի հիման վրա մշակվել են «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների ն³ խ· ծերը: Վերոգրյալ նախգծերը ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել են 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՕ-9, ՀՕ-10):<br><br>Ցուցիչ 1-ի արժեքը պայմանավորված է նրանով, որ համապատասխան իրավական ակտերն արդեն ընդունված են:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ |
| 38. Ապահովել դատավորների շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրման թափանցիկությունը և վերահսկելիությունը | 38.1 Բարձրացնել ԴՆԽ էթիկայի հանձնաժողովի դերը դատավորների ֆինանսական միջոցների թափանցիկության ապահովման գործում, այդ թվում` սահմանել քաղաքացիների և ֆիզիկական անձանց հաղորդումների հիման վրա էթիկայի հանձնաժողովի կողմից դատավորների ֆինանսական թափանցիկության հարցեր քննարկելու կարգն ու սահմանել համապատասխան ընթացակարգեր | 1.Քաղաքացիների և ֆիզիկական անձանց հաղորդումների հիման վրա էթիկայի հանձնաժողովի կողմից դատավորների ֆինանսական թափանցիկության հարցեր քննարկելու կարգը սահմանված է<br><br>2.Դատավորների, եկամուտների և գույքի հայտարարագրերը տեղակայված են դատական իշխանության պաշտոնական կայքում | Դատավորների գույքի և եկամուտների, ինչպես նաև շահերի հայտարարագրման հետ կապված ԴՆԽ էթիկայի հանձնաժողովի կողմից քննարկված դեպքերի քանակական հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԴՆԽ էթիկայի հանձնաժողովի կողմից քննարկված գործերի ընդհանուր թվին | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br>ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովում հաղորդումների քննարկման կարգը սահմանված է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 13.11.2006թ. թիվ 08Լ որոշմամբ, որով հաստատված հավելվածի համաձայն`<br>ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովում ստացված հաղորդման ուսումնասիրությունը հանձնաժողովի նախագահը հանձնարարում է Հանձնաժողովի անդամներից մեկին կամ ստանձնում է անձամբ /զեկուցող/:<br>Զեկուցողը հաղորդման վերաբերյալ ողջամիտ ժամկետում կատարում է ուսումնասիրություն` դատավորին ծանոթացնում հաղորդման բովանդակությանը, պահանջում համապատասխան նյութեր, առաջարկում դատավորին տալ գրավոր պարզաբանում, կազմում որոշման նախագիծ և ներկայացնում Հանձնաժողովի քննարկմանը:<br>Հանձնաժողովն իր քննարկանը ներկայացված հաղորդման վերաբերյալ կարող է պահանջել լրացուցիչ նյութեր, հրավիրել հաղորդում ներկայացնողին, դատավորին, այլ շահագրգիռ անձանց և առաջարկել ներկայացնել նյութեր և տալ բացատրություն:<br>Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ընդունում է որոշում:<br>Արդյունք 2. Իրականացված է մասնակիորեն:<br>Դատավորների ֆինանսական միջոցների թափանցիկության ապահովման գործում ՀՀ ԴՆԽ էթիկայի հանձնաժողովի դերի բարձրացման կապակցությամբ հարկ է նշել, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո վերոհիշյալ գործառույթի արդիականությունն արդեն բացակայում է, քանի որ հիշյալ օրենքով կարգավորվում են նաև դատավորների գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն`բարձրաՍտիճան | ՀՀ դատական դեպարտամենտ ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | պաշտոնատար անձինք Սույն Օրենքով նախատեսված կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների հայտարարագրեր:<br>Ինչ վերաբերում է դատական իշխանության պաշտոնական կայքում դատավորների եկամուտների և գույքի հայտարարագրերի տեղակայված լինելուն, ապա պետք է նշել, որ ՀՀ դատական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր դատավորի վերաբերյալ կազմվում և վարվում է անձնական գործ: Դատավորի անձնական գործը վարում է Դատական դեպարտամենտը: Դատավորի անձնական գործը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները՝ դատավորի և իր հետ փոխկապակցված անձանց գույքի եւ եկամուտների տարեկան հայտարարագիրը:<br>Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի անձնական գործում եղած տեղեկությունները հրապարակման ենթակա չեն: Դատավորից բացի, նրա անձնական գործին իրավունք ունեն ծանոթանալու Հանրապետության Նախագահը, վճռաբեկ դատարանի նախագահը, համապատասխան դատարանի նախագահը, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող անձը, Արդարադատության խորհրդի անդամները, Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի անդամները:<br>Ցուցիչ 1. 2010 թվականի ընթացքում քաղաքացիների և ֆիզիկական անձանց հաղորդումների հիման վրա էթիկայի հանձնաժողովի կողմից դատավորների ֆինանսական թափանցիկության հարցեր չեն քննարկվել:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար | |
| 39. Բարելավել դատավորների թեկնածուների նախնական ուսուցման և դատավորների վերապատրաստման գործընթացը | 39.1Միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան երկարաձգել ՀՀ Դատական դպրոցում ուսուցման, այդ թվում` դատարաններում փորձաշրջան անցնելու ժամկետը: | 1.Միջազգային փորձի ուսումնասիրություն և առաջարկություններ ՀՀ դատական օրենսգրքում փոփոխությունների նախագիծ | 1.Միջազգային փորձն ուսումնասիրվել է և մշակվել է ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ ի նախագիծ (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ, որի արդյունքում մշակվել և 2010թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ ԱԺ քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի մասին» , « Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», « Դատախազության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», « Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին » և « Զինապարտության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին » Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը: <ՀՀ արդարադատության ակադեմիայի մասին » ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է երկարացնել թեկնածությունների ուսուցման ժամկետը` 6 ամսվա ժամկետի փոխարեն սահմանելով 1 տարի ժամկետ:<br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը` միջազգային փորձի հիման վրա կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ և մշակվել համապատասխան փոփոխությունների նախագիծ: | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ |
| | 39.2 Օրենսդրորեն կարգավորել դատավորի թեկնածու հանդիսացող դատախազների, փաստաբանների և քննիչների դատական դպրոցում անհատական վերապատրաստման դասընթացի նվազագույն տնողությունը և սահմանվել | 1.Դատական դպրոցում դատավորի թեկնածու հանդիսացող դատախազների, փաստաբանների և քննիչների անհատական վերապատրաստման դասընթացները վերանայված են | 1.Դատավորի թեկնածու հանդիսացող դատախազների, փաստաբանների և քննիչների անհատական վերապատրաստման դասընթացի նվազագույն | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ, որի արդյունքում մշակվել և 2010թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ ԱԺ քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի մասին» , « Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», « Դատախազության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», « Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին » և « Զինապարտության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին » Հայաստանի | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ ՀՀ դատական դպրոց |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | են դասընթացին ներկայացվող պահանջները | ՀՀ դատական օրենսգրքում փոփոխությունների նախագիծ | տևողությունը և պահանջները կարգավորված են (այո/ոչ) | | Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը: <ՀՀ արդարադատության ակադեմիայի մասին » ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է երկարացնել թեկնածությունների ուսուցման ժամկետը` 6 ամսվա ժամկետի փոխարեն սահմանելով 1 տարի ժամկետ:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը` միջազգային փորձի հիման վրա կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ և մշակվել համապատասխան փոփոխությունների նախագիծ: Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը այն է, որ նշված իրավական ակտերը դեռևս ընդունված չեն : | |
| | 39.3 ՀՀ ԴՆԽ կողմից հաստատվող վերապատրաստման ուղենիշների շարքում ներառել կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոններին վերաբերող ուղղություններ | 1. ՀՀ ԴՆԽ կողմից հաստատված պարտադիր վերապատրաստման թեմատիկա, միջազգային փորձի ներառում | 2.Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոնները թեմայով վերապատրաստված դատավորների թիվը դատավորների ընդհանուր թվաքանակում | 100% | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br><br>ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի ուսումնական հարցերի հանձնաժողովի 2009թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ հաստատվել են «Դատավորների, դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց 2010թ. վերապատրաստման հիմնական ուղենիշները», որի հիման վրա, և ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 178-րդ հոդվածով, ՀՀ դատական դպրոցի կառավարման խորհուրդը հաստատել է «Դատավորների, դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց 2010թ. վերապատրաստման ծրագիրը: Ծրագրում ներառվել են կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոններին վերաբերող ուղղություններ, որոնք ներառում են նաև միջազգային փորձը:<br><br>Ցուցիչ 1. Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 193-րդ հոդվածի` դատավորները յուրաքանչյուր տարի պետք է անցնեն պարտադիր վերապատրաստում` ոչ պակաս, քան տարեկան 80 և ոչ ավելի, քան 120 ակադեմիական ժամ ընդհանուր տևողությամբ:<br><br>Դատավորների ընդհանուր քանակն է` 220:<br><br>2010թ. ընթացքում բոլոր դատավորները վերապատրաստվել են դատավորի վարքագծի կանոնները թեմայով, իսկ կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմայով վերապատրաստվել է 200 դատավոր:<br><br>Իրավիճակը` բավարար<br><br>Առաջընթացը` բավարար | ՀՀ դատական դեպարտամենտ, ՀՀ դատական դպրոց |

### 3.8 Քրեակատարողական ծառայություն

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 40. Կատարելագործել քրեակատարողական ծառայության գործառույթների իրականացման նկատմամբ հասարակական և գերատեսչական վերահսկողության մեխանիզմները | 40.2 Հասարակական դիտորդների խմբի հաշվետվությունները և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի մեկնաբանությունները հրապարակել ՀՀ արդարադատության պաշտոնական կայքում | 1.Դիտորդական խմբի հաշվետվություն Հասարակական դիտորդների խմբի հաշվետվությունները և դրա վերաբերյալ նախարարության մեկնաբանությունները տեղադրված են ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում | 1.Դիտորդական խմբի հաշվետվություն Հասարակական դիտորդների խմբի հաշվետվությունները և դրա վերաբերյալ նախարարության մեկնաբանությունները տեղադրված են ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ: Համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 2009 թվականի փետրվարի 5-ի 20-Ն հրամանի "ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողության իրականացման կարգը և հասարակական դիտորդների խմբի կազմը սահմանելու մասին" ՀՀ արդարադատության նախարարի հրամանի 13-րդ կետում կատարվել է լրացում, որով նախատեսվել է 2005 թվականի նոյեմբերի 18-ի թիվ ՔՀ-66-Ն հրաման դիտորդների խմբի հաշվետվությունները և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի մեկնաբանությունները հրապարակել ՀՀ արդարադատության պաշտոնական կայքում: Հասարակական դիտորդների կողմից համապատասխան հաշվետվությունների առկայության դեպքում, դրանք ՀՀ արդարադատության նախարարության մեկնաբանությունների հետ մեկտեղ կտեղադրվեն ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետային կայքում:<br><br>Ցուցիչ 1-ի հիմքը այն է, որ հնարավորություններ են ստեղծված հասարակական դիտորդների հաշվետվությունները ՀՀ ԱՆ ինտերնետային կայքում տեղադրելու համար: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | 40.3 Հստակեցնել ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության գործառույթները և սահմանել գերատեսչական վերահսկողության ընթացակարգեր | 1.ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության գործառույթների և գերատեսչական վերահսկողության ընթացակարգերի ուսումնասիրություններ և միջազգային փորձի ուսումնասիրություն ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին՝ ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագիծ | 1.ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության կողմից իրականացրած գերատեսչական ստուգումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում մասնակցային մոնիտորինգի արդյունքների հրապարակումների ընդհանուր թվաքանակին | 100% | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ: "ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողության վարչության կանոնադրությունը հաստատված է:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքը տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողության վարչության կողմից: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | 40.4 Ներդնել քրեակատարողական ծառայության գործունեության արդյունավետությունը գնահատելու համար չափորոշիչներ | 1.Քրեակատարողական ծառայության՝ ըստ բնագավառների կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերը մշակված և | 1.Մասնակցային մոնիտորինգի հաճախականության հարաբերությունը նույն ժամանակահատվածում | 100% | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերը հաստատված են ՀՀ արդարադատության նախարարի 2009թ. դեկտեմբերի 18-ի N-311-Ն հրամանով: Միաժամանակ "Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության | ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ներդրված են | քրեակատարողական ծառայության հասարակական դիտորդների խմբի հրապարակված հաշվետվություններ ի ընդհանուր թվաքանակին | | ապահովման և պահպանության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին" ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագիծը գտնվում է լրամշակման ավարտական փուլում:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքը տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության կողմից:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | |
| 42.Խրախուսել որակյալ կադրերի ներգրավվածությունը քրեակատարողական ծառայությունում | 42.2 Ներդնել քրեակատարողական ծառայության պաշտոն զբաղեցնելու որակավորման օբյեկտիվ չափանիշներ | 1.Քրեակատարողական ծառայության պաշտոնի անձնագրերը ներդրվել են | 1.Քրեակատարողական ծառայության պաշտոնի անձնագրերը ներդրվել են (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Ուսումնասիրություններ են կատարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի N 572 –Ն որոշմամբ նախատեսված քրեակատարողական ծառայության մի շարք պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ որակավորման չափանիշները կատարելագործելու ուղղությամբ: Միաժամանակ, քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը կհաստատվեն քրեակատարողական ծառայության պաշտոնների անվանացանկերը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատվելուց հետո:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը այն է, որ քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը դեռևս ներդրված չեն: | ÐÐ արդարադատության նախարարություն |
| | 42.3 Վերանայել և կատարելագործել քրեակատարողական ծառայողների վերապատրաստման ծրագրերը | 1.Քրեակատարողական ծառայողների վերապատրաստման կատարելագործված ծրագրեր | 1.Քրեակատարողական ծառայության շահերի բախման, էթիկայի կանոններով և հակակոռուպցիոն այլ թեմաներով կատարելագործված վերապատրաստման ծրագրերի թիվը | 9 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ արդարադատության նախարարի 2010թ. դեկտեմբերի 17-ի թիվ 239-Ա հրամանով հաստատվել են քրեակատարողական ծառայողների վերապատրաստման ծրագրերը:<br><br>Ցուցիչ 1- արժեքը տրամադրվել է <ՀՀ ԱՆ իրավաբանական ինստիտուտ> ՊՈԱԿ-ի կողմից:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ÐÐ արդարադատության նախարարություն, |
| 43.Բացառել քրեակատարողական ծառայություն իրականացնելիս քրեակատարողական ծառայողի և պատիժ կրող անձանց սերտաճման հնարավորությունները | 43.1 Սահմանել քրեակատարողական ծառայողին այլ պաշտոնի փոխադրելու իմպերատիվ դեպքեր | <Քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքի նախագիծ Քրեակատարողական ծառայողների ռոտացիայի ընթացակարգի կիրարկում | Օրենսդրորեն սահմանվել են քրեակատարողական ծառայողին այլ պաշտոնի փոխադրելու իմպերատիվ դեպքերը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարվել է ամբողջությամբ:<br>ՀՀ ԱԺ կողմից 2009 թ. նոյեմբերի 17-ին ընդունվել է՛Քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՛ ՀՀ օրենքը (ՀՕ-218-Ն), որի հիման վրա՛Քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ` սահմանելով քրեակատարողական հիմնարկի պետերի պարտադիր ռոտացիայի սկզբունքը:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը ՀՀ ԱԺ կողմից ընդունված՛Քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՛ ՀՀ օրենքն (ՀՕ-218-Ն) է:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ÐÐ արդարադատության նախարարություն |

### 3.9 Իրավաբանական անձանց պետական գրանցում

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 44.Պարզեցնել իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացը | 44.1 Հաստատել առևտրային իրավաբանական անձանց պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի նմուշային ձևեր և ապահովել դրանց մատչելիությունը ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքի միջոցով | 1.Առևտրային իրավաբանական անձանց պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի նմուշային ձևերի ներկայացում | 1.Պետական ռեգիստրի գործակալության կողմից մատուցվող ծառայություններից էլեկտրոնային եղանակներով օգտվողների թիվը | 387 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Պահանջվող փաստաթղթերի նմուշային ձևերը հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարի 30.04.2010 թ. թիվ 66 հրամանով և տեղադրվել է պետ. ռեգիստրի ինտերնետային կայքում : | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | 44.2 Ներդնել իրավաբանական անձանց պետական գրացման ժամանակ նրանց քրեական անցյալի վերաբերյալ տեղեկությունների ստուգման մեխանիզմ | 1.Իրավաբանական անձանց պետական գրացման ժամանակ նրանց քրեական անցյալի վերաբերյալ տեղեկությունների ստուգման միջազգային փորձի ուսումնասիրություն<br>2.Օրենսդրական փոփոխությունների նախագծերի ներկայացում՝ ուղղված ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առանձին հանցագործություններ կատարած անձանց պետական գրանցման մերժմանը | 1.ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առանձին հանցագործություններ ի համար դատվածություն ունենալու հիմքով գրանցման մերժումների հարաբերությունը գրանցված իրավաբանական անձանց թվին: | 0/807 | Արդյունք 1-2. Կատարված է ամբողջությամբ:<br><Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքը 2010թ. մայիսի 20-ին ընդունվել է ՀՀ ԱԺ կողմից: Այն պետական գրանցման մերժման հիմք է նախատեսում նաև նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպության հիմնադրի, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու դատապարտված լինելը՝ պատժի կատարման ժամկետում: Օրենքը ուժի մեջ է մտնել 01.01.2011թ.-ից:<br><br>Ցուցիչ. 1-ի արժեքը տրվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության կողմից: 2011. հունվար ամսվա դրությամբ վերը նշված հիմքով իրավաբանական անձանց գրանցման մերժումներ չեն եղել:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն |
| 45. Ներդնել «մեկ պատուհանի սկզբունքը իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում | 45.2 Սահմանել պետական գրանցման համար այլ պետական մարմիններից պահանջվող փաստաթղթերը իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության միջոցով ստանալու կարգ | 1.Իրավաբանական անձանց պետական գրանցման համար այլ պետական մարմիններից պահանջվող փաստաթղթերը իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության միջոցով ստանալու կարգի մշակում | 1.ՀՎՀՀ առցանց ստացման դեպքերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց ընդհանուր թվաքանակին: | 0/807 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br><Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>, <Անհատ ձեռնարկատիրոջ մասին> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>, <ՀՀ քաղաքացիական օրնսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքների նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը: Փաթեթը քննարկվել է ՀՀ կառավարության 16.09.2010 թվականի նիստում, արժանացել է հավանության և ուղարկվել է ՀՀ ազգայի ժողով: Ազգային ժողովի կողմից օրենքն ընդունվել է 21.12.2010 թ.-ին:<br>Բացի այդ գրանցման ընթացակարգերի վերաբերյալ ծրագրի մշակման աշխատանքները կատարելու համար հայտարարավել է տենդեր: Հաղթող է ճանաչվել «VX Soft» ընկերությունը, որը իրականացնում է համապատասխան ծրագրերի մշակման աշխատանքները: Պիլոտային ծրագիրը արդեն պատրաստ է | ՀՀ արդարադատության նախարարություն,<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,<br>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | փորձարկման համար, իսկ ծրագիրը ամբողջությամբ կկիրառվի 2011 թ. մարտից:<br><br>Ցուցիչ 1-ի արդյունքի հիմքն այն է, որ ՀՎՀՀ առցանց ստացումը դեռևս հնարավոր չէ:<br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | |
| | 45.3 Կրճատել իրավաբանական անձանց պարտավորություններ ի բացակայությունը հավաստող տեղեկանքների տրամադրման և լուծարման գրանցման ժամկետները | 1.Օրենսդրական փոփոխությունների ներկայացում` ուղղված իրավաբանական անձանց մոտ պարտավորություններ ի բացակայությունը հավաստող տեղեկանքների տրամադրման և լուծարման գրանցման ժամկետների կրճատմանը | 1.Իրավաբանական անձի լուծարման ժամանակահատվածի հարաբերությունը պարտավորություններ ի բացակայությունը հավաստող տեղեկանքների տրամադրման ժամանակահատվածի ն | Տեղեկություններ չկան: | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ կառավարություն է ներկայացվել <Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքի նախագիծը, ըստ որի պետական գրանցող մարմնի հարցմանը հարկային մարմինները պարտավոր են պատասխանել 20 օրվա ընթացքում նախկին 30 օրվա փոխարեն: Փաթեթը քննարկվել է ՀՀ կառավարության 16.09.2010թվականի նիստում , արժանացել է հավանության և ուղարկվել է ՀՀ ազգայի ժողով: Փաթեթը քննարկվել է ԱԺ-ում և 21.12.2010թ.- ին ընդունվել է ԱԺ-ի կողմից:<br><br>Ցուցիչ 1-ի արդունքի հիմքն այն է, որ համապատասխան մոնիտորինգ չի իրականացվել օրենքը դեկտեմբեր ամսին ընդունման պատճառով: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| 46.Բարելավել պետական լիազոր մարմնի շրջանակներում իրականացվող գերատեսչական վերահսկողության մեխանիզմները | 46.1 Վերանայել պետական ռեգիստրի գործակալության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդները և սահմանել դրանց արդյունքների ամփոփման ընթացակարգեր | 1.Պետական ռեգիստրի գործակալության մարմինների գործունեության գնահատման և արդյունքների ամփոփման ընթացակարգի ներդրում և կատարողականի գնահատման ուղեցույցի մշակում | 1.Պետական ռեգիստրի գործակալության ծառայողների նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվությ ան միջոցների թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին | 2/146 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ, որի արդյունքում մշակվել է <ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին> ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասնին> ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը հաստատվել է ՀՀ կառավարության 05.18.2010թ. թիվ 1043-Ն որոշմամբ:<br><br>Ցուցիչ 1. Տվյալները տրամադրվել են ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կողմից: Աշխատողների թիվը կազմել է 146, իսկ կարգապահական տույժ կիրառվել է 2 ծառայողի նկատմամբ<br><br>Ցուցիչ 2. Տվյալները տրամադրվել են ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կողմից: Աշխատողների թիվը կազմել է 146, իսկ խրախուսանք չի տրվել:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | 2.Պետական ռեգիստրի գործակալության ծառայողների նկատմամբ կիրառված խրախուսման դեպքերի թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին | 0/146 | | |

### 3.10 Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորին-գային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 47. Բարձրացնել հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու կարողությունը | 47.1 Բարելավվել պարտապանի գույքի հայտնաբերման հարցում հարկադիր կատարման ծառայության կարողությունները | 1.Պարտապանի գույքը հայտնաբերելուն ուղղված մեխանիզմների միջազգային փորձի ուսումնասիրությունը կատարված է<br><br>2.Պարտապանի գույքի հայտնաբերման հարցում հարկադիր կատարողների վերապատրաստման դասընթացներ | 1.Հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը չհայտնաբերելու դեպքերի հարաբերությունը ԴԱՀԿ վարույթի շրջանակներում գույքի հայտնաբերման դեպքերին | 4.1% | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Կատարվել է պարտապանի գույքը հայտնաբերելուն ուղղված մեխանիզմների միջազգային փորձի ուսումնասիրություն: Դրանց հիման վրա ներդրվել է պարտապանի գույքի հայտնաբերմանն ուղղված հարցումների էլեկտրոնային համակարգ: 31.12.2010 թվականի դրությամբ համակարգին միացված են 16 առևտրային բանկեր, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը: 2011 թվականի հունվարին համակարգին է միացել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն: Բացի այդ 2011թ. 2-րդ եռամսյակին համակարգին կմիանա ևս 2 առևտրային բանկ, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության վարչությունը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:<br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br>Կազմակերպվել է անձնակազմի ուսուցում վերոնշյալ ծրագրով աշխատելու համար:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքը տրամադրվել է ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: 7614 գործից գույք հայտնաբերվել է 6620-ի դեպքում:<br><br>Ցուցիչ 2-ի արժեքը տրամադրվել է ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: Ներկայումս գույքի հայտնաբերմանը պահանջվում է 2 օր նախկինում 15 օրվա փոխարեն:<br>Իրավիճակը գնահատվում է բավարար | ՀՀ արդարադատությ ան նախարարություն |
| | | | 2.Պարտապանի գույքը հայտնաբերելու համար պահանջված միջին ժամկետը նախորդ տարվա համեմատությամբ | 2օր | | |
| 48. Բարելավել ՀՀ արդարադատության նախարարության շրջանակներում իրականացվող վերահսկողության մեխանիզմները | 48.1 Վերանայել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդները և սահմանել դրանց արդյունքների ամփոփման ընթացակարգեր | 1.՝ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին՝ ՀՀ արդարադատության նախարարի հրաման<br><br>2.ՀՀ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության գնահատման և արդյունքների ամփոփման ներդրված | 1.Հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողության վարչության կանոնադրությունը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>"ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողության վարչության կանոնադրությունը հաստատված է:<br><br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br>Համապատասխան ուսումնասիրություններ են կատարվել ուղեցույցի մշակման նպատակով, ապա իրականացվել է ոլորտը կարգավորող իրավական ակտերի ինկորպորացիա, որի հիման վրա կազմվել է ուսումնասիրություններ կատարելու նպատակով համապատասխան հարցաշար` հիմնականում հիմք ընդունելով ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքը: Միաժամանակ կազմվել է կատարվելիք ուսումնասիրությունների վերաբերյալ մոդելային տեղեկանք:<br>Վերոգրյալ հարցաշարերը փորձարկվել են և միասնական համակարգի կիրարկումը նախատեսվում է 2011 թվականից:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը այն է, որ համապատասխան կանոնադրությունը հաստատված է:<br><br>Ցուցիչ 2-ի արժեքի հիմքը այն է, որ համապատասխան ամփոփման համակարգը ներդրված է:<br><br>Ցուցիչ 3-ի արժեքի հիմքը այն է, որ կարգապահական վարույթի նյութեր նախապատրաստելու և վարույթ հարուցելու միասնական կարգը սահմանված է:<br><br>Ցուցիչ 4-ի արժեքը տրամադրվել է ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: ԴԱՀԿ 393 ծառայողից 22-ի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ: | ՀՀ արդարադատությ ան նախարարություն |
| | | | 2.Սահմանվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության արդյունքների ամփոփման ընթացակարգ (այո/ոչ) | Այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորին-գային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ընթացակարգ և կատարողականի գնահատման մշակված ուղեցույց | 3.Սահմանվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծառայողների նկատմամբ կարգապահական վարույթի նյութեր նախապատրաստելու և վարույթ հարուցելու միասնական կարգ(այո/ոչ) | Ոչ | Ցուցիչ 5-ի արժեքը տրամադրվել է ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: ԴԱՀԿ 393 ծառայողներից 276-ի նկատմամբ կիրառվել է խրախուսանքի միջոց:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | |
| | | | 4.Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծառայողների նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցների թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակի | 5.6% | | |
| | | | 5.Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծառայողների նկատմամբ կիրառված խրախուսման դեպքերի թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր | 70.22% | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորին-գային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | թվաքանակին | | | |

### 3.11 ՀՀ ոստիկանություն

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 49. Կատարելագործել ճանապարահային երթևեկության կանոններն ու դրանց խախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմերը | 49.1 Հանել առկա իրավական կարգավորումների անհստակությունները և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող նորմերը | 1.Վարչական իրավա-խախտումների մասին ՀՀ օրենսգրքում և ՀՀ ճանապարհային երթև-եկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագոր-ծումն արգելող անսար-քությունների և պայ-մանների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2007թ. որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերի ներկայացում | 1. Վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ճանապարհային ոստիկանության կողմից կազմված և լուծվող հարցի նկարագրությունը չներառող ակտերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կազմված ակտերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան բարձր են կոռուպցիոն ռիսկերը) | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br><br>ՀՀ կառավարության 20.11.2008 թ. << Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> թիվ 1373-Ն որոշումով արդեն իսկ կատարվել են համապատասխան փոփոխություններ և գտնում ենք 2010 թվականի ընթացքում անհրաժեշտություն չկա նոր փոփոխություններ կատարելու: Մշակվել եւ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի սահմանումը անհրաժեշտ է փոփոխել, քանի որ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ճանապարհային ոստիկանության կողմից կազմված և լուծվող հարցի նկարագրությունը չներառող ակտեր չեն լինում և ճանապարհային ոստիկանությունը առանց լուծվող հարցի նկարագրության ակտեր չի կազմում:<br><br>Ցուցիչ 2. ՀՀ ոստիկանությունը դեռևս չունի այդ ցուցիչը հաշվարկելու համակարգչային ծրագրեր: Ենթադրվում է նման ծրագրեր ունենալ մոտ ապագայում:<br>Ներկայումս իրականացման փուլում է ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության մարզային ստորաբաժանումների /43 բաժանորդ/ կողմից կազմվող վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունների, ինչպես նաեւ ճանապարհատրանսպորտային պատահարների տվյալների համակարգչային ծրագրում ներգրավելու աշխատանքները:<br><br>49.1 ենթակետի 2010 թ. «Ակնկալվող արդյունք»-ը ուժը կորցրել է ՀՀ կառավարության 02.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թրվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 748-Ն որոշումով | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |
| | | | 2. Ճանապարհային ոստիկանության մարմինների կողմից կայացվող և համապատասխան ապացույցներով չապահովված վարչական ակտերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կազմված ակտերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան բարձր են կոռուպցիոն ռիսկերը) | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 49.2 Հանել պատասխանատվության տեսակների և պատժաչափերի ընտրության հարցում հայեցողության դրսևորման վտանգները և ճանապարհային կանոնների խախտման համար նախապայմաններ ստեղծող այլ խոչընդոտները | 1. ՃԵԿ-ի վերանայման արդյունքում նվազագույնի են հասցվել ճանապարհային ոստիկանի կողմից վարչական ներգործության միջոցների կիրառման հարցում հայեցողության դրսևորման հնարավորությունները | 1.Ճանապարհային ոստիկանության մարմինների դեմ ուղղված և բավարարված դատական հայցերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ճանապարհային ոստիկանության կողմից կիրարկված վարչական տույժերի ընդհանուր թվաքանակին: | Տվյալներ չկան | Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն:<br><br>ՀՀ կառավարության 20.11.2008 թ. << Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> թիվ 1373-Ն որոշումով արդեն իսկ վերացվել են Ճանապարհային ոստիկանության կողմից քննվող վարչական իրավախախտումների համար պատասխանատվության տեսակների և պատժաչափերի ընտրության հայեցողական դրսևորման վտանգները և սահմանվել են բացարձակ որոշակի սանկցիաներ և գտնում ենք 2010 թվականի ընթացքում նոր փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չկա:<br><br>Մշակվել եւ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել վերը նշված համակարգչային ծրագրերի ներդրումից հետո:<br><br>49.2 ենթակետի 2010 թ. «Ակնկալվող արդյունք»-ը ուժը կորցրել է ՀՀ կառավարության 02.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարույան 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թրվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 748-Ն որոշումով<br><br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը՝բավարար<br>Առաջընթացը՝ բավարար | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |
| 50. Բարձրացնել ճանապարհային ոստիկանության գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը | 50.1 Սահմանել ոստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման արտաբյուջետային ֆոնդի ձևավորման և միջոցների ծախսման թափանցիկությունն ապահովող ընթացակարգեր | | 1. Սահմանվել են ոստի-կանության նյութական խրախուսման և տեխնի-կական զարգացման ար-տաբյուջետային ֆոնդի ձևավորման և միջոցների ծախսման թափանցիկու-թյունն ապահովող ընթացակարգեր (այո/ոչ) | Այո | Տվյալ միջոցառմամբ 2010թ. արդյունք չի նախատեսված:<br><br>Ցուցիչ 1. ՀՀ կառավարության 29.04.2010թ. << ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանության արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2010 թվականի նախահաշվարկները հաստատելու, ՀՀ 2010 թվականի պետական բյուջեում և ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1522-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> թիվ 483-Ն որոշում: | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |
| | 50.2 Սահմանել ճանա-պարհային պատա-հարների, գրանցված վարչական իրավա- | | 1. Վթարայնության համե-մատական մակարդակը հանրապետությունում (նախորդ տարվա միևնույն | 98.6 % | Տվյալ միջոցառմամբ 2010թ. արդյունք չի նախատեսվում:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է ՀՀ ոստիկանության ՃՈ հաշվառումներով: | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն, ՀՀ Քաղաքացիական հասարակության |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | խախտումների վերաբերյալ վիճակագրության մատչելիությունն ապահովող ընթացակարգեր | | ժամանակահատվածի համար) | | 2009թ. – ին հանրապետությունում գրանցվել է 2002 ճանապարհատրանսպորտային պատահար` 328 զոհ, 2753 վիրավոր, 2010թ – ին` 1974 ճանապարհատրանսպորտային պատահար`294 զոհ, 2670 վիրավոր:<br><br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար | միավորներ |
| 52. Բարձրացնել բնակչության պետական ռեգիստրի գործունեության արդյունավետությունը | 52.1 Կատարելագործել բնակչության պետական ռեգիստրի համակարգը | 1.Արդյունքներն ըստ ՀՀ միգրացիայի համակարգի և ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրից բխող գործողությունների իրականացման ժամանակացույցի | 1.Պետական ռեգիստրի համակարգում տվյալների անճշտությունների հետ կապված դիմումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում տվյալների բանկի վերանայումների ու թարմացումների ընդհանուր թվաքանակին | 0,2552 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ վարչապետի 18 հունիսի 2009 թվականի <<Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 501-Ա որոշմամբ հաստատված հավելվածի ժամկետները փոփոխվել են ՀՀ վարչապետի 08.06.2010թ. << Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 18 հունիսի թիվ 501-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 414-Ա որոշումով:<br><br>ՀՀ կառավարության 08.07.2010թ. թիվ 842-Ն եւ 04.11.2010թ. թիվ 1407-Ն որոշումներով ՀՀ կառավարության 14.07.2005թ. << ՀՀ –ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին>> թիվ 1231-Ն որոշման մեջ լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման մեջ կատարված փոփոխություններով հստակեցվել են պետական ռեգիստրում քաղաքացիների հաշվառման մասին տեղեկանքների ձեռքբերման ընթացակարգերը:<br><br>ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել <<Անհատական տվյալների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին >> ՀՀ օրենքի նախագիծը, որը վերադարձվել է լրամշակման:<br><br>Ցուցիչ 1. Հաշվարկված է ՀՀ ոստիկանության ԱՎՎ բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական պահոցի տվյալներով: Անճշտությունների վերաբերյալ դիմումների քանակը եղել է 1989, իսկ ընդհանուր վերանայումների քանակը`7791 : | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |
| | 52.2 Կանոնակարգել բնակչության պետական ռեգիստրի տվյալների օգտագործումը հանրային ծառայություններ մատուցելիս | 1. Արդյունքներն ըստ ՀՀ միգրացիայի համակարգի և ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրից բխող գործողությունների իրականացման | | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ վարչապետի 18 հունիսի 2009 թվականի <<Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 501-Ա որոշմամբ հաստատված հավելվածի ժամկետները փոփոխվել են ՀՀ վարչապետի 08.06.2010թ. << Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 18 հունիսի թիվ 501-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 414-Ա որոշումով: | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ժամանակացույցի | | | | |
| | 52.3 Սահմանել բնակչության պետական ռեգիստրում առկա հասցեով անձին ուղարկված ծանուցագրերը պատշաճ հասցեով ուղարկված համարելու վերաբերյալ նորմեր, այդ թվում՝ անձի փաստացի բնակության վայրը տարբերվելու դեպքում | 1. Արդյունքներն ըստ ՀՀ միգրացիայի համակարգի և ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրից բխող գործողությունների իրականացման ժամանակացույցի | | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ վարչապետի 18 հունիսի 2009 թվականի <<Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 501-Ա որոշմամբ հաստատված հավելվածի ժամկետները փոփոխվել են ՀՀ վարչապետի 08.06.2010թ. << Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 18 հունիսի թիվ 501-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 414-Ա որոշումով:<br><br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |
| 53. Ներդնել անհատական տվյալների անձեռնամխելիությունը ապահովող համապատասխան իրավական նորմեր | 53.1 Սահմանել իրավական հետևանքներ՝ բնակչության ռեգիստրին համապատասխան տվյալներ չհաղորդելու, առանց նույնացման քարտի բնակվելու, բնակչության ռեգիստրին պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված տվյալները չտրամադրելու կամ դրանք թերի տրամադրելու համար | 1. Արդյունքներն ըստ ՀՀ միգրացիայի համակարգի և ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրից բխող գործողությունների իրականացման ժամանակացույցի | 1. Բնակչության ռեգիստրին համապատասխան տվյալներ չհաղորդելու, առանց նույնացման քարտի բնակվելու, բնակչության ռեգիստրին պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված տվյալները չտրամադրելու կամ դրանք թերի տրամադրելու համար կիրառված վարչական սանկցիաների թիվը | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված չէ:<br>ՀՀ վարչապետի 18 հունիսի 2009 թվականի <<Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 501-Ա որոշմամբ հաստատված հավելվածի ժամկետները փոփոխվել են ՀՀ վարչապետի 08.06.2010թ. << Հայաստանի Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 18 հունիսի թիվ 501-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 414-Ա որոշումով:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել նույնացման քարտերի համակարգի ներդրումից հետո:<br><br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար | ՀՀ ԿԱ Ոստիկանություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն |
| 54. Ապահովել ոստիկանության գործունեության օրինականությունը, բարձրացնել պատասխանատվությունը | 54.1 Ապահովել վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավաչափ և օրենքի պահանջներին համապատասխանող վարչական ակտերի կայացումը | | 1. Ապահովվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավաչափ և օրենքի պահանջներին համապատասխանող վարչական ակտերի կայացումը (այո/ոչ) | Ոչ | Տվյալ միջոցառմամբ 2010թ. արդյունք չի նախատեսվում: | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |
| | 54.2 Կատարելագործել ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընթացակարգերի | | 1. Ոստիկանությունում իրականացված ծառայողական քննությունների թվի հարաբերությունը նույն | 1,828 | Ցուցիչ 1. 2010թ. քաղաքացիների դիմում-բողոքների միասնական հաշվառումն իրականացվել է ՀՀ ոստիկանության պետի 17.08.2010թ. << ՀՀ ոստիկանության համակարգում ստացված դիմումների, բողոքների հաշվառման եւ դրանց արդյունքների վերաբերյալ միասնական հաշվետվություն ներկայացնելու կարգը սահմանելու մասին>> թիվ 1747-Ա հրամանով սահմանված կարգի համապատասխան, համաձայն որի | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | մատչելիությունը | | ժամանակահատվածում ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընդհանուր թվաքանակի | | ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընդհանուր թվաքանակը 2010թ. կազմել է 639:<br>2010թ.- ին ՀՀ ոստիկանությունում կատարվել է 1168 ծառայողական քննություն, որից 827 ծառայող ենթարկվել է տույժի: | |
| 55. Ապահովել ոստիկանության մարմինների աշխատանքի և քաղաքացիների սպասարկման պատշաճ որակը | 55.1 Կրճատել ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման բարդությունները | 1.Ոստիկանության կող-մից քաղաքացիներին մատուցվող ծառայու-թյունների համար դիմումների ձևերը ոստիկանության պաշտոնական կայքում տեղադրելու, դրանք ինտերնետ համացանցով ներկայացնելու և այլ եղանակներով ներկայացման ու ընթացք տալու մատչելի համակարգի ներդրման ծրագիր | 1. Ոստիկանության կողմից քաղաքացիներին մատուց-վող ծառայություններից էլեկտրոնային եղանակով օգտվողների թիվը | Մոտ 40000 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման բարդությունները կրճատելու համար նախատեսվում է 2011թ-ից գործարկել ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության և ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության պաշտոնական ինտերնետային կայքերը:<br>Շահագործման է հանձնվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հեռախոսային, ձայնային պորտալը, որին միանալով քաղաքացիները հնարավորություն ունեն երեք լեզվով ստանալ տեղեկատվություն այն բոլոր գործառույթների վերաբերյալ, որոնք իրականացվում են ԱՎՎ և ենթակա անձնագրային ծառայությունների կողմից, ծառայությունների համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքով սահմանված վճարների դրույքաչափերը:<br>ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության , ինչպես նաեւ տարբեր ԶԼՄ-ների , մամլո ասուլիսների միջոցով պարբերաբար տրամադրվում են ոլորտային տեղեկություններ:<br>2010թ-ին ՀՀ ոստիկանության եւ տարբեր ստորաբաժանումների ղեկավարության մասնակցությամբ կազմակերպվել է 17 մամուլի ասուլիս:<br>ՀՀ ոստիկանության ԱՎՎ տարածքային 10 անձնագրային ծառայություններում տեղադրվել են ծառայությունների մատուցման համար նախատեսված պետական տուրքերը, վարչական տուգանքները եւ այլ վճարներն ընդունող էլեկտրոնային տերմինալներ:<br>2010թ. ապրիլ ամսից ԱՎ վարչությունում տեղադրվել է <<ԴԱՏԱԼԵՔՍ>> էլեկտրոնային իրավական տեղեկատու կրպակը, ինչի շնորհիվ քաղաքացիները հնարավորություն ունեն անվճար ծանոթանալու ՀՀ օրենսդրությանը, գործող նորմատիվ իրավական ակտերին, օգտվել ՀՀ պետական, դատական եւ կառավարման այլ մարմինների ինտերնետային կայքերից:<br><br>ՀՀ ոստիկանության պետի 17.06.2010թ. թիվ 1318-Ա հրամանով ՀՀ ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչության հսկողության եւ վերլուծության վարչությունում ստեղծվել է արագ արձագանքման <<ԹԵԺ ԳԻԾ>> ծառայությունը:<br><br>18.08.2010թ. ՀՀ ոստիկանության պետի 1742-Ա հրամանով գործարկվել է ՀՀ ոստիկանության ինտերնետային նոր կայքը` <<police.am>> :<br><br>26.11.2010թ. ՀՀ ոստիկանության ԱՎՎ Նոր- Նորքի բաժանմունքում ներդրվել է քաղաքացիներին քաղաքակիրթ, արդյունավետ եւ թափանցիկ սպասարկելու ժամանակակից չափանիշներին համապատասխանող ծառայություն <<Մեկ դահլիճի>> սկզբունքով:<br>ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության պաշտոնական ինտերնետային կայքէջը` <<passportvisa.am>> 2010 թ-ին գործարկվել է, սակայն գտնվում է նախագծային վիճակում և ավարտին կհասցվի 2011թ-ին: | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ցուցիչ 1. Լրատվական վարչության տվյալներով ոստիկանության կայք էջից օգտվողների թիվը օրական կազմում է մոտ 100-120 մուտք: | |
| | 55.2 Ներդնել քաղաքացիական հասարակության և ոստիկանության մարմինների միջև փոխգործակցության և քաղաքացիական հասարակության մասնակցության ընթացակարգեր | 2. Ոստիկանության և հասարակական կազմակերպություններ ի միջև համագործակցության միջազգային փորձի ուսումնասիրություն և ՀՀ-ի համար համագործակցության ոլորտները սահմանված են | 1. Ոստիկանության մարմինների ու քաղաքացիական հասարակության մասնահիտացված կազմակերպությունների միջև կնքվել են փոխործակցության հուշագրեր (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Չնայած համագործակցության ոլորտները ձևականորեն սահմաված չեն, սակայն համագործակցությունը իրականացվում է անչափահասների հիմնահարցերի լուծման, ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերի նկատմամբ հասարակական վերահսկողության, Ճանապարհային ոստիկանության, կանանց իրավունքների պաշտպանության ոլորտներում:<br>Մասնավորապես`<br>1. << World Vision>> միջազգային ոչ կառավարական կազմակերպություն,<br>2. << Priject Harmony>> միջազգային ոչ կառավարական կազմակերպություն,<br>3. << Երեխաների աջակցության կենտրոն>> ԱՄՆ-ի ՀՕՖ-ի հայաստանյան մասնաճյուղ,<br>4. << Հույս և օգնություն>> ՀԿ,<br>5. << People in Need>> չեխական ընկերության հայաստանյան մասնաճյուղ,<br>6. 14.01.2005թ. << ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու մասին>> ՀՀ ոստիկանության պետի թիվ 1-Ն հրաման /12.02.2010թ.-ին ենթարկվել է փոփոխության/<br>7.<<Աքիլես>> ՀԿ,<br>8. <<Ճանապարհային Անվտանգության Ազգային Խորհուրդ>> ՀԿ<br>9. << ՀՀ ավտոմոբիլային ֆեդերացիա>> ՀԿ<br>10. << Կանանց իրավունքների կենտրոն>> հասարակական կազմակերպությունը<br>11. 21.04.2010թ. <<Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն ինկ.>> կազմակերպության հայաստանյան գրասենյակի միջև փոխըմբռնման հուշագիր<br>12. Աշխատանքի միջազգային կազմակերպություն<br>13. Միգրացիայի միջազգային կազմակերպություն<br>14.Միավորված ազգերի զարգացման ծրագիր<br>15. <<Ամկոր>> միջազգային կազմակերպություն<br>16. Հույս և օգնություն միջազգային կազմակերպություն | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |
| | | | 2. Հանրային ծառայությունների մատուցման ոլորտում ժամկետների խախտման հետ կապված բողոքների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալներին, | Տվյալներ չկան | Ցուցիչ 2. Առաջարկում ենք ցուցիչը վերախմբագրել ոստիկանության մասով: | |
| | 55.3 Խթանել ոստիկանության կողմից հանրային իրազեկման բարձրացումը, քաղաքացիների իրավունքների և | 1 .Ոստիկանության կողմից հանրային իրազեկման, քաղաքացիների իրավունքների և պարտականություններ | 1. Ոստիկանության գործունեության վերաբերյալ հանրային իրազեկմանը նվիրված հեռուստառադիոեթերի ժամաքանակի | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Շահագործման է հանձնվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հեռախոսային, ձայնային պորտալը, որին միանալով քաղաքացիները հնարավորություն ունեն երեք լեզվով ստանալ տեղեկատվություն այն բոլոր գործառույթների վերաբերյալ, որոնք իրականացվում են ԱՎՎ և ենթակա անձնագրային ծառայությունների | ՀՀ ԿԱ Ոստիկանություն Հասարակական կազմակերպություններ ( համաձայնությամբ) |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | պարտականություննե րի, վարչարարական գործընթացների պատշաճ լուսաբանումը | ի, վարչարարական գործընթացների պատշաճ լուսաբանման առկա իրավիճակի վերլուծություն և գնահատական և հետագա միջոցառումների միջնաժամկետ ծրագիր | հարաբերությունը պետական մարմինների գործունեությանը լուսաբանանը նվիրված հեռուստառադիոեթերի ընդհանուր ժամաքանակին | | կողմից, ծառայությունների համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքով սահմանված վճարների դրույքաչափերը :<br>Ոստիկանության կողմից հանրային իրազեկման բարձրացումը, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների, վարչարարական գործընթացների պատշաճ լուսաբանման համար նախատեսվում է մինչև 2010 թ. ավարտը ստեղծել և վարել ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության և ՀՀ անձնագրերի և վիզաների վարչության պաշտոնական ինտերնետային կայքեր:<br><br>Հանրային իրազեկման նպատակով ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության , ինչպես նաեւ տարբեր ԶԼՄ-ների , մամլո ասուլիսների միջոցով պարբերաբար տրամադրվում են ոլորտային տեղեկություններ: 2010թ-ին ՀՀ ոստիկանության եւ տարբեր ստորաբաժանումների ղեկավարության մասնակցությամբ կազմակերպվել է 17 մամուլի ասուլիս, որոնք լուսաբանվել են ՀՀ ոստիկանության ինտերնետային նոր կայք էջում:<br><br>2010թ. ապրիլ ամսից ԱՎ վարչությունում տեղադրվել է <<ԴԱՏԱԼԵՔՍ>> էլեկտրոնային իրավական տեղեկատու կրպակը, ինչի շնորհիվ քաղաքացիները հնարավորություն ունեն անվճար ծանոթանալու ՀՀ օրենսդրությանը, գործող նորմատիվ իրավական ակտերին, օգտվել ՀՀ պետական, դատական եւ կառավարման այլ մարմինների ինտերնետային կայքերից:<br><br>ՀՀ ոստիկանության պետի 17.06.2010թ. թիվ 1318-Ա հրամանով ՀՀ ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչության հսկողության եւ վերլուծության վարչությունում ստեղծվել է արագ արձագանքման <<ԹԵԺ ԳԻԾ>> ծառայությունը:<br><br>18.08.2010թ. ՀՀ ոստիկանության պետի 1742-Ա հրամանով գործարկվել է ՀՀ ոստիկանության ինտերնետային նոր կայքը` <<police.am>> :<br><br>ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության պաշտոնական ինտերնետային կայքէջը` <<passportvisa.am>> 2010 թ-ին գործարկվել է, սակայն գտնվում է նախագծային վիճակում և ավարտին կհասցվի 2011թ-ին:<br><br>Ցուցիչ 1 Ցուցիչի հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրումը բավական թանկարժեք է և աշխատատար:<br>Ոստիկանության վերաբերյալ “02” հաղորդաշարը 2010թ.-ն Հանրային Հ 1 հեռուստաալիքով կազմել է 1075 րոպե 48 վրկ.<br>Պետական այլ մարմինների վերաբերյալ հեռուստահաղորդումների ընդհանուր քանակը Հ1-ում չի ֆիքսվել:<br>Առաջարկվում է ցուցիչը վերասահմանել:<br><br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար | |

### 3.12 Քաղաքական կոռուպցիա

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 56.Կատարելագործել օրենսդիր իշխանության թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունն ապահովող օրենսդրությունը | 56.1 Սահմանել պատգամավորների վարքագծի կանոնները | 1. ՀՀ ԱԺ պատգամավորների վարքագծի կանոններին առնչվող հարաբերությունները կարգավորված են օրենքով | 1. «ԱԺ կանոնակարգ» ՀՀ օրենքով կարգավորվել են ՀՀ ԱԺ-ում վարքագծի կանոններին առնչվող հարաբերությունները (այո/ոչ) | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարվել է մասնակիորեն:<br>ՀՀ ԱԺ պատգամավորների վարքագծի կանոններին առնչվող հայեցակարգային դրույթները մշակված են և ԱԺ կոալիցիոն Խմբակցությունների հետհամաձայնեցված են:<br>Հիմք: Պետա-իրավական հանձնաժողովի տեղեկատվությունը<br><br>Ցուցիչ 1- 6-ի վերաբերյալ տեղեկությունները հասանելի կլինեն միայն համապատասխան իրավական ակտերի ընդունման պայմաններում | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | 2. Սահմանվել են ՀՀ ԱԺ պատգամավորի պահվածքի (վարքագծի) հիմնական սկզբունքներն ամրագրող վարքականոն (այո/ոչ) | Տվյալներ չկան | | |
| | | | 3. ՀՀ ԱԺ պատգամավորի վարքականոնով կարգավորվում են ԱԺ և նրա մշտական հանձնաժողովների նիստերում պատգամավորի պահվածքի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների, օտարերկրյա պետություններում և օտարերկրյա անձանց հետ փոխհարաբերություններում պատգամավորի վարվելակերպի կանոնները (այո/ոչ) | Տվյալներ չկան | | |
| | | | 4. Պատգամավորների վարքագծի հետ կապված լսումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ լսումների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | | | 5. ՀՀ ԱԺ պատգամավորի նեգատիվ վարքագծի հետ կապված բողոքների ու ԶԼՄ-ներում տեղ գտած հարապարակումների | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ամբողջական թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պատգամավորների վարքագծի հետ կապված ՀՀ ԱԺ կայացած լսումների ընդհանուր թվաքանակին | | | |
| | | | 6. ԱԺ կայացած քվեար-կություններից բացա-կայող պատգամավոր-ների թվի հարաբերու-թյունը ԱԺ պատգա-մավորների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | 56.2 Կատարելագործել պատգամավորների շահերի հայտարարագրման մեխանիզմները | 1. ՀՀ ԱԺ պատգամա-վորների կողմից նշված շահերի հայ-տարարագրման կար-գը և պայմանները սահմանված են | 1. Պատգամավորների վարքագծի կանոններում սահմանվել են պատգա-մավորների կողմից շահերի հայտարարա-գրման կարգը և պայ-մանները (այո/ոչ) | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարվել է մասնակիորեն:<br>ՀՀ ԱԺ պատգամավորների վարքագծի կանոններին առնչվող հայեցակարգային դրույթները մշակված են և ԱԺ կոալիցիոն խմբակցությունների հետհամաձայնեցված են:<br>Հիմք: Պետա-իրավական հանձնաժողովի տեղեկատվություն<br><br>Ցուցիչ 1-4-ի վերաբերյալ հասանելի կլինեն միայն համապատասխան իրավական ակտերի ընդունման պայմաններում: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | 2. ՀՀ ԱԺ պատգամավորի վարքականոնով կարգավորվում են շահերի բախման դեպքում պատգամավորի վարվելակերպը, պատգամավորի՝ իր լիազորությունները այլ անձանց պատվերով կամ ի շահ այլ անձանց կատարելու անթույլատրելիությունը, այլ անձանց կողմից, իրենց ընտանեկան, սոցիալական, պաշտոնական կամ այլ դիրքից ելնելով, պատգամավորի որոշման վրա ազդեցության բացառումն ամրագրող վարվելակերպի կանոնները (այո/ոչ) | Տվյալներ չկան | | |
| | | | 3. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանվել է պատգամավորի կողմից շահերի բախման | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պարագայում պարտադիր ինքանբացարկ հայտնելու մասին դրույթը (այո/ոչ) | | | |
| | | | 4. ԱԺ-ում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալուց, ինչպես նաև ԱԺ-ի ի և նրա հանձնաժողովների նիստերում հարցի քննարկումից (այդ թվում` քվեարկությունից) առաջ պատգամավորի կողմից հայտարարագրի ներկա-յացման դեպքերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ կայացած քվեարկու-թյունների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | 56.3 Ապահովել պատգամավորի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի սահմանադրական դրույթների կատարումը | 1. ՀՀ ԱԺ պատգամավորի անհատ ձեռնարկատեր լինելու արգելքը, ինչպես նաև տնտեսական ընկերության նրա մասնակցության արգելվող և թույլատրվող ձևերը, սահմանված են<br><br>2 ՀՀ ԱԺ պատգամավորի անհատ ձեռնարկատեր լինելու արգելքի խախտման համար ներգործության միջոցները սահմանված են | 1 «Ազգային ժողովի կա-նոնակարգ» ՀՀ օրենքով սահմանվել է տնտե-սական ընկերության պատգամավորների մասնակցության արգելվող և թույլատրվող ձևերը (այո/ոչ) | Տվյալներ չկան | Արդյուք 1. Կատարվել է մասնակիորեն:<br>ՀՀ ԱԺ պատգամավորների վարքագծի կանոններին առնչվող հայեցակարգային դրույթները մշակված են և ԱԺ կոալիցիոն Խմբակցությունների հետհամաձայնեցված են:<br>Հիմք: Պետա-իրավական հանձնաժողովի տեղեկատվությունը<br><br>Արդյուք 2. Կատարվել է մասնակիորեն:<br>ՀՀ ԱԺ պատգամավորների վարքագծի կանոններին առնչվող հայեցակարգային դրույթները մշակված են և ԱԺ կոալիցիոն Խմբակցությունների հետհամաձայնեցված են:<br>Հիմք: Պետա-իրավական հանձնաժողով<br><br>Ցուցիչ 1-4-ի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի կլինեն միայն համապատասխան իրավական ակտերի ընդունման պայմաններում | ՀՀ արդարադատությ ան նախարարություն |
| | | | 2 «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանվել է ԱԺ պատգամավորի կատարած գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի իրականացման և դրա դիմաց վճարումը կատարելու կարգը (այո/ոչ) | Տվյալներ չկան | | |
| | | | 3. ՀՀ ԱԺ պատգամավորի կողմից Սահմանադրու-թյան 65-րդ հոդվածով նախատեսված և այլ պայմանների խախտման դեպքերի շուրջ իրավասու հանձնաժողովի կողմից կազմակերպված լսումների թվի | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ իրականացված լսումների ընդհանուր թվաքանակին | | | |
| | | | 4. Սահմանադրության 65-րդ հոդվածով սահմանված պայմանների խախտման փաստի հայտնաբերման կամ այդ փաստի քննության առթիվ Ազգային ժողովի իրավասու հանձնաժողովի կողմից նախաձեռնած ԱԺ քննարկումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ իրականացված քննարկումների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | 56.4 Ամբողջականցնել պատգամավորի կողմից նվերներ ստանալու արգելքին վերաբերվող նորմերը | 1. Պատգամավորի կողմից նվերներ ընդունելու կարգը սահմանված է | 1. Պատգամավորի կողմից նվերներ ստանալու արգելքի կարգավորման հիմքում դրված է պաշտոնատար անձանց կողմից նվերներ ստանալու արգելքի օրենսդրական կարգավորման դատավորի վարքագծի կանոններում ամրագրված դրույթները | Տվյալներ չկան | Արդույք 1. Կատարվել է մասնակիորեն:<br>Աժ պատգամավորների նվերներ ընդունելու կարգը սահմանված է հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով:<br>Ցուցիչ 1-6-ի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի կլինի մահյն օրենքը գործողության մեջ դնելուց հետո: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | 2 Պատգամավորի կողմից ի պաշտոնե որևէ մեկից նվեր ընդունելու կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալու, ինչպես նաև իր հետ բնակվող ընտանիքի անդամներին այդպիսի գործողություններից զերծ պահելու դրույթները և նվերներ ստանալու արգելքի չգործելու բացառությունները սահմանված են | Տվյալներ չկան | | |
| | | | 3 Թույլատրելի համարվող նվերների այն | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | առավելագույն արժեքը, որի գերազանցման մասին պատգամավորը պարտավոր է հայտնելի պատգամավորների վարքագծի կանոնների պահպանումը վերահսկող հանձաժողովին սահմանված է | | | |
| | | | 4. Նվերը վերադարձնելու կամ պետությանը հանձնելու կարգը սահմանված է | Տվյալներ չկան | | |
| | | | 5. Անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը կամ մատուցված ծառայությունը, փոխառությունը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը ընդգրկող նվեր հասկացությունը սահմանված է | Տվյալներ չկան | | |
| | | | 6. ՀՀ ԱԺ պատգամավորի կողմից նվերների ստացման դեպքերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պատգամավորների վարքկանոնի հետ կապված ՀՀ ԱԺ կայացած լսումների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| 57. Կատարելագործել պատգամավորների անձեռնմխելիության համակարգը | 57.1 Սահմանել քաղաքա-կան նկատառումներով պատգամավորների հե-տապնդումը բացառող պատգամավորական ան-ձեռնմխելիության համակարգ | | 1. «Ազգային ժողովի կա-նոնակարգ» ՀՀ օրենքով սահմանվել է պատգամա-վորի կողմից որև է իրա-վահարաբերությունում իր անձեռնամխելիությա-նը հղում կատարելու անթույլատրելիության մասին դրույթը (այո/ոչ) | Տվյալներ չկան | 2010թ. արդույքներ նախատեսված չեն | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | 2. Պատգամավորի անձեռնամխելիության վերանայմանը և/կամ վերացմանը նվիրված նախաձեռնությունների թվի հարաբերությունը | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պատգամավորների ընդհանուր թվաքանակին | | | |
| | | | 3. ՀՀ ԱԺ պատգամավորի անձեռնամխելիության չարաշահումների հետ կապված բողոքների ու ԶԼՄ-ներում տեղ գտած հարապարակումների ամբողջական թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պատգամավորների վարքագծի հետ կապված ՀՀ ԱԺ կայացած լսումների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| 58. Ապահովել օրենսդիր մարմնի աշխատանքներին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների արդյունավետ մասնակցությունը | 58.1 Ընդլայնել ԱԺ հանձնաժողովների գործունեությանը քաղաքացիական հասարակության արդյունավետ մասնակցության հնարավորությունները | 1. Առանց Ազգային ժողովի հանձնաժողովի որոշման` հանձնաժողովի նիստերին քննարկվող նախագծերի մշակմանը մասնակցած կամ դրա վերաբերյալ առաջարկություններ ներկայացրած անձանց մասնակցությունը թույլատրելու դրույթները սահմանված են | 1. Քաղաքացիական նախաձեռնությամբ հարցադրումների շուրջ կայացած լսումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ կայացած լսումների ընդհանուր թվաքնակին | Տվյալներ չկան | Արդյուք 1. Կատարված չէ:<br><br>Ցուցիչ 1-2-ի վերաբերյալ ՀՀ ԱԺ կողմից տեղեկություններ չկան : | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | 2. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների լիարժեք մասնա-կցությամբ կայացած լսումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ կայացած լսումների ընդհանուր թվաքնակին | Տվյալներ չկան | | |
| | 58.2 Ընդլայնել խորհրդարանական լսումներին քաղաքացիների արդյունավետ մասնակցության հնարավորությունները | 1. Աժ ընտրություննե-րի ժամանակ ընտրա-կան իրավունք ունե-ցող անձանց ոչ պա-կաս, քան 1 տոկոսի ստորագրությամբ առաջարկված օրենքի կամ Աժ որոշման նախագիծն Աժ-ում պաշտոնապես շրջանառության մեջ դնելու հարցով խորհրդարանական լսումներ անցկացնելու դրույթը սահմանված է | | | Արդյուք 1. Կատարված չէ: | ՀՀ արդարադատության նախարարություն |

**3.13** Ընտրական համակարգ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 59. Բացառել քաղաքական գործընթացներում ընտրական հանձնաժողովների անդամների ներգրավումը | 59.1 Բացառել ընտրական հանձնաժողովների անդամներին ակտիվ մասնակցությունը քաղաքական գործընթացներին ընտրություններին նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում | 1. Տարբեր մակարդակների ընտրական հանձնաժողովների ձևավորման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն, այդ թվում` ընտրական հանձնաժողովների ձևավորման սկզբունքների կատարելագործման առաջարկություններ | 1. Ընտրական հանձնաժողովի անդամ նշանակված հանրային ծառայողների թիվը | Տվյալներ չկան | **Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:**<br><br>Ուսումնասիրվել է տարբեր մակարդակների ընտրական հանձնաժողովների ձևավորման միջազգային լավագույն փորձը: Հանձնաժողովների ձևավորման սկզբունքների կատարելագործման վերաբերյալ մշակվել են համապատասխան առաջարկություններ, որոնք քննարկվել են Վենետիկի հանձնաժողովի, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի փորձագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Արդյունքում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (նոր խմբագրությամբ) նախագծում նախատեսվել է ընտրական հանձնաժողովների ձևավորման նոր կարգ, ըստ որի կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները ձևավորվելու են պրոֆեսիոնալիզմի սկզբունքով, իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովները`խառը:<br><br>**Ցուցիչ 1-ի** փաստացի արժեքը 0 է, քանի որ այն ենթադրում է օրենսդրական փոփոխություն:<br><br>**Ցուցիչ 2- ի** փաստացի արժեքը 0 է, քանի որ այն ենթադրում է օրենսդրական փոփոխություն: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| | | | 2. Ընտրական հանձնաժողովի անդամ նշանակված հանրային ծառայողների թվի հարաբերությունը հանձնաժողովների անդամների ընդհանուր թվին | Տվյալներ չկան | | |
| 60. Բարելավել ընտրական հանձնաժողովներին ուղղված դիմումների և բողոքների քննարկման գործընթացը | 60.1 Երաշխավորել անձանց սահմանադրական իրավունքների դատական արդյունավետ պաշտպանությունը ընտրությունների արդյունքներով պայմանավորված գործընթացներում | | 1. Կատարվել են ընտրական բողոքների քննարկման կարգի վերաբերյալ 2007թ. ԱԺ ընտրությունների կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանի առաջարկությունները (այո/ոչ) | այո | Տվյալ միջոցառմամբ 2010թ. արդյունքներ չեն նախատեսված:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը այն է, որ ընտրական բողոքների քննարկման կարգի վերաբերյալ 2007թ. ԱԺ ընտրությունների կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանի առաջարկությունները ընդունվել և կատարվել են:<br><br>Ցուցիչ 2, 3, 4. 5. 2010թ. ընտրություններ տեղի չեն ունեցել<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| | | | 2. Ընտրական հանձնաժողովներում քննարկված դիմում-բողոքների թվի հարաբերությունը դիմում-բողոքների ընդհանուր թվին | Տվյալներ չկան | | |
| | | | 3. Ընտրական հանձնաժողովներում դիմումների և բողոքների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած քննարկումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կայացած դիմումբողոքների քննարկումների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | | | 4. Ընտրական հանձնաժողովների որոշումները դատական կարգով վիճարկելու դեպքերի | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում հանձնաժողովների կողմից ստացված դիմումների և բողոքների ընդհանուր թվաքանակին | | | |
| | | | 5. Ընտրությունների արդյունքներով պայմանավորված գործընթացներում անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության դեպքերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կայացած ու ընտրությունների հետ կապված դատական պրոցեսների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| 61. Ընդլայնել ընտրական գործընթացների վերահսկողությանը քաղաքացիական հասարակության մասնակցությունը | 61.1 Ներդնել ընտրական գործընթացների վերահսկողությանը քաղաքացիական հասարակության մասնակցության արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ | | 1. Թեժ գծի միջոցով ընտրական հանձնաժողովների ստացած ահազանգերի թիվը | Տվյալներ չկան | Տվյալ միջոցառմամբ 2010թ. արդյունքներ չեն նախատեսված:<br>Ցուցիչ 1-5 2010թ. ընտրություններ տեղի չեն ունեցել | ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով. քաղաքացիական հասարակության միավորումներ (Համաձայնությամբ) |
| | | | 2. Թեժ գծի միջոցով ընտրական հանձնաժողովների ստացած ահազանգերի վերաբերյալ ձեռնարկված օպերատիվ միջոցների թվի հարաբերությունը ահազանգերի ընդհանուր թվին | Տվյալներ չկան | | |
| | | | 3. Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների համար կազմակերպված դասընթացների թիվը | Տվյալներ չկան | | |
| | | | 4. Դիտորդական առաքելության արդյունքներով հրապարակումների և մոնիտորինգի զեկույցների թվի հարաբերությունը դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների ու ԶԼՄ-ների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| 62.Շարունակաբար կատարելագործել ընտրացուցակների վարման գործընթացը | 62.1 Բարձրացնել բնակչության պետական ռեգիստրի կազմման որակը և շարունակել տեղական | | 1. Բնակչության տեղական ռեգիստրները ներդրվել են ՀՀ ողջ տարածքում (այո/ոչ) | Այո | Տվյալ միջոցառմամբ 2010թ. արդյունքներ չեն նախատեսված:<br>Ցուցիչ 1. ՀՀ ոստիկանության ԱՎՎ տարածքային բաժանմունքներում ներդրվել են բնակչության տեղական ռեգիստրներ: | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |
| | | | 2. Ընտրացուցակներում տեղ | Տվյալներ | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | ռեգիստրների ներդրման աշխատանքները | | գտած անճշտությունների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ընտրացուցակների վերանայման ընդհանուր թվաքանակին | չկան | Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքի հաշվարկը իմաստավորված է նախընտրական շրջաններում:<br>Ցուցիչ 3. 2010թ. ընտրություններ տեղի չեն ունեցել<br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար | |
| | | | 3. Ընտրացուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ բողոքների և դիմումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ընտրացուցակների վերանայման արդյունքներով իրականացված ճշգրտումների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| 63.Հստակ տարանջատել պաշտոնատար անձանց քաղաքական ընթացիկ գործունեությունը նախընտրական քարոզչությունից | 63.1 Ապահովել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց քաղաքական գործունեության տարանջատումը նախընտրական քարոզչության գործընթացներից | | 1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող գույքը նրանց կողմից անհատույց կամ արտոնյալ պայմաններով նախընտրական քարոզչության նպատակով օգտագործելու դրույթների խախտման վերաբերյալ բողոքների հարաբերությունը ընտրական գործընթացների վերաբերյալ դիմում-բողոքների ընդհանուր թվին | Տվյալներ չկան | Տվյալ միջոցառմամբ 2010թ. արդյունքներ չեն նախատեսված:<br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| | | | 2. Օրենսդրորեն ամրագրվել է նախընտրական քարոզչության նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող գույքի օգտագործումը բոլոր թեկնածուների համար հավասար հիմունքներով նախատեսելու դրույթը (այո/ոչ) | ոչ | | |
| | | | 3. Օրենսդրորեն սահմանվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով թեկնածուներին դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու պարտականություն | ոչ | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 4. Օրենսդրորեն արգելվել է նախընտրական քարոզչական նյութերի փակցնումը հանրային սեփականություն հանդիսացող վայրերում (այո/ոչ) | ոչ | | |
| | | | 5. Օրենսդրորեն սահմանվել է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային պարտականությունների կատարումից ազատելու կարգը (այո/ոչ) | ոչ | | |
| 64. Խստացնել ընտրակաշառք երևույթի դեմ պայքարը | 64.1 Ապահովել ընտրակաշառք երևույթի դեմ պայքարի կանխարգելումը, հայտնաբերումն ու հանրությանը դրա վերաբերյալ իրազեկումը | | 1. “Բարեգործության մասին” ՀՀ օրենքում և ընտրական օրենսգրքում կատարված է փոփոխություն, ըստ որի բարեգործական ծրագրերի իրականացումը նախընտրական քարոզչությունը սկսելու օրվանից մինչև քվեարկության օրը ներառյալ արգելվում է՝ բացառությամբ սահմանված դեպքերի (այո/ոչ) | ոչ | Տվյալ միջոցառմամբ 2010թ. արդյունքներ չեն նախատեսված։<br>Իրավիճակը գնահատվում է բավարար։ | ՀՀ արդարադատության նախարարություն,<br>ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով,<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն |
| | | | 2. Օրենսդրորեն սահմանվել է նախընտրական քարոզչության հետ միաժամանակ բարեգործություն իրականացնելու համար վարչական պատասխանատվություն (այո/ոչ) | ոչ | | |
| | | | 3. Ընտրողներին կաշառելու. այդ թվում՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ ծառայություններ տալու, մատուցելու, խոստանալու ինչպես նաև կուսակցությունների կողմից որևէ ձևով ընտրողներին ֆինանսական և/կամ նյութական օժանդակություն ցուցաբերելու մասին հայտնելու արդյունքում բացահայտված հանցագործությունների | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հարաբերությունը հայտնելու արդյունքում չբացահայտված դեպքերին | | | |
| | | | 4. Ընտրություններին մասնակցած քաղաքացիների թվի հարաբերությունը ընտրացուցակներով նախատեսված ընտրողների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | | | 5. ՀՀ կառավարությունը դրամաշնորհներ է տրամադրում ընտրողների իրավագիտակցության բարձրացմանն ուղղված հանրամատչելի ուսուցողական ծրագրերի կազմակերպման նպատակով (այո/ոչ) | ոչ | | |
| 65.Բարձրացնել կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը և ֆինանսական գործունեության վերահսկողությունը | 65.1 Կուսակցությունների ֆինանսավորման մեխանիզմները համապատասխանեցնել ՀՀ ընտրական օրենսգրքով՝ նախընտրական հիմնադրամների ձևավորման համար սահմանված մեխանիզմներին | 1. «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ կամ համայնքների բաժնեմասով տնտեսական կազմակերպությունների կողմից կուսակցություններին նվիրատվությունների կատարումը բացառող դրույթները սահմանված են | 1. «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կուսակցությունների ֆինանսավորման ընթացակարգերը համապատասխանեցվել են ՀՀ ընտրական օրենսգրքում սահմանված նորմերին (այո/ոչ) | ոչ | Արդյունք 1 Կատարվել է մասնակիորեն:<br>ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքի նախագիծը, որը համաձայնեցվել է բոլոր շահագրգիռ գերատեսչությունների հետ: Սակայն նկատի ունենալով, որ 2011 թվականի հունվարի մեկից համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1. հոդվածի առաջին մասի՝ իրավական ակտերի նախագծերը պետք է ներկայացվեն կարգավորման ազդեցության գնահատման, ուստի հիշյալ նախագիծը պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններին կարգավորման ազդեցության գնահատումը իրականացնելու համար:<br><br>Ցուցիչներ 1, 2 արժեքի հիմքն այն է, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքը դեռևս չի ընդունվել:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | 2. «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով արգելվել է քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ համայնքների բաժնեմասով տնտեսական կազմակերպությունների կողմից կուսակցություններին նվիրատվությունների կատարումը (այո/ոչ) | ոչ | | |
| | 65.2 Ներդնել կուսակցությունների ֆինանսական գործունեության աուդիտի ինստիտուտը | 1. Յուրաքանչյուր համապետական ընտրություններից հետո՝ օրենքով սահմանված ժամկետում պետության կողմից ֆինանսավորվող կուսակցությունների ֆինանսատնտեսական գործունեության ստուգման | 1. ՀՀ օրենսդրությամբ ամրագրվել է յուրաքանչյուր համապետական ընտրություններից հետո բոլոր կուսակցությունների կամավոր աուդիտի անցկացման մասին դրույթներ (այո/ոչ) | ոչ | Արդյունք 1 Կատարվել է մասնակիորեն:<br>ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքի նախագիծը, որը համաձայնեցվել է բոլոր շահագրգիռ գերատեսչությունների հետ: Սակայն նկատի ունենալով, որ 2011 թվականի հունվարի մեկից համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1. հոդվածի առաջին մասի՝ իրավական ակտերի նախագծերը պետք է ներկայացվեն կարգավորման ազդեցության գնահատման, ուստի հիշյալ նախագիծը պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններին կարգավորման ազդեցության գնահատումը իրականացնելու համար:<br>Ցուցիչներ 1, 2, արժեքի հիմքն այն է, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Վերահսկիչ պալատ |
| | | | 2. Կուսակցությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի չափորոշիչներով սահմանվել է պարտադիր աուդիտի անցկացման համար | ոչ | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | պարտադիր աուդիտի, ինչպես նաև կուսակցության համագումարի կամ մշտապես գործող մարմնի որոշմամբ` բոլոր կուսակցությունների կամավոր աուդիտի անցկացման մասին դրույթները սահմանված են Կուսակցությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի չափորոշիչները սահմանված են | անհրաժեշտ գումարները պետության կողմից կուսակցություններին տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալներում ներառելու դրույթը (այո/ոչ) | | փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքը դեռևս չի ընդունվել: Ցուցիչներ 3, 4, 5, 6, և 7 2010թ. ընտրություններ տեղի չեն ունեցել Իրավիճակը գնահատվում է բավարար: | |
| | | | 3. Կուսակցությունների կողմից ներկայացված հայտարա-րագրերի թվի հարաբերությունը առկա կուսակցությունների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | | | 4. Կուսակցությունների կողմից ներկայացված և օրենսդրական խախտումներ պարունակող ֆինանսական հայտարարագրերի թվի հարաբերությունը առկա կուսակցությունների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | | | 5. Կուսակցությունների կողմից ներկայացված հայտարարագրերի արդյունքներով իրավասու մարմինների կողմից իրականացված գործողությունների թվի հարաբերությունը կուսակցությունների կողմից ներկայացված հայտարարագրերի ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | | | 6. Իրավասու մարմինների կողմից գնահատված նախընտրական քարոզարշավներում ծախսված ֆինանսական միջոցների աճով պայմանավորված գումարի հարաբերությունը նախընտրական քարոզարշավում օրենսդրորեն թույլատրված գումարի չափին | Տվյալներ չկան | | |
| | | | 7. Ներկայացված հայտարարագրերի թվի հարաբերությունը ընտրություններին մասնակցած և օրենսդրորեն հայտարարագրեր ներկայացնելու | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պարտավորություն ունեցող կուսակցությունների ընդհանուր թվաքանակին | | | |
| 66. Վերացնել բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովի անդամների, ՀՀ ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում գրանցված թեկնածուների անձեռնամխելիությունը | 66.1 Սահմանափակել ընտրական գործընթացի մասնակիցների անձեռնամխելիության մակարդակը | 1. Բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովի անդամների անձեռնամխելիության վերացման օրենսդրական փոփոխությունների նախագիծ | 1. Բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովի անդամների անձեռնամխելիությունը վերացված է(այո/ոչ) | Այո | Արդյունք 1 Կատարվել է ամբողջությամբ:<br><ՀՀ ընտրական օրենսգրքում> փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը և ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:<br><br>Ցուցիչներ 1, 2 արժեքի հիմքն այն է, որ <ՀՀ ընտրական օրենսգրքում> փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2010թ. հունիսի 8-ին (ՀՕ-82-Ն):<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն, |
| | | | 2. ՀՀ ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում գրանցված թեկնածուների անձեռնամխելիությունը վերացված է(այո/ոչ) | Այո | | |

### 3.14 Տեղական ինքնակառավարում

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 70. Բարձրացնել համայնքի ֆինանսական անկախությունը և համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կառավարման արդյունավետությունը | 70.6 Ապահովել գույքահարկի և հողի հարկի հաշվառման և գանձման տեղեկատվական ավտոմատացված համակարգերի արդյունավետ շահագործումը | 1.Գույքահարկի և հողի հարկի տվյալների շտեմարաններում անճշտությունների վերացում, գույքահարկի և հողի հարկի հաշվառման և գանձման տեղեկատվական ավտոմատացված համակարգերի կատարելագործում և արդյունավետ շահագործում | 1.Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների հավաքագրման մակարդակի աճ, (տոկոս) | Տվյալներ չկան | Արդյունք 1.Իրականացված է մասնակիորեն<br>2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ հողի հարկ վճարողներին հաշվառող մարմին դեռևս չհանդիսացող թվով 47 համայնքները ՀՀ կառավարության 13.02.2003թ. «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N192-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան, 2010թ. տարեվերջին ստանձնել են հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հաշվառող մարմնի գործառույթները:<br>Հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հաշվառող մարմնի գործառույթները ստանձնող բոլոր համայնքների համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների համար մինչև տեղեկատվական համակարգերի փոխանցումը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել են գույքահարկի և հողի հարկի հաշվարկման ու վճարման հարցերը կարգավորող օրենսդրության սեմինարներ:<br>2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բոլոր տեղական ինքնակառավարման մարմինները հանդիսանում են հողի հարկ վճարողների հաշվառման գործառույթներ իրականացնող տեղական ինքնակառավարման մարմիններ:<br>Գույքահարկի և հողի հարկի հաշվառման տեղեկատվական ավտոմատացված համակարգերի շահագործման արդյունավետության բարձրացման, մասնավորապես լիազոր մարմինների կողմից հաշվառող մարմիններին համապատասխան տեղեկությունների ներկայացման, հաշվառման և դրանց արժանահավատության բարձրացման խնդիրների լուծման նպատակով 2011թ. հունիսի 10-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում կայացել է խորհրդակցություն՝ շահագրգիռ մարմինների (ՀՀ ԿԱ ՊԵԿ, ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ, ՀՀ մարզպետարանների, համայնքների) ներկայացուցիչների մասնակցությամբ:<br>Խորհրդակցության ընթացքում քննարկվել են առկա խնդիրները և ներկայացվել են դրանց լուծման նպատակով համապատասխան մարմինների կողմից իրականացման ենթակա գործողությունները: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ՀՀ համայնքներ |
| | | | 2.Բյուջետային ծախսերի չափը համայնքի բնակչության մեկ շնչի հաշվով (դրամ) | Տվյալներ չկան | | |
| | 70.7 Բարձրացնել համայնքի տարածքում գործունեության թույլտվությունների տրամադրման և դրանց դիմաց տեղական տուրքերի և վճարների գծով գանձումների ապահովման գործընթացի արդյունավետության մակարդակը | 1. Տեղական տուրքերի և վճարների գծով գանձումների ավտոմատացման ծրագրի ներդնում համայնքներում | 1. Տեղական տուրքերի և վճարների գանձման ավտոմատացման համակարգ կիրառող համայնքների թիվը ընդհանուրի մեջ (տոկոս) | 12,1% | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>111 համայնքներում ներդրված է տեղական տուրքերի և վճարների կառավարման համակարգ:<br>Ցուցիչ 1. 915 համայնքներից 111-ում ներդրված է համակարգը: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ |
| | 70.8 Ներդնել համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգեր ու գույքի կառավարման պլաններ | 1. Համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման պլանների մշակման վերաբերյալ ուղեցույց | 1. Համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ (տոկոս) | 28,4% | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Մշակվել է համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման պլանների մշակման վերաբերյալ ուղեցույց և այն տրամադրվել է բոլոր համայնքներին<br>Ցուցիչ 1. ՏԿՆ տեղեկատվական համակարգի տվյալներ: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 70.10 Սահմանել համայնքային գնումների գործընթացի կազմակերպման ընթացակարգեր` ուղղված գործընթացի թափացիկության ու հրապարակայնության բարձրացմանը | 1.Էլեկտրոնային գնումների հայեցակարգի մշակումից հետո այնտեղ ամրագրված սկզբունքների և մեխանիզմների կիրառում ՀՀ համայնքներում<br>2.Համայնքային գնումների ավելի թափանցիկ ու հրապարակային գործընթաց, ապահովելու արդյունքում համայնքի բյուջեի ծախսերի արդյունավետություն ու խնայողություն | 1. Համայնքների գնումների գործընթացի կազմակերպման վերաբերյալ բողոքների թիվը, ընդհանուր բողոքների մեջ (տոկոս) | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>Էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրման նպատակով 2010թ. Կազմակերպված միջազգային մրցույթի արդյունքում ընտրվել է խորհրդատու, որի հետ հունիս ամսին կնքվել է պայմանագիր: Համակարգի շահագործումը նախատեսվում է սկսել 2011թ-ից: | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| 72. Բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը | 72.1 Ներդնել բնակչությանը ՏԻՄ-երի գործունեության մասին պարբերաբար իրազեկելու ընթացակարգեր | 1. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ կազմակերպված քարոզարշավներ | 1. Բնակչության գիտակցության և իրազեկության մակարդակը համայնքի դերի և գործունեության մասին (համայնքային հարցման տվյալներ) | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>ՀՀ ՏԿ նախարարության մասնագետների կողմից ՀՀ մարզխորհուրդների նիստերում և համայնքներում կազմակերպվում են խորհրդակցություններ, որտեղ քննարկվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանն առնչվող խնդիրներ և դրանց վերաբերյալ տրվում պարզաբանումներ : Բացի այդ, ՀՀ մարզպետարանների կողմից համայնքներում հրավիրվել են բնակիչների ընդհանուր ժողովներ, ՀԿ-ների կողմից կազմակերպվել են համայնքների բյուջեների և դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի հրապարակային քննարկումներ:<br>Ցուցիչ 1, Ցուցիչ հաշվարկի համար անհրաժեշտ է իրականացնել համապատասխան զանգվածային հարցում: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| | 72.2 Սահմանել համայնքի բյուջեի նախագծի և բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվության պարտադիր հրապարակման և հանրային քննարկումների կազմակերպման հստակ ընթացակարգեր | 1. Սահմանված ընթացակարգերի հետևողական կիրառում, համայնքի բյուջեի և դրա կատարման հաշվետվությունների թափանցիկության և հրապարակայնության էական բարձրացում | 1. Համայնքի բյուջեի նախագծի և բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումների և/կամ կազմակերպված հանրային քննարկումների թիվը | 908 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>ՀՀ համայնքների 2010թ. բյուջեների կատարման և 2011թ. բյուջեների կազմման գործընթացների թապանցիկության և հրապարակայնության վերաբերյալ ՀՀ մարզպետներին տրվել են հստակ հանձնարարականներ, որոնք քննարկվել են մարզխորհուրդների նիստերում, տեղերում ցուցաբերվել է խորհրդատվական օժանդակություն: Գործընթացի իրականացումը պարբերաբար ուսումնասիրվում է:<br>Ցուցիչ 1. Համաձայն ՀՀ մարզպետարանների զեկույցների` համայնքային բյուջեների եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, հաստատված բյուջեն և նրանում կատարվող փոփոխությունները հրապարակվել են թվով 908 համայնքների ցուցատախտակներին փակցնելու և և այլ միջոցներով: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| | 72.4 ՏԻՄ-երում քաղաքացիների ընդունելության կազմակերպման գործընթացի կատարելագործում | 1. Համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության թափանցիկության բարձրացում, ՏԻՄ-երի հանրային կապերի ուժեղացում | 1. ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների վերաբերյալ բնակչության բողոքների և դիմումների թիվը | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն .<br>Համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության թափանցիկության վերաբերյալ ՀՀ մարզպետներին տրվել են հստակ հանձնարարականներ, որոնք քննարկվել են մարզխորհուրդների նիստերում, տեղերում ցուցաբերվել է խորհրդատվական օժանդակություն: Գործընթացի իրականացումը պարբերաբար ուսումնասիրվում է:<br>Ցուցիչ 1, 2010 թվականին ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների վերաբերյալ բնակչության բողոքներ և դիմումներ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն չեն ներկայացվել: Առաջարկվում է հստակեցնել ցուցիչը` բողոքների հասցեականության առումով: Հարկ է նշել, որ առ 31.12.2010թ.` համայնքների ղեկավարների ընդունելություններին մասնակցել է թվով 185581, իսկ ավագանու ընդունելություններին` 44821 քաղաքացի : | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ համայնքներ |
| | 72.5 Կատարելագործել համայնքի սեփականություն | 1. Համայնքի սեփակա- | 1. Համայնքի սեփա- | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ: | ՀՀ տարածքային կառավարման |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | համարվող գույքի հրապարակային սակարկությունների կառուցակարգերը և ընթացակարգերը | նություն համարվող գույքի հրապարակային սակարկությունների թափանցիկության ու հրապարակայնության աստիճանական բարձրացում | կանություն համար-վող գույքի օտարման և/կամ օգտագործման տրամադրման հետ կապված բողոքների ու դիմումների թվի հա-րաբերությունը նույն ժամանակա-հատվածում գույքի օտարման և/կամ օգտագործման տրա-մադրման վերաբերյալ կայացված որոշում-ների ընդհանուր թվին | | Համայնքի սեփականություն համարվող գույքի հրապարակային սակարկությունների թափանցիկությունը ապահովվում է օրենսդրական գործող պահանջները: 2010թ. Տվյալներով կայացել է համայնքային սեփականության հողի 2521 սակարկություն, 1 սակարկության մասնակիցների միջին թիվը կազմել է 2 մասնակից Ցուցիչ 1. Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարման և/կամ օգտագործման տրամադրման հետ կապված բողոքներ ու դիմումներ ՀՀ ՏԿ նախարարություն չեն ներկայացվել: | նախարարություն ՀՀ համայնքներ |
| | 72.6 Բարձրացնել ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայություններում բնակչության իրազեկության և ներգրավվածության մակարդակը | | 1. Տեղական ինքնակա-ռավարման բնագա-վառում պետական քաղաքականության լուսաբանմանը նվիր-ված հեռուստաեթերի ժամաքանակի հարա-բերությունը բնակչու-թյանը ՏԻՄ-երի գոր-ծունեության մասին իրազեկմանը նվիրված ընդհանուր եթերաժամին | Տվյալներ չկան | 2010թ. ակնկալվող արդյունք նախատեսված չէ Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքի հաշվարկի մեխանիզմները հստակ չեն և կարիք ունեն վերանայման:Առաջարկվում է ցուցիչը վերասահմանել` «Տեղական ինքնակա-ռավարման բնագավառում պետական քաղաքականության լուսաբանմանը նվիրված հեռուստաեթերի ժամաքանակը»: Իրատեսական է ցուցիչի հաշվարկը ԶԼՄ-ների որնե ասոցիացիայի կողմից: Հարկ է նշել նաև, որ Համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգեր ներդրված են թվով 230 համայնքներում: Մի շարք քաղաքային համայնքներում բացվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ, աշխատանքները շարունակվում են | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ համայնքներ |
| | 72.6 Բարձրացնել ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայություններում բնակչության իրազեկության և ներգրավվածության մակարդակը | | 2. Համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը, ըստ համայնքների | 230402 | Ցուցիչ 2. Համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը` ըստ համայնքների նպատակահարմար չէ ներկայացնել: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ համայնքներ |
| 73. Բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականությունը | 73.3 Հստակեցնել համայնքում ներքին վերահսկողության ընթացակարգերը | 1.Ներքին աուդիտների վերլուծության հիման վրա մեթոդական ուղեցույցի մշակում | 1.Ներքին վերահսկողության ընթացակարգեր ներդրած համայնքների թիվը | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն: Մշակվել է հանրային հատվածում ներքին աուդիտի ձեռնարկը, որը նախատեսվում է հաստատման ներկայացնել <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի ընդունումից հետո`այսինքն 2011թ. | ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| | 73.4 Օրենսդրորեն սահմանել համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվությունը կազմելու, ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու և հրապարակելու դրույթներ, ընդունել և ներդնել | 1.Համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվությունը կազմելու, ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու և հրապարակելու օրենսդրական | 1. Համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ համայնքնի ղեկավարի կողմից հաշվետվությունները ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացրած և | 100 | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածին համապատասխան` համայնքի ղեկավարների կողմից պարբերաբար ներկայացվում են համայնքների բյուջեների վերաբերյալ հաշվետվություններ, որտեղ արտացոլվում են համայնքի քառամյա զարգացման ծրագրի և համայնքին` օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանն ուղղված միջոցառումները: Ցուցիչ 1. ՀՀ բոլոր համայնքներում ներկայացվել են բյուջեների կատարման հաշվետվությունները, որոնցով, ըստ էության, ներկայացվել է նաև համայնքի քառամյա զարգացման ծրագրի` տարեկան կտրվածքով հաշվետվությունը: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ համայնքներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | համապատասխան ընթացակարգեր | դրույթներ, համապատասխան ընթացակարգեր | հրապարակած համայնքների տեսակարար կշիռը ընդհանուր համայնքների թվում, տոկոս | | | |
| | 73.5 Սահմանել համայնքային ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատանքների կատարման հստակ ցուցանիշներ և համայնքներում ներդնել մոնիտորինգի և գնահատման համակարգեր ու ընթացակարգեր | 1. Համայնքային ծառայություններ մատուցող կազմակերպություններ ի աշխատանքների կատարման հստակ ցուցանիշներ<br><br>2. Համայնքային ծառայությունների մատուցման մոնիտորինգի և գնահատման համակարգեր ու ընթացակարգեր | 1. Համայնքներում ներդրվել են համայնքային ծառայություններ մատուցող կազմակերպություննե րի աշխատանքների մոնիտորինգի և գնահատման համակարգեր և ընթացակարգեր (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1- 2. Իրականացված մասամբ:<br>ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 38 արձանագրությամբ հավանության արժանացած ՀՀ մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգը, համաձայն որի մշակվեց և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 10 մարզերի մարզային զարգացման ծրագրերը: Ծրագրերի հիմնական նպատակներից է նաև համայնքային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը և մատչելիությունը, որոնց նկատմամբ մարզպետարանների կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով հսկողություն իրականացնելու համար մշակվել և ներդրվել են մոնիտորինգի և գնահատման համակարգեր:<br>Հիմքը՝ ՀՀ կառավարության 07.05.2009թ. N 505-Ն, 26.06.2009թ. N 782-Ն, 01.12.2009թ. N 1330-Ն, 25.02.2010թ. N271-Ն, 16.03.2010թ. N 353-Ն, 29.04.2010թ. N 560-Ն, 06.05.2009թ. N 609-Ն, 22.07.2010թ. N 1060-Ն, 30.08.2010թ. N 1756-Ն որոշումներ: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>Ըստ ՏԻՄ-երի լիազորությունների ոլորտների՝ պաշտոնական լիազոր մարմիններ<br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | 73.6 Հստակեցնել ՀՀ համայնքների սեփականություն համարվող գույքի պարտադիր պետական գրանցման պայմաններն ու ընթացակարգերը | 1. ՀՀ համայնքների սե-փականություն համար-վող գույքի պարտադիր պետական գրանցման ընթացակարգերի վեր-լուծություն | 1. Համայնքի սեփակա-նություն համարվող գույքը ամբողջությամբ պետական գրանցում կատարած համայնք-ների թվի հարաբերու-թյունը ՀՀ բոլոր հա-մայնքների թվին (տոկոս) | 43.1 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ մշակվել և կիրառության մեջ են դրվել գույքի պետական գրանցման գործընթացը պարզեցնող իրավական ակտեր և ընթացակարգեր:<br>Հիմք՝ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրաման<br>Ցուցիչ 1. Ցուցիչով ներկայացվել է իրավունքի պետական գրանցում ստացած շինությունների թվի հարաբերությունը իրավունքների պետական գրանցման ենթակա շինությունների ընդհանուր թվին: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| 74. Բարձրացնել համայնքի և համատիրության միջև գործակցության արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությու նը | 74.1 Հստակեցնել համայնքի կողմից համատիրությանն օժանդակության ձևերը, հա-մատիրությանների վերաբեր-յալ նոր հայեցակարգային մոտեցումներ | | 1. ՏԻՄ-երի կողմից համատիրությանը պատվիրակած լիազորությունների իրականացման ծախսերի հարա-բերությունը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերին (տոկոս) | Տվյալներ չկան | 2010թ. Համար ակնկալվող արդյունքներ նախատեսված չեն: | ՀՀ քաղաքաշինության նախարարություն,<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ համայնքներ, համատիրություններ |
| | 74.2 Հստակեցնել և կարգավորել համայնք-համատիրություն-բնակիչ փոխհարաբերությունները, սահմանել դրանց օրինականության նկատմամբ պետական վերահսկողություն | | | | 2010թ. Համար ակնկալվող արդյունքներ նախատեսված չեն: | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ համայնքներ, համատիրություններ |
| 75. Բարձրացնել ՔԿԱԳ | 75.1 Ներդնել ՔԿԱԳ ծառայությունների | 1. ՔԿԱԳ ծառայություն-ները բարձր տեխնո- | 1. Օրենսդրորեն սահմանվել է ՔԿԱԳ | Տվյալներ չկան | Արդյունք 1-2. Իրականացված է ամբողջությամբ | ՀՀ տարածքային կառավարման |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| ծառայությունների գործունեության արդյունավետությունը | համագործակցված աշխատանքն ապահովող միասնական ժամանակակից տեխնիկական համակարգ և ավտոմատացնել ՔԿԱԳ ծառայության գործառույթները | լոգիական միջոցներով վերազինում<br><br>2. ՔԿԱԳ ծառայության տվյալների միասնական էլեկտրոնային բանկ, միասնական ժամանակակից տեխնիկական համակարգ | ծառայությունների դիմաց կոնկրետ համայնքի բնակչից գանձվող պետական տուրքի հաշվին ՀՀ գյուղական համայնքների բյուջեների եկամտային մասերի աճ | | Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայություններում տեղադրված են էլեկտրոնային կառավարման համակարգեր, գործառույթներն իրականացվում են տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալների էլեկտրոնային բանկերի կիրառմամբ<br><br>Ցուցիչ 1. Առաջարկվում է ցուցիչը հանել, քանի որ այն չի բնութագրում կոռուպցիոն որևէ իրավիճակ:<br><br>Ցուցիչ 2. ՔԿԱԳ-երի on-line ռեսուրսով ինտերնետային կայքի կառուցման ծրագիր նախատեսված չէ: | նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | | | 2. Իրական ժամանակում (on-line) ռեսուրսով օժտված, ինտերնետային կայք ունեցող ՔԿԱԳ ծառայությունների թվի հարաբերությունը ՔԿԱԳ ծառայությունների ընդհանուր թվին (տոկոս) | Տվյալներ չկան | | |
| 76. Զարգացնել ՏԻՄ-երի կարողությունները և ամբողջականացնել համայնքային ծառայության համակարգը | 76.1 Հետևողականորեն զարգացնել համայնքային ծառայության համակարգը | 1.Համայնքների տեղեկատվական համակարգերի օգտագործման հմտությունները ներառվել են համայնքային ծառայողների պարտադիր վերապատրաստման ծրագրերում,<br><br>2.Համայնքային ծառայողների ուսուցման և վերապատրաստման ծրագրերի իրականացում | 2.Համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման նոր ընթացակարգերով հայտարարված մրցույթների թիվը | 1387 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br><br>«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» թեման ընդգրկված է համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրում:<br><br>Արդյունքը 2. Իրականցաված է ամբողջությամբ:<br><br>2010 թվականին վերապատրաստվել է 856 համայնքային ծառայող:<br><br>Ցուցիչ 1. Տվյալները ստացվել են ՏԿՆ տեղեկատվական համակարգից:<br><br>Ցուցիչ 2. 2010 թվականին ՀՀ ՏԿ նախարարությունը վերապատրաստման դրամաշնորհային ծրագրեր չի իրականացրել: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | | | ՏԻՄ-երի և համայնքային ծառայողների ուսուցման և վերապատրաստման դրամաշնորհային ծրագրերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում անցկացված ուսուցման և վերապատրաստման ծրագրերի ընդհանուր թվին (տոկոս) | | | |
| | 76.3 Համայնքներում մշակել և ներդնել քաղաքացիական հասարակության հետ արդյունավետ համագործակցության, իրազեկման ու մասնակցության ընթացակարգեր, խթանել | 1.ՏԻՄ-երի և համայնքների մասնավոր սեկտորի, ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպություններ ի միջև համագործակցության | 1.ՏԻՄ-երի և համայնքների մասնավոր սեկտորի, ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների միջև համագործակցության | | Արդյունք 1. Իրականացված չէ:<br><br>Նման տեղեկատվության տրամադրումը չի ընդգրկված ՏԻՄ-երի կողմից պարտադիր ներկայացվող տեղեկատվության ցանկում:<br><br>Արդյունք 2, Իրականացված չէ:<br><br>Նման տեղեկատվության տրամադրչումը չի ընդգրկված ՏԻՄ-երի կողմից պարտադիր ներկայացվող տեղեկատվության ցանկում: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | սոցիալական գործընկերությանն ուղղված ՏԻՄ-երի գործունեությունն ու լիազորությունները պատվիրակելու պրակտիկան | մասին կնքված հուշագրեր և/կամ պայմանագրեր:<br><br>2.Սոցիալական գործընկերությանն ուղղված ՏԻՄ-երի գործունեության ու լիազորությունները պատվիրակելու պրակտիկայի արմատավորում ու խթանում: | մասին կնքված հուշագրերի և/կամ պայմանագրերի թիվը | | Ցուցիչ 1, Ցուցիչի արժեքը հաշվարկել հնարավոր չէ՝ Արդյունք 1-ում նշված պատճառով:<br>Ցուցիչ 2, Ցուցիչի արժեքը հաշվարկել հնարավոր չէ՝ Արդյունք 2-ում նշված պատճառով:<br>Առաջարկվում է լրամշակել ակնկալվող արդյունքների և համապատասխան ցուցիչների սահմանումները: | |
| | | | 2.Սոցիալական գործընկերությանն ուղղված ՏԻՄ-երի կողմից պատվիրակված լիազորությունների թիվը | | | |

**3.15** Մասնավոր հատված

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 78. Ուժեղացնել մասնավոր հատվածում կոռուպցիայի առաջարկի կանխարգելումը | 78.1 Ամբողջականացնել հաշվապահական հաշվառման և աուդիտի միջազգային չափորոշիչների ներդրումը | 1.Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները հաստատված են<br><br>2.Աուդիտի միջազգային ստանդարտները (IFRS) թարգմանված են<br><br>3.Հաշվապահների որակավորման և մասնագիտական վերապատրաստման համակարգը համապատասխանում է սահմանված չափորոշիչներին | 1.Աուդիտի միջազգային ստանդարտները կիրառող աուդիտի ծառայություններ մատուցող տնտեսվարողների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 1 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Հիմքը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (IFRS) ու Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը (IFRS for SME) թարգմանվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան և հրապարակվել ՀՀ կառավարության համապատասխանաբար 2010 թվականի մարտի 11-ի թիվ 235-Ն և 2010 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1209-Ն որոշումների համաձայն: Ստանդարտները կիրառության մեջ են դրվել 2011 թվականի հունվարի 1-ից:<br><br>Արդյունք 2. Իրականացված է մասնակիորեն:<br><br>Ասիական զարգացման բանկի աջակցությամբ աուդիտի միջազգային ստանդարտները թարգմանված են: Ներկայումս ավարտման փուլում է աուդիտի միջազգային ստանդարտների թարգմանության վերաբերյալ Հաշվապահների մի-ջազգային դաշնությունից պաշտոնական թույլտվություն ստանալու բանակցային գործընթացը: Աշխատանքներ են տարվում Հաշվապահների միջազգային դաշնությունից ստացված` ստանդարտները թարգմանելու վերաբերյալ համաձայ-նագրի և դրան կից փաստաթղթերի ստորագրման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ:<br><br>Արդյունք 3. Իրականացված է մասնակիորեն:<br><br>Հաշվապահների որակավորման քննությունների ծրագրի և հարցաշարի լրամշակման աշխատանքները ավարտման փուլում են, դրանք իրականացվում են հաշվի առնելով Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS) ու Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի դրույթները:<br><br>Ցուցիչ 1. ՀՀ տարածքում 01.01.2011թ. դրությամբ լիցենզավորված են եղել թվով 37 աուդիտորական կազմակերպություն և թվով 5 անհատ աուդիտոր: Հայաստանի Հանրապետությունում գործող աուդիտ իրականացնող անձինք գործունեություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի N 509-Ն որոշմամբ հաստատված աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխանող աուդիտի ստանդարտների համաձայն:<br><br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալներ չկան: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկությունների համաձայն 2010 թվականին ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու պահանջ ուներ շուրջ 393 կազմակերպություն:<br><br>Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը 2009 թվականից պարտադիր է բանկերի, 2010 թվականից` մյուս ֆինանսական հաստատությունների համար: Մինչդեռ մնացած կազմակերպությունները մինչև 2011 թվականի հունվարի 1-ը ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով կարող էին առաջնորդվել իրենց ցանկությամբ, որի հետևանքով էլ այդ ցուցանիշի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են:<br><br>Ցուցիչ 3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկությունների համաձայն 2010 թվականին ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու | ՀՀ ֆինանսների նախարարություն<br><br>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե<br><br>Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա (Համաձայնությամբ) |
| | | | 2.Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները կիրառող խոշոր տնտեսվարող սուբյեկտների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | Տվյալներ չկան | | |
| | | | 3.Ֆինանսական հաշվետվությունները և ֆինանսական տեղեկատվություն հրապարակող տնտեսվարող սուբյեկտների թվի հարաբերությունը տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր թվին | 0.0036 | | |
| | | | 4.Հարկային, մաքսային և վիճակագրական ծառայություններին ոչ առձեռն ներկայացված հաշվետվությունների թիվը, տոկոս` հաշվետվությունների ընդհանուր թվի նկատմամբ (ԱՀՌԾ Սոցիալական և քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն. մոնիտորինգի ցուցանիշներ e5.2- e5.4 ցուցանիշեր) | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | պահանջ ուներ շուրջ 393 կազմակերպություն:<br>Տնտեսավարող սուբյեկտների թիվը 2010 թվականի դրությամբ կազմում է շուրջ 110.0 հազ.:<br>Ցուցիչի արժեքը կկազմի 0.0036:<br>Ցուցիչ 4. Առաջարկվում է ցուցիչը տեղափոխել 13 ռազմավարական դրույթի ցուցիչների կազմը: | |
| | 78.2 Ապահովել մրցակցության հավասար պայմաններ | 1.Հայաստանում տնտեսական մրցակցության պաշտպանության եռամյա ռազմավարության մշակում և հաստատում | 1. Մրցակցության հավասար պայ-մանների ապահովման նպատակով ՀՀ Տնտեսական մրցակցության պե-տական հանձնաժողովի նախաձեռ-նությամբ հարուցված վարչական **վարույթների թվի հարաբերությունը** նույն ժամանակահատվածում այդ վարույթների իրականացման արդյունքում տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ **կիր-առված պատասխանատվության միջոցների թվին** | 104/124 | Արդյունք 1. «Կատարված է ամբողջությամբ<br><br>ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովը 2010 թվականի հոկտեմբերի 22-ին ընդունել է «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2010-2012 թվականների ռազմավարության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 291-Ա որոշումը (այսուհետ` Որոշում): Որոշման պատճենը 2010 թվականի նոյեմբերի 25-ին ԱՇ-2171 գրությամբ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողով:<br>Ցուցիչ 1. 2010 թվականի հունվարի 1-ից 2010 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվել է 124 (հարյուր քսանչորս) վարչական վարույթ, որոնց արդյունքում կիրառվել է 104 (հարյուր չորս) պատասխանատվության միջոց:<br><br>Հարկ է նշել, որ վարչական վարույթի ժամկետը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով 90 օր է: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով |
| 79. Ապահովել մասնավոր կազմակերպությունների աշխատանքում բարեխղճությունը | 79.1 Աջակցել Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերի և էթիկայի կանոնների ճանաչմանն ու տեղայնացմանը | 1.Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերի և էթիկայի կանոնների ճանաչման ու տեղայնացման իրավական, ինստիտուցիոնալ հնարավորությունների ուսումնասիրություններ ու առաջարկություններ<br><br>2.Մասնավոր կազմակերպություններում բարեխիղճ վարքագծի կանոնների և շահերի բախման կարգավորման վերաբերյալ հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը մշակված է | 1.ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատը տեղայնացրել է Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերն և էթիկայի կանոնները (այո/ոչ) | Այո | Արդյունք 1-2. Կատարված է ամբողջությամբ:<br>2010 թվականին Առևտրի միջազգային պալատի հետ համագործակցության արդյունքում ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից գործարար համայնքի համար մշակվել և հրատարակվել է "Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը", որը ներկայացվել է ինչպես գործարար համայնքին, այնպես էլ պետական հատվածին:<br>Ցուցիչ 1. "Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը", ներառում է Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերն և էթիկայի կանոնները<br>Ցուցիչ 2. "Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը", ներառում էմասնավոր կազմակերպությունների համար օրինակելի (մոդելային) էթիկայի վարքականոնները | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ (Համաձայնությամբ) |
| | | | 2.ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատը սահմանել է մասնավոր կազմակերպությունների համար օրինակելի (մոդելային) էթիկայի վարքականոն (այո/ոչ) | Այո | | |
| | | | 3.ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի կողմից բարեխիղճ առևտրային պրակտիկայի խրախուսման դեպքերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պալատի կողմից կիրառված պարսավանքի և խրախուսման դեպքերի ընդհանուր թվաքանակին | Տվյալ չկա | | |
| | | | 4.Վարքագծի կանոնակարգերի և շահերի բախման կանխարգելման կանոններ սահմանած մասնավոր կազմակերպությունների թվի | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հարաբերությունը մասնավոր սեկտորում գործող կազմակերպությունների ընդհանուր թվաքանակին | | | |
| 80. Խրախուսել առևտրային կազմակերպությունների և պետության միջև համագործակցությունը | 80.1 Խթանել պայմանագրային հարաբերություններում բարեխիղճ առևտրային պրակտիկայի կիրառումը | 1.Կիրառված խրախուսումներն ու ռեյտինգները դարձնել հանրային քննարկման առարկա | 1.ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատը կազմում և հրապարակում է բարեխիղճ առևտրային կենսափորձ ունեցող ձեռնարկությունների ռեյտինգավորման ցանկը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1.Կատարված է ամբողջությամբ<br>ՀՀ ԱԱՊ կողմից վարվում է «Վստահելի գործընկերներ» գրանցամատյանը: Հայտադիմումի լրացման կարգի, ցանկի և դիմումի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ ԱԱՊ պաշտոնական կայք-էջում (http://www.armcci.am):<br>ՀՀ ԱԱՊ կողմից պարբերաբար իրականացվում է «Մերկուրի մրցանակաբաշխությունը» | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| | 80.2 Ներդնել ձեռնարկությունների ռեյտինգավորման համակարգեր՝ ինքնակարգավորման սկզբունքի շրջանակներում | 1. Աջակցել համանման միջազգային համակարգերին ինտեգրումը | | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ձևավորվել է ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի վեբ-կայքը, որը սկսել է գործել 2009թ. հունվարից: Կայքում ներառված է "Դեղին էջեր" բաժինը, որտեղ կազմակերպությունների համար հնարավորություն է ընձեռված տեղադրել իրենց կազմակերպության վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը (ներկայացված են շուրջ 23 կազմակերպություն): | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ<br>ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե |
| | 80.4 Պետական պաշտոնյա և գործարար հարաբերություններում ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգեր | 1.Ըստ ծրագրի՝ իրականացվում են նաև պետական կառավարմանը ոչ հատուկ գործառույթների պատվիրակում | 1.Պետական պաշտոնյա և գործարար հարաբերություններում մատուցվող ընդհանուր ծառայություններում էլեկտրոնային կառավարման համակարգերով իրականացվող ծառայությունների տեսակարար կշիռը, տոկոս | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br>Արդեն իսկ գործում է e-gov.am-1 էլեկտրոնային կառավարման պորտալը, որում մատուցվում են լիցենզիաների հայտերի էլեկտրոնային ընդունման, կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման, հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման, էլեկտրոնային վիզայի, Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման, էլեկտրոնային ստորագրությունների ստացման և այլ ծառայություններ: Հրապարակային և թափանցիկ կառավարման ապահովման նպատակով e-gov.am-1 էլեկտրոնային կառավարման պորտալում ներդրվել է նաև պետական գերատեսչությունների կողմից մեկ անձից կատարվող գնումները ներկայացնող՝ "Մեկ անձից կատարվող գնումներ" բաժինը: Էլեկտրոնային կառավարման պորտալի համալրումը նոր ծառայություններով կրում է շարունակական բնույթ<br><br>Ցուցիչ 1. Հնարավոր չէ ներկայում հաշվարկել քանի որ, պետության կողմից մատուցվող ծառայությունների ընդհանուր թիվը սահմանված չէ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| 81. Արմատավորել ձեռնարկությունների կորպորատիվ կառավարման սկզբունքները | 81.1Օրենսդրորեն տարանջատել և հստակեցնել բաժնետերերի՝սեփականատեր-գործադիր տնօրեն փոխհարաբերությունները | 1.Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրում, | 1. Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը կիրառող կազմակերպությունների թիվը կազմակերպությունների ընդհանուր թվում, տոկոս | 0 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br><br>2010 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N 1769-Ա որոշումը, որի Հավելվածով հաստատված Կանոնագիրքը սահմանում է ընկերությունների կորպորատիվ կառավարման սկզբունքների միջազգային լավագույն պրակտիկայից բխող չափանիշներ՝ հաշվի առնելով Հայաստանում առկա պրակտիկան և միջավայրը: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ցուցիչ 1. Քանակական տվյալներ հնարավոր կլինի հաշվարկել 2011թ. համար: | |
| | 81.2 Խթանել ձեռնարկությունների գործունեության հրապարակայնությունը | 1.Ձեռնարկությունների գործունեության հրապարակայնության մեխանիզմների ներդրում | | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Հղում` <Հաշվապահական հաշվառման մասին> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի, , ինչպես նաև կորպորատիվ կառավարման կանոնագրքի համաձայն խոշոր կազմակերպությունները մինչև հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ը պարտավոր են հրապարակել ֆինանսական հաշվետվությունները: | ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| 82. Զարգացնել ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի, ինչպես նաև խոշոր գործարարների շահերը ներկայացնող այլ կազմակերպությունների կարողությունները | 82.1 Զարգացնել համագործակցությունը առևտրի միջազգային պալատի հետ | 1.Համագործակցութ յան ուղղությունների տարեկան ծրագրի ընդունում տարեսկզբին և արդյունքների ամփոփում` տարեվերջին | 1.ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի ու առևտրի միջազգային պալատի միջև կնքվել է փոխգործակցության պայմանագիր և/կամ ընդլայնվել է առկա համագործակցության ծավալները (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br><br>ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը` որպես Առևտրի համաշխարհային պալատի, ինչպես նաև Համաշխարհային առևտրի պալատների ֆեդերացիայի անդամ, համագործակցում է նշյալ կառույցների հետ տեղեկատվության փոխանակման, փորձի փոխանակման և այլ ասպարեզներում: 2010 թվականին ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից գործարար համայնքի համար մշակվել և հրատարակվել է "Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը", որը ներկայացվել է ինչպես գործարար համայնքի, այնպես էլ պետական հատվածի ներկայացուցիչների շրջանակներում: Ուղեցույցը մշակվել է Առևտրի միջազգային պալատի հետ համագործակցության արդյունքում, քանի որ վերջինս նշված ասպարեզում ունի մեծ փորձ:<br><br>ՀՀ Գործարարների և արդյունաբերողների միության 17 անդամներ մասնակցել են “Ազնիվ կորպորատիվ համակարգի ամրապնդում” թեմայով Հակակոռուպցիոն համաժողովին:<br>Կովկասյան հետազոտությունների վերլուծական կենտրոնի հետ համատեղ անցկացվել է գործարարների շրջանակներում կոռուպցիայի ընկալման վերաբերյալ ուսումնասիրություն շուրջ 300 կազմակերպություններում: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,<br>ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ,<br>ՀՀ Զարգացման Հայկական Գործակալություն ՀՀ Գործարարների և արդյունաբերողների միություն, (Համաձայնությամբ) |
| | 82.2 Իրականացնել մասնավոր հատվածում կոռուպցիայի առաջարկի կրճատման, լավագույն միջազգային փորձի փոխանակում | 1.Գործարարների շահերը ներկայացնող խոշոր կազմակերպությունների հետ համագործակցության հուշագրերի և համաձայնագրերի կնքում | 1.կնքված համագործակցության հուշագրերի և համաձայնագրերի քանակ | 0 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>Ստեղծվել է "Գործատուների ազգային միավորումների միջազգային կոորդինացման խորհուրդ", որի կազմում ընդգրկված են ԱՊՀ, Մեծ Բալթյան և Արևելյան Եվրոպայի երկրների գործատուների միավորումներ, այդ թվում նաև ՀԱԳՄ /ՌԴ, Մոսկվայում/: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,<br>ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ Գործարարների և արդյունաբերողների միություն, (Համաձայնությամբ) |
| | 82.3Կազմակերպել կորպորատիվ կառավարման ուսումնական և | 1.Կորպորատիվ կառավարման ընդունված կանոնագրքի իրազեկման և լուսաբանման | 1.Կորպորատիվ կառավարման ուսումնական և վերապատրաստման դասընթացներ անցած պետական | 0 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է "50 տոկոս և ավելի պետական | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,<br>ՀՀ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | վերապատրաստման դասընթացներ | միջոցառումների իրականացում | մասնակցությամբ և մասնավոր ընկերությունների աշխատակիցների և ներկայացուցիչների թվի հարաբերությունը նույն ընկերությունում զբաղված աշխատակիցների ընդհանուր թվաքանակի | | մասնակցությամբ ընկերությունների ցանկին և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունման ժամանակացույցին հավանության տալու մասին" ՀՀ կառավարության որոշմանը նախագիծը: Միաժամանակ նախաձեռնվել են Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ուղեցույցի մշակման աշխատանքներ:<br>Ցուցիչ 1. Վերապատրաստման աշխատանքները նախատեսված է իրականացնել 2011 թվականից: | առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ Գործարարների և արդյունաբերողների միություն (Համաձայնությամբ) |

**3.16 Բարեխղճությունը հանրային ծառայությունում**

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 83. Ամբողջականացնել հանրային ծառայության բոլոր տեսակների օրենսդրական կարգավորումը | 83.1 Ներառել պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները հանրային ծառայության շրջանակներում | ՀՀ հանրային ծառայությունների մասին նոր ռազմավարության նախագիծը հաստատվել է<br><br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ քննարկմանը | ՀՀ հանրային ծառայությունների մասին նոր ռազմավարության նախագիծը հաստատվել է<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ քննարկմանը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Հիմք` ՀՀ կառավարությունը <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի նախագիծը 2009 թ. մայիսի 29-ին (N 01/16.6/3529-09) ներկայացրել է ՀՀ ԱԺ:<br><br>Ցուցիչ 1.<br>Հանրային ծառայության մասին օրենքի նախագիծը մշակվել է առանց նախնական ռազմավարության նախագծի | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| | 83.2 Սահմանել հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման կանոնակարգման միասնական սկզբունքները | 1.Հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման կանոնակարգման միասնական սկզբունքները ներառված են ռազմավարության նախագծում | 1.Հանրային ծառայության մասին Օրենքի նախագիծը ներառում է համապատասխան դրույթները (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի, գլուխ 3, գլուխ 5, գլուխ 6, գլուխ 7:<br><br>Ցուցիչ 1<br>Համապատասխան դրույթները ներառված են <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքում:<br><br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար:<br>Առաջարկներ` ակնկալվող արդյունքն ու մոնիթորինգային ցուցիչը վերախմբագրել` հանելով <ՀՀ հանրային ծառայությունների մասին նոր ռազմավարության նախագիծ> ձևակերպումը:<br>Առաջարկվում է 83.1 միջոցառման ակնկալվող արդյունքը և /կամ մոնիթորինգային ցուցիչը վերախմբագրել. երկուսի համար նշված է միևնույն արժեքը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| 84. Ներդնել հանրային ծառայությունների որակի գնահատման և վերահսկողության մեխանզիմները | 84.1 Սահմանել միջազգային չափանիշներին համապատասխան հանրային ծառայությունների որակի չափորոշիչներ և ընթացակարգեր, այդ թվում` գործարքների և գործառնությունների ժամկետներ, գործառնական ծախսերի, ծառայությունների որակի վերաբերյալ քաղաքացիների ընկալման և բավարարվածության նվազագույն ցուցանիշներ | 1.Հանրային ծառայությունների որակի չափորոշիչների և գործող ընթացակարգերի համապատասխանությունը միջազգային չափանիշներին ուսումնասիրություններ, հարցումներ, ըստ ծառայության տեսակների | 1.Նախքան ՀՀ «Հանրային ծառայության մասին» օրենքի ընդունումը պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների քանակի հարաբերությունը օրենքի ընդունումից հետո մատուցվող ծառայությունների թվին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>ՀՀ կառավարությունը 2010թ. ընթացքում ուսումնասիրվել է 6 նախարարությունների ( ՀՀ մշակույթի, առողջապահության, կրթության և գիտության, գյուղատնտեսության, տրասպորտի և կապի) և կառավարության աշխատակազմի կողմից ատուցվող ծառայությունների գործող ընթացակարգերը, դրանց համապատասխանությունը սահմանված օրենսդրությանը, միջազգային չափանիշներին: Մասնավորպես, մշակութային արժեքների ներմուծման ու ատահանման, հուշարձանների պահպանության և վերականգնման, գյուղտեխնիկայի տեխնիկական զննության, վարորդական իրավունքների տրամադրման, հանրակրթության բարձրագույն մասնագիտական ու հետբուհական կրթության ծառայությունների, միջպետական ու ներպետական ուղևորափոխադրումների մասով պարզեցվել են ծառայությունների մատուցման ընթացակարգերը, հստակեցվել են ծառայությունների մատուցման ժամկետները և պատասխանատուները:<br>Ցուցիչ 1.Տվյալները բացակայում են: Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը չի երառում Պետական ոչ-առևտրային | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն և համապատասխան շահագրգիռ նախարարություններ և պետական այլ մարմիններ |
| | | | 2.Քաղաքացիների կողմից հանրային ծառայությունների վերաբերյալ ներկայացված բողոքների թվի հարաբերությունը, նույն ժամանակահատվածում, պետական լիազոր մարմնի | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կողմից պատասխանատվության ենթարկված պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների թվաքանակին | | կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները<br>Ցուցիչ 2. Տվյալները բացակայում են, քանի որ նման տեղեկատվություն ամփոփող միասնական մարմին չկա:<br>Ցուցիչ 3.Պետական ոչ-առևտրային կազմակերպությունների հաշվետվությունների կազմման և կատարողականի գնահատման կարգերը սահմանվել են ՀՀ կառավարության դեռևս 2006թ. –ի 163-Ն որոշմամբ:<br>Առաջարկություն: Սույն ռազմավարական դրույթի պատասխանատու ճանաչել ՀՀ կառավարության աշխատակազմին և ՀՀ ֆիննախին | |
| | | | 3.ՀՀ կառավարության կողմից սահմանվել են պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվությունների կազմման և կատարողականների գնահատման կարգ/ ուղեցույց | Տվյալները բացակայում են | | |
| 85. Ներդնել միասնական հանրային ծառայության արդյունավետ կառավարման ինստիտուտը | 85.1 Սահմանել միասնական հանրային ծառայության ոլորտում լիազոր մարմնի խնդիրները և գործառույթները, լիազորությունները, հաշվետվողականությունը և ընթացակարգերը | 1.ՀՀ հանրային ծառայության մասին Օրենքի նախագիծը ներառում է միասնական լիազոր մարմնի վերաբերյալ դրույթը | 1.Ստեղծվել է ՀՀ հանրային ծառայության ղեկավարման և քաղաքականության մշակման ու իրականացման միասնական լիազոր մարմին (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ:<br><br>Ցուցիչ 1.<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքը չի նախատեսում հանրային ծառայության ոլորտում ղեկավարման միասնական լիազոր մարմին:<br><br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը՝ անբավարար<br>Առաջընթացը՝ անբավարար: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| 86. Նվազեցնել քաղաքական պաշտոնյաների դերը մասնագիտական անձնակազմի ձևավորման, միանձյա հայեցողական որոշումների կայացման գործում | 86.1 Միասնականացնել պետական ծառայություն մրցույթային հիմունքներով աշխատանքի ընդունման ընթացակարգերը | | 1.Կուսակցական պատկանելիություն ունեցող պետական ծառայողների թվաքանակի հարաբերությունը պետական ծառայողների ընդհանուր թվին (որքան մոտ է զրոին այնքան ցածր է քաղաքական կոնյուկտուրայի ազդեցության մակարդակը) | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Տվյալ միջոցառման համար 2010թ.ակնկալվող արդյունք սահմանված չէ:<br><br>Ցուցիչ 1<br>Հնարավոր չէ հաշվարկել ցուցիչը՝ քանի որ ծառայողների կուսակցական պատկանելիության վերաբերյալ տեղեկություն չի հավաքագրվում:<br>Առաջարկվում է մշակել ցուցիչի հավաքագրման մեխանիզմը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման հաակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| | 86.2 Համապատասխան մարմնի աշխատակազմի ղեկավարին ճանաչել թափուր պաշտոնների համալրման պատասխանատու | 1.Սույն դրույթը ներառված է Հանրային ծառայության մասին օրենքի նախագծում | 1.Աշխատակազմի ղեկավարի կողմից նշանակվող պետական ծառայության պաշտոնների թվի հարաբերակցությունը ընդամենը պաշտոնների թվին | 0.93 /93%/ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի համաձայն, պաշտոնների համալրման հետ կապված հարաբերությունները սահմանվում են ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենսդրությամբ:<br>Համաձայն <Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենքի, աշխատակազմի ղեկավարը իրավասու է նշանակումներ կատարել կրտսեր, առաջատար խմբերի ինչպես նաև գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, իսկ ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության աշխատակազմերում՝ նաև գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի պաշտոններում:<br>Ցուցիչ 1 | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ցուցիչի արժեքը հաշվարկված է քաղաքացիական ծառայության համակարգի համար. աշխատակազմի ղեկավարի կողմից նշանակվող պաշտոնների թիվը` 7287, իսկ քաղաքացիական ծառայության պաշտոնների ընդհանուր թիվը` 7811 :(այդ թվում` աշխատակազմերի ղեկավարների պաշտոնները): /Թվերն անընդհատ փոփոխվում են/:<br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար: | հանձնաժողով, |
| 87. Կրճատել հանրային ծառայողների թափուր պաշտոնների համալրման ընթացակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերը | 87.1 Պատվիրակել հանրային ծառայողների թափուր պաշտոնների համալրման, թեստավորման և գիտելիքների գնահատման փուլի կազմակերպչական աշխատանքները | 1.Քաղաքացիական ծառայության մասով, համապատասխան փոփոխություններ քաղաքացիական ծառայության մասին օրենքում<br><br>2.Քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնների համալրման, թեստավորման և գիտելիքների գնահատման փուլի կազմակերպչական աշխատանքները իրականացվում են համապատասխան պետական մարմիններում | 1.Պետական ծառայությունում, նոր ընթացակարգերի վրա խարսխված, պաշտոնեական առաջխաղացման դեպքերի թվի հարաբերությունը պետական ծառայողների ամբողջ թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1-2. Իրականացված է մասամբ:<br>Քաղաքացիական ծառայության առաջատար խմբի թափուր պաշտոնների մրցույթներն անց են կացվում համապատասխան մարմիններում:<br><Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենքով ներդրվել է քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու կարգ, ինչպես նաև նոր ընթացակարգերի վրա հիմնված մրցույթների անցկացման կարգ, որոնք սահմանվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից:<br>Հիմք` <Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենք, ՀՀ ՔԾԽՈ 23.05.2002 N 11, 13.06.2002 N 17-Ն, 12.10.2010 N 818-Ն:<br><br>Ցուցիչ 1<br>Ցուցիչի հնարավոր կլինի հաշվարկել համալրման գործընթացները նոր ընթացակարգերով կազմակերպելուց հետո:<br>Թափուր պաշտոնների մրցույթները նոր ընթացակարգերով կազմակերպվում են 2010 թվականի դեկտեմբերից, իսկ կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար առաջին թեստավորումը անց կկացվի 2011 թվականի հունվարից:<br><br>Ցուցիչ 2<br>Վերախմբագրել ցուցիչը հետևյալ կերպ. <Լիազոր մարմնի կողմից համալրման գործընթացի հետ կապված դիտարկված բողոքների թվի հարաբերությունը ստացված բողոքների ընդհանուր թվին>:<br>Անհրաժեշտ է հստակեցնել նաև <պետական լիազոր մարմին> հասկացությունը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, ՀՀ կառավարության աշխատակազմ, Պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմիններ, |
| | | | 2.Պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմնի կողմից դիտարկված բողոքների թվի հարաբերությունը ստացված բողոքների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | | |
| | 87.2 Ճանաչել համապատասխան գիտական և ուսումնական հաստատությունների կողմից այդ բնագավառում տրված որակավորման վկայականները | 1.Հանրային ծառայության մասին օրենքի նախագիծը ներառում է այս դրույթը | 1.Հանրային ծառայության մասին օրենքի նախագիծը ներառում է այս դրույթը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի նախագիծը չի կարգավորում որակավորման վկայականների ճանաչման հետ կապված հարաբերությունները:<br>Ցուցիչ 1.<br>Որակավորման վկայականների ճանաչման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են կրթության մասին ՀՀ օրենսդրությամբ:<br>Առաջարկվում է հստակեցնել 87.2 միջոցառման <համապատասխան գիտական և ուսումնական հաստատություն> հասկացությունը, ինչպես նաև վերանայել պատասխանատու մարմնի հարցը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, Պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմիններ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 87.3 Ապակենտրոնացնել հանրային ծառայողների թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության հարցազրույցների փուլի աշխատանքները համապատասխան պետական կառավարման մարմիններ | 1.Օրենսդրական փոփոխություններ քաղաքացիական ծառայությունում մրցույթների իրականացման նոր ապակենտրոնացված համակարգի ներդրման գործում<br><br>2.Հանրային ծառայության մասին օրենքը ներառում է հանրային ծառայողների թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության հարցազրույցների փուլի աշխատանքների ապակենտրոնացման դրույթները | 1.Հանրային ծառայության մասին օրենքը ներառում է հանրային ծառայողների թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության հարցազրույցների փուլի աշխատանքների ապակենտրոնացման դրույթները (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի համաձայն, թափուր պաշտոնների համալրման հետ կապված հարաբերությունները կսահմանվեն ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենսդրությամբ:<br>Քաղաքացիական ծառայության համակարգում առաջատար խմբի պաշտոնների մրցույթները, ներառյալ հարցազրույցի փուլը անց է կացվում համապատասխան մարմիններում:<br><Քաղաքացիական ծառայության> մասին ՀՀ օրենքի փոփոխությունից հետո ՀՀ ՔԾԽ կողմից սահմանվել է կրտսեր պաշտոնների համալրման նոր ընթացակարգ: ՀՀ ՔԾԽ կողմից առնվազն երեք ամիսը մեկ անգամ անց է կացվելու թեստավորում, որի արդյունքում հավաստագիր ստացած քաղաքացիները կրտսեր թափուր պաշտոնի զբաղեցման համար դիմում կներկայացնեն համապատասխան աշխատակազմերի ղեկավարներին:<br>Հնարավոր է Աշխատակազմի ղեկավարի ցանկությամբ անցկացվի հարցազրույց դիմած մասնակիցների հետ:<br>Հիմք`<Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենք, <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենք:<br>Ցուցիչ1<br>Վերախմբագրել ցուցիչը` հաշվի առնելով հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենսդրությունը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| | 87.4 Ներդնել հանրային ծառայողների թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության հարցազրույցների գնահատման բալային համակարգ և մրցույթում հաղթող թեկնածուի ընտրության կոլեգիալ կարգ | 1. Հանրային ծառայության մասին օրենքը ներառում է այս դրույթը | 1.Հանրային ծառայության մասին օրենքի նախագիծը ներառում է այս դրույթը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Արդյունքը կարելի է գնահատել քաղաքացիական ծառայության համակարգի համար: ՔԾ օրենքով նախատեսված է հարցազրույցների գնահատման բալային համակարգ, ինչպես նաև մրցույթում հաղթող թեկնածուների ընտրության կոլեգիալ կարգ:<br>Համաձայն մրցույթների անցկացման նոր կարգի, փոփոխվել է հարցազրույցի փուլի հարցերի կազմման, գնահատման և հաղթողների որոշման մեխանիզմները: Հարցազրույցի փուլում առնվազն 75 տոկոս արդյունք ստանալու դեպքում մասնակիցները կհամարվեն հարցազրույցի փուլը հաղթահարած, իսկ թեստավորման և հարցազրույցի փուլերի արդյունքում ստացած տոկոսների երեք առավելագույն հանրագումար ունեցող մասնակիցները կճանաչվեն մրցույթի հաղթողներ:<br><Քաղաքացիական ծառայության> մասին ՀՀ օրենքի փոփոխությունից հետո ՀՀ ՔԾԽ կողմից սահմանվել է կրտսեր պաշտոնների համալրման նոր ընթացակարգ, համաձայն որի հավաստագիր ստացած և համապատասխան թափուր պաշտոնի համար դիմում ներկայացված քացաքացիներից մեկը աշխատակազմի ղեկավարի կողմից նշանակվում է պաշտոնում:<br><br>Հիմք` <Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենք:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքը չի նախատեսում նման դրույթ:<br><br>Ցուցիչ 1<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի նախագծի համաձայն թափուր պաշտոնների համալրման հետ կապված հարաբերությունները սահմանվում են հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենսդրությամբ:<br>**Հիմնական եզրակացություն** | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով,<br>ՀՀ հանրային ծառայության լիազոր մարմին |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Իրավիճակը՝ բավարար<br>Առաջընթացը՝ բավարար<br>Առաջարկ՝ հստակեցնել ռազմավարական դրույթի համար նշված արդյունքներն ու ցուցիչները: | |
| 88. Բարձրացնել հանրային ծառայողների հաշվետվողականության մակարդակը | 88.1 Ներդնել ծառայողների ըստ աշխատանքային ծրագրերի կատարողականի արդյունքների գնահատման վրա հիմնված վարձատրության, խրախուսման և պաշտոնեական առաջխաղացման փոխկապակցված համակարգ | 1.Պետական կառավարման մարմիններում փորձնական կարգով ներդրված տարեկան աշխատանքային ծրագրերի համակարգ<br><br>2.Պետական ծառայության բոլոր լիազոր մարմինների համար սահմանվել են պետական ծառայողների հաշվետվությունների կազման և կատարողականների գնահատման կարգն ու ուղեցույցը:<br><br>3.Փորձնական կարգով գործում է կատարողականի արդյունքների գնահատման վրա հիմնված վարձատրության և խրախուսման համակարգը | Հանրային ծառայությունում, ըստ աշխատանքային ծրագրերի կատարողականի արդյունքներով վարձատրության և պաշտոնական առաջխաղացման դեպքերի թվի հարաբերությունը պետական ծառայողների ամբողջ թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1.Կատարված է ամբողջությամբ<br>ՀՀ պետական բոլոր մարմինների աշխատակազմերում, այդ թվում ՀՀ մարզպետարաններում ներդրված է տարեկան աշխատանքային ծրագրերի համակարգը: ՀՀ կառավարությանն առընթեր մարմիններից միայն ՊԵԿ-ը ունի:<br>Հիմք՝ ՀՀ կառավարության արձանագրային որոշում թիվ 53. 2009թ. դեկտեմբերի 24:<br><br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ<br>Պետական ծառայությունում քաղաքացիական ծառայողների համար ամբողջությամբ կիրառվում է հաշվետվությունների կազման և կատարողականների գնահատման կարգն ու ուղեցույցը:<br>Հիմք ՀՀ կառավարության արձանագրային որոշում թիվ 53. 2009թ. դեկտեմբերի 24:<br><br>Արդյունք 3. Կատարված է մասնակիորեն<br>քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից, որով սահմանվում են կատարողականի արդյունքների գնահատման վրա հիմնված վարձատրության և խրախուսման մեխանիզմները:<br>Դրա հիման վրա 2010թ. արդյունքներով պետական կառավարման մարմինները իրականացնում են կատարողականի արդյունքների հիման վրա խրախուսում:<br>Հիմք՝ քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին ՀՀ օրենք հոդված 13:<br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը՝ բավարար<br>Առաջընթացը՝ լավ | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, ՀԲ պետական հատվածի արդիականացման ծրագիր |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 89. Ամբողջականացնել պետական և համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրերը | 89.1 Պետական և համայնքային ծառայողների պարտադիր վերապատրաստման ծրագրերում ընդգրկել պետական ծառայողների գործունեության սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման կարգավորման, արդյունավետ հաղորդակցության, ծառայությունների մատուցման, տեղեկատվության ազատության, կոռուպցիայի կանխարգելման միջոցների և համանման այլ թեմաներով դասընթացներ | Պետական ծառայողների գործունեության սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման կարգավորման, արդյունավետ հաղորդակցության, ծառայությունների մատուցման, տեղեկատության ազատության, կոռուպցիայի կանխարգելման միջոցների վերաբերյալ վերապատրաստման թեմաների մշակում: | Պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմնի/մարմինների կողմից հաստատված պարտադիր վերապատրաստման թեմատիկ պլաններում ներառվել են՝ պետական ծառայողների գործունեության սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման կարգավորման, արդյունավետ հաղորդակցության, ծառայությունների մատուցման ու տեղեկատության ազատության վերաբերյալ թեմաներ (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>*ՀՀ Ոստիկանություն*<br>ՀՀ Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների 2010թ. ծառայողական պարապմունքների ուսուցման տիպային թեմատիկ պլանում ընդգրկվել են <<Կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի>> պարտադիր ուսուցման թեմաներ: ՀՀ Ոստիկանության ուսումնական կենտրոնի վերապատրաստման թեմաների մասնաբաժնում հակակոռուպցիոն թեմաները կազմում են 13 տոկոս, իսկ ՀՀ Ոստիկանության Ակադեմիայի վերապատրաստման թեմաների մեջ՝ 18 տոկոս: Ընդհանուր վերապատրաստում է անցել 193 ծառայող, որից 48-ը՝ կոռուպցիայի ոլորտի մասնագետներ:<br>*ՀՀ դատախազություն*<br>Մշակվել է կոռուպցիայի վերաբերյալ դատախազների պարբերաբար վերապատրաստման ծրագիր, որը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազի՝ 30.03.2009 թիվ 20 հրամանով: Այս ծրագրի շրջանակներում պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ:<br>*ՀՀ քաղծառայության խորհուրդ*<br>ԵՄ Խորհրդատվական խմբի՝ AEPLAC-ի հետ մշակվել է <<Հակակոռուպցիոն ներածություն>> թեմայով վերապատրաստման մոդուլներ, իրականացվել է TOT՝ վերապատրաստողների վերապատրաստում (12 հոգի) և այս վերապատրաստողների կողմից սկսվել է վերապատրաստման ծրագրի մշակումը:<br><<Հայպետծառայողների միություն>> ՀԿ–ի կողմից OSCE-ի աջակցությամբ իրականացվել է ինտեգրիթի /բարեխիղճ կառավարում/ վերապատրաստման առաջին փուլը: Առաջին եռամսյակում մշակվել են վերապատրաստման երկրորդ փուլի մոդուլները, ժողովածուի նյութերը և նախապատրաստվել է երկրորդ փուլի ծրագիրը:<br>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատվել են <Ամբողջականության հիմունքները>, <Հակակոռուպցիոն ներածություն> թեմաներով պարտադիր վերապատրաստման ծրագրերը, որոնցով առ այսօր վերապատրաստվել է 325 քաղաքացիական ծառայող:<br>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումներ՝ 30.11.2009 թ. N 937-Ա, 21.06.2010 N 847-Ա, 23.06.201թ N 499-Ա, 28.10.2010 N8477-Ա :<br><br>*ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն*<br>MONEYVAL և Միջազգային արժույթի հիմնադրամի ֆինանսավորմամբ /նախաձեռնությամբ/ իրականացվում են վերապատրաստման, փորձի փոխանակման միջազգային դասընթացներ՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության այն աշխատակիցների համար, ովքեր մասնագիտացված են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև այլ կոռուպցիոն հանցագործությունների հետաքննության ու նախաքննության հարցերով:<br>Համայնքային ծառայության մասով տվյալները բացակայում են:<br>Առաջարկվում է վերասահմանել միջոցառումը և այն ընդհանրացնել 109.3 կետի արդյունքների հետ՝ ըստ համապատասխան ոլորտների: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, ՀՀ պետական կառավարման շահագրգիռ այլ մարմիններ |
| 90. Կրճատել պետական և համայնքային ծառայության գործառույթներով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերը | 90.1 Ներդնել պետական և համայնքային ծառայության գործառույթներով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման, | վերապատրաստման առանձին դասընթացների, կրթական ծրագրեր ու նկարագրող | Կոռուպցիայի հիմնախնդիրն ու հակակոռուպցիոն քաղաքականությունը լուսաբանող թեմաներով | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն;<br>Առանձին վերապատրաստման ծրագրերը տես 89-րդ կետում;<br><br>Համայնքային ծառայության վերապատրաստման ծրագրերում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման, բացահայտման և | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ քաղաքացիական |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | բացահայտման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ վերապատրաստման առանձին դասընթացների, կրթական ծրագրերի կազմակերպման, պետական և համայնքային ծառայության ընթացակարգերը մանրամասն նկարագրող ուղեցույցներ | ուղեցույցերով կազմակերպվող պետական և համայնքային պարտադիր վեապատրաստման դասընթացներ | վերապատրաստում իրականացնող ուսումնական հաստատությունների թվի հարաբերությունը պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմնի/մարմինների կողմից վերապատրաստման իրավունք ստացած ուսումնական հաստատությունների ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրականացվել տվյալ միջոցառումը) | | պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ պարտադիր վերապատրաստման ընթացակարգերի ու ուղեցույցների հիման վրա վերապատրաստման դասընթացների մասին տեղեկատվությունը բացակայում է: | ծառայության խորհուրդ, այլ պետական կառավարման մարմիններ |
| 91. Բարձրացնել հանրային ծառայության համակարգում վարձատրության մակարդակի մրցունակությունը | 91.1 Սահմանել պետական և համայնքային ծառայողների վարձատրության միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականությունը | 1.Հաստատված է հանրային ծառայության վարձատրության ռազմավարություն և միջոցառումների ծրագիր | Մեծացել են հանրային ծառայողների հավելավճարների ու պարգևավճարների չափերը (այո/ոչ) | Ոչ | **Արդյունք 1**. Իրականացված է մասամբ<br>ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 878-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 4.2.1 կետի 6.1 ենթակետի և ՀՀ կառավարության 2009թ. միջոցառումների ծրագրի 129-րդ կետի համաձայն դեռևս 2009թ. հունիսի 3-րդ տասնօրյակում ՀՀ կառավարություն է ներկայացվել Հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության նախագիծը (նշենք, որ ՀՀ կառավարության 2008-2012թթ. ծրագրում որպես նպատակ սահմանված է պետական կառավարման համակարգի կադրային ներուժի հետևողական ամրապնդումը, և դրա ձեռքբերման համար աշխատանքի որակի և աշխատավարձի մակարդակի մրցունակության ապահովումը մասնավոր հատվածի հետ):<br>Վերը նշված նախագիծը քննարկվել է Մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2009թ. դեկտեմբերի 3-ի նիստում և վերադարձվել է՝ ՄԺԾԾ մակրոցուցանիշների առաջիկա 3 տարիների կանխատեսումների մշակման ժամանակ անդրադառնալու պայմանով:<br>Մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2010թ. հունվարի 14-ի նիստի N14.2/28560-10 արձանագրության 3-րդ կետի 2-րդ ենթակետով (ՀՀ վարչապետի 2010 թվականի մարտի 21-ի 02/14.2/4488-10 հանձնարարականով ժամկետը երկարաձգվել է) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, ՀՀ ֆինանսների նախարարին հանձնարարվել էր եռամսյա ժամկետում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի հետ համատեղ քննարկել հանրային ծառայողների վարձատրության հիմնախնդիրները և, հաշվի առնելով միջազգային փորձը, ՀՀ կառավարություն ներկայացնել համապատասխան առաջարկություն:<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ մշակված հանրային ծառայողների վարձատրության համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանը ուղված առաջարկությունները 2010թ. մայիսի 5-ին ներկայացվել են ՀՀ կառավարություն:<br>Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 859-Ն որոշմամբ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների , նախարարություններ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, շահագրգիռ պետական կառավարման այլ մարմիններ |
| | | | Հանրային ծառայողների միջին աշխատավարձի հարաբերությունը մասնավոր հատվածի միջինի նկատմամբ/ համապատասխանություն | 0.59 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հանրային ծառայողների աշխատավարձի բարձրացում չի նախատեսվել:<br><br>**Ցուցիչ 1.** 2010 թվականին Հանրային ծառայության ոլորտներում հավելավճարների և պարգևավճարների չափերը մնացել են անփոփոխ, ինչը պայամանավորված է համաշխարհայի ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսությունում առաջացած ֆինանսական դժվարություններով:<br><br>**Ցուցիչ 2.** Բերված են Քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի մեծության և վարձատրության համակարգի վերաբերյալ 2010 թվականի զեկույցի (հաստատված է ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի նիստի թիվ 39 արձանագրային որոշման, 9-րդ կետով) տվյալները: Համաձայն զեկույցի պետական ծառայողների միջին աշխատավարձը կազմել է 115261 դրամ, իսկ ոչ պետական հատվածի միջին աշխատավարձը` 195142 դրամ: Զեկույցը պատրաստվել է համաձայն «Քաղաքացիական ծառայության վարձատրության մասին» ՀՀ օրնքի 14-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1932-Ն որոշման և ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 23-ի թիվ 572-Ն որոշման:«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին (օրենքով սահմանվել է հանրային ծառայողների շրջանակը), որը ուժի մեջ կմտնի 2012թ. հունվարի 1-ից: ՀՀ օրենսդրությամբ հանրային ծառայողների միջին աշխատավարձի հաշվարկման պահանջ և մեխանիզմներ սահմանելուց հետո ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կհաշվարկվի հանրային ծառայողների միջին աշխատավարձը: | |
| 92. Ներդնել խրախուսման և պատասխանատվության համարժեք մեխանիզմներ հանրային ծառայությունների առավել մեծ կոռուպցիոն ռիսկեր պարունակող բնագավառներում | 92.1 Սահմանմանել դատական, դատախազական, հարկային, մաքսային, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայությունների, քաղաքական և հայեցողական առանձին պաշտոնների համար վարձատրության, նյութական և բարոյական խրախուսման առավել նպաստավոր պայմաններ և դրանց համարժեք վերահսկողության մեխանիզմներ ու պատասխանատվության առավել խիստ միջոցներ | 1.Դրույթը ներառված է հանրային ծառայության վարձատրության ռազմավարությունում և ծրագրում | 1.Դրույթը ներառված է հանրային ծառայության վարձատրության ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>ՀՀ կառավարության 2009թ. միջոցառումների ծրագրի 129-րդ կետի համաձայն 2009թ. հունիսի 3-րդ տասնօրյակում ՀՀ կառավարություն է ներկայացվել Հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության նախագիծը: Որից հետո Մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2010թ. հունվարի 14-ի նիստի N14.2/28560-10 արձանագրության 3-րդ կետի 2-րդ ենթակետով (ՀՀ վարչապետի 2010 թվականի մարտի 21-ի 02/14.2/4488-10 հանձնարարականով ժամկետը երկարաձգվել է) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, ՀՀ ֆինանսների նախարարին հանձնարարվել էր եռամսյա ժամկետում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի հետ համատեղ քննարկել Հանրային ծառայողների վարձատրության հիմնախնդիրները և, հաշվի առնելով միջազգային փորձը, ՀՀ կառավարություն ներկայացնել համապատասխան առաջարկություն:<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ մշակված Հանրային ծառայողների վարձատրության համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանը ուղված առաջարկությունները 2010թ. մայիսի 5-ին ներկայացվել են ՀՀ կառավարություն:<br>Ցուցիչ 1. Դրույթը ներառված է Հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծում, որով նախատեսվում է ներդնել հանրային ծառայողների վարձատրության միասնական համակարգ, ինչպես նաև արդիականացնել հանրային ծառայողների լրացուցիչ աշխատավարձի` հավելումների և հավելավճարների հաշվարկման և տրամադրման կարգերը, | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների, նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ՀՀ Ոստիկանություն, ՀՀ ազգային անվտագության ծառայություն, ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ պետական կառավարման այլ մարմիններ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | սոցիալական երաշխիքների համակարգը: | |
| | 92.2 Միջնաժամկետ հատվածում կիրառել վարձատրության և խրախուսման արտաբյուջետային ֆոնդեր | 1.Դրույթը ներառված է ՀՀ հանրային ծառայության վարձատրության միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականության ռազմավարությունում և ծրագրում | 1.Դրույթը ներառված է հանրային ծառայության վարձատրության ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | ոչ | Արդյունք 2. Իրականացված չէ<br>Արտաբյուջետային ֆոնդերի կիրառմամբ հանրային ծառայողների վարձատրության համակարգում առկա խնդիրների լուծումը չի բխում հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության նախագծով նախատեսված մոտեցումներից, քանի որ արտաբյուջետային ֆոնդերի կիրառումը կիրառելի չէ բոլոր ծառայությունների համար. Հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսվում է ներդնել հանրային ծառայողների վարձատրության միասնական համակարգ, ինչպես նաև արդիականացնել հանրային ծառայողների լրացուցիչ աշխատավարձի և սոցիալական երաշխիքների համակարգը: Ներկայում հանրային որոշ ծառայություններում առկա են արտաբյուջետային ֆոնդեր, որի միջոցները ուղղվում են ծառայողների խրախուսմանը:<br>**Հիմնական եզրակացություն**. քանի որ ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 91 և 92 կետերը պետք է բխեն միևնույն նորմատիվ իրավական ակտից, այն է` Հանրային ծառայողների վարձատրության ռազմավարություն, (որը դեռևս չի հաստատվել` պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսությունում առաջացած ֆինանսական դժվարություններով), հետևաբար առաջարկվում է վերանայել վերոնշյալ կետերով նախատեսված միջոցառումները և դրանց իրականացման ժամկետները:<br>Իրավիճակը. անբավարար:<br>Առաջընթացը. անբավարար:<br>**Առաջարկներ**. վերանայել ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 91 և 92 կետերով նախատեսված միջոցառումները և դրանց իրականացման ժամկետները` դրանք համապատասխանեցնելով երկրի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակին: Խմբագրել միջոցառումը և մոնիտորինգի ցուցիչը: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 93. Ամբողջականացնել և օպտիմալացնել հանրային ծառայողների վարքագծի և շահերի բախման կարգավորումը | 93.1 Սահմանել քաղաքական, հայեցողական և հանրային այլ ծառայողների վարքագծի և շահերի բախման կանոնակարգման միասնական սկզբունքները և կանոնները, վարքագծի կոնկրետ | 1.Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման վերաբերյալ ռազմավարություն և ծրագիր, | 1.Պետական ծառայությունում, նոր ընթացակարգերի վրա խարսխված, պաշտոնանկության դեպքերի թվի հարաբերությունը պետական ծառայողների ամբողջական թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Աշխատանքային խմբի կողմից մշակվել է հանրային ծառայողների շահերի բացահայտման և շահերի բախման բացառման քաղաքականության տեսլական փաստաթուղթը, ինչպես նաև Քաղաքական գործունեության թափանցիկության մասին հայեցակարգը, որոնք քննարկվել են ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2009թ. դեկտեմբերի 18-ի նիստում և հիմք են հանդիսացել հանրային | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | կանոնների խախտումների համար պատասխանատվություն | 2.Ընդունվել է էթիկայի կանոնների և շահերի հայտարարագրման մասին օրենք, որում ներառված է, նաև պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման ընթացակարգերը<br><br>3.ՀՀ կառավարության կողմից ընդունվել է պետական պաշտոնյաների միասնական վարքականոն ԵԽ նախարարների կոմիտեի կողմից առաջադրված մոդելային վարքականոնի հիման վրա | 2.Վարքագծի և շահերի բախման կանոնակարգերը խախտելու համար կիրառված սանկցիաների թվի հարաբերությունը կոռուպցիոն մեղադրանքներ պարունակող հայցադիմումների ընդհանուր թվաքանակին | | ծառայության մասին ՀՀ օրենքի նախագծի մշակման համար:<br><br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքը ներառում է հանրային ծառայողների ,ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի կանոնների, շահերի բախման կանոնակարգման ու շահերի այդ թվում գույքի և եկամուտների հայտարարագրման վերաբերյալ դրույթներ:<br>պետական պաշտոնյաների շահերի հայտարարագրման, այդ թվում գույքի և եկամուտների հայտարարագրման ընթացակարգերը բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով սահմանվելու են բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանձնաժողովի կողմից:<br>Պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման են <Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին> ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերը 2012թ. ուժը կորցրած են ճանաչվելու: Հիմք հանրային ծառայության մասին ՀՀ Օրենք:<br><br>Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ:<br>Ըստ հանրային ծառայության առանձին ոլորտների էթիկայի կանոնները կսահմանվեն յուրաքանչյուր ոլորտի ծառայության մասին օրենքներով:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք գլուխ 6:<br><br>Ցուցիչ 1<br>Հնարավոր չէ ներկայում հաշվարկել ցուցիչի արժեքը:Այն հնարավոր կլինի հաշվարկել հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի գործողության պայմաններում<br><br>Ցուցիչ 2<br>Հնարավոր չէ ներկայում հաշվարկել ցուցիչի արժեքը:Այն հնարավոր կլինի հաշվարկել հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի գործողության պայմաններում | ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, անկախ փորձագետներ |
| | 93.2 Պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման գործող համակարգը ներառել շահերի հայտարարագրման միասնական համակարգում | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման վերաբերյալ ռազմավարությունում և ծրագրում<br><br>2.Էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքում ներառված է նաև պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման ընթացակարգերը | 1.Պետական պաշտոնյաների հայտարարագրված փաստացի աշխատավարձի և եկամուտների հարաբերությունը (որքան մոտ է մեկին այնքան նվազ է կոռուպցիոն ռիսկի հավանականությունը) | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքով պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը ներառված է շահերի հայտարարագրման միասնական համակարգում<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք գլուխ 6 :<br><br>Ցուցիչ 1<br>Հնարավոր չէ ներկայում հաշվարկել ցուցիչի արժեքը:Այն հնարավոր կլինի հաշվարկել հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի գործողության պայմաններում:<br><br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքով պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման հիմնական կանոնակարգումները: Դրանցից բխող ընթացակարգերը կսահմանվեն բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանձնաժողովին ՀՀ կառավարության կողմից: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 93.3 Ներդնել վարքագծի և շահերի բախման կանոնակարգման առավել խիստ կանոններ և ընթացակարգեր հանրային ծառայությունների առավել մեծ կոռուպցիոն ռիսկեր պարունակող բնագավառներում, այդ թվում՝ դատական, դատախազական, հարկային, մաքսային, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայությունների, քաղաքական և հայեցողական առանձին պաշտոնների համար | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման վերաբերյալ ռազմավարությունում և ծրագրում<br><br>2.էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքը ներառում է համապատասխան ընթացակարգերը | | | Արդյունք1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը տարանջատում է ինչպես ընդհանուր առմամբ հանրային ծաայողներին ներկայացվող էթիկայի կանոններն ու շահերի բախման սահմանափակումները, այնպես էլ առանձին հոդվածներով կանոնակարգում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ու հանրային ծառայության առանձին տեսակների համար առանձին օրենքներով դրանք կանոնակարգելու հնարավորությունը:<br><br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ:<br>Հանրային ծառայողների էթիկայի կանոնները և շահերի բախման կանոնակարգումները սահմանվել են ինչպես հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով, այնպես էլ կսահմանվեն ՀՀ առանձին օրենքներով, այլ իրավական ակտերով:<br>Հիմք՝ <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք գլուխ 6: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |
| | 93.5 Խստացնել նվերների ստացման և տրամադրման կանոններն ու սահմանափակումները | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում<br>2.Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի նախագիծը կանոնակարգում է նվերների ստացման և տրամադրման կանոններն ու սահմանափակումները | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Նվերների ստացման և տրամադրման կանոններն ու սահմանափակումները սահմանված են <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքով :<br>Հիմք՝ <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք, գլուխ 6,:<br>Արդյունք 2. Իրականացված ամբողջությամբ:<br>Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքը կանոնակարգում է նվերների ստացման ու տրամադրման կանոններն ու սահմանափակումները ընդունումից հետո<br><br>Ցուցիչ 1<br>Ցուցիչի արժեքի հաշվարկման հիմքում ընկած է նվերների ստացման և տրամադրման կանոնների ու սահմանափակումների նախատեսման պայմանը: Առաջարկվում է միջոցառման մեջ <խստացնել> բառը փոխարինել <սահմանել> բառով: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ ֆինանսների նախարարություն,<br>ՀՀ արդարադատության նախարարություն,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| | 93.6 Ներդնել հանրային ծառայողների այլ գործունեությամբ զբաղվելը բացառող կարգ | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում<br>2.Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի նախագիծը կանոնակարգում է հանրային ծառայողների այլ գործունեությամբ զբաղվելը բացառող շրջանակները | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br><Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքով սահմանված են հանրային ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները, այդ թվում` այլ գործունեությամբ զբաղվելը բացառող շրջանակները:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք, գլուխ 5և4:<br><br>Արդյունք 2. Իրականացված էամբողջությամբ:<br>Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը կանոնակարգում է հանրային ծառայողների այլ գործունեությամբ զբաղվելը բացառող շրջանակները<br>Ցուցիչ 1<br>Դրույթը ներառված է <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքի նախագծում: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ արդարադատության նախարարություն,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |
| | 93.7 Խրախուսել հանրային ծառայողների վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախումների վերաբերյալ տեղեկություններ հայտնողներին և ներդնել նրանց պաշտպանության համակարգեր | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում<br><br>2.Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի նախագիծը կանոնակարգում է հանրային ծառայողների վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախումների վերաբերյալ տեղեկություններ հայտնողներին և նրանց պաշտպանության շրջանակները | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br>Հանրային ծառայողը պետք է իրավասու պաշտոնատար անձանց տեղեկացնի այլ ծառայողների կողմից կատարած իրավախախտումների և հանրային ծառայությանն առնչվող ցանկացած անօրինական, այդ թվում` կոռուպցիոն գործողությունների մասին: Իրավասու մարմինները երաշխավորվում են հանրային ծառայողի անվտանգությունը:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք, գլուխ 5,<br><br>Արդյունք 2. Իրականացված չէ:<br>Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքը չի կանոնակարգում հանրային ծառայողների վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախումների վերաբերյալ տեղեկություններ հայտնողների պաշտպանության շրջանակները<br><br>Ցուցիչ 1<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 93.8 Ներդնել քաղաքական, հայեցողական և ղեկավար և բարձրագույն խմբի, գլխավոր և առաջատար խմբերի պաշտոնների, կոռուպցիոն մեծ ռիսկեր պարունակող ծառայությունների և գործառույթներ իրականացնող պաշտոնների, և որոշումների կայացման գործընթացներում չընդգրկված հանրային ծառայողների նկատմամբ հայտարարագրման տարբերակված համակարգ | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում<br>2.Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի նախագիծը կանոնակարգում է քաղաքական, հայեցողական և ղեկավար և բարձրագույն խմբի, գլխավոր և առաջատար խմբերի պաշտոնների, կոռուպցիոն մեծ ռիսկեր պարունակող ծառայությունների և գործառույթներ իրականացնող պաշտոնների, և որոշումների կայացման գործընթացներում չընդգրկված հանրային ծառայողների հայտարարագրման տարբերակված համակարգը | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Ոչ | Արդյունք1. Իրականացված է մասնակիորեն:<br><Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքում շահերի հայտարարագրումը տարբերակված է մասամբ:<br><br>Արդյունք 2. Իրականացված էամբողջությամբ:<br>Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքը կանոնակարգում է քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոնների, կոռուպցիոն մեծ ռիսկեր պարունակող ծառայությունների և գործառույթներ իրականացնող պաշտոնների, և որոշումների կայացման գործընթացներում չընդգրկված հանրային ծառայողների հայտարարագրման տարբերակված համակարգը:<br><br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար:<br><br>Առաջարկներ` վերախմբագրել < Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարություն>, <Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի նախագիծ> ձևակերպումները:<br>Առաջարկվում է նշել 93.4. միջոցառումը /բացակայում է/ կամ` փոխել համարակալումը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |
| 94. Ներդնել հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման համակարգի արդյունավետ կառավարման ապակենտրոնացված ինստիտուցիոնալ մոդել | 94.1 Սահմանել հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման համակարգի կառավարման կենտրոնական լիազոր մարմնի խնդիրները և գործառույթները, լիազորությունները, հաշվետվողականությունը և ընթացակարգերը | 1. Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում<br>2.Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի նախագիծը կանոնակարգում է հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման համակարգի կառավարման կենտրոնական լիազոր մարմնի խնդիրները և գործառույթները, | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների համար ստեղծվելու են էթիկայի առանձին հանձնաժողովներ:<br>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովներն իրականացնելու են շահերի հայտարարագրերի վերլուծությունը, հրապարակելու են շահերի բախման բացահայտված դեպքերը եւ դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցառումները, ինչպես նաև համացանցում վարելու են շահերի հայտարարագրերի բաց ռեեստր:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք, գլուխ 6:<br><br>Արդյունք 2. Իրականացված էամբողջությամբ:<br>Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը կանոնակարգում է հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման համակարգի կառավարման կենտրոնական լիազոր մարմնի խնդիրները և գործառույթները, լիազորությունները, հաշվետվողականությունը<br><br>Ցուցիչ 1<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | լիազորությունները, հաշվետվողականությունը | | | | |
| | 94.2 Յուրաքանչյուր պետական մարմնում ստեղծել էթիկայի հանձնաժողով | 1.Պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմնի/մարմինների կողմից հաստատվել է էթիկայի հանձնաժողովների օրինակելի կանոնակարգը, յուրաքանչյուր մարմնում պարտադիր կիրարկման նախապայմանով<br><br>2.Էթիկայի հանձնաժողովներ են ստեղծված պետական կառավարման և քաղաքային համայնքային մարմինների կեսում | 1.Էթիկայի հանձնաժողովներ ստեղծած պետական կառավարչական հիմնարկների թվի հարաբերությունը ՀՀ պետական կառավարչական հիմնարկների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Հանրային ծառայության մարմիններում գործելու են հանրային ծառայողի էթիկայի հարցերով հանձնաժողովներ: Հանրային ծառայության առանձին ոլորտների, էթիկայի կանոնները եւ շահերի բախումները կսահմանվեն հանրային ծառայության տվյալ ոլորտի առանձնահատկությունները հաշվի առնող օրենքերով, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերով:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենք, գլուխ 5:<br><br>Արդյունք 2. Իրականացված չէ:<br>Նախատեսվում է իրականացնել Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքը գործողության մեջ դնելուց հետո<br><br>Ցուցիչ 1<br>Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել պետական մարմիններում էթիկայի հանձնաժողովներ ստեղծելուց հետո: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ, |
| | 94.3 Աշխատակազմի ղեկավարին ճանաչել տվյալ մարմնում վարքագծի կանոնների ներդրման, շահերի հայտարարագրման ռեեստրի ստեղծման ու վարման, ընթացակարգերի պահպանման նկատմամբ վերահսկողության, էթիկայի և շահերի բախման հարցերով հաշվետվության պատրաստման պատասխանատու պաշտոնյա | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում<br><br>2.Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի նախագիծը կանոնակարգում է աշխատակազմի ղեկավարի տեղն ու դերը տվյալ պետական կառավարման մարմնում վարքագծի կանոնների ներդրման, շահերի հայտարարագրման ռեեստրի ստեղծման վարման ու պահպանման նկատմամբ վերահսկողության, էթիկայի և շահերի բախման հարցերով հաշվետվության պատրաստման | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>Էթիկայի հարցերով հանձնաժողովների ձևավորման, գործունեության, էթիկայի կանոնների խախտման առնչությամբ վարույթ իրականացնելու կարգը և աշխատակազմի ղեկավարի հետ կապված հարցերը սահմանվելու են հանրային ծառայության առանձին ոլորտները կարգավորող օրենքներով:<br>Հանրային ծառայության մարմինների էթիկայի հանձնաժողովների բնականոն գործունեությունը ապահովելու են համապատասխան պետական մարմինների աշխատակազմերը:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք<br><br>Արդյունք 2. Իրականացված չէ:<br>Նախատեսվում է իրականացնել Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքի համապատասխան դրույթը գործողության մեջ դնելուց հետո<br><br>Ցուցիչ 1.<br>Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել հանրային ծառայողի էթիկայի կանոնները եւ շահերի բախման կանոնակարգումները սահմանող ՀՀ համապտասխան առանձին օրենքների, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ընդունման արդյունքում:<br><br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար:<br>Առաջարկներ` վերախմբագրել < Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարություն>, <Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | հարցերում | | | նախագիծ> ձևակերպումները: | |
| 95. Հզորացնել պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման հարցերով պատասխանատուների կարողությունները | 95.1 Ներդնել շահերի հայտարարագրման, վարքագծի կանոնների և էթիկայի նորմերի ու դրանց ընթացակարգերի, խախտումների, դեպքերի ու փաստերի մասին տեղեկացման, բացահայտման և կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ գործնական ուղեցույցներ | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում<br><br>2.Շահերի հայտարարագրման, վարքագծի կանոնների և էթիկայի նորմերի ու դրանց ընթացակարգերի, խախտումների, դեպքերի ու փաստերի մասին տեղեկացման, բացահայտման և կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ մշակված գործնական ուղեցույցների նախագծեր | 1.Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1.Իրականացված է ամբողջությամբ<br>Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը սահմանում է հանրային ծառայողի էթիկայի կանոնները եւ շահերի բախման կանոնակարգումները: Շահերի հայտարարագրման, վարքագծի կանոնների և էթիկայի նորմերի ու դրանց ընթացակարգերի, խախտումների, դեպքերի ու փաստերի մասին տեղեկացման, բացահայտման և կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ գործնական ուղեցույցներ կսահմանվեն, ինչպես պետական ծառայության համապատասխան առանձին օրենքներով և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ընդունման արդյունքում:<br><br>Ցուցիչ 1 և 2.<br>Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել հանրային ծառայողի էթիկայի կանոնները եւ շահերի բախման կանոնակարգումները սահմանող ՀՀ համապտասխան առանձին օրենքների և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ընդունման արդյունքում: | Պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման հարցերով պետական լիազոր մարմին, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, Անկախ փորձագետներ |
| | | | 2.Պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման ընթացակարգերի, խախտումների, դեպքերի ու փաստերի մասին տեղեկացման, բացահայտման և կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ հրատարակված ուղեցույցերի տպաքանակի հարաբերությունը հանրային ծառայողների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | | |
| | 95.2 Կազմակերպել պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման հարցերով պատասխանատուների ուսուցումը ըստ ներդված ուղեցույցների | 1. Հանրային ծառայողների վարքականոնների և շահերի հայտարարագրման հարցերով պատասխանատու պաշտոնյաների վերապատրաստման դասընթացների մոդուլներ՝ ըստ շահերի հայտարարագրման, վարքագծի կանոնների և էթիկայի նորմերի ու դրանց ընթացակարգերի, խախտումների, դեպքերի ու փաստերի մասին մշակված գործնական ուղեցույցների | 1. Հանրային ծառայողների վարքականոնների և շահերի հայտարարագրման հարցերով պատասխանատու պաշտոնյաների վերապատրաստման դասընթացների մշակված մոդուլներ (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1.Իրականացված չէ<br>Հանրային ծառայողների վարքականոնների և շահերի հայտարարագրման հարցերով պատասխանատու պաշտոնյաների վերապատրաստման դասընթացների մոդուլներ՝ ըստ շահերի հայտարարագրման, վարքագծի կանոնների և էթիկայի նորմերի ու դրանց ընթացակարգերի, խախտումների, դեպքերի ու փաստերի մասին մշակված գործնական ուղեցույցները կսահմանվեն Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը գործողության մեջ դնելուց հետո, ինչպես նաև ՀՀ համապատասխան առանձին օրենքներով և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ընդունման արդյունքում:<br><br>Ցուցիչ 1.<br>Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել հանրային ծառայողի էթիկայի կանոնները եւ շահերի բախման կանոնակարգումները սահմանող ՀՀ համապտասխան առանձին օրենքների և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ընդունման արդյունքում: | Պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման հարցերով լիազոր մարմին, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, այլ շահագրգիռ պետական մարմիններ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 96. Ապահովել հանրային ծառայողների շահերի հայտարարագրման թափանցիկությունն ու հրապարակայնությունը | 96.1 Ներդնել քաղաքական, հայեցողական և պետական ծառայության ղեկավար ու քաղաքացիական ծառայության բարձրագույն խմբի ծառայողների շահերի հայտարարագրերը, այդ թվում՝ գույքի և եկամուտների հայտարարագրերը, համապատասխան մարմինների ինտերնետային կայքերում տեղակայելու ընթացակարգեր և սահմանել վերահսկողություն՝ դրանց պահպանման նկատմամբ | 1.Քաղաքական, հայեցողական և պետական ծառայության ղեկավար ու քաղաքացիական ծառայության բարձրագույն խմբի ծառայողների շահերի հայտարարագրերը համապատասխան մարմինների ինտերնետային կայքերում տեղակայելու և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողություն սահմանելու վերաբերյալ օրենսդրական ակտերի նախագծեր | 1.Քաղաքացիների և ԶԼՄ-ների կողմից շահերի հայտարարագրերի վերաբերյալ հայցադիմումների թվաքանակի հարաբերությունը շահերի հայտարարագրման և վարքականոնի ընթացակարգերի խախտման պատճառաբանությամբ կիրառված պատժամիջոցների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Հանրային ծառայության մարմիններում գործելու են հանրային ծառայողի էթիկայի հարցերով հանձնաժողովներ: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի կանոնները եւ շահերի հայտարարագրերը կտեղադրվեն բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանձնաժողովի ինտերնետային կայքում:<br>Հիմք՝ <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենք:<br><br>Ցուցիչ 1.<br>Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել պետական մարմիններում էթիկայի հանձնաժողովներ ստեղծելուց հետո: | ՀՀ պետական կառավարման բոլոր մարմիններ |
| | 96.2 Ներդնել պաշտոնյաների շահերի հայտարարգրերի վերաբերյալ քաղաքացիների հարցադրումներին կամ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին հրապարակայնորեն արձագանքելու ընթացակարգեր և սահմանել վերահսկողություն՝ դրանց պահպանման նկատմամբ | 1.Պաշտոնյաների շահերի հայտարարգրերի վերաբերյալ քաղաքացիների հարցադրումներին կամ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին հրապարակայնորեն արձագանքելու և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողություն սահմանելու վերաբերյալ օրենսդրական ակտերի նախագծեր | 1.Պաշտոնյաների շահերի հայտարարգրերի վերաբերյալ քաղաքացիների հարցադրումներին կամ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին հրապարակայնորեն արձագանքելու և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողություն սահմանելու վերաբերյալ օրենսդրական ակտերի մշակված նախագծեր (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը օժտված է բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկաի կանոնների եւ շահերի հայտարարգրերի վերաբերյալ քաղաքացիների հարցադրումներին կամ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին հրապարակայնորեն արձագանքելու և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողություն սահմանելու<br>Հիմք՝ <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենք:<br><br>Ցուցիչ 1<br>Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել պետական մարմիններում էթիկայի հանձնաժողովներ ստեղծելուց հետո, համապատասխան օրենսդրական կարգավորումներն ընդունելու ժամանակ: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, անկախ փորձագետներ |

**3.17 Հրապարակային հաշվետվություն**

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 97. Ապահովել պետական կառավարման մարմինների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակայնության սկզբունքի իրականացումը | 97.1 Ներդնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ծրագրերը և հաշվետվությունները կանոնավոր և պարբերաբար` առնվազն տարին մեկ անգամ հրապարակման, հանրային վերահսկողության մեխանիզմների կիրառման հստակ ընթացկարգեր և սահմանել վերահսկողություն` դրանց պահպանման նկատմամբ | 1. ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվությունների հրապարակման ընթացակարգը սահմանված է ՀՀ կառավարության և համապատասխան լիազոր մարմինների կողմից<br><br>2. ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մարմինների 50 տոկոսի գործունեության հաշվետվությունները հրապարակվում են սահմանված կարգով | 1.Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններն ու մարմինների տարեկան եւ ընթացիկ գործունեության մասին հաշվետվությունները հրապարակվում են (յուրաքանչյուր պետական կառավարչական հիմնարկի համար նշելով հրապարակման տեղն ու տպաքանակը) (այո/ոչ) | Այո | Արդյունք 1-2. Կատարված է ամբողջությամբ<br>Հայաստանի Հանրապետության կառավարության, նախարարությունների և առընթեր մարմինների կայքերում 2010թ. տեղադրվել են նախա-րարության ամենամյա գործունեության հաշվետվությունները, որոնք արտացոլում են Հայաստանի Հանրապետության նախարարությունների միջոցով ֆինանսավորվող ծրագրերի իրականացման աստիճանը բնորոշող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները, դրանց դինամիկան և վերլուծությունը: | ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ նախարարություններ,<br>ՀՀ կառավարությանն առընթեր մարմիններ,<br>մարզպետարաններ,<br>տեղական ինքնակառավարման մարմիններ, այլ գերատեսչություններ |
| | | | 2.Պետական քաղաքականության ներկայացմանն ու մեկնաբանմանը նվիրված հեռուստաեթերի ժամերի քանակական հարաբերությունը պետական կառավարչական հիմնարկների հաշվետվությանը նվիրված հաղորդումների ժամաքանակին, | Տվյալները բացակայում են | | |
| | | | 3.Պետական կառավարման մարմինների հաշվետվությունները պարունակող պաշտոնական կայքերի թվի հարաբերությունը պետական կառավարչական հիմնարկների գոյություն ունեցող ինտերնետային կայքերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է հակակոռուպցիոն քաղաքականությունը տվյալ բնագավառում) | Տվյալները բացակայում են | | |

**3.18** Կոռուպցիայի քրեականացում և իրավապահ գործունեություն

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 98. Ամբողջականացնել և որոշակիացնել կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը | 98.1 Ապահովել կոռուպցիայի քրեականացման բնագավառում միջազգային ընդունելի մոտեցումներին համահունչ օրենսդրության և դրա կիրառման պրատիկայի ամփոփումն ու կատարելագործումը | 1.Կոռուպցիոն հանցագործություններ ի շրջանակի հստակեցման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրություն<br>Կոռուպցիոն հանցա-գործությունների շրջանակի համապա-տասխանեցում միջ-ազգայնորեն ընդու-նելի մոտեցումներին և իրավական ամրա-գրում | 1. Հ Հ -ում առանձնացված կոռուպցիոն հանցատեսակ-ների թվի հարաբերությունը ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» դրույթներով սահմանված կոռուպցիոն հանցատեսակների ընդ-հանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է կատարվում կոռուպցիայի քրեկանացման մասով Հայաստանի ստանձնած միջազգային հանձնառությունները) | 1 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Դատախազության կողմից կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրությունն ընթացիկ աշխատանք է:<br>Արդյունք 2. Իրականացված չէ:<br>Նախատեսվում է ՀՀ քր.օր 190 հոդվածում փոփոխություն կատարելու վերաբերյալ օրենքի նախագծի մշակում: Ներկայում գործում է ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. նոյեմբերի 19-ի <Կոռուպցիոն հանցագործությունների մասին> թիվ 82 հրաման, որով սահմանվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը, որն իր մեջ ներառում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված 31 հանցակազմ:<br>Ցուցիչ 1. ՀՀ առանձնացված կոռուպցիոն հանցագործությունների ցանկը համապատասխանում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի դրույթներով սահմանված կոռուպցիոն հանցատեսակների ընդհանուր թվաքանակին:<br>ՀՀ օրենսդրությունը նախատեսում է իրավաբանական անձանց քաղաքացիա-իրավական (այդ թվում՝ նյութական) եվ վարչական պատասխանատվության վերաբերյալ դրույթներ, սակայն իրավաբանական անձի քրեական պատաս-խանատվության ինստիտուտը դեռևս բացակայում է: | ՀՀ դատախազություն<br>ՀՀ արդարադատությա ն նախարարություն |
| | 98.2 Հստակեցնել ակտիվ և պասիվ կաշառակերու-թյան հանցակազմերի իրավական կարգավորումը | 1. Ակտիվ և պասիվ կաշառակերության քրեականացման միջազգային փորձի ուսումնասիրություն<br>ՀՀ քրեական օրենսգրքի 311, 312, 311.1, 312.1 հոդվածների վերանայում՝ միջազգային փորձին համահունչ | 1.Ակտիվ և պասիվ կաշառակերության քրեականացման միջազգային փորձն ուսումնասիրվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 311, 312, 311.1, 312.1 հոդվածների վերանայվել են՝ միջազգային փորձին համահունչ (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից ուսումնասիրվում է ակտիվ և պասիվ կաշառակերության քրեականացման միջազգային փորձը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311, 312, 311.1, 312.1 հոդվածների վերանայման նպատակով: Մշակվել է «Քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը սահմանված կարգով համաձայնեցվել է բոլոր շահագրգիռ մարմինների հետ: Սակայն նկատի ունենալով, որ 2011 թվականի հունվարի մեկից համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1. հոդվածի առաջին մասի՝ իրավական ակտերի նախագծերը պետք է ներկայացվեն կարգավորման ազդեցության գնահատման, ուստի հիշյալ նախագիծը պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Սահմանված գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններին կարգավորման ազդեցության գնահատումը իրականացնելու համար:<br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ դեռևս կատարված չեն: | ՀՀ արդարադատությա ն նախարարություն |
| | 98.3 Սահմանել ակտիվ և պասիվ ազդեցության չարաշահում առանձին իրավախախտումը | 1.Ակտիվ և պասիվ ազդեցության չարաշահում հանցագործություններ ի քրեականացման միջազգային փորձի ուսումնասիրություն | 1.ՀՀ քրեական օրենսդրու-թյամբ պաշտոնեական ազդեցության ակտիվ չարաշահումը քրեականացված է (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1-2. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից ուսումնասիրվում է ակտիվ և պասիվ կաշառակերության քրեականացման միջազգային փորձը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311, 312, 311.1, 312.1 հոդվածների վերանայման նպատակով: Մշակվել է «Քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը սահմանված կարգով համաձայնեցվել է բոլոր շահագրգիռ մարմինների հետ: Սակայն նկատի ունենալով, որ 2011 թվականի հունվարի մեկից համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1. հոդվածի առաջին մասի՝ իրավական ակտերի նախագծերը պետք է ներկայացվեն | ՀՀ արդարադատությա ն նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2.ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխությունների նախագծի ներկայացում՝ միջազգային փորձին համահունչ վերանայելով ակտիվ և պասիվ ազդեցության չարաշահում հանցագործություններ ի հանցակազմերը | | | կարգավորման ազդեցության գնահատման, ուստի հիշյալ նախագիծը պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Սահմանված գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններին կարգավորման ազդեցության գնահատումը իրականացնելու համար:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ դեռևս կատարված չեն: | |
| | 98.4 Վերանայել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար պատասխանատվության ենթարկելու նախապայմանները | 1.Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար պատասխանատվություն վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն՝ արարքի համար վարչական եւ /կամ քրեական պատասխանատվություն սահմանելու սահմանների հստակեցում | 1.Պաշտոնեական լիազորությունները չարաշահմամբ դրսեւորվող կոռուպցիան քրեորեն պատժելի իրավախախտում է համարվում անկախ դրա առաջացրած վնասի չափից (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվում է պաշտոնական լիազորությունները չարաշահելու համար պատասխանատվության վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն: Մշակվել է «Քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը սահմանված կարգով համաձայնեցվել է բոլոր շահագրգիռ մարմինների հետ: Սակայն նկատի ունենալով, որ 2011 թվականի հունվարի մեկից համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1. հոդվածի առաջին մասի՝ իրավական ակտերի նախագծերը պետք է ներկայացվեն կարգավորման ազդեցության գնահատման, ուստի հիշյալ նախագիծը պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Սահմանված գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններին կարգավորման ազդեցության գնահատումը իրականացնելու համար:<br><br>Արդյունք 2. Կատարված չէ:<br>Վերջինիս կատարումը պայմանավորված է Արդյունք 1-ի կատարմամբ:<br><br>Ցուցիչ 1-ի և 2-ի հիմքը այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ դեռևս կատարված չեն: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | 2.ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի վերանայում՝ միջազգային փորձին համահունչ | 2.ՀՀ քրեական օրենսդրությամբ պաշտոնատար անձի կողմից գույքի հափշտակումը, ապօրինի յուրացումը կամ ոչ նպատակային օգտագործումը սահմանվել է որպես ինքնուրույն կոռուպցիոն հանցակազմ (այո/ոչ) | Ոչ | | |
| 99.Բարձրացնել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը | 99.1 Նվազեցնել կոռուպցիոն հանցագործությունների լատենտայնությունը | 1.Վերանայել կոռուպցիոն հանցագործություններ ի մասին հայտնելու դեպքում որպես խրախուսման միջոց քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ օրենսդրական դրույթները՝ հայտնելը քրեական պատասխանատվությունից ազատող հանգամաքն | 1.Կոռուպցիոն հանցագոր-ծությունների մասին հայտնելու արդյունքում բացահայտված հան-ցագործությունների հարաբերությունը հայտնելու արդյունքում չբացահայտված դեպքերին | Տվյալներ չկան: | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվում է կոռուպցիոն հանցագործությունների լատենտայնության նվազեցման վերաբերյալ միջազգային փորձ: Համատեղ քննարկումների արդյունքում ոչ նպատակահարմար է համարվել օրենսդրության մեջ փոփխություններ կատարելը, քանի որ գործող օրենսդրությունը հստակ կանոնակարգում է հանցագործությունների մասին հայտնելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը:<br><br>Ցուցիչ 1. ՀՀ արդարադատության նախարարությունում նման տեղեկատվություն չի հավաքագրվում: | ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | դիտարկելով միայն մինչև հանցագործության ավարտը: | | | | |
| | 99.2 Վերանայել և հստակեցնել կաշառքի պրովոկացիայի հանցակազմը և կարգավորումները | 1.Ուսումնասիրել օպերատիվ փորձարարության և կաշառքի պրովոկացիայի դեպքերը սահմանազատելու հարցում միջազգային փորձը<br>2.Օպերատիվ հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենքում և ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխությունների ներկայացում՝ ուղղված օպերատիվ փորձարարության և կաշառքի պրովոկացիայի դեպքերի հստակ սահմանազատմանը: | 1.Կաշառքի պրովոկացիայի հանցակազմը և կարգավորումները վերանայվել են հայեցողական որոշումները բացառելու առումով (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունը իր ընթացիկ աշխատանքներում առաջին եռամսյակի ընթացքում ինտերնետ համացանցով ուսումնասիրել է ԱՊՀ երկրների փորձը:<br><br>Արդյունք 2. Կատարված չէ:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել օրենսդրական փոփոխություններ իրականացնելուց հետո:<br><br>99.2 ենթակետը ուժը կորցրել է ՀՀ կառավարության 02.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 748-Ն որոշումով | ՀՀ ԿԱ Ոստիկանություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ գլխավոր դատախազություն |
| | 99.3 Միջազգային լավագույն պրակտիկային համապատասխան հստակ կարգավորման ենթարկել կաշառք տալու նմանակման և օպերատիվ փորձարարության իրականացման | 1.Ուսումնասիրել կաշառք տալու նմանակման և օպերատիվ փորձարարության իրականացման հարցում միջազգային փորձը, | 1.Կաշառք տալու/ստանալու համար նմանակման գործողությունների դեմ բավարարված դատական բողոքարկումների հարաբերությունը իրականացված օպերատիվ նմանակումների քանակին | Տվյալները բացակայում է | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գվ կողմից ինտերնետ համացանցով ուսումնասիրվել է միջազգային փորձը:<br><br>Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն<br>Մշակվել են օրենսդարական փոփոխությունների նախագծեր՝ << ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքում > և Օպերատիվ հետախուզական գործունեության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ, որը ներկայացված է ներգերատեսչական, | ՀՀ ԿԱ Ոստիկանություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ գլխավոր դատախազություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | պայմանները | 2.Օպերատիվ հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի ներկայացում` ուղղված կաշառք տալու նմանակման և օպերատիվ փորձարարության իրականացման պայմանների օրենսդրական կարգավորմանը: | 2.Կաշառք տալու/ստանալու դեպքերի բացահայտման համար իրականացված օպերատիվ փորձարարության դեմ բավարարված դատական բողոքարկումների հարաբերությունը իրականացված փորձարարությունների քանակին | Տվյալները բացակայում է | ինչպես նաև միջգերատեսչական քննարկման` ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ Վճռաբեկ դատարան, ՀՀ դատական դեպարտամենտ:<br><br>Ցուցիչ 1-ի և ցուցիչ 2-ի արժեքները հնարավոր կլինի հաշվարկել օրենսդրական փոփոխություններ իրականացնելուց հետո:<br><br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար<br><br>99.3 ենթակետը ուժը կորցրել է ՀՀ կառավարության 02.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարույան 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թրվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 748-Ն որոշումով | |
| 100. Ներդնել իրավաբա-նական անձանց քրեա-կան պատասխանա-տվության ինստիտուտը | 100.1 Քրեականացնել իրավաբանական անձի օգտին ֆիզիկական անձի կողմից կատարված կոռուպցիոն հանցագործությունը | 1.Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությ ան ինստիտուտի կիրառման միջազգային փորձի ուսումնասիրություն, իրավաբանական անձնաց նկատմամբ կիրառվող սանկցիաների շրջանակի բացահայտում:<br><br>2.Իրավաբանական անձի օգտին ֆիզիկական անձի կողմից կատարված կոռուպցիոն հանցագործության համար քրեական պատասախանատվություն սահմանող փոփոխությունների ներկայացում ՀՀ քրեական օրենսգրքում | 1.ՀՀ քրեական օրենսդրու-թյամբ իրավաբանական անձի օգտին ֆիզիկական անձի կողմից կատարված կոռուպցիոն հանցագոր-ծության նկատմամբ սահ-մանվել են համապատաս-խան պատժատեսակներ և պատժաչափեր (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Ուսումնասիրվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կիրառման միջազգային փորձը: Վեր են հանվել իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող սանկցիաները, որոնք համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձանց համար նախատեսված տույժերին:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը պայմանավորված է Արդյունք 2-ի կատարմամբ:<br><br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ<br>Ինչ վերաբերվում է ֆիզիկական անձի կողմից սեփական ազդեցությունը ի նպաստ իրավաբանական անձի շահադիտական նպատակով Օգտագործելը քրեականացնելուն, ապա նշված արարքն արդեն իսկ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 311.2-րդ հոդվածում:<br><br>Ցուցիչ 2.-ի արժեքի հիմքը պայմանավորված է նրանով, որ ՀՀ քրեական օրենսգրքում նշված արարքն արդեն իսկ նախատեսված է:<br><br>Ցուցիչ 3-ի արժեքի հիմքը պայմանավորված է նրանով, որ ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է սահմանում փողերի լվացման համար, անկախ այն բանից, թե հանցագործությունը ում օգտին է կատարված:.<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատությա ն նախարարություն |
| | | | 2.ՀՀ քրեական օրենսդրությամբ ֆիզիկական անձի կողմից սեփական ազդեցությունը ի նպաստ իրավաբանական անձի շահադիտական նպատակով Օգտագործելու նկատմամբ սահմանվել են համապատասխան պատժատեսակներ և պատժաչափեր (այո/ոչ) | Այո | | |
| | | | 3.ՀՀ քրեական օրենսդրությամբ ֆիզիկական անձի կողմից ի շահ իրավաբանական անձի կատարած փողերի լվացման նկատմամբ սահմանվել են համապատասխան պատժատեսակներ և պատժաչափեր (այո/ոչ), | Այո | | |
| 101. Սահմանել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և դրանք | 101.1Ուսումնասիրել կոռուպցիոն հանցագործությունների համար վաղեմության | 1.ՀՀ-ում կոռուպցիոն հանցագործություններ ի վերաբերյալ | 1. ՀՀ օրենսդրության մեջ կոռուպցիոն իրավախախտումների առնչությամբ վարույթ | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>Նախատեսվում է իրականացնել 2011թ. ընթացքում:<br>Արդյունք 2. Իրականացված չէ: | ՀՀ դատախազություն<br>ՀՀ արդարադատությա |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու օպտիմալ և միջազգայնորեն ընդունելի վաղեմության ժամկետներ | ընդունելի ժամկետների տևողության հարցում միջազգային փորձը | գործերով վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով վարույթի կարճման վիճակագրության վերլուծություն և համադրում միջազգային փորձի հետ` գնահատելով կոռուպցիոն հանցագործությունների համար ՀՀ քրեական օրենսգրքում սահմանված պատասխանատվության վաղեմության ժամկետների համապատասխանությունը կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման առանձնահատկություններին ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխությունների նախագծի ներկայացում`ուղղված կոռուպցիոն հանցագործությունների համար պատասխանատվության վաղեմության առավել երկար ժամկետների սահմանմանը | հարուցելու համար սահմանվել է վաղեմության ավելի երկար ժամկետ քան այլ հանցատեսակների պարագայում (այո/ոչ) | | Նախատեսվում է իրականացնել 2011թ. ընթացքում:<br>Ցուցիչ 2. Ցուցիչ հաշվարկի համար անհրաժեշտ տվյալներ ներկայում չի հավաքագրվում:<br>Նախատեսվում է իրականացնել 2011թ. ընթացքում: | ն նախարարություն |
| | | | 2.Վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով կարճված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերի հարաբերությունը բացահայտված կոռուպցիոն հանցագործությունների թվին | Տվյալները բացակայում են | | |
| | 101.2 Վերանայել դատախազներին և դատավորներին անձեռնամխելիությունից զրկելու ընթացակարգերը | 1. Դատախազի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցում վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցության նվազեցմանը ուղղված Դատախազության մասին ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ | 1. Դատախազի և դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցում վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցությունը նվազեցված է (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարվել է մասնակիորեն<br>Դատախազի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցում վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցության նվազեցմանը ուղղված Դատախազության մասին ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը և ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:<br><br>Դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցման վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցությունը նվազեցնելուն ուղղված պահանջը հակասում է ՀՀ Սահմանդրությանը:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքը կատարված է ամբողջությամբ: Դատախազի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցում վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցության նվազեցմանը ուղղված մասում, որը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը և ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ դատախազություն<br>ՀՀ դատական դեպարտամենտ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Դատավորներին ուղղված պահանջը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:<br><br>Առաջարկվում է ցուցիչը վերասահմանել որպես` <<Դատախազի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցում վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցությունը նվազեցված է>>:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | |
| 102. Ապահովել կոռուպցիոն հանցագործությունների համար համարժեք և համադրելի խստության, արդյունավետ պատժատեսակներ ու պատժաչափեր | 102.1Ուսումնասիրել կոռուպցիոն հանցագործությունների համար սանկցիաների տարբերակման միջազգային փորձը | 1.Կոռուպցիոն հանցագործությունների համար սանկցիաների տարբերակման միջազգային փորձի վերլուծություն և դրանց համադրում ՀՀ քրեական օրենսգրքով համապատասխան հանցատեսակների համար նախատեսված պատժաչափերի և պատժատեսակների հետ<br><br>2.ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխությունների նախագծի ներկայացում` ուղղված կոռուպցիոն հանցագործությունների վտանգավորության աստիճանի համարժեք գնահատմամբ դրանց համար սանկցիաների վերանայմանը: | 1. Պասիվ կոռուպցիոն արարքների թվի հարաբերությունը ակտիվ կոռուպցիոն արարքների ընդհանուր թվաքանակի վրա (որքան մոտ է մեկին այնքան բարձր է կոռուպցիայի քրեականացման արդյունավետությունը) | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված չէ:<br><br>ՀՀ գլխավոր դատախազությունում եվ այլ պատկան մարմինների կողմից պարբերաբար ուսումնասիրվել է կոռուպցիոն հանցագործությունների համար սանկցիաների տարբերակման միջազգային փորձը, որի հիման վրա ՀՀ ԱԺ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» 2009թ. հունիսի 10-ի օրենքով խստացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ, 195-րդ եվ 205-րդ հոդվածներով նախատեսված արարքների համար նախատեսված պատիժը:<br><br>Արդյունք 2. Իրականացված չէ:<br><br>ՀՀ ԱԺ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» 2009թ. հունիսի 10-ի օրենքով խստացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ, 195-րդ եվ 205-րդ հոդվածներով նախատեսված արարքների համար նախատեսված պատիժը:<br><br>Ցուցիչ 1. Դեռևս առկա չէ ցուցիչի հաշվարկի մեթոդաբանությունը:<br><br>Առաջարկվում է մշակել ցուցիչի հաշվարկի համար անհրաժեշտ մեթոդաբանությունը: | ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ արդարադատության նախարարություն |
| 103. Զարգացնել կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման մեխանիզմները | 103.1Ներդնել հանցավոր ճանապարհով ձեռք բերված և բռնագանձված միջոցների կառավարման թափանցիկ և արդյունավետ մեխանիզմներ, այդ թվում` վերածել բռնագանձված միջոցները պետական սեփականության և դրանք ուղղել հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ հարակից այլ ծրագրերի | 1.Հանցավոր ճանապարհով ձեռք բերված և բռնագանձված միջոցների կառավարման միջազգային փորձի ուսումնասիրություն<br><br>2.ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխությունների նախագծի | 1.Նույն ժամանակահատվածում, դատարան ուղարկված պետությանը պատճառված նյութական վնասի վերաբերյալ գործերով նյութական վնասի չափի հարաբերությունը գործը մինչև դատարան ուղարկելը վերականգնված գումարի չափին (որքան մոտ է մեկին այնքան զարգացած է կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություն: Բացի այդ ՀՀ Նախագահի 2010թ. ապրիլի 26-ի թիվ ՆԿ-58-Ա կարգադրությամբ ստեղծվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խումբ և նախատեսվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված և բռնագանձված միջոցների կառավարման կարգավորումների սահմանումը ամրագրել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում:<br><br>Ցուցիչ 1. ՀՀ արդարադատության նախարարությունում նման տեղեկատվություն չի հավաքագրվում:<br><br>Ցուցիչ 2. ՀՀ արդարադատության նախարարությունում նման տեղեկատվություն չի հավաքագրվում: | ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ներկայացում` ուղղված հանցավոր ճանապարհով ձեռք բերված և բռնագանձված միջոցների կառավարման կարգավորումների սահմանմանը: | մեխանիզմների արդյունավետությունը) | | Ցուցիչ 3. ՀՀ արդարադատության նախարարությունում նման տեղեկատվություն չի հավաքագրվում: | |
| | | | 2.Նույն ժամանակահատվածում կոռուպցիոն հանցատեսակների մասով բռնագրավված միջոցների չափի հարաբերությունը, նույն գործերով, առգրավված միջոցների գումարային չափին (որքան մոտ է մեկին այնքան զարգացած է կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման մեխանիզմների արդյունավետությունը) | Տվյալներ չկան | | |
| | | | 3.Նույն ժամանակահատվածում կոռուպցիոն հանցագործությունների պատճառով պետությանը հասցված վնասի չափի հարաբերությունը վերականգնված վնասի գումարային չափին (որքան մոտ է մեկին այնքան զարգացած է կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման մեխանիզմների արդյունավետությունը) | Տվյալներ չկան | | |
| 104.Բարձրացնել վկաների, փորձագետների և տուժողների, ինչպես նաև տեղեկություններ հաղորդող անձանց պաշտպանության ինստիտուտի | 104.1Գործնականում պատշաճ կիրառել վկաների, փորձագետների և տուժողների պաշտպանության օրենսդրության առկա նորմերն ու | 1.Վկաների, փորձագետների և տուժողների պաշտպանության համար միջազգայինորեն կիրառվող մեխանիզմների | 1.ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ ամրագրվել է տեղեկություններ հաղորդող անձանց պաշտպանության մասին դրույթներ (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություն: Բացի այդ ՀՀ Նախագահի 2010թ. ապրիլի 26-ի թիվ ՆԿ-58-Ա կարգադրությամբ ստեղծվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խումբ և նախատեսվում է վկաների, փորձագետների և տուժողների պաշտպանությանն ուղղված մեխանիզմները ամրագրել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում: | ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| արդյունավետությունը | մեխանիզմները, և ընդլայնել դրանց շրջանակն այլ արդիական միջոցներով | ուսումնասիրություն և համապատասխան դրույթներն ներառված են ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ<br><br>2.Կառուպցիոն հանցագործությունների վերաբերյալ իրենց կամքով ու նախաձեռնությամբ հիմնավոր տեղեկություններ հաղորդող անձանց պաշտպանության վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն և համապատսխան դրույթներն ներառված են ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ | 2.Իրավասու մարմիններին կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ փաստերի մասին կամովին տեղեկատվության տրամադրման դեպքերի քանակի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կոռուպցիոն հանցատեսակների մասով հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան բարձր է պաշտպանության ինստիտուտի արդյունավետությունը) | | Ցուցիչ 1-ի արժեքի հիմքն այն է, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքն դեռևս ընդունված չէ:<br>Ցուցիչ 2. ՀՀ արդարադատության նախարարությունում նման տեղեկատվություն չի հավաքագրվում: | |
| | 104.2 Պաշտպանության տակ գտնվող անձանց տեղափոխության համար այլ պետությունների հետ կնքել համաձայնագրեր և հաստատել պայմանավորվածություններ | 1.Պաշտպանության տակ գտնվող անձանց տեղափոխության համար հնարավոր գործընկեր պետությունների շրջանակի ուսումնասիրություն և որոշակիացում | 1.Պաշտպանության տակ գտնվող անձանց տեղափոխության համար այլ պետությունների հետ կնքվել են համաձայնագրեր և հաստատվել են պաշտոնական պայմանավորվածություններ (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>Նախատեսվում է իրականացնել 2011թ: | ՀՀ դատախազություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն<br>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն |
| 105. Բարձրացնել իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում | 105.1 Հստակորեն տարանջատել կոռուպցիոն իրավախախտումների դեմ պայքարի գործունեություն իրականացնող պետական մարմինների գործառույթները | 1.Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում` ուղղված կառուպցիոն իրավախախտումների բացահայտման կարողությունների զարգացմանը<br><br>2.Առանձին կոռուպցիոն հանցատեսակներով քննության իրականացման հարցում մասնագիտացված | 1.Հայաստանի Հանրապետությունում սահմանված է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական համակարգ (այո/ոչ)<br><br>2.Նույն ժամանակահատվածում կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ հարուցված քրեական գործերի թվի հարաբերությունը ավարտված գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է | Այո<br><br>108 / 74 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից դատախազների մասնագիտական վերապատրաստման եվ որակավորման բարձրացման մշտապես գործող դասընթացների ընթացքում դատախազների, ոստիկանության եվ ՀՔԾ քննիչների համար կազմակերպվում է կոռուպցիային հակազդելու, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հասկացության բնորոշման, դրանց շրջանակի, արարքի որակման եվ դատական պրակտիկայի վերաբերյալ դասախոսություններ եվ պրակտիկ սեմինարներ:<br>Դրանց արդյունքներով դատախազներն անցնում են համապատասխան թեստավորում:<br>Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի "Կոռուպցիայի վերաբերյալ դատախազների պարբերական վերապատրաստման կրթական ծրագիրը հաստատելու մասին" 30.03.2009թ. հա.20 հրամանը և դատախազների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց կրթական ծրագրի համաձայն`2010թ. ընթացքում 313 դատախազներ և դատախազների թեկնածու- | ՀՀ դատախազություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն,<br>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ հատուկ քննչական ծառայություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | կառուցվածքային ստորաբաժանումների կամ հաստիքային միավորների ստեղծում, դրանք մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսներով ապահովում | իրավապահ մարմինների գործունեությունը կոռուպցիայի դեմ պայքարում) | | թյունների ցուցակում ընդգրկված 31 անձ մասնակցել են կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպման աշխատանքների կազմակերպմանը վերաբերող “Դատախազության դպրոց” ՊՈԱԿ-ի կողմից իրականացված դասընթացներին: “Դատախազության դպրոց” ՊՈԱԿ-ը Եվրոմիության եվրոպական հանձնաժողովի հետ համատեղ 2010թ. մայիսի 26-27-ին “ԹԱՅԵՔՍ” ծրագրի շրջանակներում իրականացրել է “Դատախազության դերը քրեական քաղաքականության իրականացման գործում և կոռուպցիայի դեմ պայքարում” խորագրով աշխատաժողով` դատախազների և այլ պետական մարմինների, միջազգային կառույցների և ՀԿ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ: 2010թ. սեպտեմբերի 14-16-ին ՊՈԱԿ-ը ՀՀ կենտրոնական բանկի և Համաշխարհային բանկի հետ համատեղ կազմակերպել է փողերի լվացման հարցերով նախաքննության և դատաքննության գործնական փորձի քննարկմանը նվիրված սեմինար, որին մասնակցել են դատախազներ, դատավորներ, քննիչներ և օպերատիվ աշխատողներ: 01.12.2010թ. ՊՈԱԿ-ում ՇՊԱԿ-ների համար իրականացվել է սեմինար` նվիրված իրավապահ մարմինների և ՀԿ-ի համագործակցությանը կոռուպցիային հակազդելու հարցերում: 2010թ. ընթացքում “Դատախազության դպրոց” ՊՈԱԿ-ը հրատարակել է նաև 2 ուսումնական ձեռնարկ. “Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը” և “Պայքար փողերի լվացման դեմ” անվանումներով:<br><br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ:<br><br>ՀՀ ԿԱ ոստիկանության եվ ԱԱԾ համակարգում գործում են կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումներ, ՀՀ գլխավոր դատախազի 30.04.2004թ. հրամանով ՀՀ գլխավոր դատախազության համակարգում ստեղծվել է կոռուպցիայի դեմ պայքարի բաժին, որը ՀՀ գլխավոր դատախազի 2007թ մայիսի 31-ի թիվ 26 հրամանով վերակազմավորվել է կոռուպցիոն եվ կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության:<br><br>Ցուցիչ1. հիմք` ՀՀ կառավարության 23.10.2008թ. «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձեվերը եվ դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» N 1225-Ն որոշում:<br><br>Ցուցիչ 2. 2010թ. ընթացքում հարուցվել է 385 քրեական գործ, ավարտվել է 375 քրեական գործ:<br><br>Ցուցիչ 3. 2010թ. ընթացքում հարուցվել է 385 քրեական գործ, կարճվել է 158 քրեական գործ:<br><br>Ցուցիչ 4. 2010թ. ընթացքում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 114 քրեական գործ 136<br>անձի նկատմամբ, դատարանի կողմից արձակվել է դատավճիռ 144 քրեական գործով` 182 անձի նկատմամբ: | |
| | | | 3.Նույն ժամանակահատվածում կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ կարճված գործերի թվի հարաբերությունը հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է զրոին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների գործունեությունը կոռուպցիայի դեմ պայքարում) | 39 / 108 | | |
| | | | 4.Կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ դատարանի կողմից կայացված դատավճիռների թվի հարաբերությունը հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների գործունեությունը կոռուպցիայի դեմ պայքարում) | 26 / 108 | | |
| 106. Ապահովել կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև ակտիվ և արդյունավետ համագործակցությունը | 106.1Սահմանել իրավապահ մարմիններին կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը խրախուսող գործուն իրավական մեխանիզմներ | 1.Կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության առկա և միջազգային փորձի | 1.ԶԼՄ-ներով ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրավասու մարմիններին ուղղված կոռուպցիոն հանցագործությունների մասին հաղորդումների թվի հարաբերությունը, նույն ժամանակահատվածում, այդ մարմինների կողմից | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br><br>Ուսումնասիրվել է պետական մարմինների եվ ոչ առեվտրային կազմակերպությունների` հասարակական կազմակերպությունների հետ փոխհամագործակցության միջազգային փորձը, որի հիման վրա հասարակական կազմակերպությունների հետ մշակվել, եվրոպական ոչ առեվտրային կենտրոնի /ECNL/ կողմից արժանացել է դրական եզրակացության եվ ՀՀ գլխավոր դատախազի 2009թ. փետրվարի 20-ի թիվ 5 հրամանով հաստատվել է »ՀՀ դատախազության եվ հասարակական կազմակերպությունների միջեվ մասնակցային համագործակցության կարգը«: | ՀՀ դատախազություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ուսումնասիրություն<br>2.Իրավապահ մարմիններին կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը խրախուսող միջոցառումների ծրագիր | կոռուպցիոն հանցատեսակների մասով հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը) | | 11.06.2010թ. կազմակերպվել է հանդիպում-հարցազրույց “Թրանսփարենսի Ինթերնեշնլ” հակակոռուպցիոն կենտրոնի ներկայացուցիչների համար, որին մասնակցել է ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետը: 05.10.2010թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետը, ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավարը և աշխատակազմի կազմակերպական-մեթոդական և հանրային կապերի վարչության պետը մասնակցել և ելույթներ են ունեցել Երևանի ՇՊԱԿ կենտրոնի բացման արարողության ժամանակ: ՀՀ գլխավոր դատախազի մամուլի քարտուղարի հետ համատեղ և “Ինֆորմացիայի Ազատության Կենտրոն” ՀԿ-ի հետ համագործակցությամբ 2010թ. հոկտեմբերի 30-31-ը Աղվերանում լրագրողների և դատախազների մասնակցությամբ կազմակերպվել է “Տեղեկատվության և արտահայտվելու ազատության հիմնախնդիրները և կոռուպցիայի կանխարգելումը” թեմայով սեմինար-քննարկումը, որին մասնակցել և ելույթով հանդես է եկել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: “Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա” ՀԿ-ի և Երևանի ՇՊԱԿ-ի կողմից 09.12. 2010թ. կազմակերպված “Կոռուպցիայի դեմ պայքարի” միջազգային օրվան նվիրված ուսանողական մրցույթի ժյուրիի աշխատանքներին մասնակցել է ՀՀ դատախազության աշխատակազմի կազմակերպական-մեթոդական և հանրային կապերի վարչության պետը: 30.06.2010թ. հանդիպում է կազմակերպվել Վայոց Ձորի, Արագածոտնի, Տավուշի և Կոտայքի մարզերի ՇՊԱԿ կենտրոնները գործարկող “Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա” ՀԿ նախագահի հետ, որի ընթացքում քննարկվել են կենտրոնների և ՀՀ դատախազության մարզային կառույցների համագործակցության խնդիրները: ՀՀ դատախազության 6 դատախազներ և ՀՀ դատախազության աշխատակազմի կազմակերպական-մեթոդական և հանրային կապերի վարչության պետը 2010թ. նոյեմբերի 3-5-ը մասնակցել են Շվեյցարական “Քրիսթիան փոլիս ըսոսիէյշն”-ի (“Christian Police Association” (CPA) նախաձեռնությամբ կազմակերպված՝ “Կոռուպցիայի կանխարգելում և առաջնորդություններ” թեմայով սեմինար-դասընթացին, որի ընթացքում իրենց փորձն են ներկայացրել ԱՄՆ-ում տեղակայված “Փոինթմեն լիդերշիփ ինստիտյուտ”-ի (“Pointman Leadership Institute” (PLI) ներկայացուցիչները: Դասընթացին մասնակցել են ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության, դատական համակարգի և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների համար: 01.12.2010թ. “Դատախազության Դպրոց” ՊՈԱԿ-ում ԱՄՆ ՄԶԳ ՀԳՄԾ հետ համատեղ կազմակերպվել է սեմինար-դասընթաց ՇՊԱԿ-ի աշխատակազմերի ներկայացուցիչների համար: Սեմինարի մասնակիցներին տրվել են հավաստագրեր: Միջոցառումները մշտապես լուսաբանվել են ԶԼՄ-ով:<br>Արդյունք 2. Իրականացված է մասնակիորեն:<br>Իրավապահ մարմիններին կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը խրախուսող կոնկրետ միջոցառումներ չեն մշակվել, սակայն ՀՀ դատախազության և ՀՀ ԿԱ Ոստիկանության ու ԱԱԾ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները առավելագույնս անդրադառնում են ԶԼՄ-ներով, ինչպես նաև այլ աղբյուրներով ստացված կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ հաղորդումներին՝ տալով համապատասխան ընթացք:<br>Ցուցիչ 1. Անհրաժեշտ է մշակել ցուցիչի հաշվարկման մեթոդաբանությունը և տվյալների հավաքագրման պրակտիկան:<br>Ցուցիչ 2. Անհրաժեշտ է մշակել ցուցիչի հաշվարկման մեթոդաբանությունը և | |
| | | | 2.ԶԼՄ-ներով իրավասու մարմինների կողմից հակակոռուպցիոն պայքարին նվիրված պաշտոնական հաղորդումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում այդ մարմինների կողմից հասարակության հետ համագործակցությունը քաջալերող քարոզչության դեպքերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության խրախուսումը): | Տվյալներ չկան | | |
| | | | 3.Ֆիզիկական և իրավաբանական անձանց, լրատվության միջոցների հաղորդումներով հարուցված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերայլ գործերի հարաբերությունը հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների հանցագործության նյութական հետքերի եւ հետեւանքների հայտնաբերմամբ հարուցված գործերի թվին: | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | տվյալների հավաքագրման պրակտիկան:<br>Ցուցիչ 3. Անհրաժեշտ է մշակել ցուցիչի հաշվարկման մեթոդաբանությունը և տվյալների հավաքագրման պրակտիկան: | |
| | 106.2 Զարգացանել կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ ստացվող տեղեկությունները վերլուծելու և դրանց արագ արձագանքման համակարգերը | 1. Ուսումնասիրել կոռուպցիոն հանցագործություններ ի վերաբերյալ տեղեկությունների ստացման և դրանց արձագանքման միջազգային փորձը | 1. Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունների ստացման և դրանց արձագանքման միջազգային փորձն ուսումնասիրվել է (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>Նախատեսվում է իրականացնել 2011թ -ին:<br>Արդյունք 2. Իրականացված չէ<br>Առաջարկվում է դիտարկել ՀՀ կառավարության 27.03.2008թ. թիվ 1039-Ն որոշմամբ հաստատված ծրագրի N 51 միջոցառման իրականացման շրջանակներում:<br>Առաջարկվում է սկսել այդ համակարգի հայեցակարգի մշակումը համապատասխան գերատեսչությունների համագործակցությամ | ՀՀ դատախազություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն,<br>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ հատուկ քննչական ծառայություն |
| | | 2. Ներդրված են կոռուպցիոն հանցագործություններ ի վերաբերյալ տեղեկությունների ստացման և արագ փոխանակման միջգերատեսչական գործուն համակարգ, այդ թվում`զլմ-ների կողմից կոռուպցիոն հանցագործություններ ի վերաբերյալ հաղորդումներին ընթացք տալու մեխանիզմները | 2. Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունների ստացման և արագ փոխանակման միջգերատեսչական գործուն համակարգ, այդ թվում`զլմ-ների կողմից կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներին ընթացք տալու մեխանիզմները ներդրված են (այո/ոչ) | Ոչ | | |
| 107.Զարգացել է միջազգային համագործակցությունը կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում | 107.1Ընդլայնել փոխադարձ իրավական օգնության, քրեական գործերով վարույթների փոխանցման, հանցանք կատարած անձանց հանձմանն հարցերը կարգավորող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի շրջանակը | 1.ՀՀ կողմից այլ երկրների հետ փոխադարձ իրավական օգնության, քրեական գործերով վարույթների փոխանցման, հանցանք կատարած անձանց հանձմանն հարցերը կարգավորող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի | 1.Կոռուպցիոն հանցատեսակների մասով միջազգային երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի ու պայմանագրերի շրջանակներում համագործակցության դեպքերի թվի հարաբերությունը, նույն ժամանակահատվածում, միջազգային պայմանագրերի բացակայությամբ քրեական գործերով իրավական | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Նախատեսվում է իրականացնել 2011թ. ընթացքում:<br>Արդյունք 2. Իրականացված չէ:<br>Կոռուպցիոն հանցատեսակների մասով միջազգային երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր և պայմանագրեր չեն կնքվել:<br>Ցուցիչ 1.Դեռևս առկա չէ ցուցիչի հաշվարկի մեթոդաբանություն:<br>Առաջարկվում է մշակել ցուցիչի հաշվարկի համար անհրաժեշտ մեթոդաբանությունը: | ՀՀ դատախազություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | շրջանակի վերանայում, հնարավոր գործընկեր երկրների ցանկի իդենտիֆիկացում<br>2.Կոռուպցիոն հանցատեսակների մասով միջազգային երկկողմ և բազմակողմ համաձայնագրերում և պայմանագրերում ամրագրվել են քրեական գործերով համատեղ քննչական միջոցառումների իրականացումը, հատուկ քննչական տեխնիկաների կիրառումն ապահովող դրույթներ | օգնության դեպքերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան բարձր է միջազգային համագործակցությունը կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում) | | | |

**3.19** Կադրերի պատրաստում և վերապատրաստում, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարում

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 108.Իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարի կրթա-լուսավորչական քաղաքականության առանձին ծրագեր | 108.1Սահմանել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ուսուցման գործընթացին ներկայացվող պահանջներ | 1.Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ուսումնական ծրագրերը, գիտամեթոդական ու կրթական գործընթացի կազմակերպման համար պահանջվող այլ նյութերը հաստատված են<br><br>2.կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ուսուցման համակարգի ներդրման իրավական փաստաթղթերը մշակված են<br><br>3.Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ուսուցանվող ուսումնական ծրագրերի համար սահմանված են բյուջետային ֆինանսավորման ծավալներն ու կարգը<br><br>4.Կոռուպցիայի հիմնախնդիրն ու հակակոռուպցիոն թեմատիկ մոդուլները ներառվել են հանրակրթության և մասնագիտական կրթության ուսումնական պլաններում | 1.Կոռուպցիայի հիմնախնդիրն ու հակակոռուպցիոն թեմատիկ դասընթացներ իրականացնող հանրակրթական և մասնագիտական կրթական հաստատությունների տեսակարար կշիռը ընդամենը հանրակրթական, և մասնագիտական կրթական հաստատություններում | 0,9 | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Մշակվել են նյութեր հիմնական դպրոցի <<Հասարակագիտություն>> առարկայի համար: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող <<Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի>>` <<Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի>> ենթածրագրի շրջանակներում <<Ապագան քոնն է>> ՀԿ-ի կողմից ստեղծվել է <<Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի>> մեթոդական ուղեցույց-ձեռնարկը հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:<br>Մշակվել է <<Կոռուպցիան և նրա կանխարգելումը>> ծրագիր-ուղեցույցը նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար:<br>Առաջարկվում է համապատասխան նյութեր մշակել նաև ավագ դպրոցի սովորողների համար:<br><br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ:<br>Կրթական առանձին մակարդակներում հակակոռուպցիոն ծրագրերի ուսուցման գործընթացը կանոնակարգվել է ՀՀ ԿԳ նախարարի` առանձին հանձնարարականներով:<br>Նախատեսվում է հակակոռուպցիոն ծրագրերի ուսուցման միասնական գործընթացը նախատեսել 2011-2012 ուսումնական տարում, հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը և ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագիրը>>:<br>Հակակոռուպցիոն ծրագրերի իրամանացման գործում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը աջակցում է ԵԱՀԿ-ի Երևանի գրասենյակը: Մարդու իրավունքների, հաշվետվողականության համակարգի ուժեղացման, մասնակցային գործընթացի և հակակոռուպցիոն թեմաների ուսուցման ոլորտում վերապատրաստումներ իրականացնելու նպատակով ԵԱՀԿ-ի Երևանի գրասենյակի և ՀՀ կրթության և գիտության նախարարության միջև կնքվել է հուշագիր: Հակակոռուպցիոն ծրագրերի ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով երկկողմ հուշագիր է կնքվել նաև <<Ապագան քոնն է>> ՀԿ-ի հետ:<br><br>Արդյունք 3. Իրականացված է մասամբ<br>Հաստատությունները հակակոռուպցիոն ուսուցման ծրագրերը հիմնականում իրականացնում են իրենց ունեցած բյուջետային հնարավորությունների շրջանակում կամ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:<br><br>Արդյունք 4. Իրականացված է մասամբ<br><br>Հանրակրթության ոլորտում հակակոռուպցիոն թեմաները ներառվել են միայն հիմնական դպրոցում, իսկ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում այն ուսուցանվում է ուսումնական պլանների պահուստային ժամերի հաշվին: <<Ապագան քոնն է>> ՀԿ-ի աջակցությամբ նախատեսվում է հակակոռուպցիոն թեմաների ուսուցումը 3 դասաժամի սահմաններում ներառել նաև ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչում: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Առաջարկվում է դասընթացի լիարժեք ուսուցումը նախախատեսել 2011-2012 ուսումնական տարում:<br><br>*Ցուցիչներ*<br>Ցուցիչ 1. Ցուցիչ 1-ի արժեքը հաշվարկվել է ԱՎԾ-ի տվյալների և ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների հիման վրա: Հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների ընդհանուր թիվը 1404 է, նախնական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների թիվը` 30, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը` 81, բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը` 23: Հակակոռուպցիոն թեմաների ուսուցում իրականացվել է 1393 հանրակրթական դպրոցներում:<br>Այս թիվը ներքին սահմանն է: | |
| | 108.2 Համապատասխան մասնագիտությունների գծով բարձրագույն կրթության հաստատություններում, առանձին մասնագիտությունների կրթական ծրագրերում ներդնել կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման և հանրային իրազեկման թեմաներ | 1.Բարձրագույն կրթության առանձին մասնագիտությունների կրթական ծրագրերում կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման և հանրային իրազեկման վերաբերյալ մշակված թեմաներ, մոդուլներ,<br><br>2.Կոռուպցիայի հիմնախնդիրն ու հակակոռուպցիոն թեմատիկ մոդուլները ներառվել են բարձրագույն կրթության առանձին մասնագիտությունների մագիստրոսական կրթական ծրագրերում ու հետազոտությունների ցանկում | 1.Կոռուպցիայի հիմնախնդրների շուրջ իրականացված թեմատիկ դասընթացների, գիտական և հետազոտական աշխատանքների ու ուսումնասիրություններ ի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում տվյալ հաստատության կողմից ներկայացված գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր թվաքանակում | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կրթական ծրագրի մասնագիտությունների` <<Տնտեսագիտության հիմունքներ>>, <<Իրավագիտության հիմունքներ>> և <<Քաղաքագիտության հիմունքներ>> առարկաների ծրագրերում (որոնցից մեկի ուսուցումը պարտադիր է ուսանողի համար), ներառվել են կոռուպցիային և դրա կանխարգելմանը վերաբերող թեմաներ:<br><<Ապագան քոնն է>> ՀԿ-ի աջակցությամբ հակակոռուպցիոն թեմաների շուրջ ուսուցողական դասընթացներ են անցել հանրապետության 8 բարձրագույն ուսումնական հաստատությունների շուրջ 300 ուսանողներ, որոնցից ընտրված 35 ուսանողները 2010 թվականի մայիս-նոյեմբեր ժամանակահատվածում ընդգրկվել են <<Երիտասարդությունն ընդդեմ կոռուպցիայի>> խորագրով կրթական ճամբարում:<br><br>Արդյունք 2. Չի իրականացված<br>Նախատեսվում է մագիստրոսական կրթական ծրագրերում դասընթացի ուսուցումը նախախատեսել 2011-2012 ուսումնական տարում:<br>*Ցուցիչներ*<br>Ցուցիչ 1.<br>Կրթության և գիտության ոլորտում չկա մեխանիզմ այդ ցուցիչի արժեքի հաշվարկման համար:<br>*Առաջարկ*<br>Անհրաժեշտ է մշակել ցուցիչի հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեխանիզմը: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ գիտութունների ազգային ակադեմիա |
| | 108.3 Զարգացնել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ուսուցման գործում ներգրավված բարձրագույն ուսումական հաստատությունների կարողությունները | 1.Վերապատրաստման դասընթացների ծրագրի և պլանի մշակում ԲՈՒՀ-ի դասախոսական անձնակազմի համար | 2.ԲՈՒՀ-ի դասախոսական անձնակազմի համար կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մշակված է վերապատրաստման դասընթացների ծրագիր և պլան (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Վերապատրաստման դասընթացների ծրագրի մշակումն ու իրականացումը նախատեսվում է 2011 թվականին: <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի կողմից իրականացվելու են վերապատրաստումներ ՀՀ բուհերի աշխատակազմերի համար` արդյունավետ կառավարման և որակի վերահսկման ուղղությամբ: Ներկայումս ծրագրի փաթեթը մշակման փուլում է, որին մասնակցում են միջազգային փորձագետներ:<br>Վերապատրաստման ծրագրերի իրականացման գործընթացում մասնակցություն է ունենալու նաև <<Ապագան քոնն է>> բարեգործական սոցիալական հասարակական կազմակերպությունը` ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող <<Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի>>` <<Կրթությունը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | կոռուպցիայի կանխարգելման միջոց>> ենթածրագրի շրջանակներում: 2011 թվականին նախատեսվում է վերապատրաստել 30 ուսուցանողների, որոնք հետագայում նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև բուհերում կաջակցեն հակակոռուպցիոն միջոցառումների` քննարկումների ու բեմականացումների անցկացմանը, ինտերնետային կայքերի պատրաստմանը: | |
| | 108.4 Ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ուսուցման համակարգի ներդրման աշխատանքների լուսաբանումը | 1.Մամլո հաղորդագրություններ, կլոր սեղաններ, հեռուստահաղորդումներ | 1.Կոռուպցիայի հիմնախնդրների շուրջ տպագրված տեղեկատվական նյութեր | 14 | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Պատրաստվել է մամուլի 14 հաղորդագրություն, որոնք տեղադրված են ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում` www.edu.am և միաժամանակ այդ տեղեկատվությունը տրամադրվել է տարբեր լրատվամիջոցների:<br>Նախատեսվում է ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում www.edu.am բացել կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ, որում կլուսաբանվեն միջոցառումների իրականացման ընթացքը, ուսանողների շրջանում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Համապատասխան ուսումնական հաստատություն |
| 109.Ներդնել և ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման համակարգ | 109.1Հաստատել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հանրային ծառայողների վերապատրաստման ծրագրերը և սահմանել դրանց կազմակերպման կարգը | 1.Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հանրային ծառայողների,այդ թվում կոռուպցիայի բացահայտման, կանխարգելման և փողերի լվացման թեմաներով ոստիկանության, դատախազության, դատավորների համատեղ վերապատրաստման հաստատված ծրագրեր:<br><br>2.Կոռուպցիայի հիմնախինդիրն ու հակակոռուպցիոն թեմատիկ մոդուլները ներառվել են հանրային ծառայողների ուսուցման և պարտադիր վերապատրաստման պլաններում<br><br>3.Ըստ հաստատված ծրագրի հանրային ծառայողների վերապատրաստման դասընթացներ, | 1.Կոռուպցիայի հիմնախինդիրն ու հակակոռուպցիոն թեմատիկ մոդուլների վերանայման ու լրամշակման հաճախականությունը, տոկոս | Տվյալները բացակայում են | Արդյունք 1-3 Չի իրականացված:<br>Իրականացումը կապահովվի Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո: | ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ գլխավոր դատախազություն,<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն,<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ Պետական եկամուտների կոմիտե և այլ շահագրգիռ պետական մարմիններ |
| | | | 2.կոռուպցիայի դեմ պայքարում ըստ մասնագիտությունների իրականացված վերապատրաստման մոդուլների քանակը, հանրային ծառայության վերապատրաստման ընդհանուր դասընթացներում, տոկոս | Տվյալները բացակայում են | | |
| | 109.2 Գնահատել հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման մեջ ներգրավված պետական մարմիններին կից վերապատրաամման հաստատությունների կարողությունները և սահմանել այդ | 1.Վերապատրաստման հաստատությունների կարիքների գնահատման հետազոտություններ<br><br>2.Ճշգրտված վերապատրաստման ենթակա պաշտոնյաների շրջանակ( ցանկ)<br>3.Վերապատրաստման | 1.հակակոռուպցիոն թեմատիկայով վերապատրաստում անցած մասնագետների թիվը տոկոսով կարիքների գնահատման հետազոտությամբ սահմանված ցանկի | Տվյալները բացակայում են | Արդյունք 1-4 Չի իրականացված:<br>Իրականացումը կապահովվի Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը գործողության մեջ դնելուց հետո: | ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | հաստատությունների միջոցով վերապատրաստման ենթակա պաշտոնյաների ու կազմակերպությունների շրջանակը | հաստատությունների կարիքների գնահատման հետազոտություններ<br>4.Հստակեցված են կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագետների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների ցանկ | նկատմամբ | | | ՀՀ գլխավոր դատախազություն,<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն,<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ Պետական եկամուտների կոմիտե և այլ շահագրգիռ պետական մարմիններ, |
| | 109.3 Հաստատել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում շարունակական վերապատրաստման ծրագրերը և ուսումնական ձեռնարկները` ըստ ոլորտների | 1. Հաստատված ուսումնական ձեռնարկներ և վերապատրաստման ծրագրեր ու մոդուլներ ըստ ոլորտների | 1.ըստ ոլորտների կոռուպցիայի դեմ պայքարի հաստատված ուսումնական ձեռնարկների, վերապատրաստման ծրագրերի ու մոդուլների քանակ | ՀՀ ԿԳՆ – 2<br>ՀՀ Դատախազությու ն-1 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>*ՀՀ կրթության և գիտության նախարարություն*<br>Հաստատված է հակակոռուպցիոն ուսուցման 1 մեթոդական ձեռնարկ հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար, 1 ծրագիր-ուղեցույց մասնագիտական ուսումնական հաստատությունների համար:<br>ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող <<Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի>>` <<Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի>> ենթածրագրի շրջանակներում <<Ապագան քոնն է>> բարեգործական սոցիալական հասարակական կազմակերպության կողմից մշակվել է հակակոռուպցիոն թեմաների ուսուցման ծրագիր-ուղեցույցը, որը նախատեսվում է ներդնել կրթության ոլորտում իրականացվող վերապատրաստումների հիմքում:<br>*ՀՀ Ոստիկանություն*<br>ՀՀ Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների 2010թ. ծառայողական պարապմունքների ուսուցման տիպային թեմատիկ պլանում ընդգրկվել են <<Կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի>> պարտադիր ուսուցման թեմաներ: ՀՀ Ոստիկանության ուսումնական կենտրոնի վերապատրաստման թեմաների մասնաբաժնում հակակոռուպցիոն թեմաները կազմում են 13 տոկոս, իսկ ՀՀ Ոստիկանության Ակադեմիայի վերապատրաստման թեմաների մեջ` 18 տոկոս: Ընդհանուր վերապատրաստում է անցել 193 ծառայող, որից 48-ը` կոռուպցիայի դեմ պայքարի մասնագետներ:<br>*ՀՀ դատախազություն*<br>Մշակվել է կոռուպցիայի վերաբերյալ դատախազների պարբերաբար վերապատրաստման կրթական ծրագիր, որը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազի` 30.03.2009 թիվ 20 հրամանով: 2010թ. ընթացքում 313 դատախազներ և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 31 անձ մասնակցել են կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպման աշխատանքների կազմակերպմանը վերաբերող “Դատախազության դպրոց” ՊՈԱԿ-ի կողմից իրականացված դասընթացներին:2010թ. ընթացքում “Դատախազության դպրոց” ՊՈԱԿ-ը հրատարակել է նաև 2 ուսումնական ձեռնարկ. “Կոռուպցիայի հակազդման քաղա-քականությունը” և “Պայքար փողերի լվացման դեմ” անվանումներով:<br>*ՀՀ քաղծառայության խորհուրդ*<br>ԵՄ Խորհրդատվական խմբի` AEPLAC-ի հետ մշակվել է <<Հակակոռուպցիոն ներածություն>> թեմայով վերապատրաստման մոդուլներ, իրականացվել է վերապատրաստողների վերապատրաստում (12հոգի) և այս վերապատրաստողների կողմից սկսվել է վերապատրաստման ծրագրի մշակումը: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ գլխավոր դատախազություն,<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն,<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ Պետական եկամուտների կոմիտե և այլ շահագրգիռ պետական մարմիններ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | <<Հայպետծառայողների միություն>> ՀԿ–ի կողմից Քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համագործակցությամբ OSCE-ի աջակցությամբ իրականացվել է ինտեգրիթի /բարեխիղճ կառավարում/ վերապատրաստման ուսումնական ծրագրի և ձեռնարկի մշակում: Վերապատրաստվել են 15 քաղծառայողներ քաղաքացիական ծառայողների բարոյա-էթիկական նորմերը, հանրային կառավարման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի, հաղորդակցությունը քաղաքացիներին ծառայություն մատուցելիս թեմաներով:<br>*ՀՀ Պետական եկամուտների կոմիտե (ՊԵԿ),*<br>ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) օժանդակությամբ, մշակել ներդրել է **կոռուպցիոն իրավախախտումների բացահայտման և հաղորդման ուղեցույց հարկային ծառայողների համար**։ Ուղեցույցի մշակման համար որպես հիմք դիտարկվել է հարկային տեսուչների՝ կաշառակերության շուրջ իրազեկության վերաբերյալ ՏՀԶԿ ձեռնարկը։ Ուղեցույցի հիման վրա ՊԵԿ-ը ՀԳՄԾ-ի օժանդակությամբ կազմակերպել է հար-կային ծառայողների վերապատրաստման դասընթացներ։ ՊԵԿ-ի վեց աշխատողներ վերապատրաստվել են որպես վերապատրաստողներ։ Ընդհանուր առմամբ, վերապատրաստվել է 418 հարկային ծառայող:<br>*ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն*<br>MONEYVAL և Միջազգային արժույթի հիմնադրամի ֆինանսավորմամբ /նախաձեռնությամբ/ իրականացվում են վերապատրաստման, փորձի փոխանակման միջազգային դասընթացներ՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության այն աշխատակիցների համար, ովքեր մասնագիտացված են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև այլ կոռուպցիոն հանցագործությունների հետաքննության ու նախաքննության հարցերով:<br>Ցուցիչ 1.<br>Առաջարկվում է վերասահմանել ցուցիչը բացված վիճակով՝ ըստ համապատասխան ոլորտների: | |
| 110.Բարելավել կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության համակարգը | 110.1 Հստակեցնել կոռուպցիայի դեմ պայքարի առանձին մարմինների միջև և միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ կոռուպցիայի վերաբերյալ տվյալների փոխանակման ընթացակարգերը | 1. օրենսդրական փոփոխություններ կոռուպցիայի դեմ պայքարի առանձին մարմինների միջև և միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ կոռուպցիայի վերաբերյալ տվյալների փոխանակման ընթացակարգերը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով | 1.Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությամբ բացահայտված կոռուպցիոն դեպքերի թիվը, կամ համագործակցության պայմանագրերի ու համաձայնագրերի թիվը | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br>ԱՊՀ երկրների շրջանակում մշակվում է կոռուպցիայի դեմ պայքարում տեղեկատվության փոխանակման ու համագործակցության վերաբերյալ համաձայնագրի նախագիծ:<br><br>Ցուցիչ 1. Հնարավոր կլինի հաշվարկել համաձայնագրերի ստորագրումից հետո: | ՀՀ գլխավոր դատախազություն,<br>ՀՀ ԿԱ Ոստիկանություն,<br>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | 110.2 Ամբողջականացնել կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ վիճակագրության | 1.Օրենսդրորեն կանոնակարգված են կոռուպցիոն իրավախախտումների շրջանակը: | 1.Օրենսդրորեն կանոնակարգված են կոռուպցիոն իրավախախտումների շրջանակը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1.Իրականացված է մասամբ:<br>Կոռուպցիոն իրավախախտումների շրջանակի օրենսդրորեն կանոնակարգվածության հիմնախնդիրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) ՀՀ օրենքներով սահմանված լիազորություններից դուրս է: | ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն,<br>ՀՀ գլխավոր դատախազություն, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | համակարգը և ներդնել վիճակագրության վերլուծության մեթոդիկա | 2.Մշակված է կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ վիճակագրական վերլուծության մեթոդիկա<br><br>3.Հաստատվել է կոռուպցիոն դեպքերի, այդ թվում՝ միջազգային պայմանագրերով, ՀՀ հանձնառությունների իրականացման մոնիտորինգի արդյունքների, վիճակագրության վարման միասնական մեթոդիկան | 2.Մշակված է կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ վիճակագրական վերլուծության մեթոդիկա (այո/ոչ)<br><br>3.Հաստատվել է կոռուպցիոն դեպքերի, այդ թվում՝ միջազգային պայմանագրերով, ՀՀ հանձնառությունների իրականացման մոնիտորինգի արդյունքների, վիճակագրության վարման միասնական մեթոդիկան (այո/ոչ) | Ոչ<br><br>Ոչ | Այդուհանդերձ, ՀՀ ԱՎԾ-ն նույնաբովանդակ գրություններով դիմել է սույն կետով սահմանված միջոցառման բովանդակությունից բխող լիազորությունների տիրապետող պետական կառավարման մարմիններին՝ ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը, ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանությանը: Պատասխան գրություն ստացվել է ՀՀ գլխավոր դատախազությունից (17.02.2010թ., թիվ 36/19-10 գրություն), որտեղ ներկայացվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական ամփոփիչ հաշվետվության ձևերն աղյուսակների տեսքով՝ շուրջ 130 ցուցանիշներով, որոնք ՀՀ գլխավոր դատախազության կողմից որակվում են որպես կոռուպցիոն հանցագործությունների ցուցանիշներ և որոնք կարող են տրամադրվել ՀՀ գլխավոր դատախազության՝ որպես կոռուպցիոն հանցագործությունների վարչական ռեգիստրի կողմից՝ ամփոփ տեսքով հրապարակման համար: Օրենսդրորեն կանոնակարգվածության տեսանկյունով ՀՀ գործող օրենսդրությունից կոռուպցիոն հանցագործություններ որակվող բոլոր 31 արարքները համակարգված ձևով զետեղված են ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. նոյեմբերի 19-ի «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 82 հրամանում, ինչը հրապարակային է և զետեղված է «Դատախազությունն ընդդեմ կոռուպցիայի» ձեռնարկում, որի տպագրությունը ֆինանսավորված է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից (Երևան, 2009թ., 132 էջ):<br><br>Արդյունք 2. Չի իրականացվել:<br><br>«Կոռուպցիոն հանցագործություն» հասկացությունը վիճակագրական մեթոդաբանության առարկա չէ: Այն իրավական հասկացություն է: «Հանցագործության» որակումը և՛ իրավական, և՛ մեթոդաբանական առումով հանդիսանում է իրավագիտության առարկան: Այս առումով, կոռուպցիոն հանցագործությունների օրենսդրական և իրավակիրառական սահմանումները այդ ոլորտի լիազորություններին տիրապետող պետական մարմինների խնդիրների շարքին են դասվում:<br><br>Արդյունք 3. Չի իրականացվել:<br><br>Միջազգային պայմանագրերով ՀՀ հանձնառությունների իրականացման մոնիթորինգը ՀՀ ԱՎԾ-ին ՀՀ օրենքներով սահմանված լիազորություններից դուրս է: Ենթադրվում է, որ հիշատակված մոնիթորինգի արդյունքների հիման վրա համապատասխան լիազորությունների տիրապետող պետական կառավարման մարմիններն ամփոփ տեսքով ՀՀ ԱՎԾ-ին կտրամադրեն Ցուցիչ 3-ից բխող  բխող կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ տվյալները՝ համագործակցելով ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ՝ որպես միջազգային պայմանագրերի ՀՀ ռեեստրի վարողի:<br><br>*<u>Հիմնական եզրակացություն</u>*<br><br>Չնայած այն հանգամանքին, որ խնդրո առարկան վիճակագրական լիազորություն-ներից դուրս է, այդուհանդերձ, կոռուպցիոն իրավախախտումների (հանցագոր-ծությունների) վերաբերյալ մեթոդաբանական հիմքը հանդիսանում է երկրում նմանատիպ արարքները սահմանող օրենքները և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերը: Վիճակագրությունը ձևավորվում է կոռուպցիոն իրավախախտումների ոլորտում համապատասխան լիազորությունների տիրապետող իրավապահ պետական մարմինների կողմից բոլոր դեպքերի (ըստ օրենսդրությամբ սահմանված տեսակների) գրանցումների հիման վրա ձևավորված վարչական ռեգիստրների տվյալներով, որոնք անարգել այդ մարմինները պետք է տրամադրեն ՀՀ ԱՎԾ-ին՝ վերջինիս կողմից այն ամփոփ տեսքով որոշակի պարբերականությամբ հրապարակելու (հանրությանը ներկա- | ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ ԿԱ Ոստիկանություն,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | յացնելու) նկատառումներով: Պարբերական հրապարակումները հնարավորություն կընձեռեն բացահայտելու կոռուպցիոն բնույթի հանցագործությունների միտումները ժամանակային երկար հատվածում, հնարավորություն կստեղծեն իրավապահ ոլորտի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, գիտակրթական և այլ ոլորտի ու ողջ հանրության համար ընդլայնելու իրենց վերլուծական գիտելիքները և միջազգային ու տարածաշրջանային տեղեկատվություն փոխանակություն արդյունքում բացահայտել ու ծրագրավորել կոռուպցիայի դեմ պայքարի առաջնահերթ թիրախներն ու համագործակցության ոլորտները, ինչը և բխում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի» 61-րդ հոդվածի պահանջներից:<br><br>*Իրավիճակը`* Բավարար<br><br>Գործընթացը գտնվում է սկզբնական փուլում, առկա են պատասխաններ չունեցող բազմաթիվ հարցեր, խնդրո առարկա ոլորտում ՀՀ ԱՎԾ-ն չունի օրենսդրորեն կոորդինացիա պահանջվող կարգավիճակ: Թերևս հարկ է ՀՀ-ում ձևավորել խնդրո առարկա ոլորտում համակարգման համապատասխան լիազորություններով օժտված մարմին կամ որևիցե իրավապահ պետական լիազոր մարմնի պատվիրակել խնդրո առարկա ոլորտում համակարգողի լիազորություններ:<br><br>*Առաջընթացը`*<br><br>Հաշվի առնելով ՀՀ գլխավոր դատախազության գրությանը կից ներկայացված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ցուցանիշների ընդլայնված կազմը, այն կարող է լուրջ առաջընթաց ապահովել մանրամասնեցված (դեզագրեգացված) ցուցանիշներով գրանցված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելու համար, ինչն այդ տեղեկատվության սպառող հանդիսացող քաղաքական վճիռներ կայացնողների, բոլոր վերլուծաբանների ու ողջ հանրության համար առավել օգտավետ կլինի:<br><br>*Առաջարկներ*<br>Առաջարկվում է ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված ցուցանիշների համակազմի օրինակով, ինչպես ՀՀ գլխավոր դատախազությունում, այնպես էլ պետական լիազոր այլ մարմիններում ու վարչական լիազորությունների տիրապետող մնացած պետական (վարչական իրավախախտումներ գրանցող) մարմիններում ձևավորել էլեկտրոնային հենքով վարչական ռեգիստրներ, այդ մարմինների համապատասխան տեղեկատվությունը կենտրոնացնել խնդրո առարկա ոլորտում ստեղծվելիք համակարգող մարմնի ռեգիստրում, որի ամփոփ տվյալները առցանց ռեժիմով կտրամադրվի ՀՀ ԱՎԾ-ին` որոշակի պարբերականությամբ (ամսական կամ եռամսյակային և տարեկան)` ամփոփ հրապարակումների համար: | |
| | 110.3Իրականացնել կոռուպցիայի մակարդակը, գերիշխող տեսակները, բնագավառներն ու ոլորտները գնահատող ուսումնասիրություններ և հետազոտություններ, այդ թվում` դրանց իրականացումը | 1.կոռուպցիայի մակարդակի գնահատման, առանձին բնագավառներում կոռուպցիայի տարածվածության և միտումների, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրսևորումների բացահայտման վերաբերյալ ուսումնասիրություններ և | 1.Տեղական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարության պատվերով իրականացված կոռուպցիայի մակարդակի գնահատման, առանձին բնագավառներում | 0 | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն<br>2010թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությունը ԱՄՆ ՄԶԳ "հակակոռուպցիոն գործողության մոբլիզացման ծրագրի" օժանդակությամբ իրականացնում է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան կազմակերպության կողմից:<br>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի օժանդակությամբ «Աքիլես» - ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպությունը իրականացրել է ճանապարհային ոստիկանությունում կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերման ծրագիր: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ հանրապետական գործադիր մարմիններ քաղաքացիական հասարակության միավորումներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | պատվիրակել քաղաքացիական հասարակության կառույցներին, ինչպես նաև պաշտոնական վիճակագրության հետ համադրել և կիրառել դրանց արդյունքների վերլուծությունը | հանրային հարցումների մեթոդաբանության մշակում<br><br>2.ՀՀ կառավարության պատվերով իրականացվել են կոռուպցիայի մակարդակի գնահատման, առանձին բնագավառներում կոռուպցիայի տարածվածության և միտումների, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրսևորումների բացահայտման վերաբերյալ ուսումնասիրություններ և հանրային հարցումներ | կոռուպցիայի տարածվածության և միտումների, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրսևորումների բացահայտման վերաբերյալ ուսումնասիրություններ ի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում արտերկրյա հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված համանման ուսումնասիրություններ ի ընդհանուր թվաքանակին | | Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իրականացրել է ՀՀ Նոտարական գրասենյակների բազմակողմանի մոնիթորինգ, որի շրջանակներում ներկայացվել է 19 առաջարկությունների փաթեթ:<br><br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>2010թ. Հայաստանի գործարար շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությունը ԱՄՆ ՄԶԳ “հակակոռուպցիոն գործողության մոբլիզացման ծրագրի” օժանդակությամբ իրականացնում է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան կազմակերպության կողմից:<br><br>ՀՀ պետական բյուջեի մասին 24.12. 2009թ. ՀՕ-225-Ն օրենքի հավելված 1-ի աղյուսակ 16-ով՝ դրամաշնորհների տրամադրման ծրագրերով 2010թ. համար ՀՀ կառավարության աշխատակազմին ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների իրականացման համար հատկացվել է 87.285.3 հազ.դրամ: Այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է կնքվել, IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ: Հետազոտության արդյունքները տես www.gov.am կայքում: | (Համաձայնությամբ) |

**3.20** Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցություն

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 111. Ընդլայնել քաղաքացիական հասարակության իրազեկությունը կոռուպցիայի, դրա պատճառների, վտանգների բնույթի, սպառնալիքների վերաբերյալ | 111.1 Իրականացնել կոռուպցիա երևույթի պատճառների, հետևանքների, էության վերաբերյալ թեմաներով քարոզարշավներ | 1.Կոռուպցիայի պատճառների, հետևանքների, էության վերաբերյալ թեմաներով իրականացված քարոզարշավներ: | 1.կոռուպցիայի, դրա պատճառների, վտանգների բնույթի, սպառնալիքների վերաբերյալ քաղաքացիական հասարակության իրազեկության մակարդակը , տոկոս | Տվյալները բացակայում են | Արդյունք1.Կատարված է մասնակիորեն<br><br>Կոռուպցիոն խնդիրների և հակակոռուպցիոն մոտեցումների վերաբերյալ գիտելիքների ընդլայնման և կոռուպցիայի շուրջ հասարակական իրազեկության բարձրացման նպատակով Հայաստան Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) կողմից 2008-2010թթ. կազմակերպել է յոթ հակակոռուպցիոն համաժողով՝ ՀՀ տարբեր պետական կառույցների, ՀԿ-ների և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ:<br>ՇՊԱԿ-ների միջոցով իրականացվել են նաև հասարակական իրազեկման և կրթական աշխատանքներ: ՇՊԱԿ-ները տպագրում են տեղեկատվական նյութեր, այդ թվում՝ բրոշյուրներ ու լրատվաթերթիկներ, ունեն կայքէջ, և հասարակական իրազեկման քարոզարշավներ անցկացնելու և իրենց ծառայությունները գովազդելու համար օգտագործում են ցուցատախտակներ և հեռուստատեսային ու ռադիո հոլովակներ:<br><br>ՀԳՄԾ-ն դրամաշնորհ է տրամադրել ՙՀասարակական երկխոսության և զարգացման կենտրոն՚ ՀԿ-ին՝ դպրոցականների կողմից կոռուպցիայի թեմայով լուսանկարների և տեսաժապավենների փառատոն կազմակերպելու համար: ՀԳՄԾ-ն աշխատել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ՝ հակակոռուպցիոն կրթությունը հանրակրթական դպրոցներում ներդնելու նպատակով: ՀԳՄԾ դրամաշնորհառու ՙՎանաձորի ՀԿ կենտրոնն՚ իրականացրել է երիտասարդությանն ուղղված մամուլի դրամաշնորհային ծրագիր՝ քաղաքացիական ակտիվության խթանման և երիտասարդության շրջանում հակակոռուպցիոն դիրքորոշումների ամրապնդման նպատակով:<br>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրավապաշտպան մարմինների հակակոռուպցիոն գործողությունների վերաբերյալ ֆիլմ է պատրաստվել և իրականացվել հասարակական իրազեկում: Բացի այդ, «Աքիլես» - ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության ճանապարհային ոստիկանությունում կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերման ծրագրի շրաջանակներում իրականացվել է «Եթե ձեզ կանգնեցրել է տեսուչը» գրքույկի տպագրություն, վարորդների իրավունքների և պատասխանատվության վերաբերյալ իրազեկում: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, Քաղաքացիական հասարակության միավորումներ (համաձայնությամբ) |
| | 111.2 Ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության իրականացման լուսաբանումը | | 1.Կոռուպցիայի հիմնախնդրների շուրջ իրականացված քարոզարշավների թվի հարաբերությունը նույն ժա-մանակահատվածում կրթալուսավորչական բնույթի քարոզչական միջոցառումների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | 2010թ. համար արդյունք նախատեսված չէ: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ հանրային հեռուստառադիոընկերություն, ԶԼՄ-ներ |
| | 111,3 Ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման | 1.ՀՀ կառավարության վեբ-կայքին կից ՀՀ հակակոռուպցիոն ռազմանարության | 1.ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության վեբ կայքին միացված պաշտոնական վեբ | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայք էջում գոյություն ունի ծրագրեր բաժին որտեղ կա հակակոռուպցիոն ռազմավարության պատուհան | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | մարմինների պաշտոնական վեբ-կայքերում հակակոռուպցիոն տեղեկատվության պարբերական հրապարակումը | պաշտոնական կայքի շահագործման ապահովում:<br><br>2.ՀՀ պետական կառավարման մարմինների գործող վեբ կայքերը ուղղակիորեն կապված են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության պաշտոնական կայքին | կայքերի ընդհանուր թիվը նշված ժամանակա-հատվածում | | Արդյունք 2. Չի կատարվել | դեմ պայքարի խորհուրդ, համապատասխան պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ |
| 112. Ամրագրել քաղաքականության որոշումների կայացման գործում մասնակցության պարտադիր մեխանիզմներ | 112.1 Որոշումներ կայացնողներին կից առանձին խորհուրդներում ու հանձնաժողովներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավում | 1.Քաղաքականության հարցերով որոշումների կայացման գործում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության ընթացակարգերի սահմանում:<br><br>2.Պետական կառավարման մարմինների քաղաքականության հարցերով կոմիտեներում ընդգրկված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ | 1. Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ հասարարական կառույցների կողմից տրամադրված ուսումնասիրություննների, եզրակացությունների, հիմնավորումների, հանրային կարծիքի, տոկոս | Տվյալները բացակայում են | Արդյունք1-2. Կատարվել է ամբողջությամբ:<br><br>Քաղաքականության հարցերով կոլեգիաներ ստեղծվել են բոլոր նախարարություններում և այդ կոմիտեներում ընդգրկված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի 20 նոյեմբերի 2008թ. N47 արձանագրություն: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիաի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| 113. Ապահովել հակակոռուպցիոն մարմինների գործունեության հրապարակայնությունն ու դրանց հասանելիությունը քաղաքացիական հասարակությանը | 113.1 ՀՀ մարզերում ձևավորել քաղաքացիների հակակոռուպցիոն հանրային ընդունարաններ | 1.ՀՀ 10 մարզերում և Երևան քաղաքում քաղաքացիների հակակոռուպցիոն հանրա-յին ընդունարանները ձև-ավորված են և գործում են | | | Արդյունք 1.Կատարված է ամբողջությամբ<br><br>Հայաստան Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) կողմից ստեղծված Հակակոռուպցիոն հանրային ընդունարանները ( ԾՊԱԿ)ձևավորված են և գործում են ՀՀ բոլոր մարզերում և Երևանում: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն ծրագիր |
| | 113.2 Հակակոռուպցիոն բոլոր մարմիններին կից ապահովել կոռուպցիոն դեպքերի մասին անանուն հեռախոսային «թեժ գծերի» և էլեկտրոնային կապի այլ միջոցներով անվճար խորհրդատվություն | 1. Հակակոռուպցիոն մարմիններին կից ստեղծվել են կոռուպցիոն դեպքերի մասին անանուն հեռախոսային «թեժ գծեր» և էլեկտրոնային կապի այլ միջոցներ, որոնցով նաեւ անվճար խորհրդատվություն է ապահովվում քաղաքացիներին | 1. ՀՀ պետական կառավարման մարմիններին կից գործող անանուն հեռախոսային «թեժ գծերի» թվի հարաբերությունը հանրային ծառայություններ մատուցող պետական մարմինների ընդհանուր | Տվյալները բացակայում են | Արդյունք1.Կատարված է մասնակիորեն<br><br>Հեռախոսային թեժ գծեր ու հեռախոսային կենտրոններ են բացվել ՀՀ Ոստիկանությունում, ՀՀ պետական եկամուտների կոմիտեում, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում, ՀՀ առողջապահության նախարարությունում, ՀՀ կրթության ու գիտության նախարարությունում,ՀՀ կառավարության աշխատակազմում, որոնք քաղաքացիներին ապահովում են անվճար խորհրդատվություն:<br>ԾՊԱԿ-ները քաղաքացիներին տրամադրում են կոռուպցիոն դեպքերի վորաբերյալ հաղորդման մեխանիզմներ, աջակցում քաղաքացիներին պետական կառույցներ բողոքներ հղելու և այդ բողոքներին իրավական ընթացք տալու հարցում: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ դատախազություն ,ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ՀՀ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | թվաքանակին | | | վերահսկիչ պալատ |
| | 113.3 Հրապարակայնացնել հակակոռուպցիոն մարմինների գործունեությունը՝ ԶԼՄ-ներով պարբերական հաղորդումների, հրապարակումների, հանրային քննարկումների, լսումների, տպագրված բուկլետների, կոնֆերանսների և հանրային քարոզարշավի ժամանակակից այլ միջոցներով | 1.Հակակոռուպցիոն մարմինների գործունեությունը՝ ԶԼՄ-ներով պարբերական հաղորդումների, հրապարակումների, հանրային քննարկումների, լսումների, տպագրված բուկլետների, կոնֆերանսների և հանրային քարոզարշավի 2009-2012թթ. գործողությունների ծրագիր | 1.ԶԼՄ-ներով կոռուպ-ցիոն դեպքերի բացահայտմանը նվիրված հրապա-րակումների թվի հարաբերությունը նույն ժամանա-կահատվածում օրինախախտումները լուսաբանող հրապարակումների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1.Կատարվել է մասնակիորեն:<br>Գործողությունների ծրագիր չի մշակվել,սակայն ՀԳՄԾ-ն դրամաշնորհներ է տրամադրել՝ԶԼՄ-ներով հակակոռուպցիոն քարոզարշավների համար:Մասնավորապես,"Հատուկ ռեպորտաժ" հեռուստաշարը, "Ականատես. Իրական պատմություններ" ռիելիթի շոուն, (Հայաստանի հանրային հեռուստատեսություն), հակակոռուպցիոն թոք շոուներ՝Լոռի ՄԻԳ՝ հեռուստաընկերությամբ, հակառուպցիոն քարոզարշավ "Լոռի" հեռուստաընկերությամբ , հեռուստահաղորդաշարեր "Ալտ" հեռուստաընկերություն (Արմավիր) տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ, դրամաշնորհ "Հայաստանի հանրային կապերի ասոցիացիային" բարձրացնելու հասարակության, մամուլի և գործարարների իրազեկությունը՝ քաղաքացիների իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ:<br><br>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրավապաշտպան մարմինների հակակոռուպցիոն գործողությունների վերաբերյալ  ֆիլմ է պատրաստվել և իրականացվել հասարակական իրազեկում: Բացի այդ, «Աքիլես» - ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության ճանապարհային ոստիկանությունում կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերման ծրագրի շրջանակներում իրականացվել է «Եթե ձեզ կանգնեցրել է տեսուչը» գրքույկի տպագրություն, վարորդների իրավունքների և պատասխանատվության վերաբերյալ իրազեկում: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ դատախազություն ,ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ՀՀ վերահսկիչ պալատ |
| 114.  Զարգացնել քաղաքացիական հասարակության կարողությունները կոռուպցիայի դեմ պայքարում | 114.1 Տրամադրել հակակոռուպցիոն մոնիտորինգի, կոռուպցիայի մակարդակի, տարածվածության գնահատման և ուսումնասիրությունների իրականացման դրամաշնորհներ և պետական պատվերներ | 1.Հակակոռուպցիոն մոնիտորինգի, կոռուպցիայի մակարդակի, տարածվածության գնահատման և ուսումնասիրությունների իրականացման դրամաշնորհներ և պետական պատվերների տրամադրման սահմանված ընթացակարգեր | 1.ՀՀ պետական բյուջեով ՀԿ-ներին տրամադրվելիք դրամաշնորհների ծավալում հակակոռուպցիոն մոնիտորինգի, կոռուպցիայի մակարդակի, տարածվածության գնահատման և ուսումնասիրությունների իրականացման համար նախատեսված միջոցներ, տոկոս | Տվյալները բացակայում են | Արդյունք 1.Կատարված է ամբողջությամբ<br><br>ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 29-ի 1226-Ա որոշմամբ  պետական բյուջեի հաշվին ՀՀ կառավարության գործունեության արդյունքների գնահատման նպատակով խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար ՀՀ կառավարության աշխատակազմին տրամադրվել է  14 մլն 450 հազար դրամ: ՀՀ կառավարության աշխատակազմը 17.11.2009 թ. ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա, այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածով IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ կնքվել է պայմանագիր ՀՀ կառավարության գործունեության արդյունքների գնահատման համար:<br>ՀՀ պետական բյուջեի մասին 24.12. 2009թ. ՀՕ-225-Ն օրենքի հավելված 1-ի աղյուսակ 16-ով՝ դրամաշնորհների տրամադրման ծրագրերով 2010թ. համար ՀՀ կառավարության աշխատակազմին  ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների իրականացման համար հատկացվել է  87.285.3 հազ.դրամ: Այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է կնքվել, IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ: Հետազոտության արդյունքները տես www.gov.am կայքում:<br><br>Ցուցիչ 1. Եթե հաշվարկենք ՀՀ պետական բյուջեի դրամաշնորհների նկատմամբ, ապա նույնիսկ 1 տոկոս չի կազմում: Կոնկրետ ՀԿ-նրին տրամադրվող դրամաշնորհների ծավալը հնարավոր չէ առանձնացնել: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 114.2 Քաղաքացիական հասարակության մոնիտորինգի խմբերի, այդ թվում՝ հետաքննող լրագրողների համար կազմակերպել վերապատրաստման ծրագրեր և դասընթացներ | | 1.Քաղաքացիական հասարակության մոնիտորինգի խմբերի, այդ թվում՝ հետաքննող լրագրողների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացների և դրանց մասնակիցների թիվը | Տվյալները բացակայում են | 2010թ. համար արդյունք նախատեսված չէ | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, Մասնագիտացած ՀԿ-ներ (Համաձայնությամբ) |
| 115. Ակտիվացնել երկխոսությունը և համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության միջև | 115.1 Ներդնել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի արդյունավետ կիրարկումն ապահովող ընթացակարգեր և սահմանել վերահսկողություն՝ դրանց պահպանման նկատմամբ | 1. ՀՀ Կառավարությունը ընդունել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի փաթեթը:<br>2. Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի վերանայման վերաբերյալ առաջարկություններ,<br>3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի կիրարկում | 1. Տեղեկատվություն ստանալու վերաբերյալ ՀՀ պետական մարմիններին եւ ՏԻՄ-երին ուղղված դիմում/հարցումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում այդ մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>Այս արդյունքը պայմանավորված է Արդյունք 2-ի կատարմամբ:<br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վ. Դալաքյանի կողմից համատեղ մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքը հաշվարկման համար համապատասխան մեխանիզմները բացակայում են:<br>Արդյունք 3. Իրականացված չէ:<br>Այս արդյունքը պայմանավորված է Արդյունք 2-ի կատարմամբ:<br>Ցուցիչ 1-ի արժեքը հաշվարկման համար համապատասխան մեխանիզմները բացակայում են:<br>Իրավիճակը գնահատվում է բավարար : | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ (Համաձայնությամբ) |
| 116. Հզորացնել և զարգացնել տեղեկատվության մատչելիությունն ապահովող մարմինների կարողությունները | 116.1 Նշանակել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատու պաշտոնյաներ և իրականացնել նրանց մասնագիտական վերապատրաստման ծրագրեր | 1.Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության հարցերով գործառույթի վերլուծություն, վերապատրաստման կարիքների գնահատում,<br>2.«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան պետական կառավարչական հիմնարկներում առանձնացված հաստիքով նշանակվել են տեղեկատվության տրամադրման | 1.Վերապատրաստում անցած տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատու պաշտոնյաների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում այդ պաշտոնյաների ընդհանուր թվաքանակին, | Տվյալները բացակայում են | Արդյունք1.Կատարված է մասնակիորեն<br>համապատասխան գործառույթներով պաշտոնյաների նախատեսումը ուղղակիորեն կապված է տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքում կատարվող լրացումների հետ: Նշված օրենքը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ուղարկվել ՀՀ Ազգային ժողով: Ընդունվելուց հետո ենթաօրենսդրական ակտերով այդ հարաբերությունները կկարգավորվեն,<br><br>Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն<br>2010թ.-ի ընթացքում իրականացվել է տեղեկատվության ազատության վերաբերյալ 10 ուսուցում տեղեկատվություն տնօրինող մարմինների ներկայացուցիչների համար Երևանում, Կոտայքի, Լոռու և Արմավիրի մարզերում, որոնց մասնակցել է ավելի քան 309 պաշտոնյա՝ համայնքապետեր, մարզպետարանների աշխատակիցներ, Երևանի վարչական շրջանների աշխատակիցներ և քաղաքացիական հասարակության 114 ներկայացուցիչ: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ |
| | | | 2.Տեղեկատվության ազատության իրավունքի խախտման դեպքերով պատասխանատվության ենթարկված պետական պաշտոնյաների | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | պատասխանատուներ և կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ | տեսակարար կշիռը ընդհանուր խախտումների թվում: | | | |
| | | | 3.«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման դատական հայցերով ի օգուտ քաղաքացիների բավարարված վճիռների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ներկայացված հայցադիմումների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | | |
| 117. Բարելավել ֆիզիկական և իրավաբանական անձ-վարչական մարմին հարաբերությունններ ի վարչարարությունը | 117.1 Պարբերաբար վեր-լուծել և շարունակակա-նորեն կատարելագործել վարչարարության օր-ենսդրական պրակտիկա-յի կիրարկման արդյունք-ները | 1.Քաղաքացիներին ծառայություններ մատուցող վարչական մարմինների և հանրային ընդունարանների միջև կնքվել են քաղաքացիների բողոք/դիմումների միջնորդավորված քննարկման և սպառիչ բավարարման ընթացակարգերը պարզաբանող պայմանագրեր | 1.Պետական միջոցների հաշվին հանրային պաշտպանության անվճար իրավաբանական օգնություն ստացած սոցիալապես անապահով առանձին խմբերի ներկայացուցիչների թվի հարաբերակցությունը անվճար իրավաբանական օգնություն ստացած քաղաքացիների ընդհանուր թվի նկատմամբ | Տվյալները բացակայում են | Արդյունք1. Կատարված է ամբողջությամբ<br><br>ՀՀ ԿԱ ՊԵԿ –ում ստեղծված քաղաքացիների ընդունարանը, ինչպես նաև բոլոր նախարարություններում գործող քաղաքացիների ընդունարանները ապահովում են քաղաքացիների դիմում – բողոքներին արձագանքման ու հիմնական հարցերի շտեմարանների ստեղծումը:<br>Ինֆորմացիայի ազտության կետրոնի կողմից նախապատրաստվել և հրապարակվել են մի շարք ուղեցույցներ և հետազոտություններ: Մասնավորապես, ինչպես կիրառել տեղեկատվության մասին ՀՀ օրենքը ուղեցույց լրագրողների համար, տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում.Մեկնաբանություններ:Տեղեկատվական ազատության ոլորտի դատական գործերի ժողովածու 2007-2010: Ինչպես կիրառել տեղեկատվության մասին ՀՀ օրենքը ուղեցույց քաղաքացիական ծառայողների համար:<br>ՇՊԱԿ-ները քաղաքացիներին հնարավորություն են ընձեռում ստանալ անվճար իրավաբանական աջակցություն և հարցեր ուղղել իրենց հանդիպած կոռուպցիոն խնդիրների առնչությամբ: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ նախարարություններ |
| | | | 2.Վարչական դատարանում պետության դեմ ուղղված հայցերի թվաքանակի հարաբերությունը ի վնաս պետության կայացված դատավճիռների քանակին (որքան մոտ է 1-ին այնքան բարձր | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կարելի է համարել ձայնի լսելիության մակարդակը) | | | |
| | 117.2 Վարչական մարմինների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ընթացակարգերում բացառել այլ պետական մարմիններից պահանջվող տեղեկատվությունը քաղաքացիների միջոցով ստանալը | 1. Օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ | | | Արդյունք 1. Կատարվել է ամբողջությամբ:<br>Նշված միջոցառման արդյունավետ իրականացման նպատակով ՀՀ արդարադատության նախարարի 2010թ. մարտի 3-ի N-33-Ն հրամանով ստեղծվել է համապատասխան աշխատանքային խումբ: Կատարվել են նախնական ուսումնասիրություններ: Բացի այդ ՀՀ վարչապետի 20.05.2010թ. թիվ 02/13.2/5956-10 հանձնարարականի հիման վրա ՀՀ պետական մարմիններից ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացվել է վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների և պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվություն, որն ամփոփվել և վերլուծվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Համապատասխան ամփոփաթերթը ուղարկվել է ՀՀ կառավարություն համապատասխան պետական մարմիններին, ամփոփաթերթից բխող անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մասին հանձնարարական տալու նպատակով:<br>Դրա արդյունքում՝<br>1. 2010 թվականի դեկտեմբերի 8-ի Լիցենզավորման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ ՀՕ-227-Ն օրենքի համաձայն սահմանվել է էլեկտրոնային համակարգի միջոցով լիցենզիայի հայտերի ներկայացման հնարավորություն:Արդյունքում 40-ով կրճատվել է լիցենզավորվող գործունեության տեսակների քանակը:<br>2. ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոմամբ սահմանվել է պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերից և խոտհարքերից օգտվելու կարգը, դրանցից օգտվելու պայմանագրերի օրինակելի ձևերը և վճարների սահմանման կարգը, որի արդյունքում վերացվել է արոտավայրերի օգտագործման իրավունքի գրանցման անհրաժեշտությունը:<br>3. ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի N 440-Ն որոշմամբ սահմանվել է ՀՀ համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի Օգտագործման Օրինակելի նախագծերի (այսուհետ՝ բազմակի Օգտագործման նախագծեր) ներդրման, ինչպես նաև այդ նախագծերի գովազդային տեղեկագրերից կազմված հավաք կատալոգի (այսուհետ՝ կատալոգ) կիրառման կարգը, որի արդյունքում վերացել է շինության նախագիծ կազմելու անհրաժեշտությունը և պարզեցվել է շինարարության թույլտվություն ստանալու ընթացակարգը:<br>Մի շարք նոր համանման առաջարկություններ ներկայացվել են 2011թ. ընթացքում և իրականացման փուլում են: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիաի դեմ պայքարի խորհուրդ, |
| 118. Ապահովել Զանգվածային լրատվության ոլորտը կարգավորող մարմինների մասնագիտական անկախությունն և ինքնուրույնությունը | 118.1 Բարձրացնել զանգվածային լրատվամիջոցների տնտեսական և մասնագիտական անկախության մակարդակը | 1.Զանգվածային լրատվության միջոցների և լրագրողների հանդեպ ճնշումները բացառելուն ուղղված օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ սահմանված է վերահսկողություն | 1.Զանգվածային լրատվության միջոցների և լրագրողների հանդեպ ճնշումների բացահայտված դեպքերի քանակը | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Չի կատարվել | ՀՀ կառավարության աշխատակազմ, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատախազություն ԶԼՄ-ներ, Քաղաքացիական միավորումներ(Հա |
| | | | 2.Լրատվամիջոցների հավատարմագրման և գործունեության ազատ միջավայրի ապահովման խախտումների | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | վերաբերյալ հրապարակումների քանակը և բողոքների թիվը | | | մաձայնությամբ) |

**3.21** ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման համակարգը

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010**թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 120. Ապահովել ՀՌԻՄԾ միջոցառումների մոնիտորինգի (մասնակցային մոնիտորինգի) և դրանց արդյունավետության գնահատման իրականացումը հանրային կառավարման, տնտեսության առանձին ոլորտներում և ճյուղերում | 120.1 Ձևավորել և շարունակականորեն զարգացնել ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման ինստիտուցիոնալ կարողությունները | 1.ՀՀ պետական կառվարման մարմիններում ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման ինստիտուցիոնալ կարողությունների շրջանակի գնահատման հետազոտություն,<br><br>2.Հաստատված է ՀՌԻՄԾ իրականացման ընթացիկ մասնակցային մոնիտորինգի մեթոդաբանությունը, այդ թվում` սահմանված են մոնիտորինգի գործընթացում քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության շրջանակները<br><br>3.ՀՀ պետական կառավարման մարմիններում ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման համապատասխան միավորները ձևավորված են,<br><br>4.ՀՌԻՄԾ իրականացման ընթացիկ մասնակցային մոնիտորինգի ընթացակարգերը հաստատված են | 1.ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման համապատասխան միավորների առկայությունը պետական կառավարման մարմինների ընդհանուր թվում | 100 տոկոս | **Արդյունք 1.Իրականացված է ամբողջությամբ**<br>ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի շրջանակներում ՀՌԻՄԾ մոնիտորինգի իրականացման փորձագիտական խմբի կողմից գնահատվել է ՀՀ պետական կառավարման մարմիններում ՀՌԻՄԾ ինստիտուցիոնալ կարողությունները:<br>**Արդյունք 2.Իրականացված է մասնակիորեն**<br>ՀՌԻՄԾ իրականացման մասնակցային մոնիտորինգի մեթոդաբանությունը մշակվել է ՄԱԶԾ-ի օժանդակությամբ և ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից հավանության է արժանացել դեռևս 2007թ.:Քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության շրջանակները մասնակիորեն նկարագրված են ՀՀ Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի “Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին” ՆՀ-100-Ն հրամանագրով սահմանված ՀՌԻՄԾ մոնիտորինգի հանձնաժողովի կանոնակարգով:<br>**Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ**<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգի համար պատասխանատու ՀՀ պետական կառավարման 22 մարմինների ղեկավարների հրամաններով սահմանված են ՀՌԻՄԾ պատասխանատու միավորներ:<br>**Արդյունք 4. Իրականացված չէ**:<br>ՀՌԻՄԾ իրականացման ընթացիկ մասնակցային մոնիտորինգի ընթացակարգերը չեն հաստատվել<br>**Ցուցիչ 1**. ՀՀ պետական կառավարման 22 մարմինների 44 մասնագետներ անցել են ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման վերապատրաստման դասընթաց և պատրաստել ՀՌԻՄԾ 2009թ. տարեկան և 2010թ. առաջին եռամսյակի մոնիտորինգի հաշվետվությունը:<br>**Ցուցիչ 2.** ՀՀ կառավարության կողմից ՀՌԻՄԾ ներառված ոլորտներում մասնակցային մոնիտորինգ իրականացնելու նպատակով պատվերներ չեն տրամադրվել: Դրանք իրականացվում են դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ու ֆինանսավորմամբ:<br>**Ցուցիչ 3.** ՀՌԻՄԾ 2009թ. և 2010թ. առաջին եռամսյակի ամփոփ հաշվետվությունները ընդունվել են ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից՝2010թ. հոկտեմբերի 12-ի նիստում ( արձանագրություն N 13.7/[54783]-10):<br>**Ցուցիչ 4.** ՀՌԻՄԾ և դրա իրականացման արդյունքների վերաբերյալ հանրային քննարկումներ չեն կազմակերպվել<br>**Ցուցիչ 5.**ՀՌԻՄԾ շրջանակներում ներառված ոլորտներում և համակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերի գնահատման մասնակցային մոնիտորինգի զեկույցների վերաբերյալ տվյալներ չկան<br>**Ցուցիչ 6.** ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ներքո գործող կառուցվածքային միավորի բացակայության պայմաններում, պետական կառավարման մարմինների ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման միավորների և ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի միջև համագործակցությունը մասնակիորեն ապահովվել է ՀՌԻՄԾ մոնիտորինգի փորձագիտական խմբը:<br>**Ընդհանուր գնահատականը**՝ բավարար<br>**Առաջարկություն**: Ստեղծել կամ ձևավորել ՀՌԻՄԾ մոնիտորինգի մասնագիտացված կառուցվածքային միավոր, որի ուժերով ապահովել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը ՀՌԻՄԾ մոնիտորինգի գործընթացներում՝սահմանելով մասնակցային մոնիտորինգի մեթոդաբանություն ու ընթացակարգեր: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, համապատասխան պետական կառավարման մարմիններ |
| | | | 2.ՀՀ կառավարության կողմից ՀՌԻՄԾ ներառված ոլորտներում մասնակցային մոնիտորինգ իրականացնելու նպատակով ներկայացված պատվերների քանակը | Տվյալներ չկան | | |
| | | | 3.ՀՌԻՄԾ ամփոփ հաշվետվությունները ընդունված են ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից | Այո | | |
| | | | 4.ՀՌԻՄԾ և դրա իրականացման արդյունքների վերաբերյալ հանրային քննարկումների քանակը | Տվյալներ չկան | | |
| | | | 5.ՀՌԻՄԾ շրջանակներում ներառված ոլորտներում և համակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերի գնահատման մասնակցային մոնիտորինգի զեկույցների քանակական աճ, տոկոս | Տվյալներ չկան | | |
| | | | 6.Ապահովված է համագործակցությունը պետական կառավարման մարմինների ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման միավորների և ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ներքո գործող կառուցվածքային միավորի միջև | Այո/մասնակիորեն | | |
| | 120.2 Սահմանել ՀՌԻՄԾ | 1.ՀՌԻՄԾ կատարողական | 1. OECD և GRECO, ՄԱԿ-ի կո- | | **Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:** | ՀՀ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | կատարողական հաշվետվությունների, այդ թվում՝ տարեկան արդյունքների ամփոփման չափորոշիչներ և ընթացակարգեր | հաշվետվությունների տիպային ձևաթղթեր և ուղեցույց<br><br>2.ՀՌԻՄԾ 2010թ. կատարողական հաշվետվություն,<br><br>3.OECD և GRECO-ի երաշխավորությունների կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցներ | ռուպցիայի դեմ կոնվենցիայի պահանջների կատարման մոնիտորինգի զեկույցներ, չկատարված հանձնառությունների ազդեցության գնահատականը, փորձագիտական գնահատական | | ՀՌԻՄԾ մոնիտորինգի իրականացման ուղեցույցը և ձևաթղթերը մշակվել են ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի օժանդակությամբ, փորձագետների կողմից ու հավանության են արժանացել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի նախագահի կողմից, որի հիման վրա պատրաստվել են ՀՌԻՄԾ 2009թ. տարեկան, 2010թ. առաջին եռամսյակի դրությամբ մոնիտորինգի հաշվետվությունները:<br>**Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ:**<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգի 2010 թ. կատարողական հաշվետվությունը պատրատված է սահմանված ուղեցույցի ու տիպային ձևաթղթի հիման վրա:<br>ՀՌԻՄԾ 2010թ. արդյունքների տարեկան մոնիտորինգի հաշվետվությունը պատրաստ կլինի 2011թ. հուլիսի վերջին:<br>**Արդյունք 3.Կատարված է ամբողջությամբ**<br>GRECO-ի երաշխավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցը ներկայացվել է GRECO-ի քարտուղարություն:<br>http://www.coe.int/t/dghl/monitoring/GRECO<br>OECD երաշխավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցը ներկայացվել է OECD- ի քարտուղարություն:<br>www.oecd.org/corruption/acn<br>**Ընդհանուր գնահատականը**՝ լավ<br>**Առաջարկություն:** ՀՌԻՄԾ կատարողական հաշվետվությունների պատրաստման հետ մեկտեղ, OECD և GRECO-ի երաշխավորությունների կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների պատրաստման պատասխանատվությունը վերապահել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողովին կից ստեղծվելիք մասնագիտական կառուցվածքային միավորին: | կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | 120.3 Ներգրավել հակակոռուպցիոն մոնիտորինգի միջազգային լավագույն փորձն ու տեխնիկական աջակցությունը | 1.ՀՌԻՄԾ 2010թ. կատարողական հաշվետվության միջազգային փորձաքննություն<br><br>2.Հակակոռուպցիոն մոնիտորինգի գործում նախագծված Թյունինգ և Թայեքս ծրագրեր, | Միջազգային լավագույն փորձը յուրացրած ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման միավորների թիվը ՀՌԻՄԾ մոնիտորինգի համակարգ ներգրավված միավորների ընդհանուր թվում, տոկոս | Տվյալները բացակայում են | **Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ**<br>ՀՌԻՄԾ 2010թ. կատարողական հաշվետվությունը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողությունների մոբիլազցման ծրագրի տեխնիկական աջակցության շրջանակներում: ՀՌԻՄԾ 2009թ., տարեկան և 2010թ. առաջին եռամսյակի արդյունքների մոնիտորինգի հաշվետվությունները ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիոտորինգի հանձնաժողովում քննարկվել են հակակոռուպցիոն պայաքարում ներգրավված միջազգային ու դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ և նրանց փորձաքննության արդյունքներով<br>**Արդյունք 2. Իրականացված է մասնակիորեն:**<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգի գործում նախագծված Թյունինգ և Թայեքս ծրագրեր չեն իրականացվել:Դրա փոխարեն միջազգային լավագույն փորձը փոխանցվել է ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողությունների մոբլիզացման ծրագրի , ԵԱՀԿ Երևանի գրասենյակի արդար կառավարման ծրագրի, ինչպես նաև ԵՄ ու ԵՀ խորհրդատուների կողմից:<br>**Ցուցիչ 1**. Ուսումնական այցերի վերաբերյալ տվյալները բացակայում են և ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման միավորների մասով դժվար է գնահատել լավագույն փորձը յուրացրածների թիվը:<br>**Ընդհանուր գնահատականը**՝ բավարար<br>**Առաջարկություն:** ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողովին կից ստեղծվելիք կառուցվածքային միավորի և ՀՀ պետական կառավարման մարմինների ՀՌԻՄԾ մոնիտորինգի պատասխանատուների կարողությունների զարգացման համար նախագծել ու իրականացնել Թյունինգ կամ Թայեքս ծրագրեր: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 120.4 Կազմակերպել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչների համար ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման վերաբերյալ համատեղ վերապատրաստման դասընթացներ | 1.Վերապատրաստման թեմատիկա և դասընթացների ժամանակացույց<br><br>2.Կազմակերպված վերապատրաստման դասընթացներ պետական կառավարման և քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչների համար, այդ թվում մասնակցային մոնիտորինգի մեթոդաբանության և գործիքների վերաբերյալ | Վերապատրաստում անցած պետական ծառայողների թիվը, ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման համակարգում ընդգրկված պետական ծառայողների ընդհանուր թվում, տոկոս | 100 տոկոս | **Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ**<br>ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի օժանդակությամբ ՀՌԻՄԾ մոնիտորինգի փորձագետների կողմից ՀՀ պետական կառավարման մարմինների ՀՌԻՄԾ պատասխանատուների համար մշակվել է ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման թեմայով վերապատրաստման դասընթաց, ժամանակացույց, ուսուցման նյութեր:<br><br>**Արդյունք 2. Իրականացված է մասնակիորեն:**<br>2010թ. մայիս և հունիս ամիսներին ՀՀ պետական կառավարման մարմինների ՀՌԻՄԾ պատասխանատուների համար ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի օժանդակությամբ կազմակերպվել է 2 վերապատրաստման դասընթացներ:<br><br>**Ցուցիչ 1.** 2010թ. մայիս և հունիս ամիսներին ՀՀ պետական կառավարման մարմինների ՀՌԻՄԾ պատասխանատուների համար ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի օժանդակությամբ կազմակերպվել է 2 վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են ՀՀ պետական կառավարման 24 գերատեսչությունների 50-ից ավելի պատասխանատուներ:<br>**Ցուցիչ 2**. Քաղաքացիական հասարակության միավորներից ներկայացուցիչներ ներգրավված չեն եղել վերապատրաստման դասընթացներում:<br>**Ընդհանուր գնահատականը**՝ բավարար<br>**Առաջարկություն:** Քաղաքացիական հասարակության հակակոռուպցիոն պայքարում ներագրավված միավորների համար կազմակերպել ՀՌԻՄԾ մոնիտորինգի  և գնահատման ուղեցույցի ու հաշվետվությունների մեխանիզմների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ | ՀՀ կառավարության աշխաակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | | | ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման գործառույթներ ստանձնած քաղաքացիական հասարակության միավորների ներակայացուցիչներից վերապատրաստում անցածների թվաքանակը, տոկոս | Տվյալները բացակայում են | | |
| 121. Ապահովել քաղաքացիական հասարակության կողմից ՀՌԻՄԾ ազդեցության ընկալման գնահատման իրականացումը | 121.1 Գնահատել տնային տնտեսությունների, գործարարների և հասարակության առանձին թիրախ խմբերի շրջանում կոռուպցիայի մակարդակի կրճատման նկատելիությունը և դրա տեմպերից ու պետական մարմինների մատուցած հանրային ծառայությունների որակից բավարարվածությունը | 1.Տնային տնտեսությունների, գործարարների և հասարակության առանձին թիրախ խմբերի շրջանում կոռուպցիայի մակարդակի վերաբերյալ հարցում<br><br>2.Հարցման արդյունքների հիման վրա միջոցառումների ծրագրում փոփոխությունների կատարում<br><br>3.Կոռուպցիայի մակարդակի կրճատման նկատելիությունը և դրա տեմպերից բավարարվածության վերաբերյալ ամփոփ գնահատական, զեկույց | 1.ՀՀ Կառավարության կողմից ՀՌԻՄԾ ներառված ոլորտներում մասնակցային մոնիտորինգի հարցումներ իրականացնելու նպատակով հայտարարված մրցույթների քանակը | 1 | **Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ**<br>ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի շրջանակներում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների միջոցով 2010թ. իրականացրել է "կոռուպցիան Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտություն":<br>Այն վերջին երեք տարիներին իրականացված համանման 3-րդ հետազոտությունն է:<br>**Արդյունք 2. Իրականացված չէ:**<br>ՀՌԻՄԾ միջոցառումներում փոփոխությունների կատարումը նախատեսված է 2012թ.-ին<br>**Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ**<br>ՀՀ կառավարության պատվերով  «ԱյՓիԷսՍի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից իրականացվել է ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները սոցիոլոգիական հետազոտությունը, որի 7-րդ բաժինը նվիրված է պետական կառույցներում օրենքների խախտմանը և կոռուպցիոն դրսևորումներին:<br>Հիմք՝<br>Ցուցիչ 1. ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 29-ի 1226-Ա որոշմամբ պետական բյուջեի հաշվին ՀՀ կառավարության գործունեության արդյունքների գնահատման նպատակով խորհրդատվական ծռայություններ ձեռք բերելու համար ՀՀ կառավարության աշխատակազմին տրամադրվել է  14մլն 450 հազար դրամ:<br>Ցուցիչ 2. Տվյալները բացակայում են<br>**Ընդհանուր գնահատականը**՝ բավարար | ՀՀ կառավարության աշխաակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | | | 2.Քաղաքացիական հասարակության կողմից ՀՌԻՄԾ ազդեցության ընկալման գնահատման հաշվետվություններում ներառված առաջարկների թիվը | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

### 3.22 Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմիններ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2010թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| 123. Զարգացնել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կարողությունները հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և վերանայման, համակարգման, հսկողության և արդյունքների գնահատման գործառույթների իրականացման գործում | 123.1Ամբողջականացնել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմը | 1.Օրենսդրական փոփոխություններ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործունեությունն կանոնակարգող իրավական ակտերում`<br>2.Խորհրդի կազմը համալրված է դատական դեպարտամենտի, քաղաքացիական հասարակության ու գործարարների ներկայացուցիչներով<br>3.Քննարկված հաշվետվություններ, , զեկույցներ, կայացրած որոշումներ | 1.Խորհրդի կողմից հրավիրված նիստերի քանակ,<br>2.ՀՀ միջազգային հանձնառությունն երը, պայմանավորված ` ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայիով, OECD և GRECO-ի երաշխավորությու ններով, իրականացված են | 1<br>Այո | **Արդյունք 1-2. Իրականացված են մասնակիորեն**<br>«Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<br>ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը մշակվել է ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման փորձագիտական խմբի կողմից: Այն քննարկվել է հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողովի 2010թ. հուլիսի 21-ի ու հավանություն է արժանացել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2010թ. հոկտեմբերի 12-ի նիստում(արձանագրություն N 13.7/[54783]-10): Այդուհանդերձ մինչ օրս հրամանագրի նախագիծը ՀՀ նախագահի կողմից չի ստորագրվել ու ուժի մեջ չի մտել:<br>**Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ:**<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը 2010թ. ընթացքում քննարկել է ինչպես ՀՌԻՄԾ 2009թ. տարեկան, 2010թ. առաջին եռամսյակի մոնիտորինգի հաշվետվությունները, այնպես էլ ՀՀ Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի “Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին” ՆՀ-100-Ն հրամանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրի նախագծի վերաբերյալ հարցերը: Դրա հետ մեկտեղ խորհրդի քննարկմանն է ներկայացվել նաև OECD և GRECO-ի երաշխավորությունների կատարմամբ պայմանավորված զեկույցները, դրանց կատարման վիճակը, դրանցից բխող հանձնառությունների հետագա կատարման վերաբերյալ առաջարկությունների ու հանձնարարականների տրամադրման հարցերը: Տես ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2010թ. հոկտեմբերի 12-ի նիստի N 13.7/[54783]-10արձանագրությունը:<br>**Ցուցիչ 1.** ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի Խորհրդի կողմից 2010թ. հրավիրվել է 1 նիստ: 2010թ. հոկտեմբերի 12-ի թիվ N 13.7/[54783]-10արձանագրություն:<br>**Ցուցիչ 2**. Կատարման վիճակը տես http://www.coe.int/t/dghl/monitoring/GRECO www.oecd.org/corruption/acn կայքէջերում<br>**Ընդհանուր գնահատականը**` բավարար<br>**Առաջարկություն:** Ընդունել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<br>ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը: Դրա հիմա վրա ձևավորել ՀՌԻՄԾ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումը, որը հնարավորություն կտա նաև ապահովելու ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարիխորհրդի ու մոնիտորինգի հանձնաժողովի բնականոն գործունեության կազմակերպման ու նիստերի համար նյութերի նախապատրաստման գործընթացները: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | 123.2 Վերանայել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործառույթների շրջանակը | 1.Օրենսդրական փոփոխություններ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործունեությունն կանոնակարգող իրավական ակտերում<br><br>2.Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից իրականացվում են գիտելիքների ընդլայնման ու տարածման, քաղաքացիական հասարակության | | | **Արդյունք 1 -2. Իրականացված են մասնակիորեն**<br>Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<br>ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը մշակվել է ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման փորձագիտական խմբի կողմից: Այն քննարկվել է հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողովի 2010թ. հուլիսի 211-ի նիստում ու հավանության արժանացել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2010թ. հոկտեմբերի 12-ի նիստում N 13.7/[54783]-10 արձանագրություն: Այդուհանդերձ մինչ օրս նախագիծը ՀՀ նախագահի կողմից չի ստորագրվել ու ուժի մեջ չի մտել:<br>**Ընդհանուր գնահատականը**` բավարար<br>**Առաջարկություն:** Ընդունել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<br>ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2010թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ներգրավվման, կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ քաղաքացիների դիմումներին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին արձագանքման գործառույթները | | | | |
| | 123.3 Ստեղծել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից կառուցվածքային ստորաբաժանում | 1.Կառուցվածքային ստորաբաժանման կողմից ապահովվում է կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի բնականոն գործունեությունը,<br><br>2.ՀՀ պետական բյուջեում նախատեսված են համապատասխան ֆինանսական միջոցներ | 1.Կառուցվածքային ստորաբաժանման կողմից ապահովվում է կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի բնականոն գործունեությունը,(այո/ոչ) | Ոչ | **Արդյունք 1-2. Իրականացված չեն:**<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգը իրականացվում է ժամանակավոր փորձագիտական խմբի ուժերով:<br><br>Ցուցիչ1. Կառուցվածքային ստորաբաժանում չի ձևավորվել<br>Ցուցիչ 2. ՀՀ պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսված չեն<br><br>**Ընդհանուր գնահատականը**՝ անբավարար<br>**Առաջարկություն:** Ընդունել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը: Դրա հիմա վրա ձևավորել ՀՌԻՄԾ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումը, որը հնարավորություն կտա նաև ապահովելու ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ու մոնիտորինգի հանձնաժողովի բնականոն գործունեության կազմակերպման ու նիստերի համար նյութերի նախապատրաստման գործընթացները:<br>**Ընդհանուր գնահատականը**՝ անբավարար | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | | | 2.ՀՀ պետական բյուջեում նախատեսված են համապատասխան ֆինանսական միջոցներ ,(այո/ոչ) | Ոչ | | |
| 124. Բարձրացնել կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների միջև համագործակցության արդյունավետությունը | 124.1 Սահմանել կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների միջև համագործակցության հստակ ընթացակարգեր | 1.Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի որոշում, կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների միջև համագործակցության մասին | | | **Արդյունք 1. Իրականացված չէ:**<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգը իրականացվում է ժամանակավոր փորձագիտական խմբի ուժերով:<br>**Ընդհանուր գնահատականը**՝ անբավարար | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | 124.2 Զարգացնել կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների միջև համագործակցության կարողությունները | 1.Կոռուպցիայի դեմ պայքարի պետական մարմինների աշխատակիցների վերապատրաստման դասընթացների թեմատիկայի մշակում և համատեղ կազմակերպված վերապատրաստման դասընթացներ | 1.Համատեղ իրականացված վերապատրաստման դասընթացների, քանակ | 0 | **Արդյունք 1. Իրականացված չէ:**<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգը իրականացվում է ժամանակավոր փորձագիտական խմբի ուժերով:<br>Ցուցիչ 1. Համատեղ վերապատրաստման դասընթացներ չեն իրականացված<br>**Ընդհանուր գնահատականը**՝ անբավարար | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

## 4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՌԻՄԾ 10. Բարելավել ՀՀ օրենսդիր իշխանությանը ՀՀ կառավարության հաշվետվողականությունը ռազմավարական դրույթի 10.1 Հզորացնել ՀՀ ԱԺ հանձնաժողովների մասնագիտական կարողությունները, միջոցառման իրականացումը **ՀՀ ֆինանսների նախարարությունը** առաջարկում է վերապահել ՀՀ ԱԺ աշխատակազմին, նկատի ունենալով, որ ԱԺ-ի բնականոն գործունեությունը ապահովում է ՀՀ ԱԺ աշխատակազմը:
2. ՀՌԻՄԾ 17. Ապահովել կրթության ոլորտի զարգացման քաղաքականության շրջանակներում կոռուպցիոն ռիսկերի շարունակական գնահատումն ու դրանց կանխարգելումը ռազմավարական դրույթը վերաբերյալ **ՀՀ կրթության և գիտության նախարարությունը** առաջարկում է վերանայել մասնագիտական կրթության ոլորտի ռազմավարությունները, անհրաժեշտության դեպքում լրամշակել ոլորտը կարգավորող որոշ իրավական ակտեր:
3. ՀՌԻՄԾ 19. Բարձրացնել հանրակրթական դպրոցների կառավարման թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը ռազմավարական դրույթի 19.1 Ընդլայնել դպրոցի կառավարման գործում դպրոցի խորհրդի և խորհրդատվական մարմինների դերը միջոցառման վերաբերյալ **ՀՀ կրթության ու գիտության նախարարությունը** առաջարկում է սահմանել հանրակրթական ոլորտում կոռուպցիոն ռիսկերի և դրանց դրսևորումների վերլուծությունն իրականացնող մարմին:
4. ՀՌԻՄԾ 20. Ապահովել գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համակարգերի թափանցիկությունն ու անկախությունը ռազմավարական դրույթի վերբերյալ **ՀՀ կրթության ու գիտության նախարարությունը** առաջարկում է պատասխանատո կատարող ճանաչել ՀՀ կառավարության աշխատակազմին, քանի որ միասնական քննությունների իրականացման գործընթացը համակարգում է "Գնահատման և թեստավորման կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը գործում է ՀՀ կառավարության աշխատակազմի ենթակայությամբ:
5. ՀՌԻՄԾ 22. Բարելավել առողջապահության համակարգում գնագոյացման համակարգը և վերացնել ոչ պաշտոնական վճարումների համար նպաստավոր պայմանները ռազմավարական դրույթի 22.3. միջոցառման արդյունք 2 և 3-ում **ՀՀ առողջապահության նախարարությունը** առաջարկում է "բժշկական հաստատությունների" բառերից առաջ նշել "պետական մասնակցությամբ" բառերը, քանի որ պետական մարմինները իրավասու չեն միջամտելու մասնավոր բժշկական հաստությունների կողմից իրենց ֆինանսական միջոցների տնօրինման հետ կապված հարաբերություններին:
6. ՀՌԻՄԾ 36. Ընդլայնել վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառումը ռազմավարական դրույթը **ՀՀ արդարադատության նախարարությունը** առաջարկում է հանել, քանի որ " ընտանեկան, աշխատանքային վեճերով արբիտրաժի ինստիտուտի ներդրման հետ կապված օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը չկա, քանի որ ելնելով ընտանեկան և աշխատանքային վեճերի առանձնահատկություններից (ալիմենտային պարտավորություններ. ամուսնական պայմանագրից բխող վեճեր, երեխաների դաստիրակության հետ կապված վեճեր, ծնողական պարտականություններից բխող վեճեր, կոլեկտիվ պայմանագրի հետ կապված վեճեր և այլն) դրանք կարող են քննության առնվել և լուծվել միայն դատական կարգով":
7. ՀՌԻՄԾ Քաղաքական կոռուպցիա ոլորտի 56, 57, 58 կետերի ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացումը **ՀՀ արդարադատության նախարարությունը** գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:
8. ՀՌԻՄԾ 70. Բարձրացնել համայնքի ֆինանսական անկախությունը և համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կառավարման արդյունավետությունը ռազմավարական դրույթի 70.6 Ապահովել գույքահարկի և հողի հարկի հաշվառման և գանձման տեղեկատվական ավտոմատացված համակարգերի արդյունավետ շահագործումը միջոցառման վերաբերյալ **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն** առաջարկում է միջոցառման պատասխանատու գերատեսչություն նախատեսել ՀՀ ֆինանսների և ՀՀ տարածքային կառավարման նախարարություններին, որոնք տնօրինում են համապատասխան տեղեկատվությանը:
9. ՀՌԻՄԾ 78. Ուժեղացնել մասնավոր հատվածում կոռուպցիայի առաջարկի կանխարգելումը ռազմավարական դրույթի 78.1 Ամբողջականացնել հաշվապահական հաշվառման և աուդիտի

միջազգային չափորոշիչների ներդրումը միջոցառման 1-3 ցուցիչների տվյալների հավաքրման մեխանիզմները **ՀՀ ֆինանսների նախարարությունը** առաջարկում է "Հարկային, մաքսային և վիճակագրական ծառայություններին ոչ առձեռն ներկայացված հաշվետվությունների թիվը, տոկոս` հաշվետվությունների ընդհանուր թվի նկատմամբ (ԱՀՌԾ Սոցիալական և քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն. մոնիտորինգի ցուցանիշներ e5.2- e5.4 ցուցանիշեր)" ցուցիչը տեղափոխել ՀՌԻՄԾ 13-րդ ռազմավարական դրույթի ցուցիչների կազմ:

10. ՀՌԻՄԾ 83. Ամբողջականացնել հանրային ծառայության բոլոր տեսակների օրենսդրական կարգավորումը, ռազմավարական դրույթի 83.1 Ներառել պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները հանրային ծառայության շրջանակներում միջոցառման 2010թ. Ակնկալվող արդյունքից **ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդը** առաջարկում է հանել "ՀՀ հանրային ծառայությունների մասին նոր ռազմավարության նախագիծ" ձևակերպումը:

11. ՀՌԻՄԾ 89.Ամբողջականացնել պետական և համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրերը ռազմավարական դրույթը **ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդը և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը** առաջարկում են վերասահմանել և այն ընդհանրացնել ՀՌԻՄԾ 109.3 ռազմավարական դրույթի միջոցառման հետ` ըստ համապատասխան ոլորտների:

12. ՀՌԻՄԾ 93. Ամբողջականացնել և օպտիմալացնել հանրային ծառայողների վարքագծի և շահերի բախման կարգավորումը ռազմավարական դրույթը **ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը** առաջարկում է ռազմավարական դրույթի միջոցառումներն առանձնացնել ըստ ծառայության տեսակների` համապատասխանաբար նրանց ճանաչելով որպես պատասխանատու կատարող մարմիններ: Բացի այդ, վերախմբագրել <Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարություն>, <Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի նախագիծ> ձևակերպումները:

13. ՀՌԻՄԾ 106. Ապահովել կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև ակտիվ և արդյունավետ համագործակցությունը ռազմավարական դրույթի, 106.2 Զարգացնել կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ ստացվող տեղեկությունները վերլուծելու և դրանց արագ արձագանքման համակարգերի վերաբերյալ **ՀՀ դատախազությունը** առաջարկում է սկսել այդ համակարգի հայեցակարգի մշակումը համապատասխան գերատեսչությունների համագործակցությամբ:

14. ՀՌԻՄԾ 110.Բարելավել կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության համակարգը, 110.2 Ամբողջականացնել կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ վիճակագրության համակարգը և ներդնել վիճակագրության վերլուծության մեթոդիկա միջոցառման վերաբերյալ **ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը** առաջարկվում է ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված ցուցանիշների համակազմի օրինակով, պետական լիազոր այլ մարմիններում ու վարչական լիազորությունների տիրապետող մնացած պետական (վարչական իրավախախտումներ գրանցող) մարմիններում ձևավորել էլեկտրոնային հենքով վարչական ռեգիստրներ, այդ մարմինների կոռուպցիայի դեմ պայքարի համապատասխան տեղեկատվությունը կենտրոնացնել խնդրո առարկա ոլորտում ստեղծվելիք համակարգող մարմնի ռեգիստրում: Վերջինիս ամփոփ տվյալները առցանց ռեժիմով կտրամադրվի ՀՀ ԱՎԾ-ին` որոշակի պարբերականությամբ (ամսական կամ եռամսյակային և տարեկան)` ամփոփ հրապարակումների համար:

15. ՀՌԻՄԾ120. Ապահովել ՀՌԻՄԾ միջոցառումների մոնիտորինգի (մասնակցային մոնիտորինգի) և դրանց արդյունավետության գնահատման իրականացումը հանրային կառավարման, տնտեսության առանձին ոլորտներում և ճյուղերում ռազմավարական դրույթի, 120.1 Ձևավորել և շարունակականորեն զարգացնել ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման ինստիտուցիոնալ կարողությունները միջոցառման ակնկալվող արդյունքների ստացումը ապահովելու նպատակով ստեղծել կամ ձևավորել ՀՌԻՄԾ մոնիտորինգի մասնագիտացված կառուցվածքային միավոր: Վերջինիս ուժերով ապահովել.

- ՀՌԻՄԾ կատարողական հաշվետվությունների պատրաստումը,
- քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը ՀՌԻՄԾ մոնիտորինգի գործընթացներում,
- OECD և GRECO-ի երաշխավորությունների կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների պատրաստումը
- Քաղաքացիական հասարակության հակակոռուպցիոն պայքարում ներագրավված պետական կառավարման մարմինների միավորների համար ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման ուղեցույցի ու հաշվետվությունների մեխանիզմների վերաբերյալ վերապատրաստման դասընթացների իրականացումը: